

ՀԱՅ ԵՐԶԱՆ

VI SUPP.

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ. Ի Ր

№ 10

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1906



Ի Ի Ն Ի Բ

Հայրենի յՀԱՐՄԻՅՈՒ Մարտ. փող. № 15.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 10

ԵՐԵՍ

1) ԽԵԼԱԴԱՐՆԵՐԻ ՏԱՆԸ, Դ. Պիկուլու, պատմուածք	5
2) ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ, Դուրզէն Լիլիւանի	15
3) ԵՐԲԷՊ, Էտիւզ, ա. Ե. Բաճաթուր-ի	44
4) Մ. ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ	47
5) ԱՇՆԱՆ ՍՈՆԷՏՆԵՐԻՅ, ռոմանուոր Վանան Տ. Դրիզ	77
6) ՀԱՅԵՐԻ ԹԻԻԸ ԹԻՒՐԲԱՅՈՒՄ	78
7) «ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ», փառաթիղթեր և խորհրդածութիւններ	80
8) ՔՐԴԱԿԱՆ ԱՌԱԾ (ռոմանուոր) Դու. Արարիանի	111
9) ԿԱՐԼ ՄԱՐԲՍԸ ԵՒ ՄԱՐԲՍԻՉՄԸ Բ. Իշխանիանի	112
10) ՎԱՍՏԱԿԵԱԼՆԵՐԻՆ, ռոմանուոր Շր. Փալեանի	127
11) ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒ, Տիգրան Էլմասխանի	129
12) ՄՕՏԻԿ, ԱՆՅԵԱԼԻՅ Լեկալի	
13) ՆՈՐ ՄՏԱՅՈՒՄԻ ԳՐԲԵՐ	
14) ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ — 1) Լ. Բաբայանի՝ Աշխարհագրական դասադիրք, Յ. Այվազ	
15) ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Գեորգիյեւն Իշխանուհի.— Վեհ պապարիանի կեղծումներ Լ. Մ.—ի	
16) ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Կարկումբներ գնում է դէպի ձախ.— Արմատական դեմոկրատիայի մէջ ուղղութիւննե- րի նիւնններ.— Մոցիսիստական կօնգրէսներ.— Վե- փիսիստներ, լնտկրաւիտներ և սննդիկաւիտներ Լ. Մ.—ի	151

գոր շրջան VI տարի

Հրատ. XVIII տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԵԿԵՆ, ՀԵՍՏԵՐԵԿԵՆ ԵՒ ՔԵՂԵՔԵԿԵՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 10


ՀՈԿՏԵՄԲԵՐ

1906



ԹԻՖԼԻՍ

Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Բնկ. Մաղաթ. փող., 15.
1906



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 10

ԵՐԵՍ

- 1) ԽԵԼԱԳԱՐՆԵՐԻ ՏԱՆԸ, Դ. Պինսկու, պատմուածք . . . 5
- 2) ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ, Գուրգէն Էղիլեանի . . 15
- 3) ԵՐԲԷՔ, էտիւզ, տ. Ն. Բահաթուր-ի 44
- 4) Մ. ՅՈՎԱՆԵԱՆ ՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ . . . 47
- 5) ԱՇՆԱՆ ՍՈՆԷՏՆԵՐԻՑ, ոտանաւոր Վահան Տ.-Գրիգ. . 77
- 6) ՀԱՅՆԵՐԻ ԹԻԻԸ ԹԻԻՐՔԻԱՅՈՒՄ 78
7. «ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ», փաստաթղթեր և
խորհրդածութիւններ 80
- 8) ՔՐԴԱԿԱՆ ԱՌԱՅ (ոտանաւոր) Դս. Սիւրսեանի . . 111
- 9) ԿԱՐԼ ՄԱՐԿՍԸ ԵՒ ՄԱՐԿՍԻՉՄԸ Բ. Իշխանեանի . . 112
- 10) ՎԱՍՏԱԿԵԱՆՆԵՐԻՆ, ոտանաւոր Հր. Փաղեանի . . 127
- 11) ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԵՋՈՒ, Տիգրան Լլմասեանի . . . 129
- 12) ՄՕՏԻԿ, ԱՆՅԵԱԼԻՑ Լիւիսի
- 13) ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ
- 14) ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ — 1)
Լ. Բարսեանի՝ Աշխարհադրութեան դասադիրք, Յ.
Այվազ.
- 15) ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ—Գիտկեցիօն իշխանութիւն.—Վեհ
դադափարների կեղծումներ Լ. Ս.-ի
- 16) ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Մարդկութիւնը գնում է դէպի
ձախ.—Արմատական գեմակրատիայի մէջ ուղղութիւննե-
րի նիւանները.—Սոցիալիստական կօնգրէսներ.—Իե-
վիզիօնիստներ, ինտեգրալիստներ և սոցիալիստներ
Լ. Ս.-ի 151

18) ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ «Երկրի ձայնը»	
«Նոր կիսնք»	154
19) ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ	155
20) ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	156

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ զրել պարզ մանաւանդ բնւերը, յասուկ անուններն ու օտար բառերը, եւ քերթի միայն մի երեսի վրայ. առանձնապէս ուշ դարձնել կէսադուրեան, ուղղադուրեան եւ նոր պարբերութիւնները որոշակի՝ լինելու վրայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաեւ բնագիրը:

2. Չընդունուած մեծ յօդուածները պահուում են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնւում են: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Փոքր յօդուածներն ու ոտանաւորները չեն վերադարձնւում:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարւում են անվճարիկ:

4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուրճի» համարը շտապուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակադրոշմ կամ պոստային բլանկ:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկ: Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ պէտք է յայտնել նաեւ հին հասցէն:

ԽԵԼԱԳԱՐՆԵՐԻ ՏԱՆԸ

(Դ. Պ ի ն ս կ ու)

Ինձ համարում էին խելագար և մատով էին ցոյց տալիս. տեղեկանում էին իմ առողջութեան մասին և այդ ժամանակ նկատում էին, որ ես շատ վատ տեսք ունեմ, որ ես գեղին եմ ինչպէս մոռ, որ ինձ անհրաժեշտ է զիմեւ ըժշկին: Գիտեմ, որ նրանք ակնարկում են իմ դատողութեան մասին, բայց դա իմ գործը չէ: Այդ ինձ երբէք չի վրդովում:

Շնորհակալութիւն յայտնելով տուած խորհուրդների համար, ես առաջ եմ գնում իմ ճանաչարհով և կամ, տեղումս մնալով, նայում եմ հեգնական ժպիտը շրթունքներիս ուղիղ խորհրդատուիս աչքերին, մինչև որ նա կը շփոթուի և կամ թէ վախեցած կը շտապի հեռանալ: Այն ժամանակ ես ծիծաղում եմ ու ծիծաղում: Այդ ինձ շատ բաւականութիւն է պատճառում: Ինձ շատ հաճելի է այդ անգործներին անյարմար դրութեան մէջ գնելը:

Անպիտաններ... Նրանք ինձ խելագար են հռչակում և այդպիսով հանգստացնում են իրանց խիղճը:

Նրանք ծիծաղում էին իմ հին, գեղնած, արդէն մի քանի տեղից ճաքճքուած գլխարկի վրայ:

Նրանք ծիծաղում էին իմ հին ու պատառոտուած անդրալարտիկի վրայ, որի տակից երևում էին կեղտոտ շապիկս և մերկ ու անլուայ մարմինս: Նրանք դիտում էին ինձ, ծիծաղում էին և խղճում: «Սէղճ մարդ, բոլորովին խելագարուել է»:

Այդ ինձ կատաղեցնում էր:

«Ձեր լինչ գործն է», գոռում էի ես, ինչո՞ւ էք դուք ինձ խղճում, ինչո՞ւ ձեզ չի յուզում, ձեր խիղճը չի շարժում ձեր բանուորների տեսքը, որոնք անիւներ են պտտացնում, սփռում են կրում: Ձէ՞ որ նրանց մարմինն էլ է երևում պատառոտած ու կտոր կտոր եղած անդրալարտիկի տակից, իսկ շապիկ բոլորովին չունեն նրանք:

Հոկտեմբեր, 1906.

«Բանուորները, մըթմըթում են նրանք, աղքատ են չեն կարող զնել, և նրանք ստիպուած են ցնցոտիներով ման գալ. իսկ դժուար»:

«Իսկ ես... Հարժուտ եմ... Ո՞րտեղից... Ինչո՞վ, նրանով, որ հայրս ուրիշի քրտինքով է կապիտալ աշխատել»:

«Այ, այ—ընդհատում են նրանք ինձ—իսկապէս դու խելադարուել ես: Դու...»:

Բայց ես այլևս նրանց լսել չեմ կարողանում: Բռնում եմ գլուխս, ամուր սեղմում եմ քունքերս և վազում եմ ու վազում:

Ես չեմ կարող տեղումս մնալ, արիւնը եռում է իմ մէջ, սիրտս պատրաստ է կրծքիցս դուրս թռչել, և ձեռներս էլ քոր են գալիս: Մի րոպէ ես և նա ձեռքիցս կենդանի չէր պրծնի: Ո՛չ... նա կենդանի չէր մնայ: Ես կը բաշխէի, կը ճըթէի, կը կրծէի, ծուրկ-ծուրկ կ'անէի և կրծքիցս դուրս կը վիժէին անմիտ և վայրենի աղաղակներ... Բայց ես գերազասում եմ փախչել:

2.

Ես հարուստ եմ... Հօրս համար աշխատում էին հարիւրաւոր մարդիկ, որոնք ոտները հազիւ էին փոխում և՛ հազիւ էին պահում իրանց գոյութիւնը, իսկ նա, հայրս, օրէցօր աւելի և աւելի էր հարստանում, չնայած, որ նա շատ էր տարւում և քէֆերում փողեր էր փչացնում: Եւ երբ մտածեց աւելի հարստանալու համար մանկանալ, նա արձակեց բանուորներին մեծ մասը, որոնք արդէն հետևեալ օրը ոչինչ չունէին ուտելու: Եւ ես պիտի օգտուեմ այդ փողերով... Միթէ դրանք ի՞նչ են պատկանում... Մենք հարժուտ ենք... Տէրերը նրանք են. այդ անբախտները, թշուառները, ազէտները:

Նրանց են պատկանում իմ հօր փողերը: Ամեն մի գրօշ, որ ես ստանում եմ հօրիցս, ես պարտաւոր եմ նրանց տալ թէկուզ ինձ մորթէր, թէկուզ ինձ ուզանէր. թէկուզ օրտական ինձ հարիւր անգամ խելադար անուանէր: Խելադար... Համ, համ, համ: Յաճախ էի ես լսում, թէ ինչպէս նրանք տաւում էին: «Ահա կարծես թէ նա բալուրովին առողջ կերպով է դատում, բայց և ախպէս նա, խեղճը, խելագար է»: Համ, համ, համ: Երբէք նրանք չէին կարող ներողամիտ լինել դէպի ինձ այդ դաւաճ ճշմարտութեան համար: Ես ծիծաղում էի ուղղակի այդ զգուհի դատարկախօսների վրայ դէմ առ դէմ... Ես ծիծաղեցի կողերս լոնում էի, իսկ նրանք շփոթւում, վախենում էին: Համ, համ, համ:

3.

Իսկ նրանք, այդ թշուռները, ինձ իսկապէս վշտացնում էին և վշտացնում են դեռ ևս մինչև այսօր: Նրանք նոյնպէս ինձ մի քիչ աննորմալ էին համարում:

Այդ մասին նրանք ինձ չէին ասում, այդ ես հասկանում էի նրանց վարմունքից, դէպի ինձ ունեցած վերաբերմունքից: Նրանց բարի, ընկերական ձայնի մէջ ևս լսում էի ափսոսանք, զգում էի ցաւակցութիւն: Այդ ինձ սպանում էր: Իմ խեղճ եղբայրներ: Ես խելագար չեմ, հաւատացէք ինձ: Ինչո՞ւ էք դուք ինձ վերաւորում: Իմ աչքերում երեւոյ արտասուքը, ես ամբողջովին դողում էի: Նրանք աշխատում էին հանդստացնել, լայց նրանց իւրաքանչիւր խօսքի մէջ ևս զգում էի ցաւակցութիւն դէպի խելագարը!

«Եղբայրներս, կրկին բացականչեցի ևս յուսահատութեամբ, մի՞թէ մեքենաները այնքան մեղքեւ են ձեր մէջ եղած ամեն կենդանութիւն, որ դուք նայում էիք ինձ վրայ, ինչպէս մի խելագարի վրայ»:

Նրանք երգում էին, որ ինձ հասկանում են, լայց ես նրանց չէի հաւատում և չեմ հաւատում:

Նրանք ցանկանալով մխիթարել խարում էին ինձ:

Ես մտածում եմ ու ժպտում... Ինչպէս երջանիկ կը լինենք մենք, ես և նրանք, երբ վերջապէս նրանք ինձ հասկանան:

4.

Երեխաները իմ յետիւց չէին վազում, ինձ վրայ քարեր չէին շարտում, լայց նրանց վախկոտ, հետաքրքիր և միևնույն ժամանակ ծաղրական հայեացքից, այն բանից, որ ինձ ճանաչարհ տալով խուսափում էին ինձանից, ես հասկանում եմ, որ նրանք ինձ խելագար են համարում: Այդ վերաւորանքից քիչ էր մնում արտասուէի, ցաւալի կերպով այդ ինձ դառնացնում էր: Ա՛խ: Ինչպէս կը ցանկանայի նրանց առաջ լայց անել հոգիս, ուղեղս, բացատրել նրանց իմ ամբողջ վերաբերմունքը դէպի նրանց հայրերն:

«Երեխաներ, եկէք ինձ մօտ»:

«Երեխաներ, ես չեմ կծում, ես ոչ ոքի ֆլաս չեմ տալիս»:

«Երեխաներ, կեանք, ճշմարիտ կեանքն եմ կրում իմ մէջ: Իմ բոլոր երազներիս, ուղեղիս իւրաքանչիւր բջիջի մէջ նա է գտնւում»:

Երեխաներ, ինձ մօտ եկէք, այդ կեանքի մասին ես ձեզ գեղեցիկ հէքիաթներ կը պատմեմ: Ձեզ անհրաժեշտ է այդ ուսումնասիրել, որովհետեւ նոր էք սկսում ապրել: Սիրելի երեխաներ...»

Բայց ես իզուր էի ասում: Երեխաները ինձանից վախենում էին:

5.

Միայն նա էր ինձ հասկանում և միայն նա էր իմ մխիթարանքս: Սիրելի՛ս, անգի՛նս, ես ինչպէ՛ս կարօտում եմ քեզ: Գրունեչկա, աղանեսկա, ահա, ահա տեսնում եմ ես քեզ: Բըրը... Ես երեւի կը ճեղքեմ պատերը և կը սկսեմ վազել դէպի քեզ, իսկ թէ ոչ... եթէ ոչ կը պատուով, կը ճայթի սիրտս...

Դէհ, դէպի գործ: Յենուիր ապակուն—ջարդենք... Բայց ոչ, սուս, սուս, պահապանը դալիս է փայտը ձեռին. սուս, սուս, 22, սուս, խելօք տղայ...

Ահա, ես կապուած եմ: Ինձ կապկպեցին... Ուսմա, Գրունեչկա: Ինձ համար ծանր է, Գրունեչկա, ես ինձ շատ վատ եմ զգում, Գրունեչկա:

Օ-օ, Գրունեչկա: Նա ինձ լաւ էր հասկանում: Նա ինձ խելագար չէր համարում: Օ՜, ոչ, ոչ: Բոլորովին ոչ: Ընդհակառակն, նա բոլորի հետ վիճում էր իմ պատճառով: «Դուք ինքներդ էք խելագարուել», իմ փոխարէն պատասխանում էր նա: Գրունեչկա:

6.

Նա դերձակունհի էր, իր ազգականների համար աշխատում էր, իսկ ինքը շապիկ էլ չունէր մարմնի վրայ: Ինձ համար ցաւալի էր, երբ ես նրա վրայ էի նայում: Ես ցանկանում էի, որ նա ման գար նոր շորերով, մաքուր շապիկով: Նա ծիծաղում էր ինձ վրայ. «Դու իսկական մարդ ես»:

Մի անգամ ես իմ-ողորմելի զրոշներից մի քիչ փող բերի նրան, որպէսզի նա շապիկների համար քաթան առնի: Բայց նա ինձ դուրս վռնդեց: «Դու զգուշիկ էգօխտ ես», բարկացած ասաց նա:

Այն ժամանակից ես նրան մի խօսք էլ չէի ասում. բայց նրա պատառուն շորերը, նրա կեղտոտ շապիկը դանակի նման խրւում էին սրտումս:

Դուցէ իսկապէս ես էգօխտ եմ: Բայց ես ուրիշ կերպ լինել չեմ կարող. նա ինձնից ուժեղ է, ես վախենում էի նրանից: Մինչև անգամ երբ նա խնդրում էր ինձնից իմ շապիկը լաւանալու համար ես վախենում էի և չէի կարող մերժել: Ես փորձեցի, բայց յանդիմանութիւն ստացայ: Հա՛, հա՛, հա՛: Նա

սուր լեզու ունի. տասը փաստաբան նրա հետ չէին կարողա-
նայ վրձել,—*սև-սև-սև*, Գրունհեկա: Արդեօք մենք երբեք էլ
տեսնուե՞նք: Օ՛, այո՛, այո՛: Շղթաների մէջ էլ լինեմ, դարձեալ
դուրս կը պրծնեմ: Ահա այսպէս.—*ու-ու-ու* զործադրենք: Մի-
այն սուս, կամաց:

7.

Բոլորը նրան տգեղ էին համարում—ինքն էլ նոյն կար-
ծիքն ունէր: «Այդ ի՞նչպէս է որ դու ինձ սիրում ես,—ասում էր
նա—չէ որ ես տգեղ եմ»: Ես ծիծաղում էի: Ի՞նչպէս թէ տգեղ:
Դրանով նա միայն ինձ զրգուում էր:

«Հաստ շոթունքներ, մեծ աչքեր և երկար քիթ», սկսում
էր նա իր պակասութիւնները համարել:

«Որտեղից դասար: Սո՛ւտ է: Այդ չիշտ չէ»:

Ես աչքերս չէի հեռացնում նրանից: Ես զիտեմ, որ երբ
օր. Խացկելեվիչը իմ մօտով անցնում էր՝ ես զգում էի, կար-
ծեա դարշելի սողուն էի տեսնում... Ես խոյս էի տալիս նրանից:
Բայց բանաստեղծները չեն դադարում գովաբանել նրա գեղեց-
կութիւնը: Եւ բոլորն էլ գոչում են, որ քաղաքի մէջ նա ամե-
նագեղեցիկն է: Նրանց ամեն բանը թարս է: Ուրիշի աշխա-
տանքը նրանց հարստութիւնն է, իսկ ես—խելագար: Հո՛ս,
հո՛ս, հո՛ս:

8.

Ես չէի կարող արհեստաւոր դառնալ: Իմ ոչ մի զործը
կարգին չի գնում. ես ուզում եմ մեկը խփել, բայց նա մուր-
ճի հարուածների տակ ծոմուում է և էլ ներս չի գնում: «Մի-
րեւիս, մտիր պատի մէջ, ցցուիր տախտակի մէջ», սկսում եմ
ևս աղաչել, բայց նա տեղից էլ չի շարժւում: Ես սկսում եմ
բարկանալ և քիչ է մնում որ նրան կրծստեմ: Իսկ նա—չէ ու
չէ: Գրպաններս լիքն էին մեխերով. ես խփում եմ որտեղ որ
պատահի, բայց բոլորովին էլ իզուր: Ոչ և ոչ, այդպէս է մինչև
այսօր:

Ասեղի մէջ թել անցկացնելն էլ ինձ չէր յաջողւում: Կար-
ծեա թելը դիտամբ ինձ զրգուում էր: Տեսնում էր», ասում էր
ինձ գերձակը, և ասեղը վայրկենապէս թելւում էր. իսկ
իմը—չէ, ու չէ:

«Դուք անպէտք էք աշխատանքի համար», ասում էր ինձ
ամեն մի բանուոր: Աւելի լաւ կը լինէր որ նա մի դանակ
խրէր իմ սիրտս... Մէկ անգամ նոյնիսկ վճռեցի կացնով գլուխս
ջախջախել, հիւսնի մօտ եղած ժամանակս: Ես ուզում եմ խը-

փել այստեղ, իսկ կացինը Աստուած գիտէ թէ որտեղ է կըպ-
չում: Ես ցանկանում եմ դիպցնել այնտեղ, նա ուրիշ կողմ է
թռչում: Ես արդէն ուզում էի... բայց ձեռիցս կացինը խե-
ցին:

9.

Ես անիծում էի ինձ և իմ ձեռները: Եւ այդպիսի ահագին,
եքա մարդը ոչ մի բանի պէտքական չէր: Իսկ առժամանակ ես
ստիպուած էի կերակրուել հօրս սեղանից, հացից՝ ձեռք բե-
րուած քաղցած բանուորների աշխատանքով, թրջուած նրանց
սրիւնով:

Ես սկսեցի մտածել ինքնասպանութեան մասին և առաւ-
տաղի վրայ ինձ համար մի օղակ պատրաստեցի: Ես արդէն ու-
նէի պարան: Բայց երբ օղակը դրում էի, յանկարծ ցանկացայ
գնալ նրա մօտ, նայել նրա վրայ, նստել նրա մօտ: Ես էզօհիստ
եմ! Գլխովս այս միտքն է անցնում, ֆնաս բարև ասել նրան:
Եւ ես զգում եմ, որ առանց նրան ինձ ծանր է... Եւ ինձ տրեց
անչափ տխրութիւն, անչափ դատարկութիւն, անչափ թախիծ:
Ես դէն եմ շարտում պարանը և ինչպէս խենթ վազ եմ տալիս
նրա մօտ:

«Գրունեչկա, գիտե՞ս», դիմում եմ ես նրան; «Ես արդէն
օղակը կապել եմ, բայց դու թոյլ չես տալիս»...

«Ի՞նչ, բացակահեցե՞ց նա» և աչքերը լայն բաց արաւ:

«Վերջ տալ կեանքիս», մըթմըթացի ես:

«Դու խելագարուե՞լ ես»:

«Ես ոչ մի բանի պէտքական չեմ»:

Նա բարկացած նայեց ինձ վրայ:

«Դու յիմար ես», պատասխանեց նա շեշտելով ամեն մի
խօսքը:

«Բայց, Գրունեչկա»:

«Եթէ ուզեն, կարող են: Հող են քանդում, քար եր կրում,
փողոցներն են աւելում... գտնում են աշխատանք: Կեանքին վերջ
տալ...»

Ես չթողի նրան վերջացնել, ես յանկարծ իմ մէջ զգացի
ոյժերի նոր հոսանք և իմ փոքրիկ, համարեա երեխայական
ձեռներս ինձ թուացին բաւական ուժեղ ամենածանր աշխա-
տանքի համար:

«Այո, Գրունեչկա», բացականչեցի ես, այդպէս էլ կը լինի,
մինչև ես չսկսեմ աշխատել, քո աչքին չեմ երևալ: Եւ ես
դուրս վազեցի տանից: Եւ միայն նկատեցի, թէ ինչպէս նա

չարժեց իր գլուխը, ի նշան համաձայնութեան: Նա դեռ բարկացած էր!...

10.

Ես վազում էի, թռչում էի, ուղիղ դէպի էփանադին ճաշարանը: Կէս օր էր: Բանուորները ճաշում էին: Ես կանգ առայ դռան մօտ, նայում էի, թէ ինչպէս են նրանք ուտում իրանց աղքատիկ ճաշը, ուր կազմուած էր հոտած կաղամբից: Իմ առաջին մտածմունքն էր նրանցից աշխատանքի մասին հարցնել: Երևի ես վատ տեսք ունէի, որովհետեւ իւրաքանչիւրը կանգ էր առնում և ինձ էր նայում: Ինձ մօտեցաւ քրքրուած շորերով մի մարդ, մեկնեց ինձ կոշտերից ուռած իր կեղտոտ ձեռքը և տուեց ինձ իննը հատ հատ կոպէկանոց: Ես քաղաքայ, ես կորցրի ինձ:

«Ո՛չ», մըթմըթացի ես չվերցնելով փողը, «ո՛չ, ինձ փող հարկաւոր չէ... ես քաղցած չեմ... շնորհակալ եմ...»

Բայց յանկարծ ես ընկայ նրա վզով և սկսեցի համբուրել:

«Տէւր, տո՛ւր, եղբայր, քո արիւնով աշխատած այդ գըրօշները: Ես նրանք մի քսակի մէջ կը լեցնեմ և ինչպէս յուռութ (թալիսման) իմ կրծքիս վրայ կը կրեմ: Ո՛չ, ես պիտի վազեմ փողոցներով և պիտի ցոյց տամ բարերար անուն կրող բոլոր արիւնարրուներին, բոլոր սղորակներին, ձրիակերներին: Տո՛ւր, ես դրանք պիտի կոխեմ նրանց աչքերը»:

Ես խլեցի փողերը նրա ձեռքից և սկսեցի վազել:

Իմ յետևից մէկը գոռաց. «Այ խելագար»: Իսկ ես վազում էի ու վազում: Բայց յանկարծ ես մտածեցի որ իմ պատառոտած շորերով բարերարը կարող է այն կարծիքը կազմել որ ես խելագար եմ: Ես յետ վազեցի...

Նա իսկապէս նայում էր ինձ վրայ. ինչպէս խելագարի վրայ:

«Ո՛չ», ասացի ես նրան. «ո՛չ, սո՛ւտ է, սո՛ւտ... ես խելագար չեմ... հաւատա ինձ... սուտ է... ես նորմալ եմ: Մենք կը բարեկամանանք, հա՛: Դու ինձ կը հասկանաս... Ասա ինձ միայն ո՞վ ես դու»:

«Ես ամեն մի աշխատանք յանձն եմ առնում, ես փեշակ ունեցող բանուոր չեմ»:

Միտքս լուսաւորուեց, սիրտս բաբախեց:

«Ասա ինձ դու ի՞նչ ես անում: Նոյնը կարո՞ղ եմ ես կատարել»:

«Այո, ինչու չէ: Իմ գործը ամենքը կարող են անել»:

Ի՞նչ մնաց որ ես ուրախութիւնից վեր-վեր թռչէի:

Նա մի շինութեան վրայ հասարակ բանուոր էր — աղիւս, ջուր, աւազ էր կրում: Ես կպայ նոյն գործին:

11.

Առանց յետ նայելու ես վաղեցի նրա մօտ, հէնց որ ստացայ առաջին փողերը:

«Գրուշենկա, կայ!, բացականչեցի ես և ընկայ նրա վզով:

«Ա՛յ, այդպէս կտրինձ», ասաց նա ինձ և փաղաքշեց իմ մազերը. և նրա մեծ, բարի, խելօք աչքերը արտայայտում էին սէր, կրակոտ սէր դէպ ինձ:

«Ա՛յ, տէսնձում ես, ուզում էիր մեռնել», յանդիմանեց ինձ նա մեղմ կերպով:

Իմ շունչս կտրւում էր: Ես բախտաւոր էի, ուրախութիւնս ից շփում էի ձեռներս և ծիծաղում... Ես նրա ձեռները փեղցրի և դրի իմիներեա մէջ, նրա դիմաց նստեցի և սկսեցի պատմել նրան, թէ ինչպէս պատահեց այդ բոլորը:

«Գնձնք, նրան ինձ ցոյց տուր», բացականչեց նա, լսելով իմ պատմութիւնը:

Ես բռնեցի նրա ձեռքը և երջանիկ ժպիտով սկսեցի վազել:

«Երկուսն էլ խելագարուել են», գոռում էին մեր յետևից, բայց մենք սեղմում էինք միմիանց ձեռքը:

«Հա, հա, հա, Գրուշենկա. ահա ես քեզ տեսնում եմ, ծ, իմ սիրելիս...»

«Մենք պէտք է բոլորս միասին ապրենք», հարցրի ես նրան:

«Ո՛չ», պատասխանեց նա. «պէտք չէ. ես կ'ապրեմ մերոնց հետ... իսկ դուք երկուսովդ ապրէք միասին: Եղէք եղբայրներ... յաւիտենական եղբայրներ!...»

Ու-ու-ու, Գրուշենկա...»

12.

Մենք լսեցինք նրան: Մենք դարձանք եղբայրներ: Միասին էինք ապրում, միասին աշխատում, միասին ուտում, բաժանում էինք ամեն մի կտոր հացը: Աշխատանքից յետոյ Նա գլխի էր մեղ մօտ, կամ թէ չէ մենք էինք գնում նրա մօտ, և ես երջանիկ էի, անչափ երջանիկ...

Սկզբներում ծնողներս ընձ հանգիստ չէին տալիս, ուժով կամենում էին տուն տանել: Բայց ես հաստատ էի կանգնած: Վերջապէս նրանք յոյսները կտրեցին ինձանից և ես սկսեցի աղատ շունչ քաշել: Մեր կտրի տակի փոքրիկ սենեակը թւում

էր լայն դահլիճ՝ մեծ և ընդարձակ։ Ինչպէս լաւ կեանք էր։
Վայելէր։ Նա շաբաթ և տօն օրերը կարգի էր բերում սեն-
եակը։ Նայելը գուրեկան էր։

Գործս աջող էր գնում—ահա բոլորը։ Միշտ աշխատանք
ուռէի և սկսեցի օգնել հօրս բանուորներից ամենաչքաւորնե-
րին։ Խեղճերը չէին ուզում վերցնել... Խեղճեր, սիրելիներ,
յիմարներ... Ձէ ձր ես վերադարձնում եմ այն, ինչ որ իրա-
ւամբ նրանց է պատկանում... Եւ իրանք նոյնպէս ցանկանում
են նուրիքել... Եւ երբ նրանք չէին վերցնում, ես այդ ծածուկ
էի նրանց հասցնում... Ես բախուաւոր էի!...

13.

Վերջին անգամ արտասովոր մի շոգ օր ես աշխատում էի
իմ ընկերոջ հետ։ Առէն այրում էր. բացի այդ մենք աշխա-
տում էինք դեղատնիքի վրայ։ Ընկերս իրան վատ զգաց,
նա ուշագնաց կղաւ, նրան տարան տուն։ Ես մնացի նրա հետ
մենակ և չգնացի աշխատանքի։ Երեկոյեան նա աւելի վատա-
ցաւ, իսկ փող—մի կոպէկ էլ չկար։ Ես գնացի մեր վարձողա-
տիրոջ մօտ։ Դա բարձրահասակ, հաստափոր, երկար սիւրտիւկ
հագած ծերունի մի հրէայ էր։

«Այն բանուորը, որը այսօր հիւանդացաւ,—ասացի ես—
իրան շատ վատ է զգում, իսկ մի կոպէկ էլ փող չունի։ Պէտքէ
բժիշկ հրաւիրել։ Նա խնդրում է որ դուք նրան մի քիչ փող
տաք. նա զրա փոխարէն կ'աշխատի ձեզ համար»։

«Ես նախօրօք փող չեմ տալիս», հանգիստ պատասխա-
նեց երկար սիւրտիւկաւորը և ուզում էր գնալ։

Ես նրա ճանապարհը կտրեցի։

«Առաջինը, որ մենք աշխատել ենք համարեան կէս օր։
Եւ յամենայն դէպս փոխարէն կ'աշխատենք։ Մարդը մեռնում
է. խղճացէք... ես կ'աշխատեմ զրա խոխարէն...»

«Ես քեզ ասացի որ առաջուց փող չեմ տալիս», խիստ
կերպով ասաց ինձ հաստափորը։

Արիւնը խփեց գլուխս, սիրտս ուժգին բաբախեց, չզի-
տեմ որտեղից, ձեռս մի մեծ քար ընկաւ։

«Ահա, ուրեմն քեզ», գոռացի ես ոչ իմ ձայնով։ Քարը
զժրադաբար անցաւ կողքովը։ Ես յարձակուեցի նրա վրան...
Ես գոռում էի փրփուրը բերնիս... Փշչացնում էի, ոռնում էի...
Կծում էի, կտրում, սկզբում, չանգւում։ Հեշտ չէր պոկւել նը-
րան ինձանից։ Ինձ տարան բոտիկանատուն։ Հայրս ինձ իս-
կոյն ագատեց։ Նա պնդում էր, որ ես խելագար եմ։ Ապա-
ցուցանելու համար զրեց մի թղթաղրամ։

14.

Միւս օրը ես ազատուեցի հօրիցս, և փախայ մեր տունը: Ընկերս, պառկած էր յատակի վրայ ծածկուած ու վերմակով: Նրա մօտ կանգնած էր նա և լաց էր լինում... Սենեակը լիքն էր հարկան բանուորներով... Բոլորն էլ տխուր էին... Ես կարծում էի կը խելագարուեմ... Ես ընկայ յատակի վրայ, փետում էի մագերս, կրծոտում էի ձեռներս, ծիծաղում լալիս էի...

«Դու՞նուր էի՞ր գնացել... հարցրեց Գրուշեան ինձ: «Ո՞րտեղ էիր անյայտացել: Նրան կարելի էր ազատել: Հարկաւոր էր իսկոյն և եթէ կանչել բժշկին»: «Ուշ եկանք մենք, ուշ», արդարացան իմ միւս հարկանները: Եկանք այն ժամանակ երբ նա արդէն հողակալքի մէջ էր, — կանչեցինք բժշկին, բայց նա այլևս չէր կարող օգնել...»

Ես նրանց չէի լսում... Ես վագեցի վարձատիրոջ մօտ... Ինձ մահ, նրան էլ մահ: Բայց իմ դժբախտութիւնից և նրա բախտից նա ինձ տեսաւ և հրամայեց բռնել: Ես հազիւ ժամանակ ունեցայ քարը շարտել գէպի նա: Եւ դիպցրի: Դիպցրի նրա հաստ փորին... հա՛, հա՛, հա՛: Պարծես նաղարի, մեծ թմրուկի դիպաւ... Նա կծկուեց ցաւից և բարձր հառաչեց... հա՛, հա՛, հա՛... Այդ ինձ համար ամենալաւ երգեցողութիւնն էր:

Ինձ բռնեցին: Մի ինչ որ երկաթէ ձեռք բռնել էր իմ ուսիցս և վարձատէրը մնաց կենդանի:

Ես ինձ այդ չեմ ների...

Ես ստոր եմ... Հայրս ինձ բերեց այստեղ խելագարների տունը... ես գոռում էի որ ես խելագար չեմ... Թող ինձ դատեն... Ես կախաղանի արժանի եմ, թող ինձ գնդակահարեն, թող ջրախեղդ անեն: Այնպիսի սրիկան էր... Ու-ու-ու!!...

15.

Բայց ինչո՞ւ ինձ մօտ չեն թողնում Գրուշին... Գրուշին ինչո՞ւ չեն թողնում...

Բնագիրը հրէերէն, ռուսերէն թարգմանութիւնից փոխադրեց Վ. Վ.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Ներածութիւն

Մանկավարժական հարցերը, որոնցից մի քանիսի պարզաբանութեամբը պէտք է զբաղուէ այս դրուածքը, պատկանում են հասարակական կեանքում եղող այնպիսի հրատապ խնդիրների թուին, որոնք աւելի ուշադրութեան արժանի են և որոնց այսպէս կամ այնպէս լուծելուցն է կախուած որոշ չափով նոյն հասարակութեան բախար, նրա յառաջխաղացումը և կամ քայքայումը: Այս խնդիրները մանաւանդ մեզ համար իրանց այժմէութեան զագաթնակէտին հասած պէտք է համարել, քանի որ թէ մեր դպրոցական և թէ մեր ժողովրդի կեանքի համար սկզբում է մի նոր դարեշրջան բացուել, ուստի և հասարակութիւնը աւելի հետաքրքրութիւն պէտք է ցոյց տայ դէպի դպրոցական գործը և ձգտէ, որ այդ լուսաւորութեան տաճարները հետու պահուեն սրա կամ նրա քմահաճ ոտնձգութիւններից, ոտնձգութիւնների, որոնցից այնքան տուժել է մեր դպրոցական գործը անցեալում: Հասարակութիւնը իր ձեռքը պէտք է առնէ դպրոցների ղեկավարութեան գործը և այդ հաստատութիւնները համապատասխանեցնէ իր պահանջներին և շահերին:

Եթէ իրականութիւնը այսպէս չլինի, եթէ մեր հասարակութիւնը կլանուելով առօրեայ կարիքներին բաւականութիւն տալու հոգսերով մոռանայ դպրոցական, դաստիարակչական գործը իր բախտաւորութեան հիմքը նկատելուց, այն ժամանակ արդէն յառաջանում է այդ հասարակութեան վատասերման խնդիրը և նրա գոյութեան շարունակութեան վրայ դրւում է մի մեծ հարցական:

Ինչո՞ւ: Հասարակական կեանքը փոխարկումների մի շրջան է. նրա մէջ ոչինչ չէ մնում հանգիստ ու կայուն. նրա հիմքը կաղմուել, բողբոջելն է, իսկ վերին շերտերը՝ քայքայում, ոչնչացում. հին, ծերացող սերունդը իր պատմական դերը կատարելուց յետոյ՝ մօտենում է բնութեան այն մեծ ակտին, որը փահ է կոչւում, նա հանգիստ թողնում է հասարակական կեանքի ղեկը իր ձեռքից բաց թողնելով. այն ինչ նրա աւերակների վրայ բարձրանում է նոր սերունդը աւելի ուժգին և

կորովի տեմպերամենտով, գործունէութեան պատրաստ ուժեղ ցանկութեամբ: Հասարակութեան այս մակընթացութիւնը և տեղատուութիւնը շարունակում է ճակատագրօրէն միշտ և անվերջ: Լինելով իրականութիւնը այսպէս՝ դրանից ծագում է այն պարզ ճշմարտութիւնը, թէ երիտասարդ սերնդին այնպէս պէտք է կրթել, որ նա յարմարուելով իր ժամանակի հասարակական կազմի և նրա կեանքի պահանջներին՝ ակտիւ դեր ունենայ այդ հասարակական կեանքը կառավարելիս, նրան որոշ ուղղութիւն, ընթացք տալ կարողանայ և կամ որ նա խոհականութիւն ունենայ իր երիտասարդ եւանդը այնպէս գործադրելու, որով ոչինչ չփչացնէ և ինքը հէնց զո՞հ չգնայ, չլսփութէ իր ներքին կրակից, իր գործունէութեան ձգտող հոգեկան բնկումներից. կարճ, որ նա կեանքում կատարել կարողանայ այն դերը, որ նրան է վիճակուած կատարելու:

Պատմութիւնից էլ պակաս չեն այնպիսի օրինակներ, որոնցով կարելի է ասպացուցել, թէ մանկավարժութեան յոռութիւնը ինչ կործանիչ նշանակութիւն ունենալ կարող է մի ազգի համար. հին մեծածաւալ և հզօր պետութիւնների, Պարսկաստանի և Հռոմի կործանման պատճառները ոչ միայն քաղաքատնտեսական հիմքեր ունէին, այլև պատմութիւնը ցոյց է տալիս, որ անփառունակ կործանումների պատճառների շարքումը կարելի է դասել և ժամանակի մանկավարժութեան վատութիւնը և հակահասարակականութիւնը: Վերջապէս ներկայ ազգերի և հասարակութիւնների դրական կամ բացասական դրութեան մէջ լինելու պատճառները որոնելիս, նոյնպէս, անպայմանօրէն մօտենում ենք այն ճշմարտութեան, թէ հասարակութեան մէջ տիրող մանկավարժութեան դրութիւնը հզօրապէս նպաստում է նոյն հասարակութեան բարեբախտութեան և կամ դժբախտ դրութեան և որ մակավարժական ձևը մի սիրուն չափ է հասարակութեան կուլտուրայի բարձրութեան: Ինչպէս տեսնում էք, մանկավարժութիւնը ժողովուրդների բախտը որոշող ամենակարևոր հանգամանքներից մէկն է և շատ ճիշտ է ասում յայտնի մանկավարժ Րաբնը. «Մի ժողովրդի բախտը, նրա բարգաւաճումը և կամ քայքայումը կախում է այն դաստիարակութիւնից, որը տրոււմ է երիտասարդ սերնդին»: Գիտութիւնը հասարակութեանը ասում է դրականօրէն. ունիս երիտասարդ սերնդին կրթելու համար դաստիարակչական մի ձև համապատասխան քո էութեան՝ ապահովում է քո ապագան և կարող ես կենսունակ ու առողջ ապրել. յոռի է մէջդ՝ տիրող մանկավարժութիւնը, քեզ վիճակուած է վատասերում ու քայքայում:

Սմեն մի բարեխիղճ անհատի և քաղաքացու համար սրբութիւն պէտք է լինի հասարակութեան առողջութեան խնդիրը և ամեն կերպ այդ իրականանալուն ձգտէ, իսկ այդ նըպատակին հեշտութեամբ կարելի է հասնել մանաւանդ մանկավարժական ճանապարհով և իսկապէս, հասարակութեան մէջ որոշ հոսանքներ ժողովուրդ, նրան բարեբախտ ու երջանիկ դարձնելու համար միշտ հարկադրուած ենք ժողովուրդ աշխատութեանը կամ զբաղմունքի աշխատեցնելին, որը մանկավարժութիւն է կոչուում. թէև ճիշտ է և Սպենսերի աշխատեցնելը, թէ հասարակական բեֆորմները առանց մանկավարժականի և վերջինիս բեֆորմները առանց առաջինի պրական և պրոպագանդական և մանկավարժական բեֆորմները պէտք է զուգընթացօրէն գնան և միշտ իրարու փոխադարձ լրացնող լինին:

Հէնց նախօրօք պէտք է ասել, որ ճիշտ է, մանկավարժութիւնը չունի աշխատանքային զօրութիւնը, որը վերագրուած են նրան շատերը, այլ որ նա գոնաւորուած է իր ժամանակի հանգամանքներից և ունի իր դործունէութեան և կարողութեան որոշ շրջանագծեր, որոնցից աշխատողը նրան ցատկելի դժուարին է. բայց և մի բացարձակ ճշմարտութիւն է, որ նրա կատարելիքը, նրա ուժը մի աշխարհի մեծութիւն է, որ պիտի չունեն հասարակական միւս գործունէութիւնները: Մանկավարժի ներքին ոգևորութիւնն է կազմում աշխատողութիւնը, որ նա մարդկութիւնն աւելի ու աւելի արագօրէն է մօտեցնում հասարակական աւելի բախտաւոր և իդէալական ձևերի: Եւ իսկապէս, սաոն ու վնասեցուցիչ կը լինէր դաստիարակի դժուարին գործը, եթէ չօգնուէր և մինչև ոսկորների ծուծը յագեցած չլինէր մարդկային աւելի բարձր բնոյթի իրականացման կարելիութեան հաւատով, մի հաւատ, որը ուսուցչին միշտ զէպի գործն է մղում՝ ենթակայանթիւնահատակութիւնների շարքերի: Ուսուցչի համար պարզ պէտք է լինի, որ իր զբաղումով հզօրապէս նպաստում է կեանքի բնթացքի այս կամ այն ուղղութեան յառաջացմանը, որը ինքը աւելի մօտ է կեանքի աշխատանքին, որ նրա զեկն է կոչուում:

II. Մանկավարժութեան նպատակը.

Ասացինք, որ մանկավարժութիւնը ազգերի ճակատագիրն ու բախտը որոշող ամենակարեւոր հանգամանքներից մէկն է, որ մանուկների կրթութեան գործն աչքաթողի անելը—հասարակութեան ինքնասպանութիւն է նշանակում: Հաստատելով ման-

կալարժութեան մեծ նշանակութիւնը հասարակական բախտաւորութեան համար, դորանից ծագում է տրամաբանօրէն այն՝ թէ ինչ է մանկավարժութիւնը և ինչ բարձր իդէալների է ձգտում, որն է նրա անելիքը և այլնման հարցեր, որոնց լուսաբանութիւնը պարզ պէտք է լինի մանաւանդ այն անհատների համար, որոնք որոշել են իրանց նուիրել մանուկ սերնդի կրթական գործին: Նախ քան մանկավարժութեան նպատակի պարզաբանելը, արժէ այդ գաղափարի բացատրութեան պատմութեանն անցնել:

Ռուսօի՝ այդ յեղափոխական մանկավարժի համար մանկավարժութեան նպատակը իր ժամանակի կուլտուրական ժողովուրդը բնութեան մարդ պատրաստելն է. դարձ գէպի բնութիւն, ահա նրա որոտալից կոչը. մարդկային բնոյթը փչացնող մեր այսօրուայ կուլտուրայից:

Լոքը, նոյն փիլիսոփայութեան հայրերից մէկը, մանկավարժութեան նպատակը գտնում է նրանում, որ երեխաներից կեանքի մարդիկ, հասարակութեան համար օգտակար անհատներ պատրաստուի:

Պետտալոյին կարծում է, որ մանկավարժութիւնը պէտք է ձգտի մարդու «բոլոր ուժերի հարմոնիկ կրթութեան», ուրեմն կրթութիւնը պէտք է հոգեպէս ներդաշնակօրէն կրթուած անհատներ պատրաստէ:

Շլայերմախեր ընդունում է, որ մանկավարժութիւնը պէտք է մանուկներին ընդունակ դարձնէ հասարակական կեանքի համար:

Կարելի էր էլ աւելի օրինակներ բերել, սակայն այս միջանկյուն էլ ցոյց են տալիս, թէ մանկավարժութեան նպատակի բացատրութիւնը որքան տարբեր է զանազան մանկավարժների մօտ և զանազան հայեցակէսներից բացատրուած: Ո՞րն է ճիշտը նպատակի այս բացատրութիւններից, որն աւելի լցնել կարող է ուսուցչի ներքին աշխարհը. վերջապէս որո՞ն հետեւել աւելի մեծ օգուտ կը տայ, թէ անհատին և թէ հասարակութեան: Ինքնին մի կարևոր հարց, որովհետև անվարժ և ինքնուրոյն մտածողներից զուրկ անհատների համար անպայման մի գիտարութիւն է մանկավարժութեան նպատակի բացատրութիւնների այս ծովից զուրս գալը:

Մի բարեբախտ ելակէտ կայ. որովհետև մանկավարժութեան նպատակի բացատրութեան խնդիրը անմիջօրէն կապուած է բարոյագիտական խնդիրների հետ և անհատի ունեցած բարոյական իդէալներն որոշիչ լինել կարող են մանկավարժութեան նպատակի գաղափարի պարզաբանման համար՝

ուստի և աւելի յարմար է դիմել բարոյագիտութեան — էթիկային: Թէև էթիկայի մէջ ևս տիրող են բաղմամբիւ հոսանքներ և բւեր-
ղութիւններ շատ դէպքերում ըստ արտաքինի, իրարու բոլորո-
վին հակադիր, սակայն բարեբախտաբար այդ ընդհանուր հա-
կադրութիւնների միջից դուրս գալու մի ելակէտ կայ, որի վը-
րայ և պէտք է հիմնաւորել մանկավարժութեան նպատակի բա-
ցատրութիւնը: Էթիկական սիստեմների մէջ բարոյական իդէալ-
ները համարեա նման են, շատ քիչ բացառութեամբ, տարբեր
են միմիայն այդ իդէալներին ձգտելու միջոցներն ու ողորմ-
թիւնները: Բոլոր էթիկական դպրոցների մէջ, ինչպէս և կան-
տոն էլ է ընդունում, կան երկու աչքը ընկնող կողմեր — անձ-
նականի և օտարի կատարելութեան և բարեբախտութեան ձգ-
տումը. և իսկապէս բնագիտութիւնն էլ նոյնն է պնդում:

Ըստ բնագիտութեան մարզը մի սոցիալական կենդանի է,
որին յատուկ են ոչ միայն այնպիսի ինստիտուտներ և ձգտումներ,
որոնք պատում են անհատական շահերի շուրջը անհատին կուլ-
տուրական դարձնելով՝ այլև նոյնպէս յատուկ են նրան սոցիալ-
ական-այլասիրական ընազդներ: Անհատը հասարակութեան —
ուրիշների մէջն է սպլում, առանց որի անհատական գոյու-
թիւն անկարելի է, ուստի և անհատի կողմից անհրաժեշտ են
այնպիսի ձգտումներ և գործողութիւններ, որոնցով նպաստա-
ւորում է ուրիշների՝ հասարակութեան կեանքը բախտաւոր
հիմքերի վրայ դնելու, և այս անհրաժեշտ է նոյնիսկ անհատական
շահերի տեսակէտից: Ուրեմն էթիկան պէտք է լինի էգօրիստա-
կան և ալտրոիստական: Էգօրիստական այն մտքով, որքան
դա անհրաժեշտ է անհատի պահպանման և կանոնաւոր դար-
դացման համար և ալտրոիստական՝ գործողութիւններ, որոնք
կարելի են դարձնում հասարակական կեանքը: Այս է բնագի-
տական էթիկայի կորիզը: Ինչպէս վերել առաջինը, այս պա-
հանջին համապատասխանում են, ընդհանրապէս, միւս սիս-
տեմներն ևս, նոյնիսկ ուտիլիտարիստական էթիկան որից մի
առանձին վախ ունեն որոշ տեսակի մարդիկ. սրտ մէջ էլ ուժեղ է
հասարակական տարրը, այլասիրական ձգտումները, որը աղա-
յոցեղ կարող են յայտնի ուտիլիտարիստ Ստ. Միլլի այս խօս-
քերը. «Արա այն, ինչ ցանկանում ես, որ ուրիշը քեզ անէ և
սիրիր քո մօտիկին այնպէս՝ ինչպէս քեզ. այս պահանջները
արտայայտում են միայն ուտիլիտարիստական մտաւրի իդէալ-
ները»: Ինչպէս տեսնում էք, էութիւնը նոյնն է բոլոր տեղերը,
այդ էականին ձգտելու միջոցներն են տարբեր:

Այս է սոսա այն էականը, որի վրայ պէտք է խառնվի
■ մանկավարժութեան նպատակի դադափարի բացատրութիւնը.

մարդը հասարակական կենդանի է, նա մենակ մարդ լինել չի կարող, այլ կարիք ունի իր նմաններին՝ մարդկային, կուլտուրական կեանք ստեղծելու համար. նա մի օղակն է այն մեծ շղթայի, որ հասարակութիւն է կոչւում: Այդ երկու մարմինները—հասարակութիւն և անհատ լինելով իբրև մի-մի օրգանական ամբողջութիւններ իրանց ուրոյն և կամ համանման պահանջներով, ունին և իրանց ուրոյն գոյութեան իրաւունքը և շահերը: Մանկավարժութիւնը երբ յանձն է առնում երիտասարդ սերնդին կրթելու հոգսը՝ միշտ ի նկատի պէտք է ունենայ, որ իր սանը կղկիտցած, մենակ չպէտք է ապրէ, այլ հասարակական աստիճանաւորումների վրայ որոշ տեղ պէտք է բռնէ, և որ այդ երկու մարմինները բնականօրէն ունենալու են իրանց փոխադարձ յարաբերութիւնները և ազդեցութիւններ: Բարոյական անկումն է, եթէ անհատը մոռանում է իր հոր, ինքնապաշտպանման բնազդին բաւականութիւն տալը, բարոյական անկումն է նոյնպէս այդ բնազդին կուլ գնալը, հասարակութեան շահը մոռանալը: Ահա բարոյական այն առողջ հայեցակէտների ուրուագծումը, որոնց վրայ պէտք է բարձրանայ մանկավարժութեան նպատակի խնդիրը և որը շատ գեղեցիկ ու վարպետօրէն անում է յայտնի մանկավարժ Յիպլերը*):

Ըստ Յիպլերի մանկավարժութիւնը ձգտում է չորս նպատակների, որոնք միասին մի ամբողջութիւն են կազմում:

I Մանկավարժութեան առաջին գործն է զարկնաւ աւելցնելու քաղաքացիական գործունէութեան և այդ կարելի դարձնող պայմանները պատուաստել և արմատաւորել դաստիարակւողներին մէջ, որ անհատը կատարէ այն պարտականութիւնները, որոնք իր՝ անհատի վերաբերմամբ կատարել պարտաւոր է: Անհատական երջանկութիւնը մանկավարժութեան մէջ կարելի է բաժանել երկու մասի.

Ա) Երեխայի բարեբախտութիւնը ներկայում. այսինքն, որ երեխան իրան բախտաւոր, երջանիկ պէտք է զգայ և իր դաստիարակուելու ժամանակ: Այս պահանջը կարեւորութիւն է ստանում, մանաւանդ այն ժամանակ, երբ մի հայեացք ենք նետում ներկայ դաստիարակչական ձեւերին: Ներկայում կըրթուող երեխան մոռացուած է իբրև մի ապրող անհատ, որը նմանապէս երջանիկ լինել է ցանկանում: Ոչ թէ աշխատում են սովորելիքը հաճելի դարձնել երեխայի համար, այլ անցնել այն ինչ ծրագիրն է պահանջում և կամ ինչ հարկաւոր է ապագայ անկախ, քաղաքացի մարդուն և մոռացւում է դաստիար-

*) Dr. Theobald Ziegler: «Allgemeine Pädagogie» 1905.

բակուղի ներկան: Ճիշտ է, ապագան միշտ աչքի առաջ պէտք է ունենալ, բայց և չպէտք է մոռանալ ներկայ դաստիարակուողը իր հոգեկան ուրոյն պահանջներով:

Անհատական երջանկութեան միւս տեսակն է.

Բ) Անհատի երջանկութիւնը ապագայում. որ երեխայի ներկայ երջանկութիւնը չմոռանալով՝ ի նկատի պէտք է ունենալ, որ նա իբրեւ անհատ ապագայում շարունակելու է իր գոյութիւնը աւելի բարդ հանգամանքների մէջ, ուստի և այդ ապագայ բախտաւորութեան համար ևս պէտք է կրթել մանուկին, որ նա ստանայ այն բոլոր առաւելութիւնները, որոնք մարդոց դարձնում են երջանիկ, որ նա կեանքի համար լինի մի դիմացկուն և կորովի մարդ:

II Մանկավարժութեան նպատակի երկրորդ մասն է կազմում Հասարակութեան բարեբախտութեան խնդիրը: Ասացինք, որ բացի անհատը կայ և հասարակութիւն իր լինքնուրոյն պահանջներով և որովհետեւ անհատը աճում է միմիայն հասարակութեան մէջ, ուստի և մանկավարժութիւնը պէտք է պատրաստէ այնպիսի անհատներ, որոնք բախտաւորացնելով հասարակութիւնը՝ աւելի միջոց ունենան հոգեպէս աճելու և զօրեղանալու: Հասարակական բախտաւորութեան նոյնպէս կարելի է հասնել երկու կերպ.

Ա) Հասարակութեան բարեբախտութիւնը ներկայում. որ երեխան իր կրթութեւն, դաստիարակութեւն ընթացքում այնպէս պէտք է կրթուի, որ հեշտութեամբ յարմարուել կարողանայ հասարակութեան (ընտանիքին գլխաւորապէս), որ ոչ երեխան հասարակութեան և ոչ էլ վերջինս առաջինի համար բեռ դառնան:

Բ) Հասարակութեան բարեբախտութիւնը ապագայում, որ երեխան այնպէս պէտք է դաստիարակուի, որ նա ապագայում հասարակութեան բարեբախտութեանը մեծապէս նպաստել կարողանայ և ապրէ, որպէս մի սոցիալական յատկութիւններով օժտուած անհատ, որը ոչ թէ խափանում է կուլտուրայի ընթացքը, այլ զօրավիգ է նրա յառաջխաղացման:

Ահա այն իդէալները, որոնց հասնելուն պէտք է ձգտէ մանկավարժութիւնը և զգոյշ պէտք է լինի, որ ոչ անհատական բախտը անտեղի զոհ բերուի հասարակականին և ոչ էլ վերջինս առաջինին, այլ որ երկուսն էլ հաւասարապէս աճեն և զօրանան կրթուող սերնդի մէջ: Նպատակի այս չորս ճիւղաւորումները պէտք է միանան մի ընդհանուրի մէջ և ի-

բարից շողկապուած պէտք է լինեն «բարոյական անհատի և հասարակութեան» կարելիութեան իրէշալով:

Այս բացատրութիւններից յետոյ կարող ենք մանկավարժութեան նպատակի խնդիրը ամփոփել հետևեալ բանաձևի մէջ.

Մանկավարժութեան նպատակն է պատրաստել այնպիսի անհատներ, որոնք միջոց ունենան կուլտուրական կեանքում վերադասարկելու և գործեր կերտելու իրանց կարողութեան կամ ուժերի մաքսիմումին համապատասխան և որոնց անհատական շահերը ներդաշնակօրէն ընթանան իրէշալական հասարակութեան շահերի հետ:

III Մանկավարժութեան կարողութեան սահմանները.

Մանկավարժութեան նպատակի խնդիրը պարզելուց յետոյ յաւաքանում է բնականօրէն այն հարցը, թէ որոնք են մանկավարժութեան կարողութեան սահմանները, որոնցից այն կողմ անցնել նա չի կարող. ինչ չափերի մէջ իրականանալ կարող է այն նպատակը, որը սահմանուած է մանկավարժութեան համար, հարցեր, որոնց լուծումը զբաղեցրել է դեռ դարեր առաջ ապրող յայտնի մտքերի և լուսաբանուել դանազանապէս:

Սուկրատէսը, Պլատոնը, Արիստոտէլը մեծապէս համոզուած էին մանկավարժութեան ամենակարողութեան վրայ: Հին դարու վերջի ամենայայտնի հետորդ — մանկավարժ Քուլինտիլեանը այսպէս է յայտարարում այդ խնդիրը. «Հոգու կարողութեամբ մէկը միտից տարբեր է. այդ ևս ընդունում եմ. սակայն չի կարելի մէկը գտնել, որը եռանդի միջոցով մի բանի հասած չլինի»: Քուլինտիլեանը ուզում է ասած լինել, որ մանկավարժութիւնը ամենակարող ուժ ունի, քանի որ եռանդի միջոցով ամեն բանի հասնել կարելի է, իսկ այդ եռանդը ծնեցնել կարող է մանկավարժութիւնը: Այդ հաւատը տիրող էր ընդհանրապէս հին դարում:

Միջնադարը, մտքի ստրկութեան այդ դարեշրջանը — երբ ոչինչ ստեղծելու տենչ չկար — կրկնում է հին փիլիսոփաների մտքերը նոյնութեամբ և կամ որոշ աղաւաղումներով:

Վերածնութեան դարումն է սկսում մարդկային միտքը ազատուել միջնադարեան մրափից և կրօնական կառնաքննութից. ահա այս սիրուն դարեշրջանում ևս կրկնում է հին մտածողների կարծիքները մեզ հետաքրքրող հարցի մասին. «մարդիկ չեն ծնւում, այլ կրթւում են» տերմինով ասուել է ուզում,

ոչ թէ ծնունդն է մարդոց տարբերում, այլ այն կրթութիւնը, որը նրանց է տրւում:

Մանկավարժութեան կարողութեան հաւասար իր պաշտնակէտին է հասնում մանաւանդ 17—18-րդ դարերում: Լայրնիցը ասում է. «Տուէք մեզ դաստիարակութիւն և մենք մի դարուց քիչ ժամանակամիջոցում եւրոպայում խարակտերը կը փոխենք»: Նոյնանման միտք է յայտնում և Կանտը. «Մարդու բնութեան կատարելութեան դադարները թաքնուած է կըրթութեան կողմէ... գրաւիչ է պատկերացնել, որ դաստիարակութեան միջոցով մարդկային բնոյթը միշտ գէպի լաւը պէտք է դարգանայ»: Փիլիսոփայ Լոքը ընդունում էր, որ մարդոց վատ կամ լաւ, հասարակութեան օգտակար կամ վնասակար լինելը հետեանք է այն կրթութեան, որը նրանց տրւում է: Նման շատ փաստեր բերել կարելի է, թէ մինչև 19-րդ դարը յայտնի մարդիկ ինչ մեծ հաւատ ունէին մանկավարժութեան ամենակարողութեան վրայ և զուցէ նրանից աւելի էին սպասում, քան իսկապէս կարելի է:

19-րդ դարումն է սկսում լաւը կատարած այդ հին թէզիսի դէմ: Այս հարցի հիմնաւոր արծարծողն էր յայտնի պետիմիստ փիլիսոփայ Շոպենհաուէրը, ըստ որի, ինչպէս բոլոր իրերը իրանց քուլիտէտը ունեն, այնպէս և ամեն մի անհատ ունի իր բնածին, անխափանելի խարակտէրը, որը դաստիարակութիւնը ճշտացնել, բայց ոչ հիմնովին փոփոխել կարող է. բնածին խարակտէրի կամ քուլիտէտի հիմնական փոփոխութիւնը կարող է շատ հազուադէպ դէպքերում պատահել: Հոմարեա նման եզրակացութեան է դալիս և ժամանակակից բիօլոգիան: Անհատը մաքուր չէ ծնւում հոգեկան արական կամ բացասական յատկութիւններից, այլ բնականորո՞ւած այն դրական կամ բացասական կողմերով, որոնք յատուկ են եղել իրանց ծնողներին, այս նմանողութիւնը, կամ աւելի ճիշտ ժառանգականութիւնը, հասնում է մինչև պապերը և էլ աւելի հեռուն: Ստատիստիկան ցոյց է տալիս, թէ մի ոճրագործի ընտանիքից քանի-քանի ոճրագործներ, առաքակներ, զոգեր, անառակներ են դուրս եկել: Ուրեմն նորածնունդ անհատը մի մաքուր տախտակ չէ, որի վրայ ամեն բան գրել կարելի է, ինչպէս կարծում էր Լոքը, մի մատղաշ ծառ չէ, որին ուզած կողմ ծառ կարելի լինի: Մանկավարժութիւնը սրանով կանգնած է մի մեծ պրոբլէմի առաջ. նրա անելիքը այնքան էլ հեշտ չէ ինչպէս կարծւում էր. դաստիարակելուց առաջ մանկավարժը իր սանի ժառանգած լաւ ու վատ կողմերին տեղեակ պէտք է լինի, որպէսզի ըստ այնմ յարմարեցնէ իր անելիքը. իսկ շատ

դէպքերում էլ նա ոչինչ անել կարող է, եթէ երեխան կրթութեան անընդունակ է ծնունել:

Ինչպէս տեսնում էք, սրանով թուլանում է մանկավարժութեան ամենակարողութեան հաւատը, սակայն բնական մի այլ երևոյթ բիօլոգիայի եզրակացութեան այս ֆատալիզմը մասամբ մեղմացնում է. դա սուգեսցիօնի (ներշնչում) գոյութիւնն է:

Սուգեսցիօնի մի տեսակն է հիպնոտիզմը: Հիպնոզացածը միշտ իշխուած է լինում այն բոլոր մտապատկերներով, որոնք նրա մէջ վերարտադրել է ուզում հիպնոզացնող անհատը և ահա այս հանդամանքը կարելի է դարձնում որոշ ազդուներով բժշկել արբեցողներին, ծոյլ և անառակ կանանց հայրն: Սակայն հիպնոտիզմը կրթութեան մէջ գործողիւր դեռ վաղաժամ է, քանի որ դեռ հիմնովին չէ ուսումնասիրուած, բացի այդ, ներշնչումները ազդում են մարդոց առողջութեան և ոչ բոլորը ենթակայ են նրա ազդեցութեան: Կայ սուգեսցիօնի մի ուրիշ տեսակը—նմանողութեան հակումը—որը աւելի ընդհանուր բնաւորութիւն ունի և յատուկ է նոյնիսկ կենդանական աշխարհին: Պատմական և հասարակական առօրեայ կեանքը լի է այս իրողութիւնը ապացուցանող փաստերով. Խաչակրաց արշաւանքը դէպի Աւետեաց երկիրը մասամբ այդ պատճառի վրայ է հիմնուած. հասարակական շարժումների ժամանակ մէկի օրինակը կարող է վարակիչ դառնալ միւսների համար. կարելի է այս մասին բաղմաթիւ օրինակներ բերել *): Վերջերս սկսել են այս օրէնքի հիման վրայ մանկավարժական փորձեր անել, որոնք յաջողութեամբ են պատկուել. նմանողութեան օրէնքի հիման վրայ կարելի է եղել դանադան յատկութիւններ արմատախիլ անել երեխայից և ուրիշները նրա տեղը պատուաստել, մի հանդամանք, որից պէտք է օգտուէ ապագայ մանկավարժութիւնը, բանի որ սա էլ դեռ կանոնաւոր չէ ուսումնասիրուած: Շատերը կարծում են, որ սուգեսցիօնի ներկայութիւնը պէտք է մեր մէջ արմատաւորէ հին մտածողների այն կարծիքը, թէ մանկավարժութիւնը ամենակարող ուժ է:

Սակայն սուգեսցիօնն էլ դեռ չի ապահովում այդ կարծիքի ճշտութիւնը և աւելի հաւանական է ընդունել Լամբրոզոյի բնածին ոճրագործների թէօրիան և այնպիսի հոգեպէս թոյլերի գոյութիւն, որոնք կրթուելու, հասարակական նորմալ կեանք վարելու անընդունակ են. նոյնպէս պէտք է ընդունել և

*) Այս նիւթի և օրինակների մասին տես՝ «P. Barth. «Die Elemente der Erziehungs—und Unterrichtslehre auf Grund der Biologie der gegenwart»:

Նորմալ մարդոց մէջ ժառանգական այնպիսի յատկութիւններ, որոնց հիմնովին փոխել չի կարող դաստիարակութիւնը: Ճիշտ է, մանկավարժութիւնը անհատի և հասարակութեան բարօրութեան համար շատ բաներ անել կարող է, քան ուրիշ որեւէ հանգամանք. նա որոշ հոսանքներ մտցնել կարող է հասարակական կեանքում, նա մի ուժ ունի, որով հասարակութեան առողջացնել և կամ հիւանդացնել կարող է, սակայն պէտք է ընդունել և այն ճշմարտութիւնը, թէ նա մի ամենակարող ուժ չէ, որ նա շատ դէպքերում չի կարող իր սանի վրայից ոչնչացնել ժառանգականութեան, կլիմայի եւ բնութեան, տեղի, հասարակութեան և նրա մէջ եղող հոսանքների» և պատահականութեան ազդեցութիւնները և որ նա անկարող է կերպով փոխել. անհատի, էգոյի, այսպէս ասած, անհատական բնածին գոյնը: Անհատները նախորոշուած են նոյն իսկ մարմնական այս կամ այն ինչ արտաքինով, որն անպատճառ պէտք է լինի, որը ոչինչ փոխել չի կարող. նոյնը և հոգու համար պէտք է Շոպենհաուէրի պէս ընդունել, որ անհատները ունեն իրանց ընդածին, էական գունաւորումը—խարակտէրը, որը հիմնովին դաստիարակութիւնը փոխել չի կարող և ուրախալի է, որ ընդհանրապէս փոխելու էլ կարևորութիւն չունի:

IX. Փրփրքական կրթութիւն

Ահա մանկավարժութեան մի կողմը, որը այնքան յանցաւոր կերպով արհամարհուած է մեր դպրոցներում, ուր բաւականանում են լաւ կամ վատ միմիայն հոգեկանի կրթութեամբ, իսկ մարմինը միջնադարեան կղերի պէս չարութեան բուն են կատարում: Գործին լուրջ նայելը ցոյց կը տայ, թէ որքան անարդարացի վարմունք է դա:

Մարդս կազմուած է մի միութիւն կազմող երկու կողմերից—հոգեկանից և մարմնականից. երկուսը անքակտելիօրէն շաղկապուած են իրարից և այդ մասերի բաժան-բաժան ընդունելը և կամ երեակայելը միայն մտաւոր արատակցիայի արդիւնք է. մի հին ճշմարտութիւն է, թէ մարմնի յոռի դրութիւնը անմիջօրէն ազդում է հոգեկանի վրայ և ընդհակառակն, և երբ քակուած է այդ երկուսի ներդաշնակ յարաբերութիւնը դա մարդու համար մի մեծ թշուառութիւն է: Ուրեմն և պարզ պէտք է լինի, որ եթէ դաստիարակում է երեխայի հոգեկան աշխարհը, անհրաժեշտ է դրա հետ կցել և մարմնականը, որի առողջութիւնը մի վօրաւոր հիմք դառնալ կարող է հոգեկան կրթութեան յաջողութեանը: Ոչ միայն անհատական, այլ և հա-

սարակական բարօրութեան տեսակէտից անգամ անհրաժեշտ է ֆիզիքական կրթութեան վրայ մեծ ուշադրութիւն դարձնելը: Հռովմէական մեծածաւալ պետութիւնը ընկաւ, որովհետեւ այլ պատճառների հետ մեծ դեր էր խաղում գերմանացիների առողջութիւնը, պնդակազմութիւնը, իսկ հռովմէացիների զեղխ կեանքից յառաջացած մարմնական թուլութիւնը:

Մարմինը փոխարկումների և զարգացման է ենթակայ, այդ զարգացման ընթացքին նպաստելու համար՝ հարկաւոր է հոգս տանել մարմնի յիշող և գործադրել այն պատուէրները, որը պահանջում է հիդրէնան էամ առողջապահական գիտութիւնը:

Մանկավարժներից և թէ բժիշկներից շատերը կարծում են, որ բոլոր դպրոցներում, մեծերին և թէ փոքրերին իրրե դաս պէտք է աւանդել առողջապահական օրէնքները, որը աշակերտների առողջապահութեանը նպաստիչ լինել կարող են: Սակայն մենք միանում ենք այն մանկավարժների կարծիքներին, թէ փոքրերի համար մի անհրաժեշտութիւն չէ դա, որ մի սաւարկայով ևս բեռնաւորել նրանց, այլ որոշուցիչը պէտք է աշխատէ պրաքտիկայի միջոցով առողջապահական պահանջները սովորութիւն դարձնէ երեխաների համար: Նա պէտք է կատարէ այն բոլոր պարտականութիւնները, բրնձ իրենից են կապուած և կապ ունին աշակերտների առողջապահութեան հետ. սենեակները մաքուր պահել տալ, մաքուր լինի դասարանների օդը, պարտէզը ժշակել իր սանների հետ և այլն: Եթէ ուսուցիչը հոգս է տանելու երեխաների առողջութեան վրայ, պարզ է որ նա հիմնովին ծանօթ պէտք է լինի հիդրէնային, ուստի և անհրաժեշտ է, որ սեռինարիաներում և միջնակարգ դպրոցները բարձր դասարաններում դասաւանդուէ առողջապահութեան մասին:

Առողջապահական դանազան կանոնների պահելուց և գործադրելուց յետոյ՝ երեխայի առողջութեանը նպաստող ամենակարեւոր հանգամանքներից մէկն է և խաղը: Խաղը երեխայի գոյութեան միջուկն է, որից զրկուելը նշանակում է զրկուել իր էութիւնը գոյն տուող ամենազլխաւոր տարրից: Խաղը երեխայի համար այն է՝ ինչ ջուրը ձկան, օդը՝ մարդու: Երեխան խաղից սգաստուել չի կարող. մի ներքին մղում քշում է նրան իր նմանների շրջանը՝ իրան ամենից լաւ բախտաւոր դարձնող պարապմունքով տարուելու: Խաղերի ժամանակն է սկսում զարգանալ երեխայի հոգեկան բարձր կամ ստոր կողմերը, ուստի և խաղերը մի զէնք պէտք է դարձնել երեխայի հոգեկանը կրթելու համար:

Խաղի նշանակութիւնը երեխայի համար բազմաթիւ է:

Առաջին անգամ խաղերի ժամանակն է սովորում երեխան սոցիալական կեանքի տարրական պահանջներին բաւականութիւն տալը, կամ նա դառնում է իշխող և հրամայող իր ընկերների վրայ, ուստի և նրա մէջ զարգանում է ձգտումն ղէպի բարձրը և իշխումը և կամ նա կրող է լինում ուրիշի հրամանների և պատուէրների և սովորում իրանից խելօքների ու կարողների իշխանութեանը հնթարկուել. առաջին անգամ հրեխայի մէջ ծագում է կաղմակերպելու և կաղմակերպուելու ձգտումներ: Խաղերի ժամանակ զարգանում է նոյնպէս երեխայի ինտելեկտը, նա դառնում է աւելի սրամիտ, խելօք, ճարպիկ և այլն: Նոյն ժամանակն են զարգանում նոյնպէս երեխայի հոգեկան վատ կողմերը—նախանձ, անգթութիւն, նենգութիւն և այլն: Եւ վերջապէս խաղերի ժամանակն է ծագում և զարգանում հոգեկան այն հրաշալի կողմը, որը էստէտիքական զգացում է կոչւում: Խաղը գեղարուեստի նախադուռն է, ինչպէս ասում են, նրա ժամանակ ևս գործում է երեխայի ֆանտազիան և խաղերը մեծ մասամբ սրա ծնունդն են: Խաղի էութիւնը միտւորում է գեղարուեստի էութեան հետ և հիմնական գծերով նոյնն են. ուստի, եթէ մենք ուզում ենք մեր դպրոցներում էստէտիքական դաստիարակութեան մեծ տեղ տալ, անհրաժեշտ է առանձին ուշադրութեան արժանի երեխաների խաղերը և նրանց գործադրութեանը որոշ ուղղութիւն տալ:

Ճաշալիտ երեխան պէտք է ազատ լինի, չկախուած մեծերի հրամաններից և կամայականութիւններից. մեծերի մըշտական միջամտութիւնը կորցնում է խաղի գրաւչութիւնը և նրա նշանակութիւնը երեխաների համար որոշ կողմերով թուլանում է: Երեխաները իրանց հոգեկան բոլոր ուժերը ամփոփում են, գործադրում են խաղալիս միայն այն ժամանակ, երբ այդ թողնուած է իրանց, փոքրիկներին: Ուսուցիչը չպէտք է իր մշտական միջամտութիւններով փշագնէ երեխաների տրամադրութիւնը: Ճիշտ է, ուսուցիչը խաղերին որոշ ընթացք տալ կարող է, կազմակերպել նոր նպատակայարմար խաղեր, սովորեցնել և այլն, սակայն պէտք է աշխատէ, որ սովորեցնելուց, խաղերը կաղմակերպելուց յետոյ՝ հեռանայ խաղերից և գործի շարունակութիւնը երեխաների ինքնուրոյնութեանը թողնէ: Հրամաններով, անտեղի միջամտութիւններով խաղը կորցնում է իր գրաւչութիւնը: Ուսուցիչը կարող է անուղղակի ճանապարհներով երեխաներին խաղի գրգռել, եթէ միայն դրա կարիքը կայ:

Մարմինը կրթելու համար պակաս նշանակութիւն չունի և մարմնամարզութիւնը (գիմնաստիկա), որը կրթելով

մարմնի անդամները նրանց ընդունակ է դարձնում հեշտութեամբ հնազանդութիւն կամքին: Մարմնամարզութեան դործագրութիւնը ընդունուած էր դեռ հին դարերում և զուցէ իր կատարելութեանը միայն յունական կեանքումն է հասել, ուր նա էր լաւ կրթուած մարդ համարուած, որի մարմնի և հոգւոյ զարգացումը կազմում էին մի սիրուն ներդաշնակութիւն և մէկը միւսին լրացնում էր: Միջնադարեան խաւարում մոռացուեց մարմնի կրթութեան հարցը և միայն նոր դարու ըսկզբներում ծագեց նորից մարմինը կրթելու պահանջը: Ներկայ եւրոպական երկրներում մեծ ուշադրութիւն է դարձնում մարմնամարզութեան վրայ և ուսումնարաններում զրա դործագրութիւնը պարտադիր է դարձնում:

Մարմնամարզութիւնը կարելի է երկու մասի բաժանել, ազատ վարժութիւններ և գործիքներով, վերջին ձևը դործագրւում է մանաւանդ Գերմանիայում: Գերմանական այս մարմնամարզական ձևը դէմ վերջերս մի նոր հոսանք է սկսուել, Ֆիզիոլոգ Մոսսօի կարծիքով գործիքներով վարժութիւնները և առհասարակ այնպիսիները, որոնք ուժերի մեծ վատնումն են պահանջում, օգտակար չէ և միայն աւելորդաբար մկաններն է մեծացնում և հաստացնում, ուստի և աւելի ցանկալի է վզի, ձեռների և ոտների ազատ վարժութիւնները — քայլել, խաղալ, պարել և այլն: Գործիքներով խաղերի դործագրութիւնը պէտք է հանել զպրօցներից: Մարմնամարզութիւնից ազատ պէտք է լինեն փոքրերը, որոնց բաւականացնել կարող է դանդաղ խաղեր, որոնք նոյնպէս պատճառ են լինում մարմնի դանդաղ նագոյն շարժումների և որ մանաւանդ փոքրերի համար խաղերը աւելի հաճելի են, քան հրամաններով տարւող մարմնամարզական վարժութիւնները:

V. Կրօնական կրթութիւն

Կրօնը յատուկ չէ մարդկային բոլոր ազգերին ու տեւսակներին, կան այնպիսի վայրերի ազգեր, թուով 10 միլիոն, որոնք չունին ոչ մի կրօն և դեռ նրանց համար չի պարզուել աստուածութեան գաղափարը: Սա մի սիրուն փաստ է, որ կրօնը իր ծագումն ունի և արդիւնք է մարդկային սեռի որոշ զարգացման և որ առանց այդ զարգացման աստիճանների կրօն յառաջանալ չի կարող:

Որտեղից յառաջացաւ կրօնը: Թէև որոշ զարգացման հասած՝ ուսկայն դեռ մտաւոր այն մեծ կարողութեանը, մշտածումի այն խորութեանը չէր հասել աստուածութեան գա-

զափարին հասնող մարդկութիւնը, որ բնութեան երևոյթ-
ները կարողանար այնպէս բացատրել, ինչպէս նրանք կան
բնութեան մէջ. և ուր չէ գործում զուտ բանականութիւ-
նը, բնական է, պէտք է գործէ հաւատը, երեւկայութիւ-
նը, անոտի պաշտամունքը և այլն: Բնութեան այն երևոյթ-
ները, որոնց չէր կարողանում մարդը մի ուրիշ երևոյ-
թից բնականօրէն բացատրել, նրանց պատճառական կապակ-
ցութեան ընթացքին կանոնաւոր հետեւել, դնում էր նրանց մէջ
մի անդրբնական գոյակ, մի ոգի, որը շարժում ու նրանց
կեանք է տալիս: Հիւանդութիւնը, մահը ստիպում էին նրան
ընդունել մի էութեան գոյութիւն, որի մարմնից ժամանակաւոր
հեռանալու հետեանքը՝ հիւանդութիւնն է լինում, իսկ ընդմիշտ
հեռանալունը՝ մահ: Հոգիներն այս նայիւ հաւատը կրօնների
զարգացման առաջին աստիճանն է, որից յետոյ է յառաջանում
կրօնի աւելի բարդ ձևերը:

Կրօնը ոչ միայն ինտելիգենցի զարգացման ստորու-
թեան հետեանք է, այլև ինչպէս որ ուրուագծեցինք, այլև զգացում-
ների աշխարհի վերարտադրութիւն: Լուսնկայ գիշերներին մար-
դու հոգին թախիծի մէջ պահող մոմենտները, կուտական ան-
տառների վեհ տեսարանները, ամպերի մէջ ծրարուող լեռնաշղթա-
ների յաղթական գնացքները, ամպերի սրտը, ուժեղ քամիներ
ի հոսանքները, կեանքի և բնութեան գեղեցկութիւնը, մի խօս-
քով այն ամենը ինչ կայ տիեզերքի մէջ և մարդու հոգում ու-
ժեղ զգացումներ է վերարտադրում և վերջապէս այն իրողու-
թիւնը, որ բնութեան բարդ օրգանիզմը կառավարող մի ուժ
պէտք է լինի, որը կանոնաւորում է և տիեզերքը և կեանքը
և այլ շատ հանդամանքներ նախնի մարդոց և ներկայ մարդ-
կանցից շատերի մէջ ծնեցնում են անձնաւոր աստուածութեան
զաղափարը և կրօնական ներքին զգացումներ:

Կրօնը անցնալով ամեն ինչ էր, կեանքը իր ամբողջու-
թեամբ ընդգրկող մի զօրութիւն, որը մղում էր, թէ անհատ-
ներին և թէ հասարակութիւնները դէպի բարձր կամ սուրբ գոր-
ծերի կատարման: Ինչպէս վերեւ յիշատակեցինք, կրօնական
զգացումի հիմքը զլիսաւորապէս կազմում է այն իրողութիւնը,
որ մարդկային մանուկ միտքը չէր կարողանում բնական հ-
րեոյթների պատճառական կապակցութեան թելը գտնել. մի
բնական երևոյթ միւսով բացատրել, և ուստի յուսալատական
թուիչքներ էր անում դէպի անդրբնականի աշխարհ այնտեղ իր
հարցասէր և որոնող ոգուն բաւականութիւն տալու համար:
Էվոլիւցիան դանդաղել չի սիրում, մարդկային խմբակցութիւն-
ներն աւելի ու աւելի մեծ քայլեր էին անում դէպի զարգաց-

ման բարձր ձևերը, ուստի և զարգացման հետևանք խորաթափանց միտքը սլաքուռն էր տիեզերական հին անքակտելի հարցերի մէջ և որոշ հափի շուծում այդ հարցերն առանց աստուածութեան պաղաւարի օգնութեան, ամէն սեղ տեսնում էր հէնց ինքը ընտրիւնը և ոչ անդորրնականը: Ահա այստեղ թուլանում է կրօնական զգացումը:

Փաստ է: որ օր-օրի վրայ աւելի է թուլանում կրօնի նշանակութիւնը մարդոց համար, եւրոպացիների մէջ միլիոնաւորներ կարելի է հաշուել, որոնք ոչ մի կրօն չունին և կամ չեն պատկանում ներկայ պոզիտիւ կրօններէց և ոչ մէկին: Թուլանալով կրօնի նշանակութիւնը հասարակական կեանքում՝ բնականօրէն հարց պէտք է ծագէր, թէ կրօնը պէտք է մնայ դպրոցներում իրեն պարտադիր դաստանդման առարկայ, թէ դուրս պէտք է նետուէ դպրոցներից. հարցեր, որոնցով տարւում է ներկայումս, մասնաւոր, Գերմանիայի մանկավարժական աշխարհը: Եւրոպական համարեա բոլոր երկրներում, բացի Գերմանիայից, կրօնի դաստանդումը հանում է դպրոցներից որպէս պարտադիր առարկայ և կամ թէ այնպէս է յարմարեցրուած, որ մի ծնող, եթէ չէ ուզում իր որդուն կրօնական կրթութիւն տալ, կարող է ըստ իր ցանկութեան վարուել: Ինչպէս պէտք է լինի մեր դպրոցներում: Ինքնըստինքեան մի դժուարին խնդիր:

Նախ քննենք կրօնի պաշտպանների առարկութիւնները:

Կրօնի դաստանդման պաշտպաններն ուզում են հիմնուել նախ բնադրական այն օրէնքի վրայ, թէ անհատը իր ամբողջ կեանքում անում է զարգացման այն ֆազեր, ինչ արել է մարդկութիւնը իր սկզբից միջի օրս. ահա այդ բնադրական օրէնքը յայտնի Հեկկէլի խօսքերով. «Օնտոգենեզիսը (անհատի զարգացումը) ֆիլոգենեզիսի (սեւի, ցեղի զարգացում) կարճ և արագ բնադրութեան է, պայմանաւորուած ժառանգականութեան և յարմարման (Anpassung) բնախօսական ֆունկցիաներով»: Այսինքն, տեսնում են կրօնի պաշտպանները, մարդկութիւնը իր պատմական կեանքում անցել է զանազան, իրարից որոշ կերպով տարբերուող զարգացման ֆազերով՝ պարզից դէպի բարդը, այդ ֆազաներից մէկն է կալմում և կրօնականի յառաջացման և իշխման շրջանը. և որովհետեւ անհատի, երեխայի կեանքը կրկնութիւն է մարդկութեան պատմական կեանքի, որովհետեւ երեխան էլ իր կեանքի սրտը շրջանում հակում է դէպի կրօնականը. նա որոշ հասակում կենդանացնում է բնութեան ուժերը, ցոյց է տալիս այն յատկութիւնները, որոնք յատուկ էին մարդկութեան կրօնական շրջանին..

ուրեմն և եղբակացնում են թէ երեխան պէտք է կրօնական կըրթութիւն ստանայ, համապատասխանեցում են իր հոգեկան կարողութեան: Այո՛, մի ճշմարտութիւն է, որ անհատի զարգացումը, գուցէ և կոպիտ, բայց և կրկնողութիւն է մտքակութեան միջնայնօրեայ զարգացման և անհատի կեանքի որոշ շրջանները համապատասխան են մարդկութեան պատմութեան որոշ շրջաններին. սակայն այս իրողութիւնը դեռ մի ապացոյց չէ, թէ երեխաները կրօնական կրթութիւն պէտք է ստանան. մարդկութիւնը ունեցել է նոյնպէս վայրենութեան, բռնութեան և այլ նախապատժական շրջանների յատկութիւններ, որոնց թոյլ արձագանքները իսկապէս կրկնում են երեխաների մէջ, սակայն դեռ չի նշանակում, թէ այդ յոռի կամ աւելորդ հակումները պէտք է զարգացունեն. ասողջ մանկավարժութիւնը ընդհակառակն է ունում. ճշտում, ոչնչացնում է այդ յատկութիւնները: Ճիշտ է, մանկան կեանքում կայ մի որոշ շրջան, երբ նա մի առանձին ձգտումն ունի դէպի կրօնականի բովանդակութիւնը կազմող զգացումները, նա սիրում հոգեորել բնութեան ուժերը, նա կրջանիկ է, երբ նրան հէքիաթներով տանում են անպրնականի աշխարհները, սակայն այս իրողութիւնը դեռ թոյլ չի տալիս, որ դասաւանդուի ներկայ պողկտիւ կրօնների դոգմաները և հէքիաթները իբրեւ անհերքելի ճշմարտութիւններ: Մանկան այս շրջանին կարելի է բաւականութիւն տալ դասաւանդման մէջ վերցնելով հէքիաթների, կենդանական վէպի, լեգենդաների, գիւցաղնական պատմութիւնների զործածութիւնը, այսպէս կարելի է օգտուել նաև կրօնի մէջ եղող նման սիրուն պատմութիւններից, սակայն անցնել ոչ ի վերուստ հաստատեալ ճշմարտութիւններ, այլ իբրեւ սովորական աւանդութիւններ:

Կրօնի դասաւանդման պաշտպանները նոյնպէս բերում են այն փաստը, թէ երեխան պէտք է աշխարհի մասին մի որոշ աշխարհայեացք ունենայ: Թէ՛ նրա մէջ ևս ծնում են այն հարցերը. թէ «սրտեղից» են իրերն ու երեոյթները և «ինչո՞ւ» գոյութիւն ունին: Սակայն, ամսո՞ս, որ այստեղ էլ սխալում են, որովհետև կրօնը այդ հարցերին պատասխանել չի կարող որքան էլ իր զբաղման նիւթը դարձնի այդ: Չկան երկու կրօններ, որոնք նոյնօրէն բացատրէին այդ խնդիրները, իսկ այդ հարցերի լուծումով ոչ թէ կրօնները, այլ փիլիսոփայութիւնն աւելի իրաւունք ունի զբաղուելու, սակայն այն էլ պէտք է ասած, որ այդ հարցերը մինչև օրս զբաղանքօրէն չեն լուծուած և գուցէ անկարելի էլ է լուծել, որովհետեւ դրանք պատկանում են անքակտելիներին և դուրս են մեր ինտելիկտին ևնթար-

կուեղուց: «Ինչո՞ւ» հարցր լի լուծուած, և եթէ որոշ մանկավարժներ պնդում են, թէ երեխաներին անհրաժեշտ է բաւականութիւն տալ այդ հարցերի վերաբերմամբ՝ այն ժամանակ աւելի լաւ է դառնալ փիլիսոփայութեան, քան կրօններին:

Կրօնի պաշտպանները նոյնպէս պնդում են, թէ կրօնի գասաւանդումը պէտք է երեխայի բարոյական աշխարհը կազմակերպէ, նրա կեանքի, վարմունքի, գործողութիւնների վրայ իր բարոյական հետքերը թողնէ: Այստեղ էլ կատարւում է նոյն թիւրիմացութիւնը: Կրօնները ներկայ լուլտուրական ժողովուրդների բարոյական կեանքի վրայ շատ քիչ նշանակութիւն ունին և քանի դնում, աւելի է թուլանում: Ներկայ կեանքը ունի իր առանձին էթիկը և այդ ժամանակակից էթիկն է ազդում ներկայ կեանքի վրայ, ուստի և պէտք է աշխատել, ոչ թէ հազարաւոր դարեր առաջ ասուած որոշ ֆորմուլները ձգձգելով՝ յարմարեցնել ներկայի համար, այլ պէտք է ներկային համապատասխան էթիքական կրթութիւն տալ նոր սերնդին, որ պէսզի նա ընդունակ լինի բարոյական պայմանների մէջ կատարելու այն դերը՝ ինչ յառաջագրում է նրան կեանքը: Բարոյականութեան (էթիկայի) գասաւանդումը, որը համարեաւ մոցուած է բոլոր կուլտուրական երկրների զգրոցներում, մասամբ լրացնելու է այն պահանջները, ինչ յուսացւում է կրօնի գասաւանդումից:

Կրօնասէրներից շատերը պնդում են, թէ կրօնը զարթեցնում է մեր մէջ գեղեցիկ զգացում, թի գիտութիւնը մեզ ծանօթացնում է բնութեան օրհկաիւ կողմի, բնութեան երևոյթների յարաբերութեան և կապակցութեան հետ, այն ինչ կրօնը մեր մէջ արթնացնում է այդ երևոյթների իմացութեանը յաջորդող զգացումներ: Կրօնը բնութեանը զգացումով նայելն է և հէնց բնութիւնն է մեր մէջ արթնացնում կրօնի կարիքը: Խնքնաստիճան մի կեղծաւոր միտք, որովհետև այն պաշտօնը, որը վերագրւում է կրօնին, աւելի յատուկ է գեղարուեստին և գեղեցիկի զգացումով զբաղուող գիտութեանը— էստէթիկային: Բնութեան գեղեցկութիւնը ըմբռնելու, տիեզերքի հարմոնիան զգալու համար մենք կարիք չունենք կրօնի ծառայութեանը:

Որ փաստին էլ որ դառնում ենք, տեսնում ենք, որ սկզբունքի տեսակէտից կրօնը գասաւանդման մէջ մոցնելը հիմնավորիկ է և չէ դիմանում քննադատութեան: Սակայն կան չարիքներ, անխուսափելի կոչուած, որոնց վրայ ուշադրութիւն դարձնելը և սկզբունքային զիջում անելն անհրաժեշտ է. դրանց թուին է պատկանում և կրօնի գասաւանդման խնդիրը,

որքան էլ ապացուցենք, թէ ընթնըստինքեան կրօնի դասաւանդումը մի աւելորդ բեռն է դպրոցների համար և նրան դուրս նետել է հարկաւոր, սակայն այդ եղրակացութիւնը գեղեցիկ է միմիայն մեզ, եղրակացնողներին համար. մի թոռայիկ հայկացք մեր կեանքի վրայ ձգելը կը պարզէ, որ այդ հիմնաւոր պահանջը մեր ժողովրդի համար դեռ կանուխ է և առայժմ անիրագործելի:

Անցնենք փաստերին:

Որպիսի մեծ բախտաւորութիւն, երբ բարձր և գեղեցիկ մտքերը կեանքի մէջ իրականացնելուն հակառակ չէ ժողովուրդի հասունութեան չափը և այդ նա մարտել կարող է: Ինչպէս վտանգաւոր և կորստարեւ է անչափահասին, անգարգայածին չափահասին արժանի մտքերով կերակրելը, նոյնը և ժողովրդների համար: Ժողովուրդի զարգացման չափը և ունակութիւն երի քանակը, ահա այն ճիշտ մաշտարը, որը միշտ խնկատի պէտք է ունենալ հասարակական բեֆորմների ժամանակ: Իսկ ի՞նչ է թելադրում հայ ժողովրդի մտաւոր հասունութիւնը: Կրօնական համոզումների զարգացման տեսակէտից մեր ժողովուրդը այն աստիճանի վրայ է, որը ֆետիշիզմ՝ է կոչւում: Նրա համար գոյութիւն ունին պլսաւոր Աստծու մօտ բաւական երկրորդականները. նրան շրջապատող գեղեցիկ ընտելութիւնը լիքն է անթիւ ոգիներով, քաջքերով, որոնք հալածում են մարդոց, ձիերի վրայ հասած և քշում, հարսանիքներ անում և այլն: Հայկական ստրու ձորեր լիքն են զօրաւոր ուխտատեղիներով այս կամ այն բարեխօս սուրբերի անուններով, սուրբեր, որոնք այնքան չար են, որ մի անգամ սրան կամ նրան են կուշ ածում, մի ուրիշ անգամ սարսափելի կարկուտ են ուղարկում մարդոց չարութեան համար և նոյնիոյ շատ անգամ այդ զօրաւոր սուրբերը իրարու դէմ պատերազմներ են մղում: Մեր երկրի սիրուն շուտակալ զիշերները լիքն են անթիւ սատանաներով և այլ ուրիշ յիմարութիւններ, որոնց գոյութիւնը այնքան տգեղացնում է մեր կեանքը: Եւ իսկապէս, այս անտառապաշտութիւններն են հայի իսկական կրօնը, կամ աւելի ճիշտ կրօնի միջուկը: Սա է մեր տխուր իրականութիւնը, որը միշտ ի նկատի պէտք է ունենալ և ըստ այնմ դաստիարակչական գործը կարգաւորել: Մեր ժողովուրդը ագէտ և այն էլ սարսափելի ագէտ է. դեռ բաւականին ժամանակ ունի անցնելու կրօնական համոզումների զարգացման այն ֆազերը, որոնցով անցել են Եւրոպայի կուլտուրական ժողովրդները: Այժմեանից նրա հետ վարուել այնպէս ինչպէս կուլտուրական ժողովրդների հետ վարուել կարելի է, կը լինէր մի մեծ սխալ և հետեւան-

քը տխուր: Մեր գլխաւոր ջանքերը պէտք է լինեն ազատել մեր ժողովուրդը ֆեոդալիզմի ճանկերից և նրան կրօնական համոզումների աւելի բարձր ձևերի հասցնել, մինչև որ ինքը հասունացած լինի քննելու կրօնական կամ հակակրօնական, աստուածային կամ անաստուածային հարցերը. իսկ այժմեանից բոյկոտի ենթարկել կրօնի դասաւանդումը և դպրոցներից դուրս վանել՝ դա մի հակակուրտութեան գործ կը լինէր և յօնքն շինելու տեղ աչքն էլ կը փչացնէինք: Պէտք է առայժմ թողնել կրօնի դասաւանդումը դպրոցներում, որի գոյութեան նպատակը պէտք է լինի ցեղի պէս լափել՝ այն սնտոխաղաշտութիւնները, վայրենիներին յատուկ հայեացքները, որոնցով հարուստ է մեր ժողովուրդը. իսկ կրօնի չդասաւանդումովը նպատած կը լինէինք, որ սնտոխաղաշտական այդ ճահճում դեռ երկար դեպքեր մեր ժողովուրդը:

Մենք պաշտպան ենք այն կարծիքի, թէ մանկավարժական բեֆորմները պէտք է գուցենք թաց լինեն հասարակական, քաղաքական բեֆորմներին: Մեր հասարակական կեանքում դեռ չեն եղել այնպիսի բեֆորմներ, եղածներն էլ այնպէս չի մարսուել, որ կարելի լինէր կրօնի դասաւանդման խնդիրը վերջացած համարել: Մի գաբից էլ պակաս առաջ եւրոպական երկրներում, որոնք կուտուրապէս մեզ ներկայ հասարակութիւնից անհամեմատ բարձր էին, չէր արժարժուում կրօնի դասաւանդումը դպրոցներից դուրս նետելու խնդիրը. թէև այդ մտքին հասած անհատներ կային, սակայն հասարակութիւնը դեռ հասունացած չէր այդ հարցի համար: Մեր ներկայ կեանքը աւելի յետամնաց է, քան եւրոպականը մի քանի դարեր առաջ, ուստի և անկարելի է, որ մեր հասարակութիւնը կրօնը դպրոցներից դուրս նետելու համոզմանը գայ: Մեր ջանքերը պէտք է լինի, որ հասարակական համապատասխան բեֆորմներով, կրօնի դասաւանդման բարեփոխած ձևով մեր ժողովուրդին հասցնենք այն ստադիումին, որ նա ինքը պահանջէ կրօնի արտաքսումը դպրոցներից, ոչ թէ մի քանի լուրջ կամ թերուս անհատներ: Ներկայ դասաւանդելիք կրօնը մի ուժեղ դէնք պէտք է լինի հէնց իր դէմ և աւելի կանուխացնի իր մահը: Կրօնի դասաւանդումը աւելի շօնուեր ունի իրան վերաւորելու և մահացնելու, քան մի այլ աւարկայ, ուստի առ ժամանակ նրան տեղ պէտք է տալ մեր դպրոցներում: Կրօնով կրօնի դէմ—ահա մեր սկզբունքը:

Բացի այս, մասամբ եւրոպական և մասաւանդ մեր հայկական կեանքը ազդուած է կրօնական աշխարհայեացքից, կրօնը դեռ անդրում է և այն էլ ամուր արժատաւորումներով.

խակ սերունդ դաստիարակելիս այնպիսի մի ֆակտոր ի նկատի չունենալ, նշանակում է կամովին կոյր ձևանալ: Ներկայ երեխան ապրում է և պէտք է գործէ ներկայ հասարակութեան մէջ, որի հոգեկան ստրուկտուրան կրօնական հաւատը կամ անոտիապաշտութիւնն է կազմում. հասարակութեան մէջ տեղ բռնող անհատը պէտք է լաւ ճանաչէ հասարակութիւնը, նրա հոգին ու համոզումներն, որպէսզի զրանով կարելի դառնայ ընդհանուր, հասարակական կեանքը: Եթէ աշակերտը դպրոցից կեանք դուրս գալ առանց ծանօթ լինելու հասարակական կազմին, կամ նրա մէջ ապրող կրօնի էութեանը՝ կը լինէր այնպէս, ինչպէս զիտական մարդիկ հետազոտութիւնների համար բեռներ գնային առանց հարկաւոր դործիքների: Ներկայ մեր հասարակութեան կեանքը հարկադրում է մեզ կրօնը դասու-ւանդելի առարկայ դարձնել:

Եթէ այս բոլորից յետոյ էլ լինին մարդիկ, որոնք էլի ցանկանան կրօնի դասաւանդման դուրս նետելը դպրոցներից, հապա ի՞նչ պատասխան պէտք է տան հասարակութեանը, որը դեռ թունդ կրօնական է և տրամադրուած է իր զուակներին կրօն սովորցնել տալ: Ընդհանրապէս պատասխանը այսպէս է լինում. կրօնը պէտք է հեռացնել դպրոցներից և դորա դասաւանդումը թողնել կղերականներին, եթէ դորա կարիքը զգացուի: Այս պատճառաւորութիւնը հիմնուած է մի մեծ տխմարութեան վրայ. դրանով ոչ թէ չարիքի առաջն առնւում է, այլ չարիքն աւելի խորն է արժատաւորւում. կրօնի դասաւանդումը յանձնել կղերականների խնամատարութեան, նշանակում է սերունդն այլասերել, նրան դարձնել աւելի մոլեռանդ, խաւարապաշտ, անոտիապաշտ և այնպէս բացասական, որպէս ինքը կղերականութիւնը: Այս պահանջին ամեն կերպ ընդդէմ պէտք է լինել: Աւելի լաւ է միանգամից, թէև կանուխ, կրօնի դասաւանդումը վերացնել քան այդ կղերականներին յանձնել, որի հետևանքը միշտ սղրալի կը լինի:

Այս բոլորից յետոյ գալիս ենք այն, թէև անախորժ բայց ճիշտ եզրակացութեանը, որ կրօնի դասաւանդութեան արտաքսումը մեր դպրոցներից դեռ կանուխ է, իսկ դրա համար հարկաւոր է հասարակութիւնը կրթել, պատրաստել և ոչ թէ սիրուն ցանկութիւնների շուրջը էլ տւելի սիրուն ճառեր արտասանել: Ուրախալի է, որ պողիտիւ կրօնների մէջ ևս կան բարոյական բարձր և չը հնացած հայեացքներ և մանկավարժական տեսակէտից սիրուն պատմութիւններ, որոնցից պէտք է օգտուել և հիմնովին կերպարանաւորուել կրօնի դասաւանդումը մեր դպրոցներում և դործադրել մինչև այնօր, երբ

ժամանակը ինքը ատելորդ կը նկատի այդ և նրա տեղը կը բռնէ բարոյական և էստէթիքական դաստիարակութիւնը...

Էստէթիքական կրթութիւն

—Էստէթիքական է կոչուած այն կրթութիւնը, որը մարդոց ընդունակ է դարձնում բնութեան և գեղարուեստական ստեղծագործութիւնների գեղեցկութիւնը ճշակել, հասկանալ, ատել նրանով, ներքին սրազան սարսուռ զգալ այն բանի առջև, որը գեղեցկութիւն է կոչուած: Դորան հասնել կարելի է, եթէ մենք որոշ օրէկտիւ երևոյթներէ պտայած տպաւորութիւնները կերպարոյթներ մեր հոգու մէջ իլլուզիաների. կամ յանձնենք մեր Փանտաղիայի մշակմանը. և կամ թէ մեր սեփական Փանտաղիայի մէջ ապրույ, մեր հոգին տիրող մտապատկերը վերաբաղենք օրէկտիւ աշխարհի զանազան ձևերի մէջ—առարկայացնենք մեր մտապատկերները, մի գործողութիւն, որը նոյնպէս մեր մէջ ծնեցնում է էստէթիքական ըզգացումներ, մշակում է մեր Փանտաղիայի գործունէութիւնը նրան աւելի բարդ և սիրուն կապակցութիւնների ընդունակ դարձնելով. զարգացնում է մեր ստեղծագործական ոգին, որով դառնում ենք մենք աւելի կենսունակ և կենանքի հետ կապւած:

Բացի այս, էստէթիքական կրթութիւնը նպաստում է մեր բարոյական կենանքի կազմակերպմանը և զարգացմանը. որովհետեւ բարոյականը կախում է մտաւ զգացումներից, իսկ սոքա էլ ներքնապէս կապուած են էստէթիքական զգացումների հետ: Էստէթիքորէն կրթութեամբ մարդը, որի հոգին զգայուն է գեղեցկի համար և ապրում է, որովհետեւ գեղեցկութիւն գոյութիւն ունի, հակաբարոյական լինել նա չի կարող ընդհանրապէս ամեն մի բարոյական գործողութիւն ծնեցնում է նրա մէջ ներդաշնակութեան և քաղցրութեան զգացումներ, որոնք մօտենում և շատ անգամ միաւորուում են էստէթիքական զգացումների հետ: Բարոյական դաստիարակութիւնը լրացնում է էստէթիքականին և ընդհակառակէն:

Մտածածին մի բան չէ էստէթիքական կրթութեան խընդիրը, այլ մեր հոգեկան կազմի էութեանը հետեղ մի հրաժայական պահանջ: Մենք հարկադրուած ենք լսելու այն ուժեղ մղումին, որը մեզ միշտ գէպի գեղեցիկով ապրելու ցանկութիւնն է գրաւում: Մարդկային կենանքը ամբողջովին միապաղաղ հաճոյքից, երջանկութիւնից չէ ձուլուած, այլ մեր բնականաբար մի տառապանքի հովիտ է, ինչպէս և նկատուած է դեռ շատ հնուց: Բախտաւորութիւնն գեղեցկութիւնը, զժրախ-

տուժեան և տգեղի զգացումների հետ միշտ մրցման մէջ են եղել և միմիայն մի ուժեղ բնազդի գոյութիւնն է, որը մարդուն այդ հակասութիւնների պայքարից զուրս է բերում և նրա կեանքի հետ շաղկապում, դա գեղեցկասիրական—օպտիմիստական առողջ բնազդն է, որի առթիւ շատ տեղին է նկատում. Մ. Նորդաուն. «Սկզբնական բնազդը, որը մարդու ամբողջ մտածման և գործունէութեան հիմքն է կազմում և նրա ամբողջ կեանքի վրայ իշխում, օպտիմիզմն է»: Որքան էլ այդ բնազդը խեղդել ջանանք, նա էլի կայ, ներկայ է մեր մէջ, որովհետև նա մեր էութիւնն է կազմում և հազարաւոր ճիւղերով արմատաւորուած է մեր մէջ: Օպտիմիստական զգացումը, որը մեր «մտածման և գործունէութեան հիմքն է» կազմում, հոմանիշ է գեղեցկի զգացման, շաղկապուած է նրա հետ և այս երկուսը մի սիրուն ներդաշնակ ամբողջութիւն են կազմում, այնպէս որ մէկի գոյութիւնը պայմանաւորում է միւսին: Նրա և ընդհակառակն, ուրեմն և զեղեցկի զգացումը նոյնպէս մեր «ամբողջ մտածման և գործունէութեան հիմքն» է կազմում, նա է որ մեզ կապում է կեանքի հետ և այդ բազմաժողով ծովի դառնութիւնը քաղցրացնում, տանելի դարձնում. նա է, որ առօրեայ հոգսերից, աշխարհային չնչին, փոքրիկ իրականութիւնից մեզ վեր է քաշում դէպի այն աշխարհը, որը իդէալների թագաւորութիւնն է կոչւում, որի մէջ մի քանի մոմիւսներ կեանք անցկացնելը, այնպիսի զօրեղ ազդեցութիւն է թողնում մարդու վրայ, որն նա աւելի է պողպատում սովորական կեանքի դառն հարուածներին գիմանալու համար:

Կարծում ենք. ի՞նչ ցոյց ասանք, թէ գեղեցկի սերը, գեղարուեստի հիմքերը կազմող զգացումներն օտար չէ նոյն իսկ կենդանական կեանքին, աւելի պէտք է բարձրանայ էստետիքական կրթութեան նշանակութիւնը:

—Գեղեցկի զգացումը կայ բոլոր բարդ օրգանաւոր կենդանիների մէջ: Այն կենդանիներն, որոնք հոգեկան կեանքի այն զարգացման են հասել, որ թէ ընտրութեան կարողութիւն և թէ հաճելի գաղափարի մասին պօղիտիւ հասկացողութիւն ունին, պարունակում են իրանց մէջ գեղեցիկի զգացման սաղմը, որն իր լիակատար ըողորջմանն է հասնում միայն աւելի բարդ օրգանիզմների մէջ: Ամեն բան պատառոտելու պատրաստ ամենի առիժն երաժշտութեան դայլայների ազդեցութեան տակ համեստ գառնուկ է դառնում. էգ թռչուններին այն արուեստն են դուր գալիս, որոնք ունին կամ սիրուն տեսք, կամ լաւ ձայն, կամ քաջութիւն և այլն. ահա ինչ

է ասում այս խնդրի մասին Կ. Գիւնթերը *). «Թուում է, որ թռչունները ոչ միայն գեղարուեստ են հասկանում, այլև գեղարուեստագետի էութիւնն և հակումներ ունին, ուստի և գեղարուեստագետները իրանց մօտ են զգում թռչուններին»: Ոստքերը բառացի չպէտք է հասկանալ, այլ այն, որ թռչունների մէջ կան այն հակումները, հոգեկան կեանքի գործունէութեան այն ձևերը՝ իհարկէ իրանց սաղմային գրութեան մէջ՝ որը պահանջում է ամեն մի գեղարուեստի համար: Գեղասիրական ամենակատարեալագործուած զգացումը յատուկ է մարդուն, որի մէջ զաւակի գիտակից է շառնում: Թէ որքան ուժեղ է գեղասիրական ձգտումը և գեղարուեստ վերաարտադրելու պահանջը մարդու մէջ ցոյց կը տայ երեխաների կեանքի հետադադարութիւնը: Ո՞րն է այն խաղերի էութիւնը, որոնցով այնքան տարուած են մեր երեխաները, ի՞նչն է դժագրելու այն ուժեղ ձրգտման պատճառը, որը յայտնւում է գեւ կանուխ երեխաների կեանքում. ինչո՞ւ երեխան այնքան ներքնապէս ազդոււմ է երաժշտութեան սիրուն զայլալիներից, այդ բոլորի պատճառը այն իմանենա, ընդածին հոգեկան հակումն է, որը գեղասիրութիւն է կոչւում:

Որովհետեւ մանկավարժութիւնը ձգտում է մարդու հոգեկան զբաղման ուժերի ներդաշնակ կրթելուն՝ ուստի նա չի կարող անտես անել էստէտիքական զգացումների մշակման խնդիրը, որի չմշակելը մարդուն կիսակիրթ թողնել է նշանակում: Այս խնդրի մասին պրօֆ. Բայնը ասում է. «Կիսակիրթներ են նրանք, որոնք գեղասիրական ձգտումների հաւար ոչ մի հասկացողութիւն և կամ զգացում չունին»: Նոյնպէս խիստ է խօսում և Կ. Լանգէն. «Այն մարդը, որը էստէտիքական կրթութիւն չունի, կիսակիրթ կեանք է անցկացնում, նա կատարեալ ու ներդաշնակօրէն կրթուած անհատ չէ: Մարդոց էստէտիքական կրթութիւնն տալու նպատակը միատրուում է մարդուն կատարեալ մարդ գտնանելու նպատակի հետ»: Պարզ է, թէ որպիսի անհրաժեշտութիւն է ևրոպացիների համար էստէտիքական դաստիարակութեան խնդիրը և կեանքն էլ ցոյց է տալիս, թէ ինչ մեծ ջանքեր են վատնում այդ նպատակին հասնելու համար. Գերմանիայում վերջին տարիներս մի քանի մանկավարժական կոնգրեսներ են եղել միմիայն էստէտիքական կրթութեան խնդիրը քննելու համար:

Իսկ ի՞նչ ենք արել մենք: Արտուում ոչինչ:

Յուսահատական է ասել, որ մեր զպրոցներում էստէ-

*) K. Cuenther «Der Darwinismus und die Probleme des Lebens».

ստիքական կրթութիւնն այնպէս է փտարանդուած, որպէս մարմնական կրթութիւնը միջնադարում: Մեր մանկավարժական գրականութեան մէջ, եթէ այսպէս կարելի է անուանել, գեոտիզի բռնել է ստէտիքական կրթութեան խնդիրը, իբրեւ կրթութեան ամենակարեւոր կողմերից մինը. սա մի ողբալի դրութիւն է, որի առաջը պէտք է առնել, քանի ուշ չէ: Ճիշտ է, մեր դպրոցների ուսումնական ծրագրների մէջ եղել են և կան մի քանի առարկաների անուններ—հրաժշտութիւն, նկարչութիւն—որոնք կստէտիքական կրթութեան համար են ծառայում, սակայն զրանք եղել են ամենաարհամարհուած առարկաները մեր դպրոցներում և զրանց գոյութիւնը մի թիւրիմացութեան արդիւնք է եղել: Զկայ, չկայ մի փոքրիկ նշան, որից երևար, թէ մեր դպրոցներում զիտակցորէն հոգացել են կստէտիքական դաստիարակութեան մասին իսկապէս, այլապէս էլ լինել չէր կարող քանի որ հէնց մեր դաստիարակները ըտրիկ էին այդ խնդրի վերարբրմամբ: Ահա այս է այն մեծ խոցերից մինը, որոնցով այնքան հարուստ է մեր դպրոցական գործը:

Մեր դպրոցներում մեծ տեղ պէտք է տալ գեղագիտական կրթութեանը, որը պատրաստի երկնքից չէ ընկնում, այլ այդ ցանկութեան հասնելու համար, անհրաժեշտ են գործնական զրադումներ, իսկ դորանք զանազան տեսակ են լինում:

Գեղեցկասիրական զգացմանը հզորապէս ազդում է ըլլալովիան ճանաչողութիւնը. գեղեցկի զգացումը հետեանք է դրսի աշխարհից ստացած տպաւորութիւնների, իսկ դա ուժեղ է լինում, երբ ճանաչում ենք օրեկտիւ աշխարհի կութիւնը, նրա երեւթների պատճառական կապը: Ծաղկի գեղեցկութիւնը աւելի է մեծանում, երբ ճանաչում ենք նրա կեանքի ձեւը, աջողական օրգանների գրութիւնը, վերջապէս հենց իրեն ծաղկին: Գեղարուեստ արտագրելու համար ևս անհրաժեշտ է յիշողական մտապատկերների մի մեծ քանակ, իսկ այդ կարող է լինել այն ժամանակ, երբ մենք հետախուզում ենք բնութիւնը, ճանաչում նրա կեանքն ու էութիւնը: Այս նպատակին կարող են ծառայել դպրոցներում գասաւանդուող մի քանի առարկաներ—բնագիտութիւն՝ կայն—նոյնպէս և հետեեալ միջոցը պակաս չէր նպատաիլ գեղասիրական զգացման: Ազատ, ոչ պարտադիր ժամերին ուսուցիչը իր սանների հետ կարող է դուրս գալ բնութեան մէջ շրջապայելու, որպէսզի տեղն ու տեղը ծանօթացնէ իր աշակերտներին բնութեան գեղեցկութեան և նրա հրաշալիքների հետ: Գեղարուեստների մայր՝ բնութեան այս կամ այն գրութեան վերարտագրութիւններն են և եթէ անհրաժեշտ է գեղարուեստների հետ ծանօթանալը, ապա և մի մեծ

անհրաժեշտութիւն է ծանօթանալ այն բնութեան հետ, որը այդ գեղարուեստների մայրն է, որի տեսարաններն աւելի սիրուն են, քան նկարիչների ստեղծագործութիւնները, որի երաժշտութիւնը ունի այնքան օրիգինալ գեղեցկութիւն: Բնութեան ճանաչողութեան համար աւելի քիչ պատրաստականութիւն, հոգեկան ուժերի աւելի քիչ վատնում է պահանջուած, քան գեղարուեստները հասկանալու համար, ուստի և գեղասիրական զգացման ընթացքին ուղղութիւն տալու համար, անհրաժեշտ է նախ ծանօթանալ բնութեան հետ և ապա՝ գեղարուեստներին:

Գեղագիտօրէն կրթելու համար ամենամեծ ծառայութիւնն անել կարող է երաժշտութիւնը — մուլիկան: Գեղարուեստներից երաժշտութիւնը ամենազօրեղն է. նա ազդում է մեր հոգու վրայ, ալեկոծում կամ խաղաղացնում նրան, յուսահատեցնում և կամ հերոսացնում, մեր հոգում ապրող անորոշ, մութը մտապատկերները պարզում գիտակցութեան մէջ. իր քնքոյշ աւորգներով մեր կամքի վճիռների ընթացքին ուղեկցում և իր կնիքը թողնում այդ վճիռները վրայ: Ոչ մի գեղարուեստ այնպէս անմիջօրէն չէ տիրապետում մարդկային կեանքին ու զգացումներին, ինչպէս երաժշտութիւնը, որը յուսոյ մի կաթիլ է ուղարկուած այս մեր տառապանքի հովիտը՝ մեզ կեանքի հետ շաղկապելու համար: Երեխաները վրայ ևս ամենից ուժեղն է ազդում մուլիկան, ուստի և անհրաժեշտ է մեր զբաղողներում երաժշտութիւնը առաջնակարգ առարկաներից մէկը դարձնել և մեծ հոգ տանել նրա վրայ: Երաժշտութիւնը ոչ միայն կրթում է մեր զգացումները, այլ և մեր ձայնը՝ նրան աւելի ախորժելի դարձնելով, մեր լսողական օրգանները, որոնք դառնում են ձայնական բարդ կապակցութիւնների համար աւելի ընդունակ, մի անհրաժեշտութիւն մուլիկան աւելի լաւ հասկանալու համար: Եւ ահա այնպիսի մի հրաշալիք, որպիսին է երաժշտութիւնը, մոռացուած է եղել մեր դպրոցներում: Մի քանի խօս, պա, փօ-ներով, սուրբ հայրերի վաղուց երգած շարականներով երաժշտութիւն անցնելը դեռ մի բան չէ, այլ հակաերաժշտութիւն. մասամբ իր աւանդման ձևի պատճառով: Դրանց տեղը պէտք է բռնի ժողովրդական երգը, մեր ժողովրդի սիրոյ և տառապանքի, յուսոյ և յուսահատութեան շտեմարանը, այդ երգը իր սիրուն հնչիւններով, իր մշտաւոր արտայայտումներով, ոճերի ձևերով աւելի հասկանալի է մեր երեխաներին, նրանց հոգուն աւելի մօտ: Մեր ժողովրդական երաժշտութիւնը մի գանձ է, որից չօգտուելը մեր դաստիարակների կողմից մի մեծ յանցանք է եղել, սա-

կայն ուրախալի է, որ գոնէ ներկայումս սկսում են ուշադրութիւն դարձնել նրա վրայ: Լաւ կը լինէր նոյնպէս, որ մեր միջնակարգ դպրոցներում անցնէին գոնէ թէօրեալական երաժշտութեան այն մասը, որը մատչելի լինելը կարող է մի թեմականցու դարգացման կարողութեանը: Նոյնպէս անհրաժեշտ է, որ ամեն մի ուսումնարան, նոյն իսկ գիւղական, ունենար իր նրդեցիկ խումբը, որը իր երգեցողութեամբ պակաս չէր նպաստիլ աշակերտների երաժշտական զգացման զարգացմանը: Այլ մանր-մունր միջոցների մասին թողնում ենք այստեղ յիշատակելը:

Գեղագիտական դաստիարակութեան զարգացմանը նընպաստում է պօէզիայի կիրառումը դպրոցներում, որի դասաւանդման վրայ մի առանձին ուշադրութիւն չեն դարձրել մեր դաստիարակները: Պօէզիայի մէջն է արտայայտուած մարդու կատարելատիպ լեզուն իր ամբողջ գեղեցկութեամբ. նրա մէջն է ցոլանում մարդու հոգու դրական և բացասական կողմերը իրանց ամբողջութեամբ, բնութեան գեղեցկութիւնների մարդու հոգու մէջ թողած տպաւորութիւնները, մի խօսքով, պօէզիան մեր հոգու վեհագոյն մասի օրեկտիւացումն է, որի հետ լրջօրէն պէտք է ծանօթացնել կրթող սերնդին: Աւելին չենք խօսում այս հարցի մասին. որովհետեւ այն ժամանակ պէտք է անցնել նրա դործնականին, որի մասին խօսելը մեր նպատակից դուրս է:

Գեղարուեստի մի երկրորդ տեսակը՝ նկարչութիւնը, նոյնպէս մեծ նշանակութիւն ունի էստէտիքական կրթութեան համար, ուստի և դպրոցը առանձին ուշադրութիւն պէտք է դարձնէ գծագրութեան—նկարչութեան դասաւանդման վրայ: Մանկավարժութեան գլխաւոր անելիքներից մէկն է դարգացնել և բարդ գործողութիւնների աւելի ընդունակ դարձնել դաստիարակողի զգայարանքները. ինչպէս տեսանք, լսողական օրդանի գործունէութիւնը զարգացնում է մուդիկայի դասաւանդումը՝ նրան դարձնելով ձայնական աւելի բարդ կապակցութիւնների ըմբռնմանը ընդունակ, իսկ տեսողական օրդանի զարգացմանը, որը առաջնակարգ նշանակութիւն ունի մարդու համար, նպաստում է գծագրութիւն—նկարչութիւնը, որոնց դասաւանդումը արժանի չէ այն անդուծ արհամարանքին, որը տիրող է մեր դպրոցներում: Ինքնութիւնը գեղեցիկ է, իսկ գեղեցկութեան գոյութիւնը մեզ օպտիմիստ դարձնելով կապում է կիանքի հետ, դարձնում մեզ կենսութալս, իսկ այս երջանկութեան մեզ հասցնում է գլխաւորապէս տեսողութեան կարողութեանը: Մենք տեսնում ենք բնութիւնը,

նրա մէջ եղող Ֆորմերի խենթ շաղկապումները, դոյների ներդաշնակ կամ զիստնանս միութիւնները և այդ բոլորը ազդում է մեր հոգու վրայ, կպչում նրա ամենանուրբ թելերին և մեզ հարկադրում ստեղծագործելու այն սիրուն գեղարուեստը, որը նկարչութիւն է կոչւում: Նկարչութեան գոյութիւնը մի բռնազրոսիկ բան, մի բանի նկարիչների ցանկութեան արդիւնք չէ, այլ դա գերագոյն զարգացումն է մեր հոգու այն հրամայական պահանջի, որը նրա բաղկացուցիչ տարրերից մէկն է, դա մեր հոգում ապրող գծագրելու ընդածին հակումն է: Մենք տեսնում ենք արտաքին աշխարհը և բազմակերպ տպաւորւում նրանից. այդ տպաւորութիւնները իրարու վրայ բարդուելով կազմում են տպաւորութիւնների մի արտասովոր քանակ, ուժերի մի մեծ համախմբում, որը դուրս գալ, առարկայանալ է ուզում, որից և ծագում է նկարչութեան անհրաժեշտութիւնը: Մանուկն անգամ ունի իր հոգում նկարչութեան հիմնական ծիւղերը. հէնց նոր է ձեռն առնում մատիտը, նախ քան գրել-կարդալ սովորելը, գծագրում է այս կամ այն առարկան, որը իրան առանձնապէս զբաւում է, այս կամ այն մարդու ծաղրանկարը: Նկարչութեան պահանջը մարդու հոգում ապրող ուժիկ իմամենատ հակումներից մէկն է, որին ամեն կերպ բաւականութիւն տալ հարկաւոր է, բայց որին կանոնաւորապէս արձագանգ չեն տուել մեր զարոցները մինչև օրս, որի համար և նկարչութեան սկըը մեռած է մեր հասարակութեան մէջ, որի բնականութեան մասին խօսելը աւելորդ է:

Նկարչութեան դաստանդման նախադուր զծագրութիւնն է. նկարչութիւնն աւելի բարդ է, նա վերարտադրում է աւելի բարդ ձևեր և դոյների աւելի բազմաթիւ խառնուածքներ. զծագրութիւնը աւելի պարզ է, երեխաներին աւելի դիւրամատչելի, բանի որ նրա մէջ դոյներ զործ չունեն կամ շատ քիչ, Ֆորմերն աւելի պարզ են և համապատասխան երեխայի ունեցած տպաւորութիւններին: Գծագրութեամբ երեխան հասկանում է առարկաների բնաւորիչ մասերը—Ֆորմերը, նկատում և գծագրում է այդ, սրանով զարգանում է նրա մէջ զիւրմբմբնման և զննողական ոգին: Բացի այս, զծագրութեան միջոցով երեխան վերաստեղծում է իր մէջ ապրող տպաւորութիւնները, մտապատկերները, վերարտադրում իր ֆանտազիայի մէջ ապրող գծագրական—նկարչական Ֆորմերը, որով մարդու մէջ զարգանում է ինքնուրոյնութեան, ստեղծագործական ոգի, մի յատկութիւն, որն անհրաժեշտ է ամէն մի ներդաշնակօրէն դատարարակուած մարդու համար: Գծագրու-

թիւնը վարդափայտում է նոյնպէս մաքրասիրական ոգի, գեղեցիկ նկարողը չի կարող կեղտոտ, անմաքրասէր լինել:

Նկարչութեան տուած օգուտները նոյնանում են զծագրութեան տուած օգուտների հետ. սակայն այստեղ պահանջւում է աւելի զարգացում, զննողական և ստեղծագործական ոգու բարձրութիւն: Վերին ատրիճանի յարմար է դասաւանդել միջնակարգ դպրոցներում նկարչութեան պատմութիւնը, որը մտքի զարգացման պատմութեան համար մի սիրուն օրինակ է և նկարչական տեսական անհրաժեշտ հարցեր, որոնք նպաստիչ կը լինեն նկարչական գեղարուեստի հասկանալուն:

Էստէտիքական կրթութեանը պակաս չէ օգնում և գեղարուեստական նկարների գիտողութիւնը. համարեա բոլոր յայտնի նկարիչների նկարների էժանագին ընդօրինակումները տարածուած են կրօնական երկրներում, մանաւանդ Գերմանիայում. այդ ընդօրինակումներից պէտք է աշխատեն ձեռք բերել մեր բոլոր դպրոցները և դասարանի պատերը զարդարեն դրանցով, որպէսզի աշակերտները գիտելով այդ նկարներն զարգացնեն իրանց մէջ գեղեցիկի զգացումը. ուսուցիչը պէտք է աշխատէ ամեն կերպ նպաստել այդ նկարների հասկանալուն:

Թողնելով էստէտիքական կրթութեանը նպաստող մի քանի երկրորդական օժանդակիչների մասին յիշատակելը, վերջացնում ենք կրթութեան այս ձևի մասին խօսելը: Մենք մեղ բախտաւոր կը զգայինք, թէ այս գրութիւնը փոքր ինչ նպաստած լինէր էստէտիքական կրթութեան գաղափարի տարածմանը: Բաւական է որքան մեր դպրոցներում արհամարհուած մնաց կրթութեան այս կողմը, որի փութակար հետեանքները պարզ են: Մեր ժողովրդին յիսկատար, հարմոնիկ կրթելու համար անհրաժեշտ է դպրոցների մէջ գործադրել այն բոլոր պահանջները, դաստիարակութեան այն ձևերը, որոնք յառաջադրուած են էստէտիքական կրթութեան թէօրիտիկները:

Գորգէն Էղիլեան

ԵՐԲԵՐ

Դու յիշում ես...

Ոսկեզօծ, թաւոտ ամպեր... անառ... անհոգ...

Հովուի մելամաղձոտ սրնգի հնչիւնները... շոգեմեքենայի սուլոցը... ջրերի քաղցրաձայն երգը և հեռաւոր լեռներում նրանց արձագանքը խորհրդաւոր:

Յիշում ես... նուրբ թրթիւններով մեր հոգւոյ խորքն էին թափանցում:

Ուժեղ, ներդաշնակ բաբախում էր մեր կուրծքը... Միտքը ապաս, թեւաւոր՝ լողում էր կապոյտ եթերքում, վարդագոյն շողերի հետ խաղում, մարդկային կրքերից բարձր վեհօրէն ստեղծւում:

Սքանչելի վայրկեաններ:

Բարձրաբերձ, գոռոզ ժայռերը մեզ ժպտում էին մեղմիկ, զեփիւտը՝ զուրգուրում...

Քնքոյշ կանաչը փաղաքշում էր հալարտ դազաթը: Կարկաչին վտակը՝ լեռան կուրծքը ողողելով՝ վազում, ընկնում էր անդունդը... Հիւրընկալ ափերի մօտ մարդիկ գտել էին ապաւէն... և ստեղծագործում էին և խնդում...

Յիշում ես...

Երեկոյեան աղջամուղջը գրկում էր լեռներ, հովիտներ... Թախիծ, մղկտող կսկիծ էր թաքնուած նսեմացող օրուայ մեղմ — տխրալի ստուէրների մէջ...

Աւաղ... վշտահար, հանդշող ստուէրները ընկան մեր մէջ...

Լուռ էինք...

Եւ վիշտ և տառապանք և սիրաբորբոք իղձեր...
Ձուլուել էր ամեն ինչ...

Մեր հոգու աչքերի առաջ անցնում էին արհաւ-
րալից պատկերներ... խոնջացած դէմքեր, դիւղ—քա-
ղաքներ՝ ոչնչացած հրով և քնքոյշ կանաչը՝ արիւնով
շաղախուած...

Ամեն ինչ սրբապղծում էին զազանացած մար-
դիկ...

Դու ինձ հասկացար...

Սեղմելով ձեռքս՝ համբոյր դրօշմեցիր... Այդ տան-
ջանքի մէջ մենք սէր զգացինք դէպի խեղճ մարդիկ...

Հիւանդոտ, բորբոքուած շրթունքներդ հազիւ շը-
շնջացին.

— Կատաղի ալիքները կը տան մեզ հանգիստ...
Կռուներ միասին... արիւնոռւշտ զիշտախիչներ իմ...

Լեռներում արձագանքը հեզնաբար կրկնեց, հեռ-
ւում չքացաւ...

— Կռուներ միասին...

Դու յիշում ես...

*
* *

Հիւանդ էի... Օտար երկրում փորձեցի հանգիստ
որոնել...

Հեռաւոր, աղմկալից, պայծառ, փառաւոր քաղա-
քում միայնակ թափառում էի յաճախ...

Կեանքը աղաս էր, ստեղծագործող... Իմ շուրջը՝
հրճուանք, բերկրութիւն:

Փառաշուք քաղաքում անդորր էր տիրում, իսկ
իմ սրտում՝ փոթորիկ...

Հիւանդոտ լսողութիւնս նշմարում էր պայթոցի
որոտ, խուլ մոնչիւնը վայրենի ամբոխի... արիւնոռւշտ
ցնծութիւն... Ձգում էի՝ մութ գիշերներում թազնուած
սովի և ցրտի մութ կսկիծը...

Վերադարձայ...

Կրկին պատահեցինք իրար աւերակ երկրում...

Հեռաւոր, հանգչող օրուայ մեղմ — տխրալի ստու-
էր ունէր...

Հանդիպեցինք իրար... ինչպէս հանգուցեալի մօայլ
դադաղի մօտ՝ երկու ընկերներ... Մեզ միացնում էր
միայն վիշտը, անհուն վիշտը... Գազանացած մարդ-
կանց խելագար ոճիրների զիմաց...

Մոռացուած էին և հալարտ մտքեր, և փառաւոր իդ-
ձեր, և սէր, և հաւատ, և շինարար դործունէութիւն...
Աւեր և կոտորած... Կոտորած և աւեր...

Միայն մահն էր հանդիսաւոր ծովատիրում յան-
դուգն՝ փթած ատամները կրճտացնում, հրճւում, աւեր
և թշուառութիւն փակելով երբեմն ծաղկած աւաններում
և գիւղերում:

Մենք սանջւում էինք չարաչար... Երկար, յուսա-
հատ ողբում...

Դու յիշում ես...

Յիշում ես արգեօք մեր այն երգումը, երգում
սրբազան՝ համբոյրով կնքուած — սրբել արտասուք... ա-
մոքել ցաւերը... Գազանային ատելութիւնը արմատա-
խիլ անել վայրենացած մարդկանց սրտերից... սփոփել
ծով վիշտն ու սանջանքը մեր շուրջ...

Զմուռնաս երբէք... երբէք...

Ն. Բահաթուր

Մ. ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Օգոստոսի 23-ին տեսուչ Սարգսեանը վերջացրել էր նախապատրաստական բոլոր գործերը ուսումնարանը ժամանակին բանալու մասին: Մնում էր որ նրա կազմած ուսուցչական խումբը հաստատուի Խորհրդից: Թէև արդէն օգոստոսի վերջն էր մօտենում, բայց առաջնորդը չէր յօժարուում թոյլ տալ որ հոգաբարձութեան հին կազմը հաստատի ուսուցչական նոր խումբը: Այն ժամանակ օգոստոսի 23-ին տեսուչը հեռագրով դիմեց Կաթողիկոսին որ թոյլ տրուի հին հոգաբարձութեան հաստատել խումբը և սկսել զբաղմունքները: Էջմիածնում կազմ զաշնակցական շէֆերը վեհաբանի կամարիլայի վրայ ազդելով շտապեցրին հաստատել տալ «նորընտիր» հոգաբարձուներին: Այդ հաստատութեան գէմ բողոքել էր Անանով: Հաստատուածներին հեռագրուեց դեռ սլաշտօնի չհրաւիրել: Այդպիսով թէ էջմիածնի և թէ թեմական առաջնորդի վարանոս և փոփոխական ընթացքը հնարաւորութիւն չտուին ժամանակին կարգադրել գործերը՝ նոր հոգաբարձուների հաստատութեան գէմ Ա. Անանեանի բողոքներն էլ միւս կողմից ձգձգեցին բացումը մինչև հասաւ Սեպտեմբերի 10-ը, երբ պէտքէ կայանար առաջին նիստը նոր հոգաբարձուների հետ: Այդ պարոնները տեսնելով որ այդ օրը իրանցից մէկը բացակայ է—չեն գալիս նիստի և առաջնորդը յարգում է այդ կապրիզը, նորից հրաւէր է ուղարկում Սեպտեմբերի 14-ին: Առաջնորդը մինչև սեպտ. 25 չի ստորագրում այդ նիստի արձանագրութիւնը և այդպիսով զրկում է տեսչին հնարաւորութիւնից հրաւիրել խումբը: Այնուհետև անցած դարձածը Դաշնակցութեան սխրագործութիւնների նոր ասպարէզ դարձած Յովնանեան ուսումնարանում պարզուում են հետեւեալ զրութիւններից:

Կրթից կուրացածներ

Արդի դաշնակցական շէֆերին կարծեմ Յովնանեան ուսումնարանում իմ տեսչութեան խնդիրը աւելի է զբաղեցնում քան հայոց հարցը, վրէժխնդրութիւնը մթնացրել է զըրանց մէջ առ-

ողջ դատողութիւնը և ահա դրանց հաւատարմատար փաստաբանը, պ. Տիգրան Յովհաննիսեանը, կաշուից դուրս է գալիս ամեն տեսակ կլեառեղներով շահած լինելու գաշնակցական բիւրօկրատների այդ «դատը»:

Եւ իրաւարան չեմ, սակայն հաւատացած եմ, որ ամեն մի գիտութիւն պիտի հիմնուած լինի նախ և առաջ առողջամտութեան օրէնքների վրայ: Առողջամտութիւնը և արգարութեան սկզբունքը ղեկավար ունենալով եւ պայքար եմ սկսել այդ պարոնների դէմ առհասարակ և Յովհաննեան դպրոցի հարցում մասնաւորապէս: Դրանց դեմագոգիական մանեօվրները քայլ առ քայլ եւ մերկացրել եմ և վերջը, նեղն ընկած, դրանք իրանց ամբողջ յոյսը դրել են վեհարանի կամարիլայի վրայ ունեցած իրանց բռնի ոյժի և զանազան «հաշտ» դիւանապետների աշակցութեան վրայ... Կատարուում է այն, ինչ ի սկզբունէ անտի սովորական է եղել էջմիածնի մթնոլորտում...

Կրկնութիւններ չանելու համար եւ կաշխատեմ այդ ուսումնարանի շուրջ գաշնակցական բիւրօկրատների ստեղծած կազու կոիւր վերածել մի քանի կէտերի, առաջարկելով որ մեր անաչոռ իրաւաբանները յայտնեն իրանց կարծիքները և հասարակութեան համար պարզ լինի Տիգրան Յովհաննիսեանի նշման «փաստաբանների» իսկական պատկերը:

1) Նախընթաց հոգաբարձութիւնը օրինական կազմ ունէր և իր պաշտօնավարութեան առաջին եռամեակը դեռ չէր լրացրել, երբ որոշել էր ուսուցչական խմբի փոփոխութիւններ կատարել յունիսի 15 ին կայացած իր նիստում: Հոգաբարձական 7 անդամներից ներկայ 5 հոգին միաձայն որոշումներ կայացնելով՝ ընծայագրի և ոչ մի կէտը չէին խախտում, որովհետեւ նրանում ոչ մի ցուցում չը կայ այն մասին, թէ հոգաբարձութեան որոշումները պիտի կայանային անպատճառ 7 անդամների մասնակցութեամբ: Ոչ մի ցուցում չը կայ, որի մէջ որեւէ տարբերութիւն դրուած լիւէր մնայուն (3) և ընտրովի (4) անդամների ձայների մէջ:

2) Մոզնու ծխականների բողոքը պիտի ուղղուած լինէր հոգևոր իշխանութեան դէմ, որ ի նկատի ունենալով անպատեհ ժամանակը (ղեկտեմբեր), առաջին եռամեակի համար հին հոգաբարձուներին հաստատելուց բացի նաև երկարել էր նրանց պաշտօնավարութիւնը նոր եռամեակով: Այդ կարգադրութեան երկրորդ մասը (երկարացումը) միայն կարող էր բողոքի նիւթ լինել: Ինքը հոգաբարձութիւնը այդ կարգադրութեան մէջ յանցանք չունի. նա պարտաւոր էր շարունակել իր պաշտօնը, մինչև որ նրան յաջորդող մարմինը չէր գալ փոխարինելու նրան:

3) Հին հոգաբարձութեան յաջորդող մարմինը (նոր հոգաբարձուները) միայն սեպտեմբերի 14-ին են ստանձնել իրանց պաշտօնը և նրանք ոչ մի իրաւունք չունեն քմահաճօրէն անվաւեր համարել հին հոգաբարձութեան որոշումները: Այդ ապօրինութեան հարցը քննող պիտի լինի այլ ինստանցիա և ոչ շահագրգռուած կամ քրեախնդրութեամբ դեկլարուող նոր հոգաբարձութիւնը:

4) Օգոստոսի 10-ին առաջնորդարանում հաւաքուած պատուիրակներին ծխականները «ընտրել» էին միմիայն 4 հոգաբարձուներ ընտրելու համար և ոչ մի մանդատ նրանց չէին տուել: Պատուիրակները կարող էին զանազան ցանկութիւններ կամ desiderata-ներ յայտնել, ինչպէս յայտնել են Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութիւնների ժամանակ: Արդ՝ Ներսիսեան դպրոցի հոգաբարձու պ. Տիգրան Յովհաննիսեանը ձգտում է այդ մանդատները իրագործել Ներսիսեան դպրոցում իբրեւ իմպերատիւներ այնպէս, ինչպէս նա անում է Յովնանեան դպրոցում:

5) Մանդատները ապագայի մասին ցանկութիւններ, հրահանգներ են: Հարց է թէ՛ կարող են մանդատներով վճռուել իրաւարանական հարցեր, խախտուել ուրիշների օրինական իրաւունքները: Ես կարծում եմ թէ՛ ոչ, իսկ իրաւարան Տիգրան Յովհաննիսեանը կարծում է թէ՛ այո:

6) Եթէ հաստատման մի կօնդակը իրաւական նշանակութիւն ունի նոր հոգաբարձուների նկատմամբ, չը նայած նրանց ընտրութիւնների ամբողջ կեղծիքին, չը նայած որ այդ ընտրութիւններին մասնակցել են իրաւասու ծխականների $2\frac{1}{2}\frac{0}{0}$ միայն, ինչո՞ւ երեք կօնդակները կորցնում են իրանց զօրութիւնը չէնց միայն այն պատճառով, որ օգոստոսի 10-ին պ. Մուշախձէն կարգաց բիւրօի թեւադրած «ի նկատի ունենալով»:

7) Կօնդակ տուող մարմինը պէտք է հասկանայ թէ ի՞նչ է անում, և կամարիլայի կամ կողմնակի անձանց սպառնալիքի տակ նա իրաւունք չունի իր մի կօնդակին զօրութիւն տալ, իսկ միւսին՝ ոչ, եթէ չէ ուզում ողորմելի զործիք լինել մի խումբ բիւրօկրատների ձեռքում, որ վեհարանական կամարիլայի հետ բլօկ է կազմել:

8) Նախկին հոգաբարձուները յունիսի կիսում կայացրել են վճիռներ առաջիկայ ուսումնական տարուայ վերաբերեալ, որովհետեւ այն իշխանութիւնը, որ պիտի նշանակէր նոր ընտրութիւններ, մինչ այդ ժամանակ ոչ մի կարգադրութիւն չէր աւելնում նոր ընտրութիւնների մասին: Իսկ ով կուրացած չէ զաշ-

նակցական բիւրօկրատների պէս, նա պէտք է հասկանայ, որ ուսուցչական կազմի, մանաւանդ տեղի հարցը պէտք է լուծել ոչ սեպտեմբեր-հոկտեմբեր ամսում, այլ մայիս-յունիս: Այդ պարզ ճշմարտութիւնը շնդգծել է և այն դպրոցական «նախագիծը», որ պէտք է հաստատէր Էջմիածնի Կենտրոնական Ժողովը: (Յօդ. 1, ծան. 1):

9) Եթէ, օրինակ, քաղաքային դումայի ձայնաւորների ժամանակամիջոցը լրանում է, միթէ նրանք պէտք է բարձիթողի անեն ընթացիկ գործերը, որովհետեւ à la S. Յովհաննիսեան և Բնկ. մտածող մարդիկ կը դանա են, որոնք յետոյ քմահաճօրէն ապօրէն կը ճանաչեն այդ ձայնաւորների բոլոր որոշումները և օրինաւոր կերպով պաշտօնի հրաւիրուած մարդկանց կարող են անձնական կապրիզով առանց օրինաւոր պատճառարանութեան հեռացնել: Բայց այդ, միթէ ձայնաւորներն են պատասխանատու, եթէ ժամանակին նոր ընտրութիւններ չէ նշանակուած այն իշխանութիւնը, որին տրուած է այդ իրաւունքը:

10) Արդեօք ամեն մի նոր հոգարարձութիւն իրաւունք ունի քմահաճօրէն փոխել նախկին հոգարարձութեան օրինական որոշումները, յենուելով իրաւական ոչ մի արժէք չունեցող «մանդատների» վրայ:

11) Օրինաւոր հոգարարձութիւնը միաձայն ինձ ընտրել է տեսուչ յունիսի 15-ին: Կտակով պահանջած իշխանութիւնը (Կաթողիկոսը) ինձ հաստատել է պաշտօնի մէջ: Կտակով տեսուչը Սորհրդի անդամ է և միւս անդամները հետ հաւատարմ ձայն ունի: Ուսումնարանի խորհրդի կանօնաւոր նիստում ինձ յանձնուած է հղել գործադրել իմ իրաւունքը—ուսուցչական խումբ կազմել և առաջարկել ի հաստատութիւն հոգարարձութեան՝ և ես այդ կատարել եմ: Բայց սեպտեմբերի 14-ի նիստում, որին առաջին անգամ են մասնակցում նոր անդամները, ուզում են, որ իրանց կապրիզը, հիմնուած պ. Մուշախիճէի ինչ որ «ի նկատի ունենալովները» վրայ, օրէնք ճանաչուի: Հարց է. օգոստոսի 10-ի 9 դաշնակցական պատուիրակների մանդատով կարճ կէս վերացուած համարուել նախկին հոգարարձութեան օրինաւոր որոշումները և Կաթողիկոսի հաստատութիւնը բեկանուել:

12) Արդ դաշնակցական իրաւագէտների կարծիքով, եթէ Կաթողիկոսը կօնդակով հաստատել է իրանց (նոր հոգարարձուներին), ուրեմն (12) հաստատել է և նրանց ընտրողների մանդատները: Փաստարան Տիգրան Յովհաննիսեանի այդ տարօրինակ լօգիկայով ուրեմն Ներսիսեան դպրոցի ներկայ հո-

գարարծութիւնը, որի անդամներէց մէկն էլ ինքն է, պէտք է արգէն ընդունուած համարի այն լոյրը մանդատները, որոնք տրուած էին Ներսիսեան զպրոցի հոգարարծութեան ընտրողների ժողովներում: Բայց այդ մանդատները այնտեղ լոկ «ցանկութիւններ» են համարուած, իսկ այստեղ «օրէնքներ», «իմպերատիւներ», որովհետեւ այդ է պահանջուած «ժողովրդի իրաւունք» խօսքերը շահագործող փարիսեցիների շահը: Եթէ ընտրողների մանդատներով իրաւական չափեր որոշուէին, էլ ինչ հարկ կը լինէր Պետական Դոմա կամ օրէնսդրական որեւէ մարմին: «Ժողովրդի կամքը» ներկայացնող մի քանի ընտրողներ, ունենալով իրաւասունների 3/5-ի հաւանութիւնը (ինչպէս Յովնանեան ուսումնարանի հոգաբարձական «ընտրութիւնները»), կարող են զանազան ավեղ-ցիւղի ցանկութիւններ յայտնել, որոնք և օրէնք կը ձանաչուեն:

13) Յովնանեան ուսումնարանի տեսուչը ընտրուած է կանոնաւոր հոգաբարձական նիստում և հաստատուած Կաթողիկոսից, և մինչև որ նոյն կարգով նա չը հրաժարեցնուի, նա կատարեալ իրաւունք ունի օգտուել իր ձայնից և իրաւունքից: Նոր հոգաբարձուները, եթէ կամենում են սեպտեմբեր ամսում նոր տեսուչ ընտրել, պէտք է պատճառաւորուած հարց դնեն եղածին հեռացնելու մասին, անկախ օգոստոսի 10-ին թափալական անհիմն մանդատից, որ իրաւական ոչ մի նշանակութիւն չունի և լոկ արտայայտում է ազգային բիւրօի կրքից կուրացած բողձանքը է. Սարգսեանի նկատմամբ: Իսկ մինչև չգրուի օրինական կարգով, հին հոգաբարձութեան կողմից ընտրուածը շարունակուած է վարել իր պաշտօնը և ուրեմն, իրաւունք ունի ձայն տալու ուսուցչական խմբի ցուցակը քննելիս: Պարզ է ոչ-կոյրերի համար:

Ահա կէտեր, որոնց հիման վրայ ես միանգամայն իրաւացի և կօրրեկտ եմ համարում իմ բռնած գիրքը Յովնանեան ուսումնարանի տեսչական հարցում: Թող անաչառ և ձեռնհաս մի միջնորդ զսաարան գտնէ թէ իրաւացին և կօրրեկտը պ. Տիգրան Յովհաննիսեան և Ընկերութիւնն է: Իրեւ այդպիսի զատաւորներ ես առաջարկում եմ իմ կողմից իրաւարաններ՝ պ. պ. Արշակ Բարխուդարեանին, Յովհաննէս Սպինդիարեանին, Սամսոն Յարութիւնեանին և Յովհաննէս Սաղաթեւեանին: Եթէ պ. Տիգրան Յովհաննիսեանը և իր ընկերները համաձայն չեն այդ առաջարկած ցուցակին՝ կարող են ընտրել իրանց կողմից ևս նոյնքան իրաւարաններ: Այդ իրաւարանները քննելով ամբողջ գործը՝ աւելի ձեռնահաս են հարցը լուծել, քան ազգային բիւրօն կամ նրա գաշնակից Վեհարանի կամարիլ-

իան: Ո՛ր կողմը արդարացի ճանաչուի այդ զատարանի կողմից, թող այն կողմը մնայ իր պաշտօնի մէջ, իսկ հակառակ կողմը թող հեռանայ և զրանով զպրոցը ազատուի անտեղի մրցութիւնից: Բռնութիւնով, «ժողովրդական ձայն» խօսքերի դեմագոգիական մանեօվրներով և ծակ փաստաբանութեամբ հասարակական հարցեր վճռելու ձևերը ժամանակ է մի կողմ հետել, և յարգելով ճշմարտութիւնը և արդարութիւնը՝ մտնել հասարակական ասպարէզ:

Դատաւորները թող ուրիշները լինեն և ոչ շահագրգռուած կողմերը: Երկու օր ժամանակ եմ տալիս (յօդուածը լոյս տեսնելու օրից սկսած) ընդունելու իմ առաջարկը: Մերժման դէպքում պիտի պարզ լինի բոլորի համար, թէ կուտուրականութիւնը ինչպէս են հասկանում մեր զաշնակցական ազահոգաբարձուները...

(«Մշակ» № 203)

Լ. Սարգսեան

Սեպտեմբերի 16-ին

Էջմիածնից՝ Կաթողիկոսը թեմիս առաջնորդին Յովնանեան ուսումնարանի գործի առիթով ուղարկել է հետևեալ հեռագիրը. «Թէև տեսուչը և հոգաբարձունը հաստատուած էին իմ կօնդակներով, սակայն դժբաղդաբար իմ խրատները ոչ մի ազդեցութիւն չունեցան, նրանք ուսումնարանը դարձրին պայքարի ասպարէզ, ուստի խոստափելով չափազանց աննախատեսելի և ֆնասակար, զպրոցի գոյութեան համար, հետևանքներից և անախորժ բարգուլթիւններից, — առաջարկում եմ ուսումնարանի և ուսանողների բարօրութեան համար խորհուրդ տալ տեսչին հրաժարուել, տալով նրան տարեկան ուժիկ:»

Այդ առաջարկին Լևոն Սարգսեանը պատասխանել է այսպէս.

«Կարգալով նորին Վեհափառութեան հեռագիրը, որով ն. վ. բարեհաճում է առաջարկել ինձ, ի նկատի ունենալով ուսանողների օգուտը, ստանալ տարեկան ուժիկս և հրաժարուել տեսչական պաշտօնից, պատիւ սնիմ յայտնելու հետևեալը. գործի հետ ծանօթ բոլոր անաչառ մարդկանց յայտնի է, թէ Յովնանեան ուսումնարանի հարցում ճի կողմն է զպրոցը դարձրել կուսակցական պայքարի և դերիշխանութեան ասպարէզ: Բարձր հոգևոր իշխանութեանը, եթէ ուզում էր վերականգնել անւորրութիւնը զպրոցում, պէտք է անյողգող պաշտպան հանդիսանար օրինականութեան և չլոհէր անհատին՝ կաղմա-

կերպութեան: Զիջում անել ակներև քինախնդրութեան և բռնութեան, ես համարում եմ փոքրհոգութիւն իմ կողմից: Միակ արդար ճանապարհը լուծելու կնճիւղ՝ այն միջոցն է, որ ես առաջարկել եմ հրապարակապէս («Մշակ» № 203), այն է. իրաւաբաններից կազմած մի միջնորդ դատարանի յանձնել զործը: Թող հետանայ դպրոցից այն կողմը, որը անիրաւացի կը ճանաչուի»:

Ակնյայտնի սպօրինութիւն

Մ. Յովնանեան դպրոցի հարցը հետզհետէ բարդւում է: Էջմիածինը, կամ, աւելի ճիշտն ասած, կուսակցական և ինտրիգան մի զիւանապետի կուսակցական ոտոր շահերին դո՛ւր ելում և նրա ձեռքում խաղալիք դարձած Ամենայն Հայոց կաթողիկոսական իշխանութիւնը, ոսնակոխ անելով ամեն օրինականութիւն, ժաքիավելեան բոլոր յատկութիւններով օժտւած կարգադրութիւններ և անօրինութիւններ է անում:

Մենք գիտենք, որ Թիֆլիզից Էջմիածին է գնացել դադտագողի գործողների մի ամբողջ վոճմակ, որ թի ու թիկունք ունենալով ապիկար և ապաշնորհ, նախկին «Նոր-Պար»-ական, Ներսէս վարդապետ Մելիք-Թանդեանցին, կանգ չէ առնում ոչ մի միջոցի առաջ ճնշումն գործ դնելու զառամեալ ու հիւանդ կաթողիկոսի վրայ: Եւ իբրև հետեանք այդ դադտագողի ճնշողներին, հետզհետէ ստացւում են հեռագիրներ, որոնք ցոյց են տալիս, թէ Էջմիածինը մոռացել է ամեն բարեխղճութիւն, չափ ու սահման և կատարեալ փաշայական կամայականութեամբ վտանգում է դպրոցի շահերը ի հաճոյս մի քանի անհատների, արհամարհելով օրինականութիւն, արդարութիւն, ճշմարտութիւն:

Մենք գիտենք, որ կաթողիկոսի անունից մի քանի օր առաջ հեռագիր եկաւ առաջնորդին, խորհուրդ տալ տեսուչ Լ. Սարգսեանին հրաժարական տալ, քանի որ կաթողիկոսի բոլոր յորդորները և հայրական խրատները ապարդիւն են անցնում: Այդ ապօրինի և անարդար առաջարկին, Լ. Սարգսեան խիստ արժանապատուութեամբ պատասխանեց, որ ասպարէզից պէտք է հեռանայ նա, ով մեղաւոր է, ով դպրոցը դարձրել է կուսակցական ստոր կրքերի տապալէզ:

Թւում էր, թէ Էջմիածնի կամաւիլան և թայֆայական զիւանապետը կը սթափուէին և յետ կը կանգնէին կաթողիկոսին նոր և անպատուաբեր կարգադրութիւններ անել տալուց: Բայց վոճմակը՝ յանձին մի քանի բախտախնդիրների, որոշել է չոկտեմբեր, 1906.

էր ոչ մի անարժան միջոցի առաջ կանգ չառնել: Երկու օր առաջ հասնում է մի նոր հեռագիր—գումարել հոգաբարձական ժողով առանց տեսչի և կարգադրել դպրոցի գործերը:

Պարզ է, որ սրանով սեսուշը արձակուած պէտք է համարել, թէև ուղղակի արձակման կօնդակ չէ տրուած: Կարգադրութիւնը որքան էլ մաքրամաքիւն, բայց շատ էլ զժուար քմբընելի չէ: Երբ հոգաբարձական նիստերին չմասնակցէ տեսուչը, դաշնակցական հոգաբարձուները մեծամասնութիւն կազմելով, կը կարգադրեն ամեն բան: Եւ տեսուչը, առանց պաշտօնապէս արձակուած լինելու, կը հեռանայ ասպարէզից:

Էջմիածինը շատ լաւ տեսնում է և իմանում, որ չը կայ ոչ մի օրինական հիմք, ոչ մի պատճառաբանութիւն արձակելու տեսչին. նա չէ կամենում արդարութեան պաշտպան հանդիսանալ, դատապարտել մեղաւոր կողմը և կանգնել օրինականութեան հողի վրա. նա զոհում է ճշմարտութիւնը. վայր է ձըգում կաթողիկոսական պատիւը. նա ոտնակոխ է անում օրէնքը:

Եւ Ներսէս Թանգեանները պէս ինտրիգանները դեռ երկար կը շարունակեն իրանց ինտրիգները, դեռ երկար կը զոհեն օրէնքի, խղճի, արդարութեան շահերը, քանի որ մեր անտարբեր հասարակութիւնը, ինտելիգենցիան իր լռութեամբ կը խրախուսէ մակաբոյժներին և բախտախնդիրներին: Հասարակութիւնը պէտք է իր հզօր բողոքի ձայնը բարձրացնէ. պէտք է զգացնել տայ, որ ոչ միայն Մէլիք-Թանգեաններին, այլ և ոչ ոքի, ով էլ լինի նա, թոյլ չի տայ ոտնակոխ անել օրէնքը, արդարութիւնը և ճշմարտութիւնը:

Հ. Ա.

Թող հասարակութիւնը դատի

Իմ առաջարկը՝ Յովնանեան օր. ուսումնաբանում իմ և «աղղային բխրօթ» նշանակած նոր հոգաբարձուների մէջ ծագած տարաձայնութիւնները յանձնել իրաւաբաններից կազմուած միջնորդ գատարանի քննութեան՝ միաց անպատասխան: Նոր հոգաբարձուների լիդեր պ. Տ. Յովհաննիսեանը իր ընկերների հետ անշուշտ կարիք չեն դրում միջնորդ գատարանի դիմելու, քանի որ վեհաբանի կամարիլան և հաջաթ զիւանապետները, ինչպէս և կազմակերպութեան բոնի միջոցները իրանց նմանների ձեռքումն է, իսկ իրանց ղեկավարն է՝ «նպատակը արդարացնում է միջոցները»: Պէտք է խեղդել հասարակութեան մէջ քննադատական ոգին և հլու հնազանդութիւն տալ բերել—մտածում են իրանց ղիբքի պահպանութեան մասին հոգադող

մեր խանութոս բիւրօկրատները: Եւ ահա մի կողմից նրանք բարեհաճում են Փալօրիտիզմ ցոյց տալ, պաշտօններ բաժանելով այն բոլոր սինլըոր տիրացուներին, որոնք համակերպւում են և խնկարկում իրանց, իսկ միւս կողմից յայտարարում են վայրենի և անմիտ հալածանք նրանց դէմ, որոնք «աներես համարձակութիւն» ունեն ոչ միայն չբաժանել այդ ուղգային թշուառութեան պատճառ բիւրօկրատներին յոռի սկզբունքները, սխտեմը և գործկալկերպը, այլ և՛ քննադատել նրանց արարքները: «Քննադատել».— Ի՞նչ յանգգնութիւն: Այդ է մեր իրականութիւնը: Եւ այդպիսի ասիական փաշայտկանութիւն ստեղծող «յեղափոխականները» առանց կարծիքի հաւատացնում են միամիտներին, թէ իրանք տարբեր են ռուս և թիւրք բիւրօկրատներից, մինչդեռ անալոգիան, նմանութիւնը սրանց հետ ուղղակի ապշեցուցիչ է նոյնիսկ մանրամասնութիւնների մէջ: Ճակատագրի հեղնութիւն չէ՞ այդ, բայց էլ ի՞նչ է, խղճուկ հայեր:

Հ. Սարգսեան

Մեր դպրոցական տարեգրութեան մէջ մի տխուր էջ բացող այդ զէպրի մանրամասնութիւնների արձանագրութիւնը կարեւոր համարելով, տալիս ենք մի քանի տեղեկութիւններ, որոնք պարզ ցոյց կը տան թէ էջմիածնի բարձր հոգևոր իշխանութեան և թէ մեր «ուղգային բիւրօկրատիայի» գործկալկերպը, բացարձակ, սանձարձակ փաշայտկան վարժունքը և օրինակութեան, բարոյականութեան որեւէ սկզբունքի բացակայութիւնը նրանց գործողութիւնների մէջ:

Ինչպէս գիտենք, նախկին հոգաբարձութիւնը այն ժամանակ, երբ նա օրինաւոր պաշտօնավարութեան մէջ էր և դեռ ոչ մի կարգադրութիւն չէր եղել հոգաբարձական նոր ընտրութիւն կատարելու, ընտրեց դպրոցի տեսուչ պ. Լևոն Սարգսեանին: Այս ընտրութիւնը Կաթողիկոսը հաստատեց կոնդակով և, բացի դրանից, նա առանձին կոնդակ ևս ուղարկեց հոգաբարձութեան՝ շնորհաւորելով նրա կատարած աջող ընտրութիւնը: Դրանից յետոյ միայն կատարուեց 4 նոր հոգաբարձուների ընտրութիւնը: Դժբախտաբար դպրոցի և հայ ժողովրդի համար, շնորհիւ ծխականների անտարբերութեան, Բեթղեհէմի եկեղեցու 18 ծխականների ժողովով ընտրուած պատուիրակների քուէներով դաշնակցական բիւրօկրատները կարողացան ընտրել տալ իրանց թեկնածուներին: Եւ միանգամից, որ հոգաբարձութեան կազմի մէջ կարողացան մտնել Տ. Յովհաննիսեանի և ըն-

կերների պէս հոգաբարձուներ, պէտք էր սպասել, որ դպրոցի խաղաղ կեանքը կընդհատուի, որ հառապարէզ կը դառնայ կուսակցական նեղ կրքերի, որ մատաղ սերնդի շահերը կը մոռացուին: Այդպէս էլ եղաւ:

Եւ ճշմարիտ, այնուհետեւ ինչ որ անցաւ Յովնանեան դըպրոցում, ինչ կարգադրութիւններ որ եղան թէ Տաճար և Ներսէս վարդապետների պէս ինտրիգան դիւանագէտների կողմից, բայց կաթողիկոսական սնունով քողարկուած, և թէ իրանց 4 հոգաբարձուների կողմից, այդ կարգադրութիւնները կրում են «թայֆայական» բնաւորութիւն:

Սկզբում, Կաթողիկոսի անունից խորհուրդ արուեց Լ. Սարգսեանին հրաժարուել, բայց նոյն խորհուրդը չտրուեց, ի հարկէ, այն հոգաբարձուներին, որոնք գործում էին ապօրինութիւն: Երբ ոչ-արժանաւայել խորհուրդը չլսուեց, Կաթողիկոսի անունից եկաւ այսպիսի հեռագիր.

«Թիֆլիս, առաջնորդ Սաթունեան արքեպիսկոպոսին.

«Որովհետեւ իմ բոլոր յորդորները զուր անցան, ուստի գումարեցէք հոգաբարձական նիստ, առանց տեսչի, և ձեռնարկեցէք դպրոցի բացման»:

Այդ հեռագրին չառաջնորդը պատասխանում է, թէ այդ առաջարկը անհասկանալի է, որովհետեւ ինչպէս կարելի հոգաբարձական նիստ գումարել առանց տեսչի, երբ տեսուչը իր պաշտօնի մէջ է և կտակի համաձայն նա պէտք է մասնակցէ նիստին: Այդ կարգադրութեան պէմ բողոքում է և մշտական հոգաբարձու ու Յովնանեան ցեղի ներկայացուցիչ պ. Ալէք. Ս. Անանեանը:

Եւ ահա էջմիածնից ստացւում է հետեւեալ երկրորդ հեռագիրը առաջնորդի անունով.

«Հեռագիրը սլարգ էր. գումարել նիստ միայն հոգաբարձուներից և լուծել բոլոր վիճելի հարցերը տեսչի և ուսուցիչների վերաբերմամբ»:

Պարզ է, որ էջմիածինը, շատ լաւ իմանալով, որ տեսչի բացակայութեամբ՝ դաշնակցական հոգաբարձուները մեծամասնութիւն կը կազմեն, և որովհետեւ նրանք իրանց գործողութիւնների մէջ սովոր են դեկլարուել ոչ մի օրէնքով, ուստի անմիջապէս կը հեռացնեն տեսչին, նոր տեսուչ կընտրեն և էջմիածնին էլ այն ժամանակ ինքն չքմեղ կը հանդիսանայ, ասելով՝ «Ինչ անեմ, հոգաբարձութիւնն է արձակել»:

Եւ ահա առանց որեւէ պատճառի, առանց որեւէ յանցանքի, այն տեսուչը, որ դեռ 2 ամիս առաջ կաթողիկոսական կօնդակով հռչակուած էր ամենաարժանաւորը, այժմ հեռացնում

է պաշտօնից, և այն բաղկին, երբ արդէն ուսուցչական խումբ է կազմուած և ուսումը պէտք է վաղուց սկսուէր:

Մեզ կասին, այդպէս է կաթողիկոսի կամքը: Բայց հօ չէ կարելի ամեն մի կամայականութիւն, հրէշաւոր ապօրինութիւն արդարացնել կաթողիկոսական կոնգակով:

Եւ այդ է պատճառը, որ հասարակութեան մէջ սաստիկ յուզմունք է ափրում: Հասարակութիւնը չէ կարող չյուզուել, որովհետեւ զէպքը շատ վրդովեցուցիչ է: Եւ արդէն բողոքներ սկսել են կազմակերպուել: Այսօր բերումենք այդ բողոքներից մինը:

Նրանք, որոնց համար թանգ են մայրենի դպրոցի և մատաղ սերնդի շահը, արդարութեան, ճշմարտութեան և օրինականութեան շահերը, որոնք դատապարտում են բռնութիւնը, կամայականութիւնը և մեր դպրոցական, հասարակական հիմնարկութիւնների բարգաւաճումը տեսնում են միայն օրինականութեան մէջ, պէտք է միացնեն իրանց բողոքներին *) ձայները արդէն հնչուած ձայնի հետ:

Պէտք է դպացնել տալ էջմիածնին և «ազդային բիւրօփրատներին», որ չի կարելի անպատիժ կերպով ոտնակոխ անել օրինականութիւնը և արդարութիւնը:

Հ. Ա.

Նորին Վեհափառութեան Կաթողիկոսին Ամենայն Հայոց: Էջմիածին.

Համաձայն Ձեր Վեհափառութեան հեռագրին, առաջնորդը, սեպտեմբերի 26-ի կէսօրին, նիստի է հրաւիրել Մ. Յովնանեան դպրոցի հոգաբարձական խորհուրդը, առանց տեսչի, լուծելու համար տեսչի և ուսուցիչների մասին, խնդիրները, համարելով այս խնդիրները վիճելի: Ի նկատի ունենալով, որ այդ խնդիրները արդէն լուծուած են նախկին նիստերում, հոգաբարձութեան օրինական կազմով և արձանագրութիւնները հաստատուած են, ես խնդրում եմ, խուսափելու համար սուր ընդհարումներից և յսնուն դպրոցի բարիքների, առաջարկել առաջնորդին յետաձգել նիստը, որովհետեւ ես ներկայացնում եմ ձեզ պատճառաբանուած գեկուցագիր՝ մասնագէտ-իրաւագէտների եզրակացութեամբ տեսչի ընտրութեան լիակատար օրինականութեան և խորհրդի նախորդ նիստերի կանոնաւորութեան մասին:

Ա. Անանեան

*) Բազմաթիւ բողոքները «Մշակում» մենք առաջ չննք բերում այսօր, ինչպէս և նամակները որոնք ստացուել են մեր իմբադրութեան մէջ դաշնակցական այդ բռնութեան առիթով:

Ծ. խմբ.

Օրագիր Մարիամնան Յովնանեան օրիորդաց դպրոցի

Սեպտեմբերի 26-ին

Լ ա ե ց ի ն. Սրբազան նախագահը բանալով ժողովը յայտնեց, թէ՝ «Վեհափառ Կաթողիկոսը հրամայել է ինձ «հրաւիրել միմիայն հոգաբարձուներին նիստի եւ վճռել բոլոր վիճելի հարցերը տեսչի եւ ուսուցիչների մասին», եւ հրաւիրեց հոգաբարձուներին յայտնել իրանց ցանկութիւնները եւ ստաց. «ապագայ բաղդութիւններից ուսումնարանը ազատ պահելու համար անհրաժեշտ է անձնական զրկանքները խոնարհեցնել հասարակական շահերին եւ թողնել Վեհափառի մինչեւ այժմ եղած կարգադրութիւնները անփոփոխ, որով միմիայն ուսած կը լինի եւ Ծերունի Հայրապետը եւ զո՞հ կը մնայ հասարակութիւնը եւ ուսումնարանում այժմէն կը սկսուեն դասաւանդութիւնները, որին սպասում են հարիւրաւոր երեխաներ»:

Կ ա ը ր Կ ա դ ը ե ց ի ն. Պ. Անանեանցը ասաց. «Տեսուչը հաստատուել է Կաթողիկոսից եւ նա պէտք է մնայ տեսուչ. նոր ընտրութիւն անել եւ օրինաւոր չեմ ճանաչի. իսկ ուսուցիչների մասին նոյնպէս նոր կարգադրութիւն եւ չեմ ընդունում, որովհետեւ անցեալ մեր օրինական ժողովում հաստատել ենք ուսուցչական ցուցակը, որ ներկայացրել էր տեսուչը»:

Նախագահը կրկնեց, որ Վեհափառ Կաթողիկոսը թոյլ է տուել տեսչի եւ ուսուցիչների վերաբերութեան վճիռ կայացնել:

Հոգաբարձու Տիգրան Յովնանեանը յայտնեց իր կարծիքը, թէ՝ «Տեսուչն ու նորահաստատ հոգաբարձուները չեն կարող միասին պաշտօնավարել մի հաստատութեան մէջ, որովհետեւ պ. Սարգսեանը մեզ մինչեւ այսօր հոգաբարձու ճանաչել չէ կամեցել, մեր իրաւունքներն արհամարհել է եւ մի շարք հրապարակական վիրաւորանքներ է հասցրել մեզ, եւ այս պայման լինելով հանդերձ, եւ ցանկութիւն չունեմ, որ տեսուչը վիրաւորիչ կարգով հեռացուի ուսումնարանից եւ ոչ էլ զրկուի ոռճիկից, այլ եւ կառաջարկեմ, որ տեսուչը ինքը հրաժարական ներկայացնի մինչեւ ամսիս վերջին օրը եւ ստանայ իր ոռճիկը այնպէս, ինչպէս Վեհափառ Կաթողիկոսն է առաջարկել. իսկ եթէ չներկայացնի հրաժարական, հրաժարուած ճանաչել»:

Այս առաջարկին միացան տ. Դարիա Թադէոսեանը, պ. պ. Յարութիւն Թայրեանը եւ Լիպարիտ Նազարեանը:

Պ. Ալեքսանդր Անանեանը յայտնեց. թէ՝ «Եւ չեմ կարող

ներկայ լինել այն որոշման, որ քանդում է առաջին որոշումը. ես հեռանում եմ ժողովից»:

Կուսանաց անապատի Մայրապետը համակերպուեց Անանեանցի կարծիքին և նա նոյնպէս հեռացաւ ժողովից:

Ժողովը շարունակելով նորընտիր հոգաբարձուները, յարմար համարեցին տեսչի պաշտօնի համար հրաւիրել պ. Յակոբ Մանանդեանին. իսկ ուսուցչական կազմի մասին որոշեցին հրաւիրել նախկին խումբը մի տարի ժամանակով, բացի տեսչուհուց. իսկ դասերն սկսել հոկտեմբերի 2-ից, երկուշաբթի օրից:

Ստիպաւա՛հր յայտնեց թէ՛ «Ես, իբրեւ ստորագրեալ Վեհափառ Կաթողիկոսի, պարտաւոր էի համարում ինձ մինչև այժմ գործերին ընթացք տալ Վեհափառ Կաթողիկոսի ցուցումներով, և այս պատճառով իրաւունք չէի համարում Հայրապետից հաստատուած տեսչի մասին խնդիր դնել. բայց այժմ Նորին Վեհափառութիւնը հեռագրական պատուէր է կարգացել ինձ միմիայն հոգաբարձուներից ժողով կազմել և վիճելի հարցերի, այն է տեսչի և ուսուցչական խմբի մասին վճիռներ դրնել. ես այդ յանձնեցի հոգաբարձական ժողովի հայեցողութեան: Գալով իմ կարծիքին, ես գտնում եմ նախկին հոգաբարձուների որոշումներն ըստ ամենայնի օրինական և հետեւապէս ոչ մի օրինական հիմք չեմ գտնում հոգաբարձական նախկին կազմի որոշումները փոփոխութեան ենթարկել, ուստի և չեմ կարող իմ հաւանութիւնը տալ նոր տեսուչ հրաւիրելու և նախկին ուսուցչական խումբը պաշտօնի հրաւիրելու որոշմանը: Իսկ ինչ վերաբերում է ներկայ հոգաբարձուների պատճառարանութիւններին, թէ նրանք ուսումնարանից դուրս միմեանց հրապարակական վիրաւորանքներ են պատճառել, որը ծառայում է տեսչին արձակելու շարժառիթ, այդ ես չեմ համարում ուսումնարանական գործին միացնելու ոչ մի օրինական հիմք, որովհետեւ այդ մասին կայ օրէնք, ուր զրկուած համարուածները գիմում և արդարութիւն պահանջելով պատժի են ենթարկում յանցաւորներին»:

Հոգաբարձուները յայտնեցին, թէ իրանք տեսչին ոչ մի վիրաւորանք չեն պատճառել: Վիրաւորանք պատճառողը տեսուչն է եղել:

Իսկ հոգաբարձութիւնը անհրաժեշտ համարեց նոյն որոշման հարազատ պատճէնը տեսչի հաստատութեան յայտարարութեան հետ ժառուցանել Վեհափառ Կաթողիկոսին:

ԻՐԱՒԱՅԱՆՆԵՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Մենք ներքոյ ստորագրեալ իրաւաբաններս, ժողովուրդով Յովնանեան օրիորդաց դպրոցի հոգաբարձու պ. Ալէքսանդր Անանեանի հրաւերով — քննելու յիշեալ դպրոցին վերաբերեալ մեզ առաջարկած հարցերը, որոնք ծագել են պ. Լ. Սարգսեանին տեսուչ ընտրելու առիթով, եկանք հետեւեալ եզրակացութեան՝ ունենալով իբրեւ նիւթ մեզ ներկայացրած ներկայ փաստաթղթերը. ա) հանդուցեալ Յով. Ստեփ. Անանեանի 1876 թուի ընծայագիրը, բ) Յովնանեան օրիորդաց դպրոցի խորհրդի վերջին արձանագրութիւնները և գ) խորհրդի նորընտիր անդամների և տեսչի հաստատութեան կաթողիկոսական կօնդակները:

Հարց

1) Որո՞նք են այն օրինական հիմունքները, որոնցով պէտք է ղեկավարուի Յովնանեան օրիորդաց դպրոցի վարչութիւնը:

Պատասխան

1) Հանդուցեալ Յովհաննէս Ստեփանեան Յովնանեանի ընծայագիրը, իբրեւ իրաւաբանական մի ազատ, պարունակում է իր մէջ որոշ ղեկավարող սկզբունքներ, որոնք պարտադիր են ուսումնարանի վարչութեան և հոգևոր իշխանութեան համար: Այդ սկզբունքները — ներկայ խնդրին վերաբերեալ — հետեւեալներն են.

ա) «Ուսումնարանը ընդմիշտ մնալով հոգևոր վարչութեան մէջ, ղեկավարւում է խորհրդով, կազմուած տեղական թեմական արքեպիսկոպոսի նախագահութեամբ. կուսանաց վանքի մայրապետից, Թրֆլիսում ապրող հայերից ընտրուած չորս անդամներից, որոնք հաստատւում են Հայոց Պատրիարք Կաթողիկոսից և ուսումնարանի տեսչից:

Խորհուրդը իւրաքանչիւր տարուայ սկզբում պէտք է իր միջից ընտրէ նախագահի օգնական. գործերը պէտք է վճռուեն ձայների առաւելութեամբ. անդամներին անձնական իշխանութիւն չի վերագրուում:

բ) Խորհրդի չորս անդամները Թիֆլիսի բնակիչներից՝ մինչ ես կենդանի եմ, նշանակւում են իմ կողմից, իսկ իմ մահից յետոյ ընտրւում են, երեք տարով՝ պատգամաւորներից, որոնց այդ նպատակով ընտրւում են իւրաքանչիւր անգամ թեմական եպիսկոպոսի նախօրօք կարգադրութեամբ Վանքի մայր տաճարի, Մոզնում ս. Գէորգ և Աստուածածնի Բեթղեհէմի եկեղեցիների ծխականները, իւրաքանչիւր եկեղեցուց չորս հոգի:

գ) Տեսչին ընտրւում է Խորհուրդը հայերից, որոնք ստացել են պատշաճ կրթութիւն, և հաստատուում է պաշտօնի մէջ նոյնպէս Վեհափառ Պատրիարքից: Տեսուչը կառավարում է ուսումնական մասը յիշած Խորհրդի անմիջական հսկողութեամբ:

դ) Իմ տոհմի արական ճիւղի մէջ աւագագոյնը օգտւում է ուսումնարանի հոգաբարձուի կոչումով. նա Թիֆլիսում եղած ժամանակ կարող է ներկայ գտնուել Խորհրդում ձայնի իրաւունքով: Հոգաբարձուին յատկացնւում է հոգալ ուսումնարանի բարօրութեան համար:

Ընծայադրի վերոյիշեալ պայմաններից պարզ երևում է, որ հանդուցեալ ընծայաբերողի և բարձրագոյն հոգևոր իշխանութեան մէջ կայացել է փոխադարձ համաձայնութիւն, որը նուիրաբերութիւնը ընդունելուց յետոյ — պիտի իբրև անխախտելի գաշնադիր սրբութեամբ պահպանուի և կատարուի հոգևոր վարչութեան կողմից:

Հարց

2) Օրինաւոր է եղել նախընթաց Խորհրդի կազմը և իրաւասութիւնը՝ սկսած այն ժամանակից, երբ պետական ուսումնարանական վարչութիւնը յանձնեց դրութեան հոգևոր կառավարութեան, մինչև Խորհրդի նորընտիր անդամների պաշտօն ստանձնելը:

Պատասխան

2) Յովնանեան օրիորդաց դպրոցի նախընթաց խորհուրդը ունէր օրինաւոր կազմ և իրաւասութիւն՝ դպրոցական բոլոր գործերը վարելու: Համաձայն ընծայագրի 2-րդ և 3-րդ յօդուածների, խորհրդի անդամներն են— նախագահութեամբ թեմական առաջնորդի Կուսանաց վանքի մայրապետը, Յովնանեանների տոմական ճիւղի ներկայ և աւագագոյն անդամ պ. Ալէքսանդր Անանեանը, դպրոցի տեսուչը և ժողովրդից բնորոշած չորս անձինք, ընդամենը 8 հոգի՝ հաւասար իրաւունքներով: Նախկին խորհրդում մնացել էին 5 անդամներ— մէկի մահուան և միւսի բացակայութիւն *): պատճառով, ուստի նրանք լիակատար իրաւունք ունէին՝ համաձայն ընծայագրի— դպրոցական գործերը վարելու և որոշումներ կայացնելու: Գալով նախընթաց խորհրդի պաշտօնավարութեան ժամանակամիջոցի լրանալուն, մենք գրտնում ենք, որ խորհրդի հին կազմը իրաւունք ունէր և նոյնիսկ պարտաւոր էր շարունակել իր գործունէութիւնը մինչև յաջորդ խորհրդի կազմուելը, երբ էլ դա լինէր. այդ ոկգբունքը, որ բղխում է օրէնքից և կեանքի պահանջներից, ընդունուած է պետական և հասարակական հիմնարկութիւններում: Անկախ զրանից, մենք գրտնում ենք, որ նախընթաց խորհրդի պաշտօնավարութեան ժամանակամիջոցը լրանում էր միայն ներկայ թուի սեպտեմբերի 3-ին, որովհետև այդ ամսաթուին երեք տարի առաջ նրանք իրանց պաշտօնը ստանձնեցին, որ ժամանակուանից և պէտք է համարուի նրանց պաշտօնավարութեան եռամեայ շրջանը:

Հարց

3) Օրինաւոր է խորհրդի նորընտիր չորս անդամների պահանջը, որ արձանագրուած է ներկայ սեպտեմբերի 14-ի օրագրում. այն է թէ՛ Կաթողիկոսը հաստա-

*) Այդ ժամանակ դպրոցը տեսուչ չունէր:

տելով նրանց ընտրութիւնը, հաստատել է դրանով այն յանձնարարութիւնները, որ նրանք ստացել են պատգամաւորներէց:

Պատասխան

3) Այդ պահանջը գուրկ է որեւէ օրինական հիմունքներից, քանի որ ոչ պատգամաւորները իրաւունք ունէին յանձնարարութիւններ տալ ընտրեալ անդամներին, որպէսզի նրանք ղեկավարուեն իրանց գործունէութեան ընթացքում այդ յանձնարարութիւններով և ոչ էլ անդամները իրաւուք ունէին ընդունելու այդ վերջինները ի գործադրութիւն:

Այն օրից, երբ նրանք պաշտօնի են հրաւիրուում, պարտաւոր են ղեկավարուել միայն դպրոցի կանօնադրութեամբ, որից դուրս իրանց հաճոյքով նրանք ոչ մի պահանջներ չեն կարող դնել ի կատարումն:

Բացի դրանից Կաթողիկոսի հաստատման կօնդակից բնաւ չէ երևում, որ Վեհափառ Հայրապետը հաստատելով նոր անդամների ընտրութիւնը, հաստատել է կամ օրինաւոր է ճանաչել և՛ պատգամաւորական յանձնարարութիւնները: Չենք ասում արդէն, որ ծխական ժողովները արձանագրութիւններում բնաւ չը կայ յիշատակութիւն որեւէ յանձնարարութիւնների մասին՝ ընտրող ժողովրդին կողմից:

Հ ա Ր Գ

4) Օրինաւոր է խորհրդի նորընտիր չորս անդամների վճիռը, որ արձանագրուած է ամսիս 26-ի օրադրում: Այդ օրագրից երևում է, որ յիշեալ անդամները որոշել են արձակուած համարել դպրոցի տեսուչ Լևոն Սարգսեանին հոկտ. 1-ից, նրա տեղ հրաւիրել նոր տեսուչ, և միաժամանակ նախընթաց խորհրդից արձակուած ուսուցչական խումբը՝ բացառութեամբ աւագ վարժուհու:

Պ ա ս ա ս խ ա ն

4) Յովնանեան զպրոօի տեսուչ պ. Լ. Սարգսեանը ընտրուել է զպրոցի նախկին խորհրդի օրինաւոր որոշմամբ և հաստատուել է կաթողիկոսական կոնգալով: Հրաւիրուելով տեսչական պաշտօնի—նա մտանակցել է նախկին և ներկայ խորհրդի նիստերին և ներկայացրել է խորհրդին ի հաստատութիւն ուսուցչական խմբի կազմը: Ոչ մի պաշտօնեայ չէ կարող արձակուել իր պաշտօնից առանց օրինական և յարգելի պատճառների, ևս առաւել ներկայ դէպքում, երբ Լեոն Սարգսեանը տակաւին չէ գործակցել նորընտիր հոգաբարձութեան հետ և օրագրի մէջ չեն արձանագրուած որեւէ պակասաւոր կողմեր նրա անցեալ մանկավարժական գործունէութիւնից: Հետեապէս խորհրդի նորընտիր անդամները բնաւ իրաւունք չունէին օրինաւոր ընտրուած և հաստատուած տեսչի, առանց որեւէ կանոնաւոր հիմունքի, իր պաշտօնից արձակուած համարել և նրա տեղ նորն ընտրել:

Չէ կարելի օրինական հիմք ճանաչել այն պատճառաբանութիւնը, որ բերուած է ամսիս 26-ի օրագրում, քանի որ վերջինը բղիււմ է զուտ անձնական տրամագրութիւնից և լրագրութեան մէջ ծաղած փոխադարձ պայքարից, որը ոչ մի առնչութիւն չունի ուսումնարանի հետ: Ուստի խորհրդի նորընտիր անդամների ներկայ սեպտ. 26-ին կայացրած որոշումը պէտք է համարել սպօրինի.

Հ ա ր ց

5) Կանոնաւոր է խորհրդի անդամների փոխանորդութիւնը:

Պ ա ս ա ս խ ա ն

5) Ընդունելով այն ղեկավարող սկզբունքները, որոնք արձանագրուած են հանգուցեալ Յովնանէս Անանեանի ընծայագրի մէջ, և աչքի առաջ ունենալով ներկայ զեկուցման առաջին կէտում յիշած մեր պատ-

ճառաբանութիւնները, մենք զանում ենք փոխանորդութիւնը ըրծայազրով չթոյլտրուած:

Եզրափակելով վերոյիշեալը, մենք զանում ենք, որ պ. Լ. Սարգսեանը ամենայն իրաւամբ պէտք է համարուի տեսուչ զպրոցի՝ իր պաշտօնին յատուկ լիազօրութիւններով, իսկ նրա առաջարկած և խորհրդից հաստատած խումբը պաշտօնի հրաւիրուած. իսկ ինչ վերաբերում է նորակազմ խորհրդի սեպտ. 26-ի որոշման, նա պէտք է համարուի անկանօն և ապօրինի:

Նիկողայոս Քալանթարեան, Քեարոս Քալանթարեան, Սամսոն Յարութիւնեան, Արշակ Բարխուդարեան, Պօղոս Դօլուխանեան, Յովհաննէս Սպէնդիարեան, Միքայէլ Աթաբէգեան:

Հիմնադատութիւն է, թէ՞ կատակերգութիւն

Զարմանալի ժամանակներում ենք ապրում մենք: Գրտնրում են մարդիկ, որոնք լրջութիւնը, զիտութիւնը և բարեխղճութիւնը աւելորդ բան են դարձրել, իսկ փոխարէնը զարդարում են իրանց յանդգնութեամբ և աչքակապութեամբ: Որքան միամիտ—եթէ չափեմ աւելին—պէտք է լինեն այդպիսիները, որ կարծում են, թէ բանիմաց հասարակութիւնը իրանց «փօկունները», որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ տգիտութեան, նեղ խելքի և անսահման համարձակութեան արդասիք, կընդունէ իբր ճշմարտութիւն:

Դուրս գալ հասարակութեան առաջ, մամուլի մէջ, խօսիլ մեծ ապլօմբով, երբեմն գիտնականի գիմակի տակ, դարձել է մի սովորական, բայց ցաւալի երևոյթ: Իսկ երբ վերցնում էք նրանց ասածից կեղծ կեղևը, քննադատութեան էք ենթարկում բովանդակութիւնը, մնում էք ապշած նրանց խոր տգիտութիւնից, տրամաբանութեան բացակայութիւնից: Իբրև փայլուն փաստ առածիս կարող են ծառայել, ի միջի այլոց, այն յարձակումները, որ կատարւում են կատաղի, բայց անմիտ կերպով «եղկիր» լրագրի համարներում՝ մի խումբ իրաւաբանների եզրակացութեան առիթով, որ նրանք տուել են չարաաստիկ Յովնանեան զպրոցում տիրապետող «նոր կարգերի» մասին: Եւ ես եղել եմ այդ իրաւաբանների թւում, հետեւապէս անկարող եմ լուծեմ անցնել:

Յիշեալ խնդրի մասին «Երկրի» № № 3 և 4-ում տպուել են 2 յօդուածներ. մէկը Սլաքի ստորագրութեամբ, իսկ միւսը՝ իրաւաբան Գ. Սատիսեանին է պատկանում: Առաջին յօդուածը լի է միմիայն հայհոյանքներով, տափակ սրախօսութիւններով, և եթէ կուզէք, նրա մէջ կայ փորձ նոյն իսկ ինսինուցիա անելու այն իրաւարանների հասցէն, որոնք իբրև մասնագէտներ պ. Ա. Անանեանի հրաւերով տուել են իրանց եզրակացութիւնը ամենայն անաչառութեամբ յանձին իրանց մասնագիտական պարտաւորութեան, ամենայն կերպ աշխատել են մնալ օրեկ-աիւ հողի վրայ, հետու ամենայն կուսակցական տեսակէտներից և կողմնակի հանգամանքներից: Ասացէք խնդրեմ, թր քաղաքակիրթ, լուսաւոր հասարակութեան մէջ կարելի էր մի յատկապէս մասնագիտական եզրակացութեան համար, փոխանակ քննելու և քննադատելու միմիայն եզրակացութիւնը ըստ էութեան, ենթարկել քննութեան և զատապարտել մասնագէտների անձնաւորութիւնը, ունենալով սոսկ մի նպատակ—ազդել խուժանի վրայ, որպէս զի մասնագիտական եզրակացութիւնը չբանայ նրա աչքերը: Այդ տեսակ յօդուածի միակ պատասխանը կը լինի մեր խորին զգուանքը:

Այժմ անցնում եմ պ. Սատիսեանի յօդուածին: Պ. Սատիսեանը թէև փորձում է քննադատել իրաւարանական տեսակէտից յիշեալ եզրակացութիւնը, բայց կրկին, կարծես, ուզում է յետ չմնալ իր նախորդից—համարձակութեան նկատմամբ: Մեր ութ իրաւարանների եզրակացութիւնը անուանում է «բիւրօկրատիկ, յետամնաց մտածողութեան արդիւնք, պատճառարանութեան ձևը քրէհով վերցրած կանցելիարիայից» (հրաշալի սրախօսութիւն...) և այլ համանման գոհարներով նա զարգարում է իր յօդուածը: Թողնենք իրան, պ. Սատիսեանին, անտեղի, անմիտ խօսքերի կուտակը, անցնենք նորաբողբոջ իրաւաբանի յօդուածին ըստ էութեան: Որքան ողորմելի է այդ կողմից գիտնական տօղա հագած Սատիսեանը, ինչ հիասթափումն, երբ ծանօթանում էք նրա յայտնած մտքերի հետ, որոնք մէկը միւսից չսակ, մէկը միւսից անհիմն, հակաիրաւաբանական և հակատրամաբանական են: Եթէ այդ գրուածքը պատկանէր մի թերուս զինապետի, չէինք զարմանալ, բայց որք տեսնում ենք, որ այդ դուրս է եկել մի համալսարանաւարտ իրաւաբանի գրչից, չենք կարող ամենաքիչը չցաւել: Պ. Սատիսեանը իր յօդուածի սկզբում կտրուկ կերպով յայտնում է, որ ութ իրաւարանների եզրակացութեան սխալ լինելը կտակածից դուրս է. աֆերիմ. բայց ինչպէս է նա պատճառարանում, հետաքրքիրն այդ է: Պ. Սատիսեանի

ասելով Յոֆանեան զպրոցի հին հոգաբարձութիւնը—հակառակ իրաւարաններէ եղրակացութեան—իրաւունք չունէր վարել ուսումնարանի գործերը իր լիազօրութիւնը վերջացնելուց յետոյ: Ի միջի այլոց, նա իրաւունք չունէր ընտրել տեսուչ պ. Լ. Սարգսեանին:

Այդ հարցը վճռելու համար, պ. Սատիսեանի կարծիքով, պիտք է իմանալ, որ գա «սահմանադրական» հարց է և դրան լուծելու համար պէտք է զիմել ոչ թէ Ռուսաստանի օրէնքներին ու կարգերին, այլ օտար, ասիականական օրէնսդրութիւններին, ուր ընդունուած է, որ ժողովրդի ընտրեալները իրաւունք չունեն օգտուել ժողովրդի տուած իրաւունքներէց աւելի երկար, քան այդ որոշուած է օրէնքի մէջ. յետոյ, պ. Սատիսեանի կարծիքով, նոր հոգաբարձուները իրաւունք ունէին հեռացնել պաշտօնից պ. Լ. Սարգսեանին, որովհետեւ բոլոր «գեմօկրատիկ երկրներում ընդունուած է ամենալաւ կերպով, որ երբ փոխուած է նախարարութիւնը, փոխուած են նաեւ պաշտօնեաները»: Ամեն մի թէզիսը պ. Սատիսեանի սխալ է և անհիմն, թէ փաստային, թէ պատմական և թէ գիտական տեսակէտից: Եթէ ի նկատի առնենք, որ այս բոլոր կռիւնքի պատճառը եղել է այն, որ հին հոգաբարձութիւնը տեսուչ է ընտրել պ. Լ. Սարգսեանին, որի ընտրութիւնը անհաճելի է նրա հակառակորդներին, թէև հակառակորդները մինչև հիմա մի խօսք տնգամ չեն ասել նրա ասիականական թերութիւնների մասին, և եթէ ի նկատի առնենք ևս այն, որ պ. Սարգսեանը ընտրուել է տեսուչ մինչև յուլիսի 3-ը, երբ հին հոգաբարձութեան լիազօրութիւնը դեռ չէր վերջացել, դուրս կը գայ, որ հէնց իրա պ. Սարգսեանի ընտրութիւնը եղել է օրինական: Պ. Սատիսեանի սխալը գուցէ բացատրուի նրանով, որ նա իրան նեղութիւն չէ տուել ծանօթանալ գէթ գործի փաստային կողմի հետ:

Ոչ պակաս անհեթեթութիւն են ներկայացնում նրա մտացեալ պատճառարանութիւնները կամ աւելի լաւ է ասել, անտեղի, փրօն ֆրազները: Պ. Սատիսեան պնդում է, որ Յովնանեան զպրոցի հոգաբարձական հարցը սահմանադրական հարց է և դրան լուծելու համար պէտք է զիմել «օտար գեմօկրատիկ երկրների օրէնսդրութեան». ստեղծել շփոթութիւն սահմանադրութեան մասին: Ինչպէ՞ս կարելի է Յոֆանեան զպրոցի հոգաբարձութիւնը համարել սահմանադիր մարմին. քանի որ նա ինքը ոչինչ չէ սահմանում և իրաւունք էլ չունի սահմանելու: Նա հրաւիրուած է վարել զպրոցի գործերը, զըպրոցի հիմնադիր Յ. Անանեանի ընծայագրի սկզբունքներով,

հոգևոր իշխանութեան ներքոյ և յարմարուելով տիրապետող օրէնքների հետ. ուրեմն, Յովնանեան դպրոցի հոգաբարձութիւնը հանդիսանում է ոչ թէ սահմանադրական, այլ մի վարչական մարմին: Ստկայն պ. Սատիսեանը, տալով Յովնանեան դպրոցին սահմանադիր մարմնի բնութիւն, գտնում է, որ հին հոգաբարձուները իրանց լիազօրութիւնը պէտք է շարունակեն միմիայն որոշած ժամանակամիջոցը (3 տարի), ինչպէս այդ կատարւում է «սահմանադրական երկրներում»: Բայց նա մոռանում է, որ այն երկրներում, ուր տիրապետում են ռամկավարական սկզմունքներ, ուր օրէնքները սահմանում են ժողովրդի ընտրեալները, այն տեղերում էլ լիազօրութեան շրջանը խիստ կերպով կատարւում է միմիայն օրէնսդրական հիմնարկութիւնների վերաբերմամբ, որովհետև պարլամենտների, պալատների, բէյաթսարատի և այլ համանման հիմնարկութիւնների անդամները հրաւիրուած են, ի միջի այլոց, օրէնքներ սահմանել որոշ ժամանակամիջոցում, և երբ այդ ժամանակամիջոցը վերջանում է, հիմնարկութիւնները փակւում են մինչև նոր կազմը. այն, ինչ չէ կարողացել կատարել մի կազմ իր գործունէութեան ժամանակամիջոցում, կատարում է նոր կազմը յետագայ ժամանակամիջոցում: Իսկ որովհետև կեանքը կանգ չէ առնում, նա ընթանում է, և նոյն իսկ այդ ռամկավարական երկրներում հին կարգերը օրէնսդրական տեսակէտից փնտւում են պարտադիր, մինչև նրանց փոխելը, ընդունուած եղանակով: Եւ դուք, պ. Սատիսեան, չէք կարող ցոյց տալ ոչ Անգլիայում, ուր ընտրովի են, օրինակ՝ դատաւորները, կամ մի ուրիշ երկիր, ուր զանազան պաշտօնեաներ նոյնպէս ընտրովի են, որ ընտրովի պաշտօնեաները անմիջապէս հետանան իրանց պաշտօններից, երբ իրանց ժամանակամիջոցը լրանում է, առանց յանձնելու նորերին: Թողնել պաշտօնը մինչև նորի ստանձնելը, այդ տեսակ պահանջը անբնական է և տրամաբանութիւնից զուրկ: Երեւակայեցէք, որ ինչ-ինչ պատճառներով նորի պաշտօն ստանձնելը ուշանում է. օրինակ ընտրովի հոգաբարձուների, ընտրովի դատաւորի, ընտրովի բժիշկի և այլն, և այլն. և միթէ դուք կարող էք ենթադրել, որ հին հոգաբարձութեան յանձնած դպրոցները, հին դատաւորներին յանձնած դատարանները, հին բժիշկներին յանձնած հիւանդանոցները պէտք է փակուեն, որովհետև նրանց լիազօրութեան ժամանակամիջոցը լրացել է: Տեսնում էք, թէ ի՞նչ արտուրդի է հասնում ձեր հայեացակէտը: Դուք ի հաստատութիւն ձեր մտքի—բերում էք մի օրինակ. դեմօկրատիկ երկրներում ընդունուած է՝ երբ փոխւում է նախարարութիւնը,

փոխւում են նաև պաշտօնեաները: Կրկին ցաւալի թիւրիմացութիւն ձեր կողմից: Չէ՞ կարելի աւելի պարզ ասել և ցոյց տալ, թէ այդ ո՞ր գեւորատիկ երկիրն է, ուր նախարարութեան հետ փոխւում են նաև պաշտօնեաները. օրինակ—լուսաւորութեան նոր նախարարի հետ փոխւում են նրա դիւանատան ծառայողները, փոխւում են բարձրագոյն, միջնակարգ և մնացեալ դպրոցների և այլ ուսումնական հիմնարկութիւնների պրոֆէսորները, վերապետները, տեսուչները, ուսուցիչները և ուրիշ զանազան պաշտօնեաներ. այդ տեսակ երկիր երկրագնդի վրայ չկայ. իսկ եթէ նա տեղ է գտել զանազան անհատների ֆանտազիայում, այդ մասին մենք ասելիք չունենք: Բոլոր սահմանադրական երկրներում, ուր կան պատասխանատու նախարարութիւններ, նախարարները կազմելով մի այսպէս ասած նախարարական կարինէտ, ներկայացնում է մի որոշ ուղղութիւն և ամեն մի ուղղութեան սկզբունքները աշխատում է մտցնել իրան յանձնած շրջանում, բայց դրա համար նրանք իսկոյն չեն վաճառում հին պաշտօնեաներին. մասնակի փոփոխութիւններ կատարւում են, բայց զա մի պարտաւորական և ընդունուած կանօն չէ: Պ. Սատիսեանի տարօրինակ դատողութեան պսակը պէտք է համարել նրա պրուածքի այն մասը, որի մէջ նա յայտնում է, թէ «պ. Ա. Անանեանը բոլորովին սպօրինաբար է իրան յատկացնում հոգաբարձուի կոչումը», և գիտէք, ընթերցող, ինչո՞ւ. որովհետեւ Ա. Անանեանը դպրոցի հիմնադիր Յ. Անանեանի տոհմից չէ Սատիսեանի ասելով: Ի՞նչ միամտութիւն, ի՞նչ խորը տգիտութիւն—նոյն իսկ ամենատարրական հարցերում: Հանգուցեալ Յ. Անանեանի ընծայագրի մէջ՝ 6-րդ կէտում ասուած է, որ նրա տոհմի աւագը, արական սեռից, պէտք է լինի անփոփոխ հոգաբարձու դպրոցի: Գերմանիայի և մնացեալ բոլոր կուլտուրական երկրների օրէնսդրութիւնները ընդունում են, որ տոհմը ոչ այլ ինչ է, եթէ ոչ արհեստցական կերպով կապուած արական և իգական սեռին պատկանող անձանց մի համախմբում, որոնք ծագում են մի նախահայրից. այդ կապը համարեալ բոլոր պետութիւններում իրաւունք է տալիս տիրելու ժառանգական գոյք, կալուածք: Այդպէս են որոշում տոհմը իրաւագիտութիւնը և տիրապետող օրէնքները: Բոլորովին համանման կերպով տոհմի էութիւնը որոշում են և Ռուսաստանի քաղաքացիական օրէնքները, որոնք պարունակում են X-րդ հատորի լին մաս. յօդ. 196, 112 և 1113: Եթէ ի նկատի առնենք, որ պ. Ա. Անանեանը դպրոցի հիմնադրի հարազատ եղբայրն է, որ եղբայրներ համարւում են երկրորդ աստիճանի արհեստցական բարեկամ-հոգեւորներ, 1906.

ները, որ հիմնադրից արական սեռի անմիջական ժառանգներ չեն մնացել և վերջապէս, որ այդ տոհմի մէջ աւագագոյնը արական սեռի՝ է պ. Ա. Անահանը, չէ կարելի չգալ այն խորը համոզման, որ պ. Ա. Անահանը ամենայն իրաւամբ պէտք է համարուի օրինական հոգաբարձու Յովնանեան զպրոցի, եթէ մինչև անգամ չասենք այն, որ նա միեւնոյն ժամանակ հաստատուած է Հայոց Կաթողիկոսի կօնդակով այդ կոչման մէջ:

Ահա թէ ինչ անհեթեթութիւններ, անմտութիւններ են պարունակում պ. Խատիսեանի յօդուածի մէջ: Սակայն, չնայած նրա անպատրաստականութեան, նրա անտեղեակ լինելուն շօշափած հարցերում, այնուամենայնիւ այդ արգելք չէ եղել, որ նա դուրս գայ և «Երկրի» էջերում անսանձ կերպով քննադատի ուրիշներին:

Այդ քննադատութիւն չէ, այլ կատակերգութիւն:

Այնտեղ, ուր հարկաւոր է մտքի ոյժ, գիտական պատրաստականութիւն, այնտեղ լոկ Փրազները կարող են միմիայն ակամայ ժպիտ յարուցել:

Սամսոն Յարութիւնեանց

Յովնանեան զպրոցի գէպըը դարձել է, ինչպէս կը ական էր ներքի, և տեղական ոռոս մասուլի քննութեան աւարկայ: Այդ մասուլի օրդաններից մին՝ «Тифлис» (№ 12) հետեւեալ յօդուածն է նուիրել:

«Тифлис»-ի էջերում գետեղուած էին քանի մի տեղեկութիւններ Թիֆլիսի հայոց իգական ոլրօգիմնադիայի—Յովնանեան զպրոցի իրերի դրութեան մասին:

Յիշեալ զպրոցի հոգաբարձութեան նորընտիր 4 անգամները հասցրին գործը այն դրութեան, որ ծերունագարդ Կաթողիկոսը էջմիածնի կամարիլայի ազդեցութեան տակ, կամարիլայի, որ իր հերթին ղեկավարուած էր «ամենակարող» կուսակցութեան ձեռքով, հրամայել է առայժմ կողմնակի կերպով հեռացնել տեսչական պաշտօնից պ. Լ. Սարգսեանին, հէնց նոյն Սարգսեանին, որին նա ընդամենը երկու-երեք ամիս առաջ առանձին կօնդակով ողջունեց իրրև աւելի արժանաւոր ընտրեալի:

Ի՞նչ պատահեց:

Լ. Սարգսեանը «ամենակարող» կուսակցութեան անգամ չէ: Նա անզգուշութիւն, կամ համարձակութիւն ունեցաւ հաւարակութեան առաջ, իր ձեռքով խմբագրուող «Մուրճ» ամ-

աագրում և ուրիշ թերթերում, քննութեան ենթարկել այդ կուսակցութեան լիւիէրների գործունէութիւնը և սկզբունքները: Եւ փոխանակ ստանալու իրրի պատասխան գրական քանակիւ, համոզուած կ'ուիւ, նա ստանում է հալածանք, նենգութիւն, յամառ ինտրիգներ և վերջ ի վերջոյ «ամենակարող» հակառակորդներից թեւադրած առաջարկութիւն—թողնել ղալրոցը և ստանալ տարեկան ոտճիկը. թողնել ղալրոցը, չնայած որ նա միաձայն ընտրուել է օրինաւորապէս գործող հոգաբարձական խորհրդից և հաստատուել է Կաթողիկոսի կօնդակով: Թողնել ղալրոցը, ստանալ տարուայ ոտճիկը, չնայած որ առաջինը հասարակութիւնը, նոյնիսկ հակառակորդները տեսնում են յանձին նրա արժանաւոր, կարող գործչի—կրթութեան գործում: Ամբողջ գործը նրանումն է, որ Լ. Սարգսեանը այդ կուսակցութեան անդամներից չէ, քննադատում է նրա գործողութիւնները և դրա համար պէտք է պատժուի—նոյնիսկ չքաջուեցին յայտնի տեսչին արձակելու առիթով իրանց պատճառաբանութեան մէջ չափ և սահմանի ղգայժունքը կորցրած չորս հոգաբարձուները: Դրա անունն է բացարձակ կամայականութիւն և ապօրինութիւն, որ ոչնչով չեն զանազանում այն ապօրինութիւնից, որի դէմ մաքառում են Ռուսաստանի լաւագոյն մարդիկ և—հէնց իրա ստելով—ինքն «ամենակարող» կուսակցութիւնը: Բայց յեղափոխական Ֆրաղիօլօգիան ղեռ յեղափոխական էութեան վկայ չէ:

Այդ որոգայթները, բանասարկութիւնները մի ամիս շարունակ մի քանի հարիւր երեխաների համար փակեցին ուսումնարանի դռները, փողոցում թողին նաեւ ուսուցիչներին, որոնք արդէն ընդունուած լինելով ղեռ սեպտեմբերի սկզբին պ. Սարգսեանից և հաստատուած հոգաբարձական խորհրդի սեպտեմբերի 14-ի նիստին (ինն հոգաբարձուների և տեսչի 4)² ձայնով ընդգէմ նոր հոգաբարձուների 4 ձայնի) այժմ մնացել են ղըպրոցի շէւրջը, որովհետեւ արդէն ուշ է, իսկ «ամենակարող» կուսակցութիւնը «իր» տեսչի հետ միասին ուղղւած է ունենալ և «իր» ուսուցիչներին:

Եւ եթէ այդ ցաւալի դրութեան մէջ, որ ստեղծուեց ղալրոցի և գործից հեռու մնացած ուսուցիչների և վարժուհիների համար—մեղաւոր են խմբական շահերը և կուսակցական անապարձութիւնը, որոնց ղոհ են բերում իրաւունքը և արդարութիւնը, բայց և ոչ պակաս մեղաւոր է և այն հանգամանքը, որ Էջմիածինը իր կոչման բարձրութեան ղրայ չէ կոնգնած, որ նա իւրաքանչիւր օր ապլիս է հակասող ղիւրեկախներ, որ նա

տեղի է տալիս ոյժի առաջ, ստանալով տալով իրաւունքը, և անցնում է իր իշխանութեան սահմաններէն:

Այդ «սօցիալիստները», որ մերժում են պ. Լ. Սարգսեանի առաջարկած իրաւագէտների միջնորդ դատարանը և որոնք յենում են էջմիածնի ապօրինութիւններին, կըքի և նւթսուած մթնոլորտի վրայ, և այդ բարձր հոգևորականութիւնը՝ որ հաշտուել է իր առաջուայ «թշնամու» հետ, դրանք բոլորը իսկապէս արժեն միմեանց:

Ի նկատի առնելով մեր բոլոր ասածները, դեռ սեպտեմբերի սկզբին պ. Սարգսեանից ընդունուած և նոյն սեպտեմբերի 14-ին հոգաբարձական խորհրդի մեծամասնութեամբ հաստատուած և այժմ էջմիածնի քմահաճոյքով փողոցում մնացած ուսուցիչներին մնում է մի բան.— իրանց շահերի պաշտպանութեան համար դիմել օրինական միջոցներին, պահանջներով վճարել տարեկան վճարը կամ թողնել ուսուցչական կազմութիւնը՝ Դա՛ ուսուցիչների իրաւունքն է, որպէս վարձական կաթէզօրիայի իրաւունք, և միևնոյն է, թէ ով է ոտնահարում այդ իրաւունքը— հոգաբարձական խորհուրդը, էջմիածինը, թէ մասնաւոր ձեռնարկող՝ մի վաճառական»:

էջմիածնից «Մշակին» գրում են.

«Հոկտեմբերի 2-ին, Սինօղը քննութեան առնելով Յովհաննան գալրոցի հարցը, կայացրեց հետեւեալ որոշումը.

«Սինօղիս ի նկատի առեալ, նախ՝ զի տեսուչ Յովհաննան գալրոցի Լևոն Սարգսեան օրինական կարգաւ ընտրեալ է ի ձեռն հոգաբարձութեան, որոյ չե ևս էին անցեալ ժամանակ իրաւաբութեան, զի չէին տակաւին ընտրեալ յայնժամ նոր հոգաբարձութիւն, որք հաստատեցան միայն յանցելու սեպտեմբեր ամսեան*), և ապա հաստատեալ է տեսուչն կօնդակաւ Նորին Սրբութեան ի 15 յուլիսի տարւոյս, թ. 864, ուրեմն ցվերջ այսր ուսումնական ամի, չիք հիմն ինչ օրինական արձակելոյ գնա ի պաշտածանէն. և երկրորդ՝ ապօրինի և հակառակ համարելով խմատի կոտակի հանգուցեալ Յովհաննան Յովհաննան զմասնակցութիւն փոխանորդաց հոգաբարձուաց ամանց ի գումարման խորհրդոյ հոգաբարձութեան, որ ի 26 սեպտեմբերի անցելոյ, վասն զի չիք ի կտակին յիշատակութիւն ինչ զփոխանորդաց, խնդրել ամենախոնարհ յայտարարութեամբ ի Նորին Սրբութենէ, զի հաճեսցի թողուլ ի պաշ-

*) Տեսչի անունով արուած հաստատութեան կօնդակը գրուած է յունիսի 27-ին, № 778: Մ.— խմբ.

առաջին գէթ վասն այսր ամի զտեսուչ պ. Սարգսեան և զդասատուս, ընտրեալս ի նմանէ, իբրև զհաստատեալս օրինական կարգաւ պաշտօնեաս, և ի յուշածել նախագահի հոգաբարձութեան զպրոցին, եթէ ըստ կտակի հանգուցեալ հիմնադրի նորին հոգաբարձուաց չեն իրաւունք զլիազօրութիւնս իւրեանց յանձն առնելոյ փոխանորդաց, իսկ եթէ հոգաբարձուք բացակայեն յսր ի քաղաքէն, պարտին հրաժարել ի պաշտամանցն և ի աեղի նուցա առնել ընտրութիւն նորոց հոգաբարձուաց: Եւ քանզի առ գծութեանց որ ծաւեալ են ի պրոցին, մեծապէս տուժէ այն, զի ցայսօր ժամանակի չէ իսկ սկսեալ աւանդումս դասուց, հայցել առ այդ զփութաշնորհ տնօրէնութիւն Նորին Սրբութեան:

Այս որոշումը ներկայացուած է վեհ. Կաթողիկոսին, բայց դիւանատան մէջ բուն դրած ինտրիզանները և կամաքիլան ամեն միջոց գործ են դնում, որ Կաթողիկոսը չհաստատէ ի հաճոյս ամենակարող «կուսակցութեան»:

Տեղական ոռս մամուլն ևս, ինչպէս ասացինք, յայտնեց իր կարծիքը Յոփլանեան ուսումնարանի տեսչական հարցի մասին. «Тифл. Телегр.», «Кавказское Жизнь», և «Тифлис» պաշտարակեցին դաշնակցական հոգաբարձուների նեղսիրտ և ապօրէն ընթացքը: Դաշնակցութեան հրապարակական ջատագով բժ. Ալ. Սատիսեանը փորձեց փաստաբանել այդ «հոօր» կազմակերպութեան ընթացքը, խեղաթիւրելով փաստերը և անտեղի ճոռոմաբան շեղումների դիմելով «Кавк. Жизнь» թերթում, որի խմբագրութիւնը տպագրելով այդ բժշկի յօդուածը ծանօթութեան մէջ նկատել էր որ չի բաժանում յօդուածագրի պաշտպանած մտքերը: Ապա նոյն թերթը № 13-ի մէջ գետեղեց Ս. Շ. ստորագրութեամբ հետեւեալ յօդուածը:

Մաքառում կամայականութեան դէմ՝

Պ. Սատիսովի՝ «Երկու սկզբունքների պայքար», վերնագիրը կրող յօդուածում մենք ցաւելով չգտանք փոքր իշատէլուրջ ու անաչառ գնահատութիւն այն իրողութիւնների, որոնցից կազմուեց Յոփլանեան օրիորդաց ուսումնարանի տեսչական հարցը, մինչդեռ այդ հարցը որ այնքան խոր կերպով յուղեց հայ ազգաբնակչութեան հասարակական շրջանները արժանի էր աւելի խոհուն և անկուսակցական վերաբերմունքի քան այն, որ արտայայտեց պ. Ս.: Նա հէնց առաջին տողերից դուրս ե-

կաւ կուսակցութեան ջերմ պաշտպան և, իբրև այդպիսին, չկա-
կողացաւ մնալ արդարամիտ և անաչառ դատաւոր այն վէճի
մէջ, որի լուծումը նա ձեռք առաւ: Ամենից վարմանալին այն
է որ յօդուածի հեղինակը չկարողացաւ քննել և հասկանալ կող-
մերի ընդհարման էութիւնը և, մի կողմը շեղուելով, սկսեց ճա-
ռել այնպիսի առարկաների մասին, որոնք, ուղղակի յա-
րաբերութիւն չունենալով գործի հետ, հեղինակին դրաւեցին
դէպի միտինգային պերճախօսութեան ճանապարհ: Այդպէս,
երկու կողմերի մէջ բռնկուած բանակոխւել պ. Ս. ներկայացը-
նում է իբրև երկու սկզբունքների երկու հակառակ հոսանքների
պայքար. մի կողմից նոր, յանձին թէկուզ չորս ընտրեալների,
որոնք պ. Ս. կարծիքով կոչուած են աւելել, սրբել, այն բոլորը
ինչ որ հնացել է ու փտել և հնի աւերակների վրայ կառուցա-
նել նոր բարեբախտութիւն Յովնանեան ուսումնարի համար,
իսկ միւս կողմից՝ պահպանողական, յետագէմ, որ պահպանում
է պ. Սարգսեանին և այս վերջինից պահպանուում: Միօրժամա-
նակ չմերժելով այժմեան տեսչին անձնական յարգանք պ. Ս.
իր մտքերի յետագայ շարահիւստութեան մէջ այնուամենայնիւ
նրան դրաւ հասարակական գործիչի աննախանձելի դրութեան
մէջ, ցոյց տալով որ իբր թէ նա հեցուկ է որոնում կղերական
շրջաններում, ուստի արդարացի կերպով ենթարկուում «Թարմ
փոթորկի կատաղի գրոհին», որ առաջ են բերել ըստ երեւոյթին
նախանձախնդիր ժողովրդական ներկայացուցիչները: Այդպիսով
դուրս է գալիս որ «Ժողովրդի վստահութիւնը զրուած» հողա-
բարձունքը իրանց վրայ են վերցրել դպրոցի հոգատար բեֆոր-
մատորների վեհ կոչումը և մուտք գործելով ուսումնարան, վճռել
են նախ և առաջ ազատել նրան յետագէմ և պահպանողական կղե-
րական տարրից յանձին ինոն Սարգսեանի: Հարցը հէնց այդ կող-
մից պարզաբանելու նպատակով պ. Ս. կիրառութեան է առել դե-
մոկրատիական տերմինոլոգիայի ամբողջ բառարանը և վճռողա-
բար յայտարարել թէ «նոր բեժիմը միշտ իրաւացի է, քանի որ
նա ծնուել է ժողովրդական ճայնատութեան արգանդից և ոչ մի
միջնորդ դատաստան չի կարող փոփոխել նրա իշխող հրաւէ-
րը»... Այդ աստիճան անհամապատասխան գունաւորում տալով
տիտուր միջնադէպին, որ ամենուրեք յարուցեց հասարակական
զայրոյթ, պ. Ս. չսասց ճշմարտութիւնը, որ միայն կարող էր
լուծել վէճը պատշաճ անաչառութեամբ: Սակայն այլ կերպ վա-
րուել նա անկարող էր, որովհետեւ նա խօսում էր բերանով այն
մարդկանց, որոնց վերագրել է ժողովրդական կամքի իսկական
արտայայտիչների դերը, ուստի և չէր կարող հանդէս գալ մեր-
կայնող կողմի կամայականութեան որ կատարուած էր Լ. Սար-

գոհանի նկատմամբ հէնց այդ «ժողովրդական ընտրեալներից»․ այն ժամանակ նա ստիպուած կը լինէր զրելու՝ կամայականութեան դէմ պայքարի մասին և ոչ «երկու սկզբունքների պայքարի» մասին, ինչպէս նա վերնագիր է դրել իր յօդուածին (№ 9 «Кавк. Ж.»), որ ամբողջապէս նուիրուած է Յովնանեան ուսումնարանի նոր հոգաբարձուների վարմունքը արդարացնելուն:

Ոչ, պ. Խ., Լևոն Սարգսեանը չգոհ էր կապիտ, ոչ մի բանով չքողարկուած անձնական ինտրիգի, որ ընդհանուր ոչինչ չունի ժողովրդի կամքի հետ, որի արտայայտիչ էք այնքան ձգտում դուք դուրս բերել հսկարարձական խորհրդի նոր կազմը: Հետաքրքիր է իմանանալ, թէ ինչպէս կը նայէիք քաղաքային դուժայի նոր կազմի վարմունքին, եթէ վերջինս իր գործունէութեան առաջին քայլերից որոշէր հետացնել ձեզ քաղաքային վարչութեան անդամի պաշտօնից մինչև ձեր պաշտօնավարական լիազօրութիւնների վերջանալը և այդպիսի ապօրէն որոշման իրրև պատճառաբանութիւն դուրս բերէր դէպի Ձեզ դուժայի մեծամասնութեան անձնական յարաբերութիւնները: Ես կարծում եմ որ այդպիսի որոշում առանց գտնատի չէր մնալ ուղղած քաղաքային գործերի նահանգական ասեանը և նոյնիսկ սենատ, որովհետև խօս չի կարելի հաշտուել «sic volo, sic jubeo» բռնակալական սկզբունքի հետ, որ տեղ չի գտնում ոչ մի ժողովրդականային ծրագրում: Միթէ այդ կերպ չվարուեցին պ. Սարգսեանի հետ նոր հոգաբարձուները, որոնք իրանց ներկայացուցչի բերանով խորհրդի պաշտօնական նիստում յայտնել են, որ նրանք նրա դէմ իբրև տեսչի ոչինչ չունին առարկելու, և դրանից յետոյ միթէ պարզ չէ ամեն մի չնախապաշարուած մարդու համար որ այդ պարոնների սկսած արշաւանքը տեսչի դէմ բացատրուում է անձնական հաշիւներով, որ ծագել է լրագրական բանակռուից և տեսնուել նրանց կողմից ուսումնարանական շինութեան մէջ դուռ ասիական վրիժառութեամբ, որ մերժում է որևէ դադափարական աստառ: Էլ ինչ գործ ունի այստեղ երկու սկզբունքների պայքարը և ոգևորուած բառախաղութիւնները «ժողովրդական կամքի փութկոտ գրոհի, մըրրկի մասին որ արմատախիլ է անում փթած ծառերը», և այլ ոչ պակաս էֆֆեկտաւոր այլաբանութիւններ, որոնց առատօրէն խճողել է իր յօդուածը պ. Խ.: Չպէտք է մոռանալ և այն որ Լևոն Սարգսեանի տուած հ աննիբալեան երթումը ծառայելու իր ժողովրդի առաջադիմական հասարակական իդէալների, իրաւագրկութեան այն մնայլ ժամանակներից է սկսում,

երբ շատերը նրա ներկայ հալածողներից այնքան հեռու էին որևէ իդէալից:

Նրա ամբողջ հրապարակախօսութեան և մանկավարժական—հասարակական դործունէութեան ընթացքում հայ հասարակութիւնը սովորել է նրան տեսնել անփոփոխ կեանքի լուսաւոր և պրոգրեսիւ սկզբունքների ջերմ ջատագովի դերում, արդարութեան համար ջերմ մարտնչողի և ամեն տեսակ կամայականութեան և քմահաճոյքի, ուժ կողմից և լինի այն, անհաշտ թշնամու դերում, գրանով էլ բացատրուած է նրա վըճռողական և անդարձ հեռանալը այն շրջաններից, որոնց գործունէութեան մէջ վերջին ժամանակներս նա ոչ առանց հիմքերի նկատեց անբարոյականացնող և հակահասարակական ձգտումներ: Եւ ահա ժողովրդական իրաւունքների ջատագովի բիւրեղանման մարուր անուն ունեցող այդպիսի հասարակական գործիչին պ. Ս. խրատներ է կարդում այն բանի մասին, թէ հարկաւոր չէ յենուել հնացած օրէնքի գեղնած թերթերին, որոնք կը պատառոտուեն «ժողովրդական կամքի կառաղի գրոհից»...

Բայց այդ դեռ քիչ է, պ. Ս. նրան գրկում է պաշտպանութեան տարրական միջոցներից, որոնց սովորաբար դիմում են շիտակ մտածող և գործող անձինք, երբ ցանկանում են հասարակական դատաստանով պարզել ընդհարուող կողմերի վիճելի հարցերը: Այդպէս վարուեց և պ. Սարգսեանը, դիմելով հասարակական կարծիքին և առաջարկելով իր հալածիչներին վստահանալ փոխադարձ վէճը միջնորդ դատարանի անաչառ վճռին: «Միջնորդ դատարան: Նա այստեղ անտեղի է, ասում է պ. Ս., ինչպէս կարող է ժողովրդական ներկայացուցչութիւնը դատուել մեռած իշխանութեան մնացորդների հետ»:

Թափանցէք այդ նախադասութիւնների իմաստի մէջ և դուք հազիւ թէ հնարաւորութիւն գտնէք որևէ գործադրութեան այս դէպքում, չնայելով այդ նախադասութիւնների արտաքինի ամբողջ վեհապանծութեանը և սեթեթութեանը. մինչդեռ հարցը այնպէս էլ մնաց չպարզուած թէ ինչու ժողովրդական ներկայացուցչութեան սկզբունքը պէտք է արգելք լինի առանձին անհատների և նոյն իսկ ամբողջ հասարակական խրմբերի մէջ ծաղած վէճերը միջնորդ դատարանով լուծելու: Պ. Ս. անպէտք է համարում նաև իրաւաբանների մասնաժողովի վճիռը, որ այս քանի օրս յայտարարեց իր պատճառաբանած եզրակացութիւնը մամուլի մէջ, գտնելով, որ նա անգոր է ժողովրդի վստահութիւնը ներկայացնող անձանց իրաւունքի և հեղինակութեան առաջ: Այնպէս է դուրս գալիս որ

բաւական է միայն բախտ ունենալ եկեղեցական ծուխից ընտրուելու, որ իբրև «վստահութիւն գրաւած մարդիկ» ունենան դիտկրեցիօն իշխանութիւն ամեն տեսակ կամայականութիւն կատարելու:

Եւ այդպիսի դատողութիւններէց յետոյ, այդպիսի ասլոմբով և ինքնահաւանութեամբ արտայայտուած, պ. Խատիսեանը խլում է սուրը կուտակցական ռազմական աստուածներէց և կարգում է Յովնանեան ուսումնարանի տեսչական հարցի գորդեան հանգուցը:

ԱՅՆԱՆ ՍՈՆԷՏՆԵՐԻՑ

(Նուիրում են Ն. ին)

Արդեօք նորից երազներն են թափառում
 Սիրոյ յոյզներն հեռուից ուրախ ինձ կանչում.
 —Ոչ դա աշնան դժգոյն տերեւներն են թափում
 Սարից իջնող վտակները կարկաչում...:
 Ես լսում եմ հիացմունքի մի շքշուկ.
 Արդեօք նորից դժւ ես հոգիս մեղմ յուզում:
 —Ոչ դա գիշերն է սիրաշունչ տրամաշուք,
 Դա երկինքն է խորհրդաւոր, երազուն...:
 Ես ընկած եմ արձակ հովտում միայնակ,
 Տարուած չքնադ երազներով ցիր ու ցան,
 Ինձ թւում է, որ եկել ես հերարձակ
 Գիշերի պէս խորհրդաւոր ու անձայն...:
 —Ոչ դա աշնան մերկ ծառերն են շառաչում
 Սարից իջնող վտակները կարկաչում...:

Վահան Տէր-Գրիգորեան

ՀԱՅՅԵՐԻ ԹԻԻԸ ԹԻԻՐՔԻԱՅՈՒՄ

«Ռազմիկ» բերթում ոմն Տիգրան-Դէրվիշ «ըստ իր (?) հա-
նած վիճակագրութեան՝ տաճկահայերի թիւը հասցնում է
1,355,644-ի»։ Թէ ինչի վրայ է հիմնում պարոնը այդ վիճա-
կագրութիւնը՝ յայտնի չէ։ Իր յօդուածում նա պաշտպանում է
այն միտքը որ յայտնի էինչի բերած թուերը աւելի պակաս
են, քան իրականութեան մէջ գոյութիւն ունի և աւելի հաւատ
է ընծայում Վիտալ Քինէի տուած թուերին։ Թէ ինչու—դա էլ
բաւական թեթեւ առարկութիւնով. «զրա պատճառն այն է որ
այս հեղինակը ամբողջ երեք տարի շրջել է Ասիական թիւը-
քիա, և իր թուահամարով էլ աւելի գերազանցում է Լինչու
զրուածից»։ Թէ ինչ մեծ տարբերութիւն կայ Վիտալ Քինէի
և Լինչի բերած թուերի մէջ այդ պարզ է հետեւեալ օրինակ-
ներից.

		Քինէ	Լինչ
Վանի	վիլայէթում	79,998 հոգի	75,644
Բիթլիսի	»	131,390 »	97,184
Էրզրումի	»	134,965 »	106,769

Քինէի վիճակագրութիւնը կազմուել է 1892-1895 թուա-
կանին, ուրեմն մեծ ջարդերից առաջ։ Հետեւեալ աղիւսակը գա-
ղափար է տալիս թիւը հայերի թուի մասին ըստ Քինէի։

	Լուս.	Կաթ.	Բողոք.	Գումար
Տրապիզոնի վիլայէթ	44,100	2,306	800	47,200
Էրզրումի	120,271	12,022	2,672	134,965
Անգոռայի	83,063	8,784	2,451	94,298
Արշիպեղի	38	—	—	38
Սվազի	187,523	30,433	10,477	228,433
Կուլանի	9,700	—	—	9,700
Ատանայի	69,300	11,550	16,600	97,450
Հալէպի	19,999	18,000	—	37,999
Զօռի մութեսարըֆ	—	400	—	400

Մամուրէթ-Իւլ Ազիզի-				
վիլայէթ	61,983	1,675	6,060	69,718
Տիարպէքերի վիլայէթ	57,950	10,170	11,069	79,179
Բիթլիսի »	125,600	3,840	1,950	131,390
Վանի »	79,000	708	590	79,998
Բազաթի »	2,200	1,000	100	3,300
Բասսուրի »	1,500	—	—	1,500
Զմիւռնիայի »	14,103	737	265	15,105
Ալիկ-ար-Բէզայի				
մութէսարըֆ	1,636	—	52	1,688
Բրուսի վիլայէթ	85,354	3,033	604	88,991
Իզմիրի միւթեսարըֆ	43,308	390	1,937	45,635
Կ. Պօլսի վիլայէթ				
(ասիական)	2,617	30	—	2,644

Ընդհանուր գումար 1,169,644

Դրան տեղացրէք մօտ 200 հազար էլ հայ՝ Եւրոպական Թիւրքիայում: Ուրեմն ամբողջ Թիւրքիայում հայերի թիւը հազիւ այնքան է որքան Ռուսաստանում: Իսկ 1895 թուականից յետոյ ջարդերը, գաղթը, տնտեսական քայքայումից, սովից, հիւանդութիւններից նուազած թուերը: Հայկական հարցի մէջ «յեղափոխական» խակամիտ տակտիկան այն հետեանքը ունեցաւ որ հայութիւնը Թիւրքիայում ըստ իր թուի, ըստ իր տնտեսական նշանակութեան և քաղաքական ազդեցութիւն *quantité negligable* գառաւ: Օպտիմիստ Պանդուսները ի հարկէ դեռ կը հաւատեցնեն որ Սասունն էլ առաջուայ Սասունն է և առանձին ոչինչ չի կատարուել այնտեղ: Թէև ամբողջ գաւառներ են տնայացել հայութիւնից, աւերուել և քարուքանդ եղել, բայց փոխարէնը Սինիօբոսը իր պատմութեան մէջ երկու տող է նուիրել հայ «յեղափոխութեան»! Բայց միթէ այդ «յեղափոխութիւն» էր, թէ հայ անդէն, անպաշտպան ժողովուրդին ոտքով գլխով յանձնում գինուած գահճների ձեռքը:

Եւ դեռ պտնում են «յեղափոխական» զրչակներ, «օրգաններ», որոնք անամօթութիւն ունին շարունակել հին ցնդաբանութիւններով, ոսկիզօծումներով և ազգային բռնատիրի պաշտօնը ստերով մոլորեցնել գիւրահաւատ ժողովուրդը, կերակրել նրան միւրաժներով, արբեցնել ազգային հաշիշով: Դա անգիտակցօրէն կատարուած պրօվակացիա է, բնաջնջման մի ճիւղային անմտութիւն է և ոչ յեղափոխութիւն: Ժամանակ է լրջօրէն և զգաստացած կռուել, քննադատել ամեն մի քայլ, որից տուժո-

ղը ի հարկէ ժընեվում, Բուլղարիայում և Ամերիկայում բազմաթիւ պոռոտախօսները և «ղեկավարները», չեն այլ հալ ու մաշ եղած ժողովուրդը: Մի կողմ նեւէք դօնքիշօտական և տարտաբէնական հարայ-հրոցները արուեստական ոգևորութիւնները և տարակարծիքների ահաբեկումը խօսքով և գործով:

«ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ»

Թէ հայի «հանճարը» խակմիտ և ցուցամոլ պոլիտիկոսների քանքերով ի՞նչ զարհուրելի խեղաթիւրումների է կարող հնթարկել ամենամաքուր զաղափարները և ամենուայնիւ սկզբունքները, թէ ինչ սոսկալի բռնութիւն է դառնում նրա «յեղափոխական» կոչումածների ստեղծած բէժիմը—այդ երևում է այն անթիւ անհամար փաստերից, որ այժմ սկսել են տեղալ ահաբեկումից քիչ-քիչ սթափուող և երկարատեւ պայտանձումից լեզուները բացած ժողովուրդից: Որպէս զի պատկերը լիակատար լինի մենք առաջ կը բերենք և միւս թերթերից մի քանի բնորոշ գրուածքներ, որոնք միայն բաւական էին խայտառակութեան սիւնին գամելու ժողովրդի անունը կոր- և շահագործող այդ ազգային բիւրօկրատներին: Բայց դրանք դեռ ևս շարունակում են հայհոյել, սպառնալիքներ կարգալ այն մարդկանց գլխին, որոնք «աներես համարձակութիւն» ունին մերկացնել «ազգային կառավարութեան» գործած քստմանը ռժիւրների հազարերորդ մասը: Հոգ չէ: Ճշմարտութիւնը անպարտելի է:

Դաշնակցութիւնը գիտելում

«Նոր Խօսք» № 3 և 4-ում բերուած են բազմաթիւ փաստեր դաշնակցական բէժիմի մասին հայկական գեղերում, այնքան պերճախօս են փաստերը որ չի կարելի բաւականանալ լոկ քաղուածքներով և զրկել մեր հեռաւոր «հայ-հայրենասէրներին» հաճոյքից տեսնելու ապագայ «ազատ կամ ինքնավար Հայաստանի» կառավարական սիստեմի այն նմուշը, որ պատրաստում են փրկուած հայութեան համար երևելի դաշնակցական բիւրօկրատները: Վայ հաւատացողներին!

I

Պրոպագանդը և կազմակերպական սիստեմը

Զինուած՝ «ազգային միութեանը» և «Հայաստանը ազա-

տելու» քաղաքական տենդենցիաներով, Դաշնակցութիւնը մի առանձին ազմուկով մտաւ դիւղերը: Բայց «քաղաքական տենդենցիա» ասելով չպիտի հասկանալ թէ՛ Դաշնակցութիւնը գիւղերն էր ուղարկում «ազգային գաղափարներով» տողորուած խելահաս մարդիկ, որոնք կը գնային և գիւղական խաւար ժողովրդի մէջ կը տարածէին գէթ լիբերալական սահմանափակ հասկացողութիւն: Ո՛չ, Դաշնակցութեան տաքեալներն ու պրօպագանդիստները հանդիսանում էին միմիայն «իրանց գըլ-խից ձեռք վեր առած» գաղթական տգէտ ու գոհնիկ «Ֆեդայիները», որոնք քաղաքական որևէ հասկացողութիւն ու դաւանանք չունենալուց զատ, յայտնի էին նաև իրանց սարսափ ազդող բնաւորութեամբ և ամենակոպիտ վերաբերմունքով դէպի ժողովուրդի կամքն ու ազատութիւնը:

Այդ գաղթական թափառաշրջիկները մի առանձին լիազօրութեամբ, և կատարելապէս սանձարձակ իրանց կամայական վարմունքների մէջ, ամեն միւր իր ամբոխային հասկացողութիւններով ու սեփական տխմար գիտութիւնով, բաղձատեսաակ թեր ու դէմ մտքերի ափտացիաներով սկսան համախրմբել և կազմակերպել ներկայ «հռչակաւոր Դաշնակցութիւնը»: Բայց այստեղ աւելի ղլխաւոր և առաջին տեղն էր բռնում որպէս ուժեղ մի անդիտացիա և միջոց, Դաշնակցութեան դազանակն ու խէնջարի ծայրը: Մտնում էին դիւղ այդ «Ֆեդայիները» և ժողովրդին մտրակի ու դազանակի առաջ տուած, քչում բոլորովին գէպի եկեղեցու բակը. այնտեղ բաց անելով «ազգային դաւթարը» մեծից բռնած մինչև փոքրը յուցակագրում, տուրքերը (անդամավճար) նշանակում ու ամբողջ գիւղը ոտից զլուխ յայտարարում «դաշնակցական»:

Վայն եկել ու տարել էր նրան, ով կը համարձակուէր «չգրուել» «ազգային միութեան» այդ դաւթարում կամ «ազգային յեղափոխութեանը». յայտարարում էր նրա դէմ մի կատարեալ հալածանք, համարում էր «ազգադու», «խառնուկիչ», «դաւաճան» ու «մոտնիչ», որին և սկսում էին ծեծել, ստիպել որ գիւղից հեռանայ, տուգանքի էին ենթարկում, շատ անգամ էլ այգին ու ծառերը կտտորում: Օրինակները բազմաթիւ են:

Իսկ Դաշնակցութեան անունը սրբազործելու և պատկերու համար ժողովրդի վրայ, հրաւիրում էր րահանան և խաչ ու աւետարանը մէջ տեղ դրած, նախ կարգացում էր «Դաշնակցութեան տպած երգմնադիրը», որտեղ գրում էին ամենասարսափ ազդող սպանալիքներ ու խօսքեր, ապա «յաւիտենական»

խոստում անում «չդաւաճանել» ու «չդուրս գալ Դաշնակցութեան շարքերից»:

Պրոպագանդայի և կազմակերպութեան այդ գործում, մի չտեսնուած մրցութիւն տեղի ունէր «հայ ազգի ազատութեան» համար գործող երկու կուսակցութիւնների—Հնչակեան և Դաշն. կուսակցութեանց միջև: Ղարաբաղի մէլիքներից մէկի ծաղրածու. «պըլը-պուղիի» որսի ազուանների պէս այդ կազմակերպող ազդեցություններից որ մէկը որ տոաջ մտաւ մի գիւղ ու ցուցակագրեց, արդէն այն գիւղը նրան էր պատկանում: Եւ ահա յեղափոխական գործի այդ կատարեալ կարիկատուրանների դադարական մրցումն ու գործը կայացաւ միմիայն նրանում, որ իրար ձեռքից սկսան գիւղերը խլել, միջակուսակցական պայքարը դարձնել ծեծի, կռուի ու փահլեանութեան առարկայ: Երբ պատահաբար մի գիւղ կամ մի քանի անհատներ մնում էին վիճարանութեան առարկայ, այստեղ իրարմօտ էին գալիս երկու կողմերի ազդեցությունները և ահա սկսւում էր մի կատարեալ կռիւ: Հնչակեանը դատապարտում էր Դաշնակցութեան կեղծիքները, աշխատում նրան վարկաբեկել զանազան հայհոյանքներով, իսկ Դաշնակցականը աւելի մի ուժեղ թափով Հնչակեաններին: Մէկը իր կողմից էր զանազան խոստումներ անում գիւղացիներին, իսկ միւսը իր կողմից: Վերջին ժամանակներս արդէն կուսակցական կռուի պայքարը մտել է երկրորդ՝ մի աւելի պաշտօնական Փաղիսի մէջ: Դաշնակցական ու Հնչակեան կազմակերպութիւնները իրանց զիւղերն ու ժողովուրդը պահում են միլիտարիզմի ուժով, և իրար ձեռքից համայնքներն ու անհատները խլում են զէնքով, որպէս երկու օտար պետութիւններ:

«Սոցիալիստ» և միևնոյն ժամանակ «փահլեան» դաշնակցութեան կալմակերպութիւնը աւելի շուտ մի կամերալական ցուցակագրութիւն էր, որանց մասնում էին բոլոր հայերը: «Ով որ հայ է, ուրեմն և դաշնակցական է», հետևապէս և նրա ամենարուճն ջանքերն ու ցանկութիւնը կենդրոնացած էր հէնց նրանում, որ իր «միութեան» առթարում ցուցակագրուած ունենար ամբողջ հայութիւնը երկրապետական: Այդ միութեան ամենաթունդ սկզբունքը նոյն իսկ հասնում է մինչև այն կէտը, որ Դաշնակցութիւնը ամենավտանդաւոր և քայքայիչ բանն էր համարում ուրիշ կուսակցութիւնների գոյութիւնը և ժուաք գործելը հայկական կեանքում: 1903—4 թւերին Բուլղարիայում դաշնակցականները ընդհանուր սրողում են կայացնում իրանց պատգամաւորական ժողովում «ամեն կերպ արմատախիլ անել և ոչնչացնել ուրիշ կուսակցութիւնները հայ-

կական շրջանում»։ Դէնց բանն էլ դրանումն էր, թէ ի՞նչու Դաշնակցութիւնը նոյնիսկ ժանդարմական ամենաստոր սիստեմով ոչնչացնում էր ուրիշ կուսակցական գրականութիւնը, հաւածանքով ու ծեծով հալածում ուրիշ քաղաքական դաւանանք քարոզող մարդկանց։ Մինք ինքներս գիտենք թէ քանիցս Դաշնակցութիւնը ձերբակալել և այրել է Հնչակեան արտասահմանից զրկուող թերթերն ու սոցիալ-դեմոկրատական հրատարակուելիքները։ Ղալսում պաշտօնական գրութիւն կար, ուր որոշուած էր կայացրած, ոչ մի յարաբերութիւն չունենալ Հնչակեան կազմի հետ, և «ոչնչացնել Հնչակեանութիւնը», Ղամարլուի «զինուորական և քաղաքացիական» մարմինները մի առանձին գրութեամբ զգուշացրել էին Հնչակեաններին «չմտնել դաշնակցական գիւղերը, ապա թէ ոչ հետևանքների մասին չեն երաշխաւորում»։ Սրաաշարում, Այասլու գիւղում, Ապարանի շրջանում նոյնիսկ պահակներ էին զրել գիւղերը և զիրքեր սարքել, թերևս Հնչակեանները ուժով չմտնէին իրանց գիւղերը կազմակերպելու և դարձնելու Հնչակեան, որովհետև այդ գիւղացիները զայրացել էին Դաշնակցութեան բռնութիւններից, բարբարոսութիւններից ու զիմել Հնչակեաններին գալ իրանց կազմակերպել և տիրել։

«Ով որ նախանձախնդիր է հայ միութեանը և յեզափոխական գործի յաջողութեանը, պէտք է դաշնակցական լինի, «կուսակցութիւնը մեր տունը կը քանդի»։ ահա լոգունզը «սոցիալիստ դաշնակցութեան» և ով մի անգամ գրուեց դաշնակցական, այլևս աւելի շուտ կարող է թուրքանալ, քան թէ կուսակցութիւնը փոխել։ Նրանց պաշտօնական թերթ «Դրօշակի» չեմ յիշում որ թուականի որ համարներում յայտարարուած էր մի «ազգ», ուր հրահանգուում էր ամեն մի դաշնակցականի, որ մէկը եթէ ուղում է անցնել մի ուրիշ կուսակցութեան մէջ, նախ պէտք է կանչել և զրուշացնել, երկրորդ անգամ հարցաքննել պատճառը, իսկ երրորդ անգամին պատժել։ Եւ Դէնց այդ վերևի կարգադրութիւնն էլ ցայսօր սրբութեամբ կատարուում է։

II

Պաշտօնական մարմինները և նշանակովի լիազօրներ

«Ամբողջ հայութեան» անունից խօսող, և «հայկական միութեան» գաղափարի լօղունգներով հանդէս եկած «սոցիալիստ» Դաշնակցութեան համար բնական է, որ աւելի ցանկալին ու «ազնիւ տարրը» պէտք է կազմէին ժողովրդի աւելի

հարուստ և առաջադեմ մարդիկը գիւղական «մենձերը», «աղէքը» և «քեանդ խուղաները»: Դարերի ընթացքում այդ տիրապետող և շահագործող տարրի աղդեցութեան տակ ստրկացած ժողովրդին երբեք կարելի չէր լինի մի սահմանի տակ դնել, առանց կարիք զգալու և մէջ քաշելու այգ «իշխանաւորին»: Եւ կազմակերպչական գործի հէնց առաջին քայլումն էլ Դաշնակցութիւնը իր թաթը դրաւ այգ հարուստների վրայ, նախ դրանց առաջ քաշեց որպէս գործի առաջնադացութեան աւանդաբայներ, որպէս 96 պրօբի գուտ հայեր, և երկրորդը աւելի հարուստ կթի կովեր կազմակերպութեան գանձարանը լցնելու համար: Դաշնակցութեան համար մի մեծ պարծանք էր երբ արդէն յիշում էին թէ «այս ինչ տղէն, այս ինչ զլաւնին, այս ինչ հարուստ մարդը դաշնակցական է...»

Այստեղից արդէն «սօցիալիստ» Դաշնակցութիւնը մի կողմ շարտեց աղքատ ու հասարակ դասակարգին, իրան ամենաառաջնակարգ և սիրելի ձեռագիլները դարձրեց գիւղական ժողովրդի հարուստ դասակարգը: Գիւղական գլաւնիյ տանուտէրը, քեանդխուղան, տէրտէրը, պօլիցիականը և առհասարակ բոլոր շահագործող ու վաշխառու տարրերը, որոնք առանց այն էլ կեղեքում ու ծծում էին ժողովրդի արիւնը, կենսունակութիւնը, դաշնակցական կազմակերպութեան կողմից առաջ քաշուեցին որպէս ղեկավար տարրեր, և դրանց ձեռքերում կենտրոնացան բոլոր պաշտօնական իրաւունքներն ու հրամանատարութիւնները: Թէև այդ ամենը գրուած էր ընտրողական սկզբունքի վրայ, ըսյց այդ ընտրութիւնը Աստուած ընտրութիւն համարէ, դաշնակցական Ֆէդայիները ընտրել էին տալիս միշտ իրանց սիրած «մենձերին», «աղէքին» ու վաշխառու հարուստներին:

Ինչպէս վերն ասացինք, Դաշնակցութիւնը չունենալով մի որոշ քաղաքական դաւանանք, կովկասում գործունէութեան մի որոշ սկզբունք ու յեղափոխական գործունէութիւն, «ազգային միութեան» դաւթարում գրուած այդ մասսան զեռ մինչև այսօր էլ չի հասկացել թէ ինչո՞ւ համար են իրանք, ի՞նչ բանի համար են կոչուած, ի՞նչ է յեղափոխութիւնը, այդպէս էլ նրանց գործունէութիւնը, շարժումը դարձաւ մի անասելի քաօս, խառնավնթիւրութիւն, և ոչ ոք չգիտէր թէ ի՞նչով պիտի պարտպել:

Դաշնակցութեան դուզն ու ծուծը կազմող այդ վաշխառու մարմինները զինուած վանդալական հասկացողութիւնների ինստիտուտներով, շահատակութեան և անձնական եսի շահախնդրութիւններով, դաշնակցական «քաղաքական շարժումն ու

յեղափոխութիւնը՝ դարձրին իրանց փառասիրորթեան, շահի և անձնականութեան բացարձակ առաւարէզ—թե ու թիկունք ունենալով գաշնակցութեան զինուորական ոյժը, որոնց նրանք գրաւում էին փողով, հացով ու պատիւներով, մի առանձին սանձարձակութեամբ, դառնում են գիւղացիների գլխի տէր, կատարեսլ բռնակալ դեսպոտներ, որոնց ամեն մի հրամանը, խօսքը, բռնի կարգադրութիւնները կատարւում են առանձին ճշտութեամբ և թափով։ Վայ նրան, ով որ «կօմիտէի» թշնամին է, հակառակորդը, նրա աչքի փուշը, այլևս կեանք չունի, այլևս նա գիւղ չպիտի մնայ։ Տուգանքներ, վճարներ, տեղի-անտեղի պահանջներ է, որ մի ուժեղ թափով թափում են գիւղացու գլխին, և ով յանդգնութիւն կ'ունենայ հակառակելու նրանց «փաշայական» կամքին։

Վաշխառու դասակարգերից առաջ եկած պաշտօնական մարմիններից յետոյ, գաշնակցութեան աւելի ակտիւ գործիչները, տեխնիքական մասի ոյժերը, գլխաւորապէս առաջ են քաշւում գիւղական ժողովրդի սրիկայ, անգործ ու անհանգիստ դասակարգից։ Շատ անգամ հէնց այդ պաշտօնական կօմիտէները կազմում են գիւղի գող և սարսափ աղբող «թուլունգի-ներից» և դա նրա համար է, որպէսզի կարողանան իրանց բուռը հաւաքել և ստրկացած պահել ժողովրդին, միշտ ենթակայ դարձնելու համար գաշնակցութեան զիսցիպլինային։ Այստեղ արգէն բանը կատարեալ է. բիրտ ու առանց այն էլ աւաղակ ու գող կօմիտաչին իր մտրակի տակ վստում է ամբողջ գիւղեր, ձայնը հանելուն պէս, ամենքին զոյալացնում է և նրա բոլոր կամայականութիւնները անտրտունջ լռութեամբ, «ազգասիրարար» տանում է խեղճ ու կրակ ժողովուրդը։ Զինուորները, կօմիտէի գործադիր ոյժերը, շրջիկները բոլորը մաք-դասպան ու կապ կտրած անհատներից են կազմակերպւում։

Գործադիր և պաշտօնական այդ մարմիններից գուրս, քաշ-նակցութեան զինուորական գեներալ նահանգապետութիւնից նշանակւում, և գիւղերը ուղարկւում են զինուորական «լիազօրներ» ու խմբապետներ, որոնք իրանց աւելի անսահման իրաւունքների տէր են համարում քան կօմիտէները կամ շրջիկները։ Գլուխ անցնելով մի խումբ զինուած «ֆէզայիներ»-ի, այդ զինուորական լիազօրները շարունակ թափառում են գիւղերը իրանց շքախմբով և որպէս ձրիակերներ ընկած ժողովրդի վզին, ահագին ծախսերի ու կեղեքումների աղբիւր են հանգիստանում։ Այդ կողմից պէտք է ասած, որ բոլոր գիւղերը գտնւում են մի տեսակ էկզէկուցիայի տակ, և ամեն մի գիւղ ստիպուած է լինում ամիսներով պահել 30—40, երբեմն աւելի

Հոկտեմբեր, 1906.

շատ խմբեր իրանց ձեռքով ու սարքով: Զինուորական լիազորը փաշայական սանձարձակութեամբ, նոյնիսկ յաճախ մտրակի ուժով «կօմիտէներին» հրամայում են դարի ու դարման, «տըղերքին» հաց ու ջուր մատակարարել: Եւ մի կողմ թողնելով պատուի ու բարոյական հարուածները, որ կրում են գիւղացիք, ամեն մի գիւղ տարուան մէջ կառավարութեան տուրքերից ու հարկերից աւելի քառասույստիկ շատութեամբ դրանց վրայ է զոհաբերում իր առանց այն էլ քայքայուած նիւթականը:

Զինուորական այդ լիազօրները, որպէս այդ արհեստին ընդունակ մարդիկ, միշտ ընտրւում են կամ դադլթական «խումբապետներ» կամ գործից վճռողուած գինուորական ենթասպաներ կամ պոլիցիականներ: Եւ բնական է թէ յեղափոխական գաղափարների կատարեալ հակասութիւնը ներկայացնող բարոյական այդ ենիչերիները ինչե՛ր չեն կարող անել գիւղերում: Ծեծ ու ջարդ, աքսոր, բանտարկութիւն, փաշայական կամայակոնութիւն և այլն, այդ բոլորն այժմ կազմում են մեր ժողովրդի կեանքի ներկայ վէրքերը, որոնց շատ խորը բաց են արել յեղափոխութիւնը խայտառակող և ժողովուրդին սարսափ աղդող Դաշնակցութեան «պարծառք» քաջերը:

Նոյն այդ խմբերը իրանց լիազօրներով կազմում են մի «պրաւիտելստովեննի միլիցիա», որոնք²⁵ զէնքի ոյժով պաշտպանում են Դաշնակցութեան «շահերը» և նրանց կարգադրութիւնների կատարում տուող բիւրօկրատական «սաստաւը»:

III

Գ ա տ ու ր ա ն ն և ր

Դաշնակցութեան յեղափոխական շարժման մի ամենագլխաւոր և առաջին կէտը հանդիսացաւ հայկական կեանքում ստեղծել դաշնակցական կառավարութեան մի յայտնի ձև ու սիստեմ:

Ինչպէս վերև ասացինք. այդ «սոցիալիստ» կառավարութեան էութիւնն ու սիստեմի մի մասը կազմեցին նրանց պաշտօնական այդ նշանակովի ու ընտրել տրուած մարմինները, զօրքն ու լիազօրները, և ապա Դաշնակցութեան զատարանները: Դրանով Դաշնակցութիւնը նպատակ դրաւ հէնց այժմեանից հայ ժողովրդին զատել կառավարչական ազմիխատրական կապերից և նրան ենթարկել իր տրամադրութեանն ու ազդեցութեանը:

Եւ հէնց այդ նպատակով էլ կարգելով զանազան զատա-

ընդհանր, սկսած գիւղական ամենաստորին բաժանմունքից մինչև վերին սուղեբնի պալատները, մի առանձին բիւրոկրատական սխառածով սկսեց պարապել ժողովրդի վէճերով, քրէական ու քաղաքացիական, հողային ու տնտեսական դատավարական խնդիրներով:

Վաշխառու կուլակներին, անբարոյական և գործից ընկած զանազան անսիրտ պոլիցիական անգրակէտ պաշտօնեաներին էլ հէնց այդ էր պէտք: Եւ ահա դատավարութեան ամբողջ լիազօրութիւնը իրանց ձեռքն ստանձնած տգէտ ու տհաս այդ մարդիկ, դարձան գիւղացու գլխի տէրն ու տիրականը: Կազմակերպուեցին բանտեր, ծեծի և տանջանքի մի շարք պալաչային սխառած, յար և նման տաճկական վայրագ ըէժիմին. որպէս ապացոյց, ես առաջ կը բերեմ մէկը, կատարուած հէնց ամենամօտիկ ժամանակներում, և դա միմիայն հաղարից մէկըն է:

Ղոթուրցի Մելքոն անունով մէկը, որ Դաշնակցութեան ղինուորներից մէկն էր, կուռւմ և սպանում է իր ընկերներից մէկին: Դաշնակցութեան գեներալ-գուբերնատորներից մէկը «հրամայում է» յանցաւորին դատել և դատապարտում է մահուան: Մահուան դատապարտուած Մելքոնին բերում են մի ուրիշ գիւղ, յայտարարում են հաւաքուել գիւղական հասարակութիւններին, վերցնում են ոճրագործութեան այդ հանդէսի նկարը, բիւրոկրատական ձևականութեամբ ձեռք ու ոտը կապած յանցաւորի առաջ կարգում են նրա մահուան վճիռը, և ծառից կապելով, 12 զնդակ միանգամից պարպում են մահապարտի վրայ և դարձնում նրան մսի զանգուածի մի կոյտ: Իսկ որ աւելի վայրենին է և Դաշնակցութեան վայրագ ինստիտիտի քաղաքականացած բնաւորութիւնը, հօր մահուան պատժի այդ արարողութեանը հանդիսատես, և նրանց յաւիտենական խրատ լինելու նպատակով, բերում և սպանուող հօր ոճրագործ հանդիսին ներկայ են կանգնեցնում նրա երեխաներին: Աշխատաւոր դասակարգը միշտ «սոցիալիստ» դաշնակցականների կողմից արժանացել է ծեծի, կեղեքման ու հալածանքի:

Դատարանական այդ խնդիրներում դիկտատորների առանձին լիազօրութեամբ ներկայանում են նշանակովի զինուորական հրամանատարները: Պէտք է տեսնել, թէ ինչպէս դըրանք մի վայրկեանում լսելով մէկի գանգաւոր կամ միւսի բողբոջ, այլ ևս առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու, խօսքի մի հարուածով, հրամայում են իսկոյն «եղեցի այսպէս» և լինում է այնպէս:

Դաշնակցութիւնը՝ որպէսզի միանգամից փակէ ռուս կա-

առավարութեան դատարանները զիմող ժողովրդի առաջ, մի առանձին զգուշութեամբ հսկում է, որպէսզի պատժուեն այն ըմբոստացողները, որոնք փորձ կանեն «ազգային» դատաւորներին դիմելու փոխարէն, ուստի առավարութեանը դիմելու չէնց անցեալ օրն էր, որ Ապարանի շրջանում, Ալիքուշակ գիւղացիք տեսնելով «ազգային» դատաւորների շահագործումն ու անարդարութիւնը, 30 հոգի գնում են Աշտարակ, բողոքելու ուստի հաշտարար միջնորդին: Այդ շրջանի ղինուորական լիազօրը լսելով այդ բանը, վերցնում է մի քանի զինուորներ ու գալիս առաջները կտրում, բռնում կապտտում է բոլորին իրար, երեսները ոտից գլուխ ցեխ քսում, ապականում և այդպէս խայտառակ կերպով շրջեցնելուց յետոյ շրջակայ գիւղերը, ցոյց տալով բոլոր ժողովրդին, ամբողջ 25 վերստ քաշ է տալիս մինչև գիւղ, թոյլ չտալով ոչ մի տեղ ջուր խմելու: Իսկ գիւղում էլ կանչում է նրանց կանանց և ցոյց տալով ալյանդակուած ամուսիններին, ասում է.—Չ՛ը, սիրճն են ձեր մարդիկը, կը համարձակուեն դնալ սուսներին գանդատուելու: Դրանից յետոյ, մօտ օրերը դարձեալ գիւղացիք թափուում են Աշտարակ իրանց հողային վէճերը յանձնելու հաշտարար միջնորդին. տեղական կօմիտէն լսելով այդ բանը, հրամայում է զինուորներին ջարդել գիւղացիներին և դուրս քշել գիւղից, որ և կատարուում է: Նոյն իսկ ոչ ոք չի համարձակուում յանձն առնել սուսներէն մի խնդիրք գրել նրանց համար:

Այսպիսով նոյն իսկ գիւղական մասի ուստի կառավարութեան դատարանները գրեթէ մնացին պարապ, և տեղական պաշտօնեաները հէնց իրանք արդէն սովորել են, որ այլևս իրանք չեն դատաւորները, այլ Դաշնակցութեան «կոմիտաշիները», որոնց հէնց իրանք յաճախ զիմում են իրանց գանդատներով ու վիճելի գործերով:

Դաշնակցական «սոցիալիստական» բանտերում մարդկանց խոստովանեցնելու համար երևակայական կամ կարծած յանցանքը, սոսկալի տանջանքներ են տուել. այդ տեղերքում պահուում էին խուրճերով մտրակներ: Ինքս մի անգամ բազմ ևս ունեցել բարեկամիս տանը լսել մօտիկ Դաշնակցութեան ղինուորական դատարանից ծեծի և աղիողորմ աղաղակների սիրտ կտրատող ձայներ. դրացիները սոսկում էին ամեն օր այդ շարագուշակ տնից եկող զոհերի բառանշներէց:

Չմոռանանք շեշտել և այն, որ այստեղ էլ բիւրոկրատական այդ դատավարութիւնների մէջ, աւելի օգտուում և տիրապետում էին դարձեալ հարուստներն ու վաշխառուները: Եւ

հէնց այս «գատաւորներն» են, որոնց մեծ պարծանքով յիշելով պ. Պաթակը, փառաբանում էր Դաշնակցութիւնը:

IV

Արարային հարցը

Իր «դասակարգային» կազմակերպչական սխառեմի մէջ՝ ամբողջ հայութիւնը ցուցակագրած «սոցիալիստ» Դաշնակցութեան իշխանութիւնը միւս կողմից ունեցաւ մի ուրիշ արդիւնք ևս:

Բնական է որ դաշնակցական «յեղափոխութիւնը» ղեկավարող այդ բուրժուական տարրերը, գիւղական «գելերն ու ցեցերը» երբեք ընդունակ չէին և չէին էլ կարող իհարկէ մոռացութեան տալ իրանց անձնական ու սեփական շահերը, մտածէին բարեկեանութեւ «աշխատաւոր» դասակարգի հողային ու տնտեսական դրութիւնը:

Մտէք գիւղեր, ուսումնասիրէք այդ ժողովրդի ներքին կենցաղը և դուք այնտեղ կը տեսնէք միմիայն կեղերողներ, որոնք սեփականացնելով «սոցիալիստ» Դաշնակցութեան ոյժն ու սարսափը, սկսեցին գիւղացիներին կեղերել և իրանց լիազօրութիւնները Դաշնակցութեան անունն տակ դարձնել իրանց շահատակութեան աստղարէլ:

Վաճառական կռիւնքն ուժով ու սարսափով իր կորած ապաւիտներն է հաւաքում, վաշխառուն «էրուած վէքսիւններ», ամբարտաւրը իր կորած ցորենները. և այլն: Մի բանի տարի կռիւտէութիւն անողը այլ ևս դառնում է գիւղի տէրը, «աղէն» իր հարստութիւնով և ամեն առաւելութիւններով:

Վերջին ժամանակներս Երեանի նահանգում, բազմաթիւ գիւղերում մի խիստ բողոք ու խուլ տրտունջ կայ Դաշնակցութեան այդ «պիտերի» դէմ՝ հողային ճնշումների և յափշտակութեան պատճառով: «Սոցիալիստ» Դաշնակցութեան այդ «սարսափելի աղէալը» միջամտելով հողաբաժանութեան զանազան դրժների մէջ, սկսել են ամենաանխիղճ կերպով սեփականեցնել ժողովրդի հողերը, ամեն մի հողաբաժանութեան ժամանակ իւրացնելով իրանց համար «առիւծի բաժինը», Սուրմալուի, Ղարսուլաղի, Նոր-Բայազէդի, Ապարանի շրջաններում բազմաթիւ են այդ աղմուկներն ու վէճերը, որտեղ հասարակ դասակարգը թէև աղմուկ անում, բողոքում այդ «պիտերի» դէմ, սակայն երբ Դաշնակցութեան գատաբաններից դուրս ոչ մի տեղ իրաւունք չկայ բողոքելու, իսկ այդ դատաւորներն էլ հէնց

իրանք յափշտակողներն ու շահատակողներն են, էլ ի՞նչ կարող է անել գիւղացին:

Ապարանի շրջանում այս բոլէիս անագին կուլ, սպանութիւններ են լինում ագրարային այդ աղմուկների պատճառաւ:

Չամբու գիւղացիք գնում են հաշտարար միջնորդին բողոքելու «սօցիալիստ» Դաշնակցութեան կոմիտէների անարդար հողաբաժանութեան դէմ: Դաշնակցական ընդհանուր լիազօրները նրանց ծեծ ու ջարդով յետ են զրկում: Գիւղացիք ճարհատեալ դիմում են Հնչակեան կուսակցութեան ազատել իրանց այդ գազանների ճանկերից և խնդրել իրանց «գրել» Հնչակեան և գալ հողերը արդարութեամբ բաժանել, որքան ենք ստուգեցինք «Հնչակեաններից»՝ բազմաթիւ գրութիւններ կան ամենքն էլ լի արտասուախառն գանգատներով:

Հնչակեանները հնար չունենալով Դաշնակցութեան միջիտարիզմի ձեռքից գէթ ուժով այդ գիւղերը խլելու, որովհետեւ առիթ է տալիս արիւնահեղ ընդհարման, փորձեցին միջամտել Ապարանի մի երկու գիւղերի հողաբաժանութեան տարաձայնութիւններին: Դաշնակցական պետերը մի ամբողջ թափով սկսան մերժել և արհամարհել Հնչակեանների առաջարկութիւնը և պահանջը: Դաշնակցութիւնը վաղուց չէ ուղում ճանաչել նրանց հետեապէս և սպառնալիքով յետ է դարձնում: Հնչակեանները դիմադրում են, որից և առաջ է գալիս այդ շրջանում երկուսի միջև մի կատարեալ պատերազմ ու արիւնհեղութիւն: Դաշնակցութիւնը մոբիլիզացիա արած իր բոլոր զօրքը, արշաւում է Ապարանի վրայ, պաշարում է բոլոր Հնչակեան գիւղերը, երկիրը դնում զինուորական խստացած դրութեան մէջ և ջարդելով գիւղացիներին, սախում է նրանց դաւանափոխ լինել: Տեղի են ունենում ընդհարումներ, ամբողջ ժամերով հրացանաձգութիւն, որտեղ սրտաճաք են լինում կին ու երեխայք և բազմաթիւ ընտանիքներ փախչում ապաստանում են ուրիշ հայ գիւղեր, իսկ շատերն էլ թուրք գիւղերում: Ներկայումս էլ դեռ մի շարք ընտանիք գտնւում են հարևան թուրք գիւղերում, որոնք սիրով պահպանում են նրանց: Եւ «աշխատաւոր» մասսայի, հայ «պրօլետարիատի» ամենանուրբ շահերի անուշից խօսող այդ չակերտաւոր «սօցիալիստները», այսօրուան լպիւշ բիւրօկրատիայի պէս պատրաստ են ամբողջ գիւղերը քար ու քանդ անել, երբ վտանգւում է նրանց կուսակցական գծուժ շահը:

Այդ անագին աղմուկներն ու տարաձայնութիւնները քննելու և արդարացնելու համար, հարկ եղաւ արդէն էրեւանում

երկու կուսակցութեանց կողմից չեզօք մարդկանցից առաջ բերել մեր միջնորդ դատարան, որ արդէն սկսել է իր նիստերը և հաւանականաբար բազմաթիւ փաստեր կը քաղէ Դաշնակցութեան «ազրարային» բռնութիւններից:

Ահա դաշնակցական կոչուած «սոցիալիստները» քաղաքական շարժումը և ստեղծագործութիւնը ազրարային խնդրի վերաբերմամբ:

Այս սահմանափակ փաստերի վրայ կատարելով իմ դիտողութիւնը Դաշնակցութեան «սոցիալիստական» գործունէութեան մասին գիւղերում, կը խնդրէի ժողովրդի վիճակով հետաքրքրուող ամեն մի անհատի, մանեկ ժողովրդի մէջ և ստուգել իմ ասածները, որտեղ անշուշտ նա աւելի խոշոր փաստեր գտնելով կ'արդարացնէ իմ ասածներս:

ԴՈ. Նարիմկան

Շուշուց սեպտ. 28-ին «Մշակի» խմբագրութեան և մեզ յայտնի մի անկեղծ և շիտակ անձն գրում է հետևեալը (№215).

«Օր ցերեկով գիւղն են մտնում մի խումբ մարդիկ, անուանելով իրանց Դաշնակցութեան զինուորներ, պահանջում են փող, դարման, գարի, ճուտ, ձու, ծեծում և տուգանքների ենթարկում: Եւ ո՞վ կը համարձակուի սրանց առաջ ձայն հանել կամ որեւէ պահանջ անտեղի համարել: Մեծ և փոքր, կին և աղջիկ լեզապատառ, նրանց սպառնալիքների տակ ճնշուած ենթարկում են այդ զինուորների և նրանց ուղարկողների բռնապետութեանը. զինուորներ ստելով պէտք է հասկանալ, որ սրանք անհամոզմունք երկրպագուներ էին մի տարի սրանցից առաջ տիրացուի, տէրտէրի, չառչի, գողի կանգիդատներն էին համարւում, տղուկների պէս ծծում հայ գիւղացուն, իսկ այժմ անամօթարար վաշխառուների հետ ձեռնտու պայման կապելով՝ մտնում են գիւղը հարկեր հաւաքելու...»

Ահա այժմ անբերութիւնից և կռիւներից ուժասուլառ, օրական հացի կարօտ հայ ժողովրդի և մանաւանդ գիւղացու վիճակը. որոնք բռնութեան սարսափի տակ՝ անցեալներում կիսազին ծախելով վաշխառուներին լծկան եղը, կթան կովը, պղնձեղէները, դաբան, կարպետը, այս տարի էլ ծախում են վերջին ճուտը, կանանց գլխի մաշուած փողերը—սրանց անիրաւ պահանջներին բաւարարութիւն տալու: Միաժամանակ օր չէ անցնում, որ աւազակութիւնը չլինի. անդադար լսում էք՝ մէկի ձին, միւսի անասունները գիշերը գողացան: Սակայն չբաւականանալով այս հարստահարիչ հարկահանութիւն-

ներով, խիստ սպառնալիքների տակ մարդկանց ծեծում, աքսոր են քշում: Լյապլախ հանգամանքներից ստիպուած խեղճ գիւղացին գիմում է մեզ և ապաւինում մեր խորհրդին, սակայն չգիտեմ ինչով գոհացում տամ. ի՞նչ խորհուրդ տամ այդ կեղեքուած-խուզուածներին, քաղցած-ծեծուածներին: Չգիտէ ում հետ կուռի. սովի, թուրքերի թէ այս «օղորդիկների»: Այս գիպուածում ես անգոր եմ ինձ գգում, գիմում եմ ձեզ, ով հայ ազգի կարեկիցներ. յանուն արդարութեան օգնեցէք սրանց, բարձրացրէք ձեր ձայնը:

Բոլոր ասածներէս համար հարիւրաւոր ապացոյցներ կը բերեմ Սաչէնի, Վարանդայի շրջաններից, սակայն չգիտեմ որոնց անունները թուեմ, կեղեքուածների, աքսորուածների... ծեծուածների, խայտառակուածների, ծեծեց խելագարուածները՝ թէ՛ նրանց, որոք ժողովրդական համակրութիւն վայելող գործիչներ լինելով՝ առաջարկութիւն են ստանում տուն, տեղ, երեխաներ անխնամ թողնելու և հեռանալու. ինչո՞ւ որովհետեւ սրանք ժողովրդի վիճակն են լալիս: Եւ այս անողները թող չկարծուի թէ կուռի ժամանակ կուրծքները թշնամու գնդակին դէմ դնողներն են. ոչ սրանք թուրքերի երեսը չեն ուզում տեսնել և ձեր հարցին թէ՛ կուռի ժամանակ ռոտիդ էիք, նրանք պատասխանում են ըմբոստարար. «Կարեւոր գործի համար բացակայ էի, բայց որ այստեղ լինէի»... Մինչդեռ գիտենք, որ սրանք վախկոտ տախանքներ են, որոնց գոյութիւնը անպամ արատ է մեր ազգին: Սրանք են, որ իրանց արարքներով հայ ժողովրդին այս անելանելի դրութեան մէջ են դրել և այդ է պատճառը, որ գիւղացին յիշում է պրիստաւ Շուստակովին, զգալով որ սրանց գործադրած միջոցներից նա էլ կը զոհէր»:

«Մշակին» Տեղ գիւղից գրում են.

Անցեալ յուլիս ամսի 9-ին մեզ գիւղի տգէտ և անդրագէտ ներկայացուցիչ Սողոմոնն ինձ կանչելով իր ժողովարանն, որը կայացած է ինում գիւղի հրապարակում, շատ մարդկանց ներկայութեամբ ինձ յայտնելով՝ պատուիրում է թէ՛ «գուր», Տէր-Մհակեանցդ, իրաւունք չունէք «Մշակ» լրագիր կարդալու, այլ պէտք է ստանաք «Ալիք» և կարդաք, հաւառակ դէպքում կը ենթարկուէք մեծ տուգանքի, նոյնիսկ տէրբորի. ինչպէս Գորիսի Դահնակցութիւնը հրամայել է ինձ, նոյն ձևով էլ ես յայտնում եմ ձեզ: Ես ուղղակի դարմանալով այդպիսի մի պահանջի վրայ, մի քիչ դայրանալով՝ պատասխանեցի, որ, «ինչ լրա-

գիր կը կարգամ, այդ իմ գործն է. ես երեսայական թերթ չեմ կարող կարգաւ. մինչև ցմահ կը կարգամ «Մշակ»: Այդ գիւղական ներկայացուցիչը սպառնալիքներ կարդալով իմ հասցէին, իսկոյն հեռացաւ հրապարակից և ճանապարհուեց Գորիսի վարչութիւնը՝ ինձանից դանգատուելու. իսկ ես մնացի զարմացած, թէ ինչ դարում ենք ապրում և թէ ինչ իշխանութեան ներքոյ. ամբողջ 700 ծուխից բաղկացած Տեղ գիւղում գտնուում է մի հատիկ «Մշակէ» բաժանորդ, այսինքն ես, այն էլ ուզում են վերացնել:

Վերջապէս երեք օրից յետոյ սուրհանդակ եկաւ Գորիսից, որ ինձ Դաշնակցութիւնը պահանջում է: Ես ներկայացայ: Ահա թէ ինչ եմ լսում այնտեղի լիազօրից. «Դուք, Տէր-Մհակեանցդ, հնթարկուում էք տուգանքի 100 ռուբլու, և ութ ժամուայ մէջ պէտք է վճարէք Դաշնակցութեան հասցէին ձեր վիրաւորական խօսքերի համար»: Եւ ինչ. 8 ժամուայ մէջ ինձանից ստացան 100 ռուբլի տուգանք, որը բաղարից պարտք վերցրի. մինչև անգամ թոյլ չտուեցին վերադառնալու գիւղը փող ճարելու համար: Էլ թի՛նչ անի ինձպէս մի գիւղացի, որը առանց այն էլ ընկճուած է խոր հոգսերի մէջ. եթէ անմեղ տեղից 100 ռուբլի տուգանք վճարէ, էլ քարը քարի վրայ կարծող է կանգնել:

Այս թողնենք այստեղ և վերադառնանք վերջին զարմանալի դէպքին: Մի ամիս առաջ վերոյիշեալ գիւղի ներկայացուցիչ Սողոմոնը գիւղամիջի հրապարակն է կանչում Տեղ գիւղացի Աւակիմ Մարտիրոսեանին իր կին Նուսու հետ միասին. այդ խեղճ ամուսինները սրտատրոփ և դողալով ներկայանում են Սողոմոնին, որը հրամայում է իր զինուորներին գնալ գերեզմանատուն և սպասել մէնակ բոլոր ժողովուրդը հաւաքուի, և ստիպմամբ, թէ արու և թէ էգ, բոլորին հաւաքում են այնտեղ: Եւ ինչ է անում փաշայ Սողոմոնը. մի զարմանալի, մի անտեսանելի բան. վերոյիշեալ Աւակիմին յայտնում է, որ քո կինը պոսնիկ է, և քեզ էլ նրա հետ միասին պէտք է պատժեմ: Մարդը լացում, աղաչում է, թէ իմ կնոջ մէջ այդ բանը չկայ և չի լինի, ինքը լաւ է ճանաչում իր կնոջը, եթէ այդպէս մի բան լինի կարող է ինքը, կնոջ, ինչպէս ամուսին, օր առաջ բողբոջել: Չէ լսում ներկայացուցիչը այդ լացին, այլ հրամայում է, թէ մարդուն և թէ կնոջը մերկացնել բոլորովին: Այդ երկու մերկին հրամայում է մէջքի վրայ պառկեցնել յիշեալ Աւակիմի հանդուցեալ հօր գերեզմանի վրայ, և կէս պուղ վայրի բէնջար բերել տալով՝ հրամայում է չորս զինուորի անխնայ ծեծել այդ խեղճ ջահէլ կնոջ. (Նուսու) ծածուկ մարմինը բէնջարով և ճիպոտով, մինչև որ անշնչանում է այս խեղճ

կինը. նոյն ձևով առանց բէնջարի ծեծում են և մարդուն: Երկուսը անշնչացած, կարպետի մէջ դնելով, ժողովրդից մի քանիսը բերում են թողնում ծեծուածների տանը: Աւակիմը երկու շաբաթից յետոյ մի քիչ առողջանում է, իսկ կինը (Հուսիս) աւելի ուշ:

Սոյնաման շատ բաներ է մեր ժողովուրդը տեսել այս վերջին տարումը: Այս վրդովեցուցիչ վարմունքի համար ժողովրդի խնդիրքի համաձայն մի փոքրիկ նամակով յայտնեցի Շուշու գլխուոր մարմինն, որպէս զի առաջն առնեն:

Դեռ մի բաւականութիւն հստացած Շուշու մարմնից յիշեալ օգոստոս ամսի 22-ին Գօրիսի լիազօր փաշան կանչում է իր մօտ մեր զիւղից քանի մի մարդկանց և Տէր-Յարութիւնեան քահանային ու յայտնում, «որ իբր ես ներկայացուցչի այդ արարմունքների մասին բերանացի և գրաւոր յայտնած լինեմ Գօրիսի գաւառապետին և գաւառապետը յայտնած լինի իրան՝ աղա լիազօրին»: Եւ յայտնում է թէ՛ «ես գրել եմ Դաշնակ. գլխաւոր վարչութեան, որ իրաւունք տրուի ինձ Տ. Տէր-Սահկեանցին կամ տէրրորի տալ, կամ աքսորել ընդմիշտ հեռու երկիր. յայտնեցէք՝ որ իր գլխի ճարը տեսնէ»:

Թէ կը կատարուի ինձ վրայ այդ տէրրորը կամ աքսորը, այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան. բայց երկար-բարակ մտածելուց յետոյ, վճռեցի մանրամասն յայտնել խմբագրութեանդ. ինչ կը լինի ինձ նման բազմամարդ ընտանիքի դրութիւնը, որ բոլորը իմ խնամքին են նայում. ոչ թէ ինձ են տէրրորի տալիս, այլ ամբողջ մի ընտանիք, որ 15 հոգուց է բաղկանում:

Սրա համար մանրամասն յայտնում եմ պաշտելի խմբագրութեանդ. թէ ինչ ձևով կարելի է լրագրութեան տալ, այդ թողնում եմ ձեզ, միայն թէ կեանքիս վրաս չլինի:

Իսկ ինչ վերաբերում է իմ գրուածներին, խոստանում եմ բոլորը փաստօրէն հաստատել:

Նիկալայ Տէր-Սահկեան

Դաշնակցական բոնութիւնների երեսից զաղթ

Դատարկում են գիւղեր...

5—10 հոգուց բաղկացած գիւղացիների խմբեր է, որ թողնում են հայրենի գիւղը, տուն տեղը, ընտանիքը ու գաղթում գէպի քաղաքները... իրանց ընտանիքը սովից ազատելու համար: Դաղթելու պատճառները բազմաթիւ են մի կողմից.

հայ-թուրքական կործանիչ ընդհարումները, բնութեան սոսկալի պատիժները, միւս կողմից էլ խմբերի «անտանելի պահանջները հայ գիւղացուն» միանգամից անտանելի դրութեան մ.ջ են պցել, շշմեցրել, որը չգիտէ թէ ինչ անէ, ռւր կորչէ որ աղատուի այդ ճնշող դրութենից։ Ամենահեշտ միջոցը բնութիւններից ազատուելու՝—գաղթելն է, օտարութիւն, որի կորստարեր հետեանքները պարզ են։ Օր չի անցնում, որ Ղարաբաղից, Ղափանի Մհալից տասնեակներով գիւղացիները չթափուեն Բագու, որտեղ և շատերը անգործ մնալով՝ վիզները ծուռ մնացել են փողոցները շրջելիս...

Մեր հարցին թէ ինչո՞ւ էք թողնում գիւղերը նրանք պատասխանում են, որ ապրուստ չկայ, հայ չի ճարում մի քանի դիւղացիներ չեն կարողացել տափարակներում սովորականին պէս հոգերը վարել, իսկ գիւղերի մօտ հանդերում ու լեռնային հոգերում ցանածը ցանկալի եկամուտը չէ տուել։ Աստուած բարկացել է մեզ վրայ...»։ Եւ յետոյ խոր հոգոց քաշելով՝ տւելացնում են։ «Մի բան էլ... ի՞նչ ասենք... վախենում ենք խօսքերս տեղ հասնի... մեր գիւղերի վրան կարգուած կառավարիչները մեզ շատ են նեղացնում... Աստծոյ տուած լեզուով անգամ չեն թողնում, որ ազատ մի բան ասես. վայ բո գլխին՝ մտրակում են մեզ և հրամայում լուել և ինչ որ հրամայում են կատարել...»։ Էհ եղբայր, մենք էլ մարդ ենք. սիրտներս նեղանում է, հերմներիցս մենք մեր միսը ուտում ենք, ամա դատ չի դառնում, շատ մտածում ենք և տեսնում, որ միայն այդ տեղից պէտք է հեռանանք, որ ազատ շունչ քաշենք, նրանց երեսներից ազատուենք. ուրիշ ինչ կարող ենք անել—մի խօսքով մեր մարդկային պատուասիրութիւնը ոտնատակ են տալիս։ Մենք դառնում ենք ստրուկներ մեր այն ազատ բնութեան ծոցում, որտեղ ամեն մի անասուն ու գաղտնի բան աւելի աղատ ու երջանիկ է դուում, բան թէ մենք։ Մեզ ամենատարբական իրաւունքից զրկում են։ Ուզում ես իստես, որ պ. ներկայացուցիչը այս ինչ վճիռների մէջ սխալ է, գլխիդ բամփում են և լուցնել տալիս. էլ ի՞նչ սրտով կարող ենք գիւղում մնալ, դեռ չենք ասում, որ մեր վերջին կոպէկի վրան էլ ոչք ենք տնկում, և միւսչև չեն խլում, չեն բաւականանում. քանի մէկը ասենք...»։

Այս պարզ ու անպաճոյճ փաստերը դառնացած սրտից ձեզ տալիս է իւրաքանչիւր գիւղական, հէնց որին ուզում էք հարցէք նրանց գաղթելու պատճառների մասին։ Երևոյթը շատ ցաւալի է. հայ գիւղերը դատարկւում են իրանց հայրական տներից, այն, հալւում են լուռ ու մունջ զգալով ապագայի

անտանելի դրութիւնը, որը նրանց համար պատրաստուած է հարազատների ձեռքով:

Այն ձրիակերները, որոնք մտրակի սպառնալիքներով հայ գիւղացուն թալանում են օր ցերեկով, խլում են նրանցից անարժանի վերջին միջոցը թող լաւ խմանան, որ նրանք պատասխանատու են ժողովրդի արգար զայրոյթի առաջ... Համբերութիւնն էլ սահման ունի, ի չարը մի գործ դնէք ժողովրդի համբերութիւնը... անարգարութիւնը չափ ու սահմանից անցնում է, ժողովուրդը հոգէպէս ճնշում է և չգիտէ թէ այդ անտանելի տանջանքների համար ում գիմէ, որ իր բիւրաւոր ցաւերի համար մի ճար անէ. բողոքելը — դանգատուելն անգամ մի վրտանգ է համարում գիւղացին իր համար. ի նկատի ունենալով տիրապետող ճնշող բէժիմը, ով կը համարձակուի ձայն ծըպտուն բարձրացնել «ամենակարողների» առաջ... և նրանք թողնում են տուն տեղ ու հեռանում Ռուսաստանի քաղաքներից մէկի մի անկիւնում ազատ շունչ քաշելու համար. «աւելի լաւ է այնտեղ երեքս ազատ զգալով մեզ սոված ապրենք ու մեռնենք, քան թէ մեր հայրենի հողում ամեն օր ծեծի ու բռնութիւնների ենթարկուելով ապրենք»... կրկնում են նրանք: Ապացոյցներ որքան ուզէք: Հարցրէք Ղարաբաղից բաղաք թափուող իւրաքանչիւր գիւղացու և նա ձեզ կը պատմէ իր ցաւերը և իր գաղթելու գլխաւոր պատճառը:

Սա մի շատ ցաւալի երևոյթ է, որի ապագան մոայլ է և սարսափելի:

Դատարկում են մեծ ու փոքր գիւղերը, հալածանքից ու բռնութիւններից ազատուելու համար, նրանք, որոնք զժրախտութիւն են ունեցել ինքնապաշտպանութեան համար «զինուորի» անուն ստանալու, հայ գիւղերի համար մէկ-մէկ հրէշ են դարձել և ծծում են նրանց արիւնը:

Պատրաստ ենք հաստատելու անկեղծ Դաշնակցականի հետեւեալ ճշմարիտ տողերը որ «օր ցերեկով մտնում են գիւղերը փող, ճուտ և այլն պահանջում ծեծի սպառնալիքներով»: Մենք վարանդեցիներս բողոքում ենք և միաժամանակ պահանջում, որ այս օրինակ գործողութիւններին վերջ դրուեն, ի նկատի առնելով ժողովրդի անտեսական բայքայուած դրութիւնը. յանուն նրա բիւրաւոր ցաւերին վերջ դրէք անխիղճ և արիւն սառցնող քստմեկի գիւղաւաններին, որոնք ամէն օր տեղի են ունենում պատմական Ղարաբաղի ծոցում:

Վերջ տուէք և դէն շարտեցէք մտրակը, որից հայ գիւղացին գողում է և լուռ տրտունջ է յայտնում նրան կարեկցողներին, հեռացրէք գործի ասղարեզից Սողոմոններին ու ըն-

կերներին, որոնք սրբապզծում են սուրբ գործը: Մի հարկադրէք հայ գիւղացուն համբերութիւնից դուրս դալու: Վերջ տուէք այս ջաւալի երևոյթներին:

Վարանդեցի

(Մշակ № 222)

«Ազգի պաշտպաններ»

Եւ մի ամիս է, որ գործելով շրջիւ եւ Երեւանի կողմերը և իմ լսածների և տեսածների եթէ հարեւրերսրորդը գրի առնեմ, այն ժամանակ շատ անկեղծ հայեր պիտի յուսահատուեն հայ ժողովրդի ապագայի մասին:

Մեր «յեղափոխականները» ստրկացրել են ժողովուրդը, քայքայել են ընտանեկան սրբութիւնները, բռնի և կոպիտ ոյժը դարձրել են գերակշռող գորութիւն բոլոր գործերի մէջ և կասարեալ այլասեռում են ամբոխը: Մի կողմ թողած, որ ատրճանակով և դաշոյններով փող ժողովելը ընդհանրացած է, ժողովրդի այդ ցեղերը տնտեսապէս քայքայում են գիւղացուն իրանց հարկերով, իրանց պրօփօկատօր գործունէութեամբ: Ահա ձեզ փաստեր:

Մի քանի օր սրանից առաջ Իգդիրի շրջանում գտնուող Դաշ-Բուռուն հայ գիւղը գալիս են երկու թէ երեք հօգի և պահանջում են պատշաճաւոր ընդունելութիւն: Դաշբուռունցիք, որ շրջապատուած են բազմաթիւ թիւրք գիւղերով, որոնց հետ շատ հաշտ են ապրում, հասկանում են, որ այդ «ազգասէրների» ներկայութիւնը իրանց բախտաւորութիւն չէ բերելու, չեն կամենում ընդունել նրանց: Այդ «ազգասէրները» դուրս են գնում գիւղից և այդ գիւղի սահմանում խփում են մի թուրք, որ վրէժխնդիր լինեն դաշ-բուռունցիներին: Այժմ այդ խեղճ հայ գիւղի վրայ վճռուած է 750 ր. տուկանք և յարաբերութիւնները դրացիների հետ խախտուած է:

Մի քանի օր սրանից առաջ Էջմիածին սովորաբար տօնուում էր Մողնուս. Գէորգ վանքի տօնը. երբ բազմաթիւ ժողովուրդ է հաւաքուում Էջմիածին: Դալիս է մօտակայ տեղերից և մի հաւատացող գիւղացի: Այդ գիւղում բնակւանաբար շրջելիս են լինում և «ազգային քաջները» և այցելելիս է լինում մի շրջիկ, որ ազգասիրաբար աչք է դնում այդ մարդու կնոջը: Շրջիկը ուրախանում է, երբ տեսնում է այդպիսի մի խառն օր իր դոճին Էջմիածնում: Գնում է դրանց հտէից և մարդուն ասում է, թէ տեղական կօմիտէն կանչում է: Տանում են մարդուն և մի սևեակում փակում: Յետոյ «ազգասէր» շրջիկը

գալիս է և կնոջը նոյնպէս հրամայում գնալ կօմիտէի մօտ: Խեղճ կինը հաստատ իմանալով, որ կօմիտէի հրամանը նաչալնիկի կամ նահանգապետի հրամանն է, որ չկատարելու համար տուգանքով մարդ կարողանայ ազատուել, այլ տուգանքով և զաշոյնով են կատարում զանազան աղա Աւօյի կամ աղա Սարգսի շանթահար հրամանները, գնում է շրջիկի ետեւից, որ ճանապարհին սկսում է իր մտաբերութիւնը և սպառնալիքն երևան հանել: Հայ կինը չէ կարողանում տանել մօտալից անարգանքը և սաստիկ մեծ աղմուկ է բարձրացնում և ազատուում շրջիկի ձեռքից: Իմանում է կօմիտէն և արձակում է բանտարկեալին, իսկ շրջիկը մինչև այսօր էլ ազատ և անպատիժ քէֆ է անում և կակալ կոտորում «յեղափոխականներին» խնամակալութեան սակ եղած «մասսայի» պիւլին:

Մի քանի օր սրանից առաջ Վաղարշապատ գիւղի տանուտէրը, Արշակը, մի ինչ որ նկատողութիւն է անում մի ազգային, որ զաշոյնը հանում է և յարձակւում է տանուտէրի վրայ, առարկելով որ նա ազգային զինուոր է և ոչ ոք չէ կարող համարձակուել նրա դէմ խօսելու: Բայց երբ որ շրջապատող զիւղացիք միջամտում են և ազատում տանուտէր Արշակին, հերոս ազգայինը մի քանի անգամ ատրճանակ է արձակում, բայց վրիպում է:

Երևանի հայ-թուրքական անկարգութիւնների ժամանակ մեր հերոսները համարեա բռնի ուժով դատարկում են Ձորագեղ անունով հայ թաղը, որ թուրքերով է շրջապատուած և հայոց առաջնորդարանից սկսած իջնում է Ձանգի գետի ափը:

Հայերը բոլորովին հանգիստ հոգով հեռանում են ու թողնում իրանց ունեցած կայքի մեծ մասը փակած աներում, որովհետև ամեն մի տուն բռնում են «քաջ զինուորները» բնակւելու ու պաշտպանուելու: Սակայն մի քանի ժամանակից յետոյ խեղճ հայերը սկսում են լուրեր ստանալ, որ մէկի սենեակի դուռը կոտրել են ու իրեղէնները կողոպտել, միւսի պոգվալից գինին ու արագն են ծախել, երրորդի խալիչաներն են գողացել և այլն և այլն: Մի խեղճ և հիւանդ մարդ, որ բազմաթիւ իրեղէններ է թողած լինում Ձորագեղ, մի օր լսում է որ իր տնից տարել են արագի պղինձը և այլ բաներ և իր խնամակալութեան սակ եղող որբերի կայքը ևս, որոնց համար նա հաշիւ պիտի տայ ամեն տարի: Խեղճ մարդը գնում է Ձորագեղ և տեղեկանում է, որ գողացուած իրեղէնները իր տանը կպած տան բակում եղած հողերում են պահուած: Տեսնում է սակայն, որ այդտեղ էլ ապրում են «ազգի պաշտպաններից» քայց այսուամենայնիւ ոստիկանի հետ գնում է և կամենում է

խուզարկութիւն անել: Երբ որ նա գալիս է օկօլօղչնու հետ՝ նրան մի հայ մարդ կանչում է մի կողմ և ասում, որ ինչպէս է նա համարձակում խուզարկութիւն անել տալու մի տեղ, ուր զէնքեր կան: Մինչև այդ պարոնի վերադառնալը՝ ոստիկանը որ ամենքին շատ լաւ ճանաչում է, գործի էութիւնը ըմբռնում է և դանգատուողին խորհուրդ է տալիս հեռանալու, որովհետև բարի բան չէ գուշակում: Մի քանի օր յետոյ այդ խեղճ հիւանդ և կողոպտուած մարդուն կանչում են Զանդի դետի փիւր և չարաչար ծեծում այն բանի համար, որ նա իր գողացուած իրերը փնտռել է համարձակուել, իսկ բանից դուրս է գալիս յետոյ, որ այնտեղ ոչ մի զէնք չէ լինում, այլ հէնց կողոպտուած բաները:

Մի քանի օր սրանից առաջ Եղուարդ գիւղի տանուտէրին և 8 ուրիշ մարդու բերում են և բանտարկում միմիայն մի ինչ որ կասկածի համար:

Բայց ամենից խայտառակը և ամենից լիրբ գործը այն կողոպտուածներն են, որ սկսել են երևան գալ և ապագայում մեծ վտանդ են սպառնում: Ահա մի երկու զէնք: Մի քանի շաբաթ սրանից առաջ չորս տաճկաստանցի քրդեր գալիս են Երևան ապրանք ծախելու և առնելու: Երբ որ դրանք վերադառնում են Իգգիլ՝ դրանց հտնից գնում են 8 մարդ մեր տղերքից և Մալաքլու և Ալիջան գիւղերի մօտ, Արաքսի ափին, իջեցնում են դրանց կառքից և դաշոյններով շրջապատում բոլորովին անզէն քիւրդերին, խլում են 27 տաճկական ոսկի (մէջիգիէ), մի ոսկի ժամացոյց և մէկին էլ վիրաւորում են: Հասկանալի է, որ շուտով մեղանից փող պիտի հաւաքեն տաճկահայերին օգնութիւն հասցնելու համար, որովհետև բնականաբար այդ քրդերը սահմանը անցնելուն պէս այնտեղի հայերից վրէժխնդիր պիտի լինեն: Մի քանի օր սրանից առաջ նոյն ճանապարհի վրայ խլել են քիւրդ չօբաններից 50 գլուխ տաւար, որ նրանք Թիւրքիայից բերում էին Երևան ծախելու: Էլ չեմ խօսում ժողովրդի սաստիկ յուսահատութեան մասին, որ չգիտէ ինչպէս ապատուի այդ ենիչերիներին. մի գիւղացի ինձ ասում էր, որ ոչ մի ոռւս ոստիկան, ոչ մի խան կամ նիզամ այնպիսի բարբառութիւններ և անգթութիւններ չէ կատարել հայ ժողովրդի գլխին, ինչ որ մեր «ազգասէրներն» են անում: Ես պարտք համարեցի այս բոլորը գրել, որ գուցէ այդ աւազակներն իշխանաւորները մի փոքր կը լրջանան և կը մտածեն այն մեծ չարիքների մասին, որ այս բոլորից առաջանալու են: Ամեն մի հայ մարդ իր բոլոր ոյժով պիտի ձեռնից եկած բոլոր միջոցներով կռուէ այս երևոյթների դէմ, եթէ ոչ մեր ժողովուրդը թէ

տնտեսապէս և թէ մանաւանդ բարոյապէս քայքայուած է. հայեր, միացե՞ք և ղրկէ՞ք աւագակներին թէ նիւթական և բարոյական պաշտպանութիւնից, որովհետեւ ժողովուրդը հեծում է մի սոսկալի, սուլթանի բռնութիւնից աւելի վազընկի լծի տակ:

Ընթերցող

(225 «Մշակ»)

Տեղ գիւղի դէպքը

Տ և Վ Վ ի ւ ղ, (Զանգեզուրի գաւառ) 8 հոկտ.

Ի լրումն «Մշակի» 205-րդ համարում իմ ստորագրութեամբ (Ն. Տէր-Սահակեան) լոյս տեսած նամակի, պատիւ ունեմ ընթերցող հասարակութեան յայտնել հետեւեալը. այստեղի Դաշնակցութեան մարմնի ինձանից 100 բուլբի անտեղի տուգանք ստնելու և տիկին Հուռուն Բէնջարով ծեծելու առիթով: Ես սպասում էի թէ ինչ հետեանք կ'ունենայ, արդե՞ծ կը լինի Հ. Յ. Դաշնակցութեան բարձր վարչութեան կողմից մի օրինաւոր և անաչառ քննութիւն թէ չէ: Բայց մինչև դրան հասնելը, հոկտեմբեր ամսի 1-ից սկսած, անընդհատ սպառնալիքներ էին, որ թափուած էին իմ հասցէին, որ ես իմ գրչով հերքեմ «Մշակի» № 205-ում լոյս տեսած տրդարացի նամակս: Այս թողնենք այստեղ, որովհետեւ ականջով էի լսում. վերադառնանք աչքով տեսած քննութեան մանրամասնութեանը:

Հոկտեմբեր ամսի 4-ին մեր գիւղացի Փարսին, Գորիսից հեռա գիւղս: Հարայ-հուրայ արին անգիտ ներկայացուցիչ ազա Սողոմոնի հետ, թիւագրելով որ «Մշակի» № 305-ում Ն. Տէր-Սահակեանի նամակի առիթով Գորիսից քննիչ է գալիս, պէտք է սենեակներ պատրաստել իջևանելու համար: Ժողովուրդն ահ ու դողով պատասխանում էր, որ պատրաստեն իմ հակառակորդ և ինձ հետ անձնական հաշիւ ունեցող Ս. ի տունը քննիչի իջևանելու համար: Քննիչը գալիս է և իջնում պատրաստուած տունը: Մի գիշեր ֆնալուց յետոյ, հոկտեմբեր ամսի 5-ին, ժամի 10-ին, ես ցանկացայ ներկայանալ այդ ինձ անձանօթ քննիչին, ծանօթանալ և իմանալ նրա ով լինելը և թէ ինչու համար է եկած: Բայց ի՞նչ տեսայ, քննիչի ղոնապահ զինուորները, Փարսին և միւս անձանօթ ընկերները ինձ արգելեցին մանելու սենեակը: Խնդրեցի դալլադ անել, դարձեալ չեղաւ. պատասխանեցին, որ արդէն զիշերուանից սկսուած ձեր յօգուածի քննութիւնն է կատարուում և այդ պատճառով չէ կարելի մտնել: Ես զարմացայ զործն իմս է և առանց իմ ներկա-

յութեան քննում է: Դոնապան զինուորները հրամանով ես յետ դարձայ սպասելով գործի վախճանին:

Երկու ժամից յետոյ յիշեալ զինուոր Փարսին ինձ յայտնեց, որ քննիչը ձեզ պահանջում է: Ես փառք սատուածոյ կոչելով ներկայացայ պ. քննիչի ատեանին, տեսայ ներկայացուցիչ Սողոմոնի պահակախումբը, պատրաստ իր կազմով, սպառնալիքներով զրոյարտիչ դանդառներով, որ թափում են իմ գլխին: Ես խնդրեցի անձանօթ քննիչին մի քիչ կարգապահութիւն պահպանել: Յարդելով իմ խնդիրքը՝ դուրս արեց սենեակից այդ պարոններին, միայնակ մնացինք մենք: Պ. քննիչն երևան հանելով «Մշակի» № 205-ը, կարդալով իմ տաշ Բառ առ Բառ, սպառնալիքներ էր և քարոզներ, որ սկսեց թափել իմ գլխին, ասելով որ Գորիսի լիազօրը իւրիստ է, ուրիսեաժնի է և այլն, նա ձեզ «տրեւէյակի» սուղի կը տայ և այլն: Վերջապէս առաջարկեց ինձ, որ ես իմ գրչով «Մշակի» միջոցով հերքեմ իմ տաշուայ նամակը, տպուած № 205-ում, հակառակ գէպքում կը դատուէք Թիֆլիսում, այն էլ «տրեւէյ» սուղի դատին, միայն թէ արդարութիւն ցեխի մէջ չմնայ, խնդրեցի պ. քննիչին յայտնելով, որ եթէ օրինաւոր և անաշու քննութիւն է կատարուած, պէտք է նախ բողոքատուին հարց ու փորձի ենթարկել, յետոյ միւսներին, այն էլ ոչ դռնփակ: Նա պատասխանեց, որ դա իմ գործն է: Երկրորդ անգամ խնդրեցի քննիչին, որ իր իրաւունքը ցոյց տայ, թէ որտեղից է քննիչ նշանակուած, օրինաւոր է թէ մասնաւոր: Դարձեալ նոյն պատասխանը ստացայ, որ դա իմ գործն է: Վերջապէս պ. քննիչի սիրտը գութ ընկաւ և ինձ հարց ու փորձի ենթարկեց: Ես պընդեցի իմ յօդուածի վրայ, «Մշակի» № 205-ում, բոլոր մանրամասն, և առաջարկեցի 25 մարդկանց և 5 կանանց անունները ցուցակագրուած իւրիս վկաներ, որոնց թւումն էր և բէնջարով ծեծուած կին Հուսին և խնդրեցի բոլորին օրինաւոր կերպով երդում տալ և ենթարկել հարց ու փորձի: Քննիչը այդ էլ արեց, իր կամքի ուզածի պէս վարուեց: Իմ վկաներից ընտրեց չորս տղամարդու, բէնջարով ծեծուած Հուսուն և մի այլ կնոջ: Այդ վեց հոգուն երդուեցնելուց յետոյ փակել տուեց առանձին մի սենեակում, իսկ ինքը միւս սենեակում դռնփակ առանձնացած իր ուղածի պէս սկսեց քննել վկաներին, որոնք երկուդ չկրեւով քննիչի քարոզներից և սպառնալիքներից բոլորը մանրամասն պատմում են փաշա Սողոմոնի գաղանթութիւնները, թէ բէնջարով ծեծելը և թէ «Մշակ» թերթի արգելելը կարդալու համար և ինձանից 100 բուբլի տուգանք առնելը:

Վկաներին հարց ու փորձից ազատ թողնելուց յետոյ զարհուրեմբեր, 1906.

մանքով էին պատմում քննիչի երկու զինուորների սպանալիքները և երկիւղ տալը իրանց սենեակում փակուած ժամանակ, մինչև ցուցմունք տալը, բայց այնուամենայնիւ վկաները կատարել են իրանց մարդկային պարտաւորութիւնները: Վկաների ցուցմունքից յետոյ, երբ ես կանգնած էի դրսում, պ. քննիչը նորից ինձ հրաւիրեց իր մօտ ու ինձ յայտնեց այսպէս. թէ ձեր տղամարդ վկաները հաստատում են ձեր բողոքը, բայց նրանք շահագրգռուած են ներկայացուցիչ Սողոմոնի դէմ, իսկ ծեծուած կնոջ՝ Հուռու և միւս կնոջ՝ Նաղանու ցուցմունքին չէ կարելի հաւատալ, որովհետև նրանք պոռնիկ են. բայց բաւական է, որ աղա Սողոմոնը իր զինուորների շայկայով ասէ, որ կաթը սև է կղել, իսկոյն հաստատում է, իսկ հակառակ ասող վկաները պոռնիկ են և շահագրգռուած: Զարմանալի քննութիւն. քննիչը ասում է, որ ծեծուած կին Հուռուն գերեզմանի վրայ չեն պառկեցրել ծեծելու, այլ գերեզմանի կողքով, Հուռուն մէջքի վրայ չեն պառկեցրել այլ փոքրի վրայ, չեն մերկացրել, այլ իր հագուստով են ծեծել, և վերջն ասում է, որ Սողոմոնը չէ ծեծել, այլ տանուտէրը, այն էլ ձիպտում: Այդպիսի աղաւաղումներով արդարացրել էին ուզում Սողոմոնի վարձուները:

Ինչ վերաբերում է այն բանին, որ Սողոմոնը ինձ արդելում էր «Մշակ» թերթ չկարդալ, այլ կարդալ «Ալիք», քննիչը ասում էր դրա համար թէ չէ կարելի հաւատալ վկաների խօսքերին, թէ և երգուած: Ուրեմն էլ ինչպէս հաւատացնել պ. քննիչին, եթէ ոչ թէ երգմամբ:

Ես պնդեցի, որ հարցաւորձի հնթարկէ իմ հեռացրուած 24 վկաներին: Այդ հարցին էլ պատասխանեց, որ ես օրինաւոր քննիչ չեմ և կած այս գործի մասին, այլ իբրև ճանապարհորդ Գօրիսից Շուշի գնացող, ուզում եմ մի մասնաւոր տեղեկութիւն հաւաքել: Այս պատասխանով ես հեռացայ քննութեան տեղից, ասպարէզը թողնելով իրանց: Քննիչը ժողովում է Սողոմոնի կողմնակից 30—40 անձանց և ամբողջ ժողովրդի տեղ համարելով նրանց պատուիրում է, թէ դուք կարող էք ժողովրդի էղովից մի հերքում գրել տալ և ուղարկել «Մշակի» խմբադրութեան տպելու: Մի հերքման սևագրութիւն էլ գրում է և տալիս Սողոմոնին. գուցէ և օրերուս կեղծ ստորագրութիւններ կը հաւաքեն խեղճ ժողովրդից և կառաջարկեն խմբագրութեանը տպելու համար այդ կեղծ հերքումն առանց ժողովրդի գիտութեան:

Այս թղթներ և վերադառնանք առ ձեզ, աղա Սողոմոն. ինչո՞ւ էք ծակուծուկ մտնում, դուք չէք հերքում գրում, այլ

Ժողովրդի անունով էք ուզում հերքել իմ գրածս: Եթէ այս մէկը հերքել կարողանաք (դիցուք), տիկին Նազուն և Կիլին մերկացրած ճիւղոտով ծեծելու ինչ կասէք, այն էլ հրապարակօրէն, եկեղեցու տակը, Սարգիս Օհանջանեանին, Դաւիթ Հայրապետեանին և Կարապետ Աղաբաբեանին մերկացրած ծեծելը և նրանցից մէկից եափունջին, մէկից արծաթէ քամարը, միւսից ջրի փողը բռնութեամբ առնելու համար ինչ կասէք: Քանի՜ մէկը թուենք: Ծակ ու ծուկ մտնելը, քննիչի և նրա գինուորների խնդրելով, ժողովրդին սպառնալիքներ կարգալով, բէնջարով ծեծուած կին Հուռուն 25 բուրլու փրկանք խոստանալու տեղ, դուք ինքներդ մարդկօրէն դուրս եկէք հրապարակ և պատասխանեցէք ձեր գրչով և ձեր անունով. այլ կերպ չէք կարողանայ արդարանալ:

Որպէս զի «Մշակի» № 205-ում գրուած նամակս ուղիղ քննուի և հրապարակօրէն, ես առաջարկում եմ աղա Սողոմոնին մի միջնորդ դատարանի յանձնել մեր գործը: Իմ կողմից ընտրում եմ չորս արդարադատ բացակայ մարդկանց գիւղերից և քաղաքից. 1) տեղիս երկդասեան տարրական դպրոցի տեսուչ և աւագ ուսուցիչ Սեդրակ Տէր-Դանիէլեանին, 2) Գօրիս քաղաքացի Միրզաջան Ներսէսեանին, 3) Խնածախ գիւղի Ալէքսանդր քահանային և 4) Խնձորէսկ գիւղացի Մարտիրոս Շահպաղեանին, որ ներկայ լինեն մեր գիւղը, տեղիւսանողը քննելու երդմամբ: Բարեհաճեցէք և դուք, աղա Սողոմոն, լրագրի միջոցով նշանակել և ձեր կողմից չորս առաջառ մարդիկ (ոչ մեր գիւղացիք): Այդ կազմը կը ժողովուրի և կը քննէ արդարութեամբ:

Եւ այն ժամանակ դուցէ կարողանաք հերքել ինձնից 100 բուրլի առած տուղանքը, արգելելու ինձ «Մշակ» լրագրի կարդալու և տիկին Հուռուն բէնջարով ոտզգի տալը: Դուք, աղա Սողոմոն, ծակ ու ծուկ մտնելով, թագնուելով չէք կարողանայ աղաւտել այդ ծանր մեղքերից, այլ աշխատեցէք աղամարդօրէն շուտով ընտրել և ձեր կողմից մարդիկ, դատարան կազմելու համար: Այն ժամանակ արդարութիւնը կը բացուի և թէ ինչ երեսով կը նայէք ժողովրդի երեսին, այդ թողնում են ձեզ:

Ն. Տէր-Սահակեան

Բոլորը դէմ են Դաշնակցութեան:

Կան գործողութիւններ, ընկերակցութիւններ, որոնց նըպտամամբ բոլոր շխտակ մարդիկ, առանց համոզմունքների և

ուղղութիւնների խտրութեան միատեսակ վերլուծութիւնը և մեղադրանք են յայտնում: Թուրք բարբարոս բեթիմի զոհերը յարուցանում էին Եւրոպայի թէ պահպանողական, թէ լիբերալ և թէ արմատական ուղղութիւնների շիտակ մարդկանց դայրոյթը. և դատապարտութիւնը: Դրէյֆուսի դատի պաշտպանների մէջ կային ամեն ուղղութեան շիտակ մարդիկ: Դաշնակցութիւնը վերջին տարիներս, միջոցների անխտրականութեան և նուաճողների բռնակալութեան սխտեմին հետեւելով, յարուցել է իր անթիւ կամայականութիւնների և անիրաւութիւնների պատճառով բոլորի զգուհանքն ու ատելութիւնը: Թուրք, հայ, ռուս, սոցիալ-դեմոկրատ, լիբերալ, արմատական, կղերական, մի խօսքով բոլորը, բոլորը ասում են այդ հայ եղբորական օրդէնը, որի ինկվիզիտորական ակտերից մէկն էլ Յովնանեան դպրոցի տեսչական հարցն էր: Ահա ինչ է ասում այդ խնդրի մասին «Հոսիւ» շաբաթաթերթը:

«Մի հոգեւոր իշխանութիւն ունենք, որին ենթարկում են մեր բոլոր զուտ ազգային հաստատութիւնները՝ հոգեւոր և դպրոցական վարչութիւնները: Կարծես, շատ զիւրին պիտի լինէր պահպանել այդ հաստատութեանց մէջ կանոնաւորութիւն և խիստ կարգապահութիւն. հերիք էր, որ հոգեւոր բարձրագոյն իշխանութիւնը կամքի հաստատութիւն և օրինապահութեան ձգտումն ցոյց տար: Բայց դժբախտաբար այս երկուսի բացակայութեամբ այսօր մեր երկու տեսակ հաստատութեանց մէջ էլ օրինական կարգ ու կանոն գոյութիւն չունի—մի տեսակ անիշխանութիւն է տիրում: Ոչ կտակ է յարգւում, ոչ հաստատութեամբ ու սրբազործութեամբ կանոնադրութիւն, ոչ օրինաւոր իշխանութեան կարգադրութիւն: Մի տեղ ծխական դպրոցների մի քանի ուսուցիչների խմբակ բոյկոտ է յայտնում հայրապետական կոնդակի դէմ և ուշադրութեան առնւում, միւս տեղ մի երկու տասնեակ հին և նոր ուսուցիչների ժողով բոյկոտ է յայտնում օրինաւոր հոգաբարձութեան կանոնաւոր կարգադրութեան դէմ և այդպիսի ինքնակոչ խմբակի որոշումն իբրև մի կարգադրիչ հաստատութեան վճիռ է ընդունւում: Մի խօսքով ամեն տեղից վեր կացող յանուն ժողովրդեան շահերի՝ իշխանութիւն է ծախում և շնորհիւ անիշխանութեան՝ հետեւանք հոգեւոր բարձրագոյն իշխանութեան թուլութեան՝ վերջոյ բնաւորութեան ամեն անկանոնութիւններ սրբազործւում են մէկը միւսին հետևող հաւասարական կոնդակներով կամ հայրապետական դիւանատնից տեղացող հեռագիրներով: Հետեւանք հայ ժողովրդեան շահերի փաստն է: Ի՞նչ է այսօր Յովնանեան և Ներսիսեան, երկու ամենից աւելի ապահովուած հայ դպրոց-

ների վիճակը—սեպտեմբերը վերջանում է ոչ միայն ուսումը չէ սկսում, այլ և որոշում չէ, թե ի՞նչ ուղղութիւն պիտի տիրապետէ դոցա մէջ:

Մենք «Հովիւ»-ի անցեալ համարում հաղորդեցինք Յովնանեան դպրոցի ներկայ վիճակի մասին համառօտ տեղեկութիւն, բայց հարկ ենք համարում այս անգամ մի քանի մանրամասնութիւնները ևս հաղորդելու՝ որպէսզի ընթերցողները տեսնեն, թէ մինչև ի՞նչ աստիճանի հասած է մերոնց կամայականութիւնը և որքան արհամարհած օրինակութեան գաղափարը:

Յովնանեան դպրոցն, որ իւր նիւթական միջոցներով կարող է միակ հայ օր. միջնակարգ դպրոցը դառնալ, այսօր խառնակ վիճակի մէջ է. միայն նորընտիր կուսակցական հոգաբարձութեան օրինականութիւն չճանաչելու և՛ իր կամայականութիւնը իրագործելու ջանքի շնորհիւ, զոհելով դրանց դպրոցի խաղաղութիւնն ու հարիւրաւոր աղջկանց մտաւոր և հոգևոր շահերը: Նախկին հոգաբարձութիւնն, որի ժամանակը լրանում էր ներկայ սեպտեմբերի 3-ին, իսկ նոր հոգաբարձութեան ընտրութեան և հաստատութեան ժամանակը յայտնի չէր, դպրոցը ուսումնական տարուայ սկզբում անկերպարան չթողնելու համար, գարնանային քննութիւններին յետոյ, ըստ իւր պարտականութեան և իրաւանց, արձակեց ըսլոր ուսուցչական նախկին կազմը և ապա ընտրեց առաջիկայ ուսումնական տարուայ համար թէ տեսուչ և թէ ուսուցիչներ ու վարժուհիներ:

Տեսուչը հաստատուեց հայրապետի կողմից:

Այսպէս դպրոցի ուսումնական գործադիր խումբը օրինաւոր եղանակով կազմած վերջացած էր ու ուսումը դպրոցում սեպտեմբերին պիտի սկսէր: Օրինակութիւնը պահանջում էր, որ նոր հոգաբարձութիւնը, երբ էլ ընտրուէր ու հաստատուէր, պիտի կատարէր նախկին հոգաբարձութեան որոշումն, գէթ մինչև ներկայ ուսումնական տարուայ վերջը: Բայց նորընտիր հոգաբարձուները կամայականութիւնն ու կուսակցական հաշիւները օրինակութիւնից աւելի յարգելի համարեցին: Նոքա հաստատուեցան հայրապետական կոնգակով սեպտեմբերին, հաստատուեցան նրանց հետ, հակառակ հիմնադրի կտակին և նւրանց կանգիտաւորները:

Սեպտեմբերի 14-ին ժողովի են հրաւիրւում թէ հին և թէ նորընտիր հոգաբարձուները, որպէսզի հսկեն յանձնեց դպրոցը նորերին և լսեն տեսչի զեկուցումն: Այստեղ նորընտիր հոգաբարձուները յայտնում են, որ իրանց ընտրող պատուիրակների մանգատների (հրամանի, կարգադրութեան) հիման

վրայ նախկին հոգաբարձութեան կարգադրութիւնները չեն ճանաչում օրինաւոր, ուստի նրա ընտրած ու կոնդակով հաստատուած թէ տեսուչն և թէ ուսուցչական խումբը իրանց ընդունելի չեն: Մատի փաթաթած և ինտրիզ սարքելու համար հնարած միջոց չէ՞ այդ մանդատների հանդէս բերելը: Պատուիրակները ընտրուում են միայն հոգաբարձուներ ընտրելու համար և ոչ մի իրաւունք և լիազօրութիւն չունին ընտրուող հոգաբարձուների վերայ որևէ պարտք դնելու, նա մանաւանդ, որ նոյն իսկ պատուիրակները ընտրող ծխական ժողովրդի ընտրողական թերթերում բնաւ չէ յիշուած, որ նոքա տուած են պատուիրակներին որևէ յանձնարարութիւն և իրաւունք էլ չունէին: Ահա ձեզ կուսակցական պաշտուարներ օյինբազուկեան օրինակ:

Ըստ մեզ այսպիսի հանգամանքում կը մնար Հոգևոր բարձրագոյն իշխանութեան՝ դպրոցի կանոնաւոր ընթացքը պահպանելու համար, հայրապետական կոնդակով կամ հրամայելով նորընտիր հոգաբարձութեան օրինաւոր ճանաչել նախկին հոգաբարձութեան կարգադրութիւնը և կամ լուծել նորընտիր հոգաբարձութեան ընտրութիւնը, հրամայելով նախկին հոգաբարձութեան՝ շարունակել իւր պաշտօնը ցնոր կարգադրութիւն, որով ամեն ինչ վերջացած կը լինէր:

Բայց ուր են իշխանական հաստատուն կամքը և վճռականութիւնը: Փոխանակ վերոյիշեալի նման կարգադրութեան հայրապետական դիւանից դիւանապետի ստորագրութեամբ տեղացին կիսամիջոցներ բովանդակող հեռագիրներ, որոնք աւելի բարդեցին ու խճճեցին խնդիրը, որի որոշումն կարող է տալ միայն իրաւաբանների ժողովը:

Այսպիսի հեռագիրներից մէկը հրամայում է ժողով հրաւիրել միայն հոգաբարձուներին, առանց օրինաւոր տեսչի մասնակցութեան և վճռել բոլոր վիճելի խնդիրները թէ տեսչի և թէ նախկին հոգաբարձուների հրաւիրած ուսուցչական կազմի վերաբերութեամբ:

Մենք կարծում էինք, թէ նորընծայ հոգաբարձութիւնը այսպիսի կարգադրութիւնից յետո՛ւ իրանք բազմութիւն ձայների ունենալով, վեհանձն կը գտնուեն, և դպրոցի խաղաղութիւնն ու կանոնաւոր ընթացքը կը քերին յագուրդ տալից բարձր դասելով, խոհեմութիւնը ղեկավար ընտրելով, կը համաձայնին նախկին հոգաբարձութեան կարգադրութիւնները օրինաւոր ճանաչել և խնդր դպրոցը տարտամ և վրդովեալ վիճակից կազատեն և Յովնանեան դպրոցի խնդիրը խաղաղութեամբ կը վերջանայ: Բայց դժբախտաբար մեր յոյսը զուր եղաւ:

իրողութիւնը ցոյց տուեց, որ կիրքը կուրացնում է և թրմ-
րեցնում մարդոց ուղեղը:

Սեպտեմբերի 26-ին՝ համաձայն վերջին կարգադրութեան
Վեհափառի առանց տեսչի մասնակցութեան հրաւիրած՝ հոգա-
բարձական ժողովը բաց է անում ս. առաջնորդը մօտաւորապէս
ասելով, որ ինքը նախկին հոգաբարձութեան կարգադրութիւն-
ները թէ պ. Լ. Սարգսեանին տեսուչ ընտրելը և թէ նոր ու-
սուցչական խումբ կազմելը օրինաւոր է ճանաչել և ճանաչում:

Ուստի և հրաւիրում է հոգաբարձութեան աչքի առաջ
ունենալով դպրոցի շահերը և խաղաղութիւնը, համաձայն այդ
կարգադրութեանց բանալ դպրոցը, և սկսել ուսումնի, իսկ ար-
տաքին հաշիւները տեսչի՝ հետ դպրոցական գործի հետ չկա-
պել, դրա համար օրէնք կայ, որին կարող են դիմել: Բայց
նորընտրիները չեն համաձայնում խոհեմութեան ձայնին, ուս-
տի և մեծ. պ. Ա. Անանեանցը և բարեկրօն մայրապետը, յայտ-
նելով իրանց զփոհութիւնը, որ նախկին հոգաբարձութեան
օրինաւոր կարգադրութիւնները չեն յարգւում, թողնում են
ժողովը և հեռանում: Իսկ նորընթաները պ. Մանանդեանին
տեսուչ են ընտրում և որոշում են հրաւիրել ուսուցչական հին
կազմը ու ամսոյս 2-ին ուսումը սկսել դպրոցում: Ժողովի
վերջին նորընտիր հոգաբարձուներից պ. Տ. Յովհաննիսեան և
Յ. Թալրեան խնդիր են տալիս ս. առաջնորդին, որ իրանք
հրաժարւում են՝ Թիֆլիզից բացակայելու պատճառով և որ
իրանց փոխարէն հրաւիրուեն կանգիտատները: Խեղճ խաղաղ
Յովհաննեան դպրոց, ով գիտէ ինչ փոթորիկներ և մրրիկներ
դեռ ևս պիտի գան գլխիդ շնորհիւ կուսակցական հոգաբար-
ձուացդ: Յաւալի երևոյթ. կրկնում ենք, որ, բոլոր անցեալի
և ապագայում կրքերից ծագող անախորժութեանց պատաս-
խանատւութիւնը ընկնում է հայրապետական գլխանատան վրայ»:

«Հովիւին» իր ուղղութեամբ հակառակ բեկն կազմող «Աշ-
խատանք» շարաթաթերթը (№ 36) փորձում է պարզել ազգա-
յին կառավարութիւն ստեղծելու տենչով բռնուած «դաշնակ-
ցութեան» դէմ միահամուռ ատելութեան պատճառները: Առաջ
ենք բերում այդ ուշագրաւ յօդուածը, որ բաւական ճիշտ է
բնորոշում այդ «կուսակութեան» այլանդակ ֆիզիօնոմիան:—

«Եթէ այսօր «Մշակը» սպառնական նամակ է ստանում
նրա համար, որ նա դետեղում է թղթակցութիւններ ուղղած
դաշնակցութեան այս կամ այն գործունէութեան դէմ, նրա ա-
նունից գործող այս կամ այն խմբակի կամ անհատների դէմ,
ուրեմն նոյնպիսի նամակներ կարող են ստանալ և միւս թեր-

թերը. սոցեալ-դեմոկրատների օրգան «Կայծ», սոցիալիս-յեղափոխական «Աշխատանքը», կղերական «Հովիւը», մարքսիստական «Ձայնը», րադիկալ «Մուրճը», ռուսաց թերթեր. «Бакы» «Кавказская Жизнь», «Тифлис» և այլն, որովհետև այսօր դաշնակցութեան դէմ են և նրան խիստ քննադատում և մերկացնում են գրեթէ առանց բացառութեան Կովկասում հրատարակուող բոլոր կուսակցութիւնները անխտիր:

Սա մի երևոյթ է և աչքի ընկնող, ուշագրաւ երևոյթ— այն որ դաշնակցութիւնը Կովկասում ոչ մի հատ բարեկամ չունի, նրան հաւասարապէս ասում, դատաւիտում են ամեն տեղակի թերթեր, սկսած ծայրագոյն ձախից, ծրագրով և ուղղութեամբ դաշնակցութեան մօտ կանգնած «Աշխատանքից», մինչև այնպիսի աջակողմեան թերթ որպիսին «Հովիւն» է:

Ի՞նչն է սրա պատճառը, ի՞նչու դաշնակցութիւնը, ոչ մի բարեկամ չունի, ի՞նչու «Յառաջ», «Ալիք», «Ձանգ», «Երկիր» մենակ են մնացել և մի ցաւալի մենակութեան մէջ, ճգնում են թէ ձախ և թէ աջ պաշտպանուել ամեն կողմից նրա վրայ տեղող հարուածներից:

Եթէ այդ հարցը իրեն չէ տուել դաշնակցութիւնը, սակայն մենք շատ անգամ ենք տուել և, ահա թէ ինչ եղբակացութեան ենք եկել:

Դաշնակցութիւնը յեղափոխական կուսակցութիւն է, բայց ոչ մի յեղափոխական կուսակցութիւն նրա մէջ չէ ընդունում մաքուր յեղափոխականութիւն:

Դաշնակցութիւնը մանր բուրժուազական կուսակցութիւն է, բայց նրանից երես են շուռ տուել բոլոր բուրժուական տարրերը:

Դաշնակցութիւնը ազգային կուսակցութիւն է, բայց նրան նրան չեն ընդունում ազգային խմբակները. Դաշնակցութիւնը սօցիալիստական կուսակցութիւն է, բայց բոլոր սօցիալիստները հեգնանքով են խօսում նրա դաւանած սօցիալիզմի մասին: Եւ այսպէս դէպի Դաշնակցութիւնը մենք նկատում ենք ամեն կողմից մի տեսակ անվստահութիւն, ծաղրանք, հեգնութիւն:

Ոչ ոք Դաշնակցութեանը չէ հաւատում, և բոլոր ժխտում են նրա մէջ կուսակցութեան համար ամենաթանկագին բանը՝ անկեղծութիւնը: Եւ հէնց դրա համար էլ նրանից խոյս են տալիս բոլոր կուսակցութիւնները, բոլորն էլ ուրանում են նրան և աշխատում ցոյց տալ, որ ոչ մի առնչութիւն չունեն նրա հետ: Դրանով մի ողբերգական դրութիւն է ստեղծում մի կուսակցութեան համար, որի անցեալում կան այնքան պատկա-

ուելի դէմքեր, խիզախ գործեր—բայց միայն անհատներ... այն ինչ որպէս կուսակցութիւն նա կորցրել է հասարակութեան և ժողովրդի լայն խաւերի մէջ իր բարոյական հեղինակութիւնը, չնայելով որ ոչ մի կուսակցութիւն այնքան յաճախ հրապարակ չէ դուրս եկել աշխատաւոր մասնաների շահերի պաշտպանութեան դրօշակով, որքան Դաշնակցութիւնը: Եւ դեռ ևս սրանից մի վեց-եօթ ամիս առաջ ամենաուժեղ կուսակցութիւնը օր ըստ օրէ ընկնում է, քայքայւում, վարկաբեկ լինում այն աստիճան, որ շատ մօտ է թւում մեզ այն ժամանակը, երբ նրանից կը մնայ միայն մի քանի լաթեր:

Ի՞նչու է այս այսպէս. ի՞նչ պատահեց նրան. այն որ Դաշնակցութիւնը օգտուելով Անդրկովկասեան դառն իրականութիւնից՝ հայ-թուրքական ընդհարումներից և ինքնապաշտպանութեան ընադդումից, իր շարքերը ուժեղացրեց այնպիսի տարրերով, որոնք մի յեղափոխական կուսակցութեան համար կարող էին լինել միմիայն թշնամիներ, մութ ոյժեր. և նա Դաշնակցութիւնը յենուելով այդ կասկածելի ոյժերի վրայ, սկսեց շահագործել նրան յօգուտ իր դրօշակի:

Այդ բանը խիստ աչքի էր ընկնում և տարակուսանքներ պարթեցնում այն անձանց մէջ, որոնք մի յեղափոխական կուսակցութիւնից նախ և առաջ պահանջում են վաղափարի և նրան ծառայողների մաքրութիւն:

Եւ ահա այսօր նա հնձում է իր ցանածը: Ահագին աղմուկով փլում է այն շինութիւնը, որով նա պարծենում էր աշխարհի առաջ և մի գուցէ այդ փլատուկների տակ կորչեն և ոչնչանան և այն բոլոր լաւ բաները, որ ստեղծել էր և կարող էր դեռ ևս ստեղծել Դաշնակցութիւնը:

Նրան փրկութիւն չկայ, ուստի և բոլոր սպառնական նամակները այս կամ այն թերթի կամ անհատի հասցէին մի մի յուսահատական ճիգեր են փրկելու անհրաժեշտօրէն փլչող այն խախտու շինութիւնը, որի անունը Դաշնակցութիւն է: Նա մեռնում է իր բնական մահով... Նրանի թէ այդ փլատակների տակից կարողանային ազատուել նրա մէջ եղած լաւ, մաքուր տարրերը և, միանալով մաքուր յեղափոխական այս կամ այն կուսակցութեան հետ, միացած ոյժերով առաջ տանէին ժողովրդի ազատագրութեան սուրբ գործը—սակայն... ոչ Դաշնակցութեան անուան տակ:

Այդ դրօշակը ընկաւ և նրա անկման պատճառն ու հեղինակները իրանք դաշնակցականներն են—յանձին նրա հին, նոր և նորագոյն կուրսի:

Պատմական սխալը ճակատագրական էր դաշնակցութեան համար:

Նա ղոհ գնաց իր ազահուլթեանը:

«Մուրճի» անցեալ համարում բերած փաստերին այժմ աւելացնելով «Նոր խօսքի», «Մշակի», «Հովուի», և «Աշխատանքի» յիշած փաստերը մենք անկարող ենք ի հարկէ սպառել այն անթիւ, անհամար զեղծումներն և քստմնելի բռնութիւններն որ կատարուել են և կատարոււմ են ազգային բնորոշութեան ստեղծած ընդմիջ շնորհիւ հայ ժողովրդի գլխին: Տհաւ և չարամիտ մարդկանց ստեղծած այդ սխտեմը այլ հետեանքներ տալ չէր էլ կարող: Դաշնակցական շէֆերը ժողովում են որ բռնի ոյժով մի կուսակցութիւն չի կարող ամբողջ ժողովրդին փաթաթել և ապա բեպրեստիւ միջոցներով իրեն տիրող, նուաճող ստրկացնել հայ ժողովուրդը, եթէ նա չի ուզում դառնալ մաֆիա: Կուսակցական դիսցիպլինան պարտադիր է միայն կուսակցութեան անդամների համար: Իսկ կուսակցութեան անդամ կարող է լինել իր յօժար կամքով միայն նա, ով ընդունում է այդ կուսակցութեան ծրագիրը: Իսկ մեր ազգային բռնակալները ժողովրդից ինքնապաշտպանութեան պատրուակով և թիւրքահայկական դատի համար ամեն ներելի և աններելի միջոցներով հաւաքած գումարներով, օգտուելով խառն հանգամանքներից, մտածեցին զէնքով նուաճել հայ ազգը և ծառայեցնել նրան այդ նոր դաշնակցական չինովնիկութեան շահերին: Բիւրօյի անդամներն—մինիստրները—ամեն մէկը ունի իր դեպարտամենտը. գաղտնի ոստիկանութիւն, բանտեր, ընդհանր, դահլիճներ, շրջիկներ, հրամանատարներ, զինուորներ, գատաւորներ, հարկահաններ և այլն և այլն: Եւ այդ չինովնիկների ահազին շտաբը ապահովելու նպատակով կեղեքւում է ժողովուրդը ամեն տեսակ կամայական տուրքերով. զաֆտում են այն հասարակական հաստատութիւնները, ուր կարող են զետեղել իրանց չինովնիկներին: Դաշնակցական բիւրօկրատիան իր պրեստիժը պահպանելու համար գործադրում է ամեն տեսակ ճնշումներ, ահաբեկումներ խաւար մասսայի վրայ, իսկ «Լուսաւորներին» մոլերեցնելու համար կեղծում է, ստում, խեղաթիւրում փաստերը, անուանարկում իր հակառակորդներին, ժողովրդից կորզած միջոցներով բռնի տարածում իր անբարոյականացնող պաշտօնական թերթերը: Մի խօսքով արդի Դաշնակցութիւնը մի սոսկալի այլանդակութիւն է, մի վիժմունք, մի հրէշաւոր արտադրութիւն ուսում թուրք բիւրօկրատիայի և հայի ստրկահոգութեան ու քաղաքական տհասութեան: «Դաշնակցական կառավար-

ընթերցել» ամենացաւալի կերպով արտայայտում է հայկական հասարակական որոշ ոյժերի խակընթիւնն և կատարեալ սնանկութիւնը: Նոր ճանապարհ, նոր դաստիարակութիւն մեզ!

Ք Ր Դ Ա Կ Ա Ն Ա Ռ Ա Ծ

Ճըւիք է վիթ-վիթանի,
Տա մալա խօխըրապ կըր,
Ե՛՛ մըն ժի լը սարդանի:

Մի հատ ճընճղուկ ձմեռուայ կիսուն,
Իր բոյն էր շինել մի խըռիւի տակ,
Ածել էր այնտեղ իր քանի հատ ձուն,
Որ այդ ձուերից հանէր իրան ձաղ:

Գնաց քրդի մէկ, տեսաւ ճնճղուն.
Տեսաւ որ բնում ձուեր է ածել.
Ասեց. «այնպէս է՝ մօտիկ է գարուն
Որ ճնճուղ արդէն թուխսի է նստել»:

Քիւրդն ասաց—երթամ ոչխարս բերեմ սար,
Որ գայ բարձրանայ դէպ կանանչ լեռներ
Թարմ ու լաւ խոտեր արածի ոչխար,
Ճնճուղ թուխսի է, անցել է ձմեռ:

Գնաց ու իսկոյն բերեց ոչխարներ,
Օ՛, հօ՛ անելով դէպի լեռ քաշեց:
Սաստկացաւ ձմեռ, սկսեց քրեր,
Բոլոր ոչխարներ մէկ զիշեր ջնջեց:

Քիւրդ ասաց. «գնամ, տեսնեմ ճնճուղին,
Մեռած է արդեօք թէ ողջ է ապրում
Գնաց, ճնճուղ սատկել է մէջ բնին,
Այստեղ վշտացած այսպէս է խօսում:

«Ճըվկող ճնճուղ, ճըվկող ճնճուղ, քու տուն աւերեցիր,
Խմ տունն էլ քո տան վրայ տուեցիր»:

Իս. Միրաքնան

ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐԲՍԻՋՄԸ ^{*)}

I

Մարքսի կեանքը, սօցիալ-քաղաքական, հրապարակախօսական գործունէութիւնը եւ գրական վաստակները.

Segui il tuo corso e lascia dir le genti!

Հետեւիր ճանապարհիդ, և թող մարդիկ խօսեն, ինչ ուզում են:

Դանտէ.

19.

Ինտերնացիօնալի ծաղկումը:—Ռուսական սեկցիան:—Արդելաոյթ երեւոյթները:—Փրանս-գերմանական պատերազմը:—Բակունիստների ղեկը:—Ինտերնացիօնալի երկու մանիֆեստը պատերազմի առթիւ:—Փրանսիական, գերմանական և անգլիական քանուորութեան միջոգային-եղբայրական համերաշխութիւնը:—Մարքսի նախատեսումը և նրա ճշգրիտ իրականացումը:—Մարքսը քննադատում է Վիլհելմ կայսրի ճառերը, բողոքում էլգաս-Լոթրինգիայի գրաւման դէմ:

Բազելի կոնգրեսից յետոյ Ինտերնացիօնալի համար բացւում է մի նոր շրջան: 1869—71 թ. Ինտերնացիօնալը հասնում է իր զարգացման ամենաբարձր աստիճանին: Մի կողմից նա ծաւալում է ամենուրեք, նորանոր սահմաններ գրաւում իր ազդեցութեան տակ, միւս կողմից նա խորանում է իր ծրագրային ձգտումներով և զործնէութեան տակտիկայով, ամբացնում իր կազմակերպութեան հիմքերը, սերտ յարաբերութեան մէջ դնում կենտրոնը ծայրերի՝ ազգային սեկցիաների հետ: Ինտերնացիօնալը մուտք է գործում նոյն իսկ գիւղական պրոլետարիատի մէջ և մեծ կողմնակցութիւն ձեռք բերում նրա խաւերում. Բազելի կոնգրեսի որոշումը՝ հողային հարցի նկատմամբ, մեծ ընդունելութիւն է ունենում գիւղական պրոլետարիատի մէջ: Եւ մի երկիր, Ռուսաստանը, որի սահմանները

ամբողջապէս փոսկուած էին Ինտերնացիօնալի հոռաւորի առաջ, նոյն իսկ այդ երկրի ժընե ապաստանած էմիգրանտներից հիմնուած է մի ազգային-ռուսական սեկցիա: Ռուսական սեկցիայի գլխաւոր ջանքերն էին՝ կոռել անխնայ պանսլաւիզմի դէմ և աշխատել բոլոր սլաւոնական տարրերին, նոյն իսկ Աւստրիայում, զրաւել դէպի Ինտերնացիօնալը: Ռուսական սեկցիայի ծրագիրն ու կանոնադրութիւնը կազմուած է ինքը կենտրոնական խորհուրդը, իսկ ռուսական սեկցիայի հետ թղթակցելու գերը ստանձնում է Կարլ Մարքսը:

Այսպէս, հարողական գրեթէ բոլոր երկրներում և բոլոր ժողովուրդների մէջ արմատանում և ընդարձակւում է նորանոր սահմանների մէջ Ինտերնացիօնալի ուժեղ շարժումը. «արդեւտարնոր բոլոր երկրների, միացէք» — մարտական լսողունգը համարեա մօտեցել էր իբր իրականացման պատմական մոմէնտին:

Սակայն դա Ինտերնացիօնալի միայն զրական կողմն էր, նրա սրեթաց նուաճումների և յաղթական յաջողութիւնների հաշուեկշիռը: Յաջորդ թուականից — 1870-ից ի վեր — առաջանում են եւրոպայի ծոցում այնպիսի արտասովոր և ահաւնադրող երեւոյթներ, որոնք խանգարում են Ինտերնացիօնալի, միջազգային բանուորական կազմակերպուած շարժման նօրմալ յառաջադիմութեան ընթացքը և փաստապէս զնաւում նրան: Դա Ֆրանս-գերմանական զարմուրդի պատերազմն էր՝ մի կողմից, դա Փարիզի կոմունան՝ էր միւս կողմից: Ինտերնացիօնալի յաջորդ տարուայ կոնգրեսը — 1870 թ. սեպտեմբերի 5-ին Մայնցում — չի կայանում պատերազմի բռնկման պատճառով:

Մեզ չէ վերապահուած, ի հարկէ, այստեղ երկար ծանրանալու այդ երկու խոշոր երեւոյթների վրայ, նրանք միայն կողմնակի կերպով են յարակցուած Ինտերնացիօնալի պատմական անցիալի հետ: Սակայն ինչպէս էր Ինտերնացիօնալի վերաբերմունքը դէպի մէկ թէ միւս երեւոյթը, — հարկաւոր է դրամասին վազաւար կազմել. տմենից առաջ՝ ինչպէս է արտայայտուել Մարքսը դրանց մասին, — անհրաժեշտ է իմանալ:

Կառավարչական և բուրժուական մամուլը՝ Ֆրանսիայում թէ Գերմանիայում, ջանքեր չէր խնայում պրովոկացիայի ենթարկելու նոյն իսկ կազմակերպուած պրովետարիատին: Բացառութեամբ միայն մի քանի քաղաքների (Բրաունշվայգ, Միւնխէն, Բրեսլաւ, Աուգսբուրգ, Սլաննբուրգ) կազմակերպուած բանուորութիւնից, որի խաւերում որոշ արձագանք է գտնում բուրժուազիայի «հայրենասիրական» կոչը գերմանական միացած քաղաքների կօմիտէները բուռն բողոք են յայտարարում բուրժուա-ֆեօդալական այդ ոճրագործ ձեռնարկի դէմ,

Նապոլէօնի խենթ աւանտիւրայի դէմ: Նոյն կերպ են վերաբերում ֆրանսիական սեկցիայի տեղական ճիւղերը: Միայն Նեօշատելի կոմիտէն մի ցանցառ կոչ է հրատարակում ֆրանսիական բանուորներին հասցէին, որ նրանք ղինուէն յանուն երբեմնի հանրապետական Փրանսիայի սիրոյն և դուրս դան գերմանական բէակցիայի դէմ կռուելու: Փրանսիական բուլժուաղիան իր գահակալ աւանտիւրիստով հանդերձ, ինչ ասել կուզէ, իրանց հիացմունքն են արտայայտում «ինտերնացիօնալիստները» այդ «գովելի հայրենասիրութեան» ուժով: Սակայն ինչ վրէժի արդիւնքն էր այդ կոչը, գիտէ՞ք. ցանցառ, ուսուցիչստ և ֆրազիօր բազմաթիւների քաղաքական ղոնքիշօտութեան արդիւնքն էր այդ քայլը: ⁶⁴⁾ Նրանք, որոնք պարսաւում էին ամենուրեք, իրանց ֆրազէօլոգիայի մէջ, քաղաքական ակցիօնը, ժխտում պետութեան, իշխանութեան գոյութիւնը, յանկարծ գէնքի են կոչում բանուորութեան մասնակցելու բռնակալ պետութիւնների այդ քաղաքական ոճրագործութեան:

Եւրոպական միւս երկրներում ևս, որոնք ոչ մի անմիջական մասնակցութիւն չունէին պատերազմի մէջ, տեղի են ունենում հակայական բանուորական ղեմնաստացիաներ—Բելգիայում, Իսպանիայում և այլ տեղերում,—ուր միջազգային համերաշխութեան բուռն զգացմունքներով միացած պրօլետարիատը իր բողոքն ու զայրոյթն է արտայայտում այդ կործանիչ կռուի հասցէին:

Գերմանական ռայխստագում բանուորութեան ներկայացուցիչներից միայն Բերեշն ու Լիբկնեխտն են ձեռնպահ մնում պատերազմական կրեդիտի նկատմամբ և հակապատերազմական կրակոտ ճառեր արտասանում, մինչդեռ Լեասալեանները՝ Շվայցերը, Հազենկլաերը և նոյն իսկ Այզինալեանների հետ միացած Ֆրիշը տալիս են իրենց համաձայնութեան քուէն, առաջնորդուելով այն մտաւիւններից, որ Նապոլէօնի յաղթութիւնը ոչ միայն կործանիչ նշանակութիւն կ'ունենայ Գերմանիայի համար, այլև խիստ կը ֆլատէ ֆրանսիական բանուորութեան: ⁶⁵⁾ Երկրորդ կրեդիտի ժամանակ սոց. դեմ. բոլոր ներկայացուցիչները հակառակ ձայն են տալիս:

Սակայն ի՞նչ դիրք է բռնում ինքը՝ ինտերնացիօնալի կենտրոնը գէպի այդ արիւնահեղ կատաղութիւնը:

Ի՞նչ տերնացիօնալի կենտրոնը, Լոնդոնում, երկու մանի-

⁶⁴⁾ Այս կէտի վերաբերեալ տես. А. Луначарский, «Очеркъ развѣтія Интернаціонала», стр. 22.

⁶⁵⁾ Տես. «Die Gründung der deutschen Sozialdemokratie, eine Festschrift der Leipziger Arbeiter», стр. 55.

Ֆեհստ է հրատարակում (1870 թ. յուլիսին 23-ին և սեպտեմբերի 9-ին), երկուսն էլ արդենք Մարքսի գրչի:

Ընդհանուր խորհրդի կոչը՝ ուղղուած Ինտերնացիոնալի բոլոր անդամներին (An die Mitglieder der Internationalen Arbeiter-Assoziation in Europa und den Vereinigten Staaten—Միջազգային բանուորական խմբակցութեան անդամներին՝ Եւրոպայում և Միացեալ Նոհանդներում), կազմում է մի ներդաշնակ սինթեզ այն ըմբոստ ու բողոքող արամադրութեան, որ արտայայտել են Ինտերնացիոնալի զանազան սեկցիաները, մասնաւոր Ֆրանսիայում և Գերմանիայում: Առաջին մանիֆեստի մէջ ընդհանուր խորհուրդը Մարքսի բերանով մերկացնում է այդ պատերազմի ամբողջ բնոյթը, Լուի Բոնապարտի 18 տարին շարունակ խաղացած աւանտիւրիստական խայտառակ դերը, նրա ծայրահեղ թշնամութիւնն ու հալածանքը Ինտերնացիոնալի դէմ: Նա յայտարարում է այդ կռիւը որպէս մի ոճ-բազորժական խենթութիւն, որ կարող է վերջանալ դեպքորում կատարեալ յաղթութեամբ Հոնորի երկու կողմերում: Կոչը գերմանացիներին համարում է պատերազմի մէջ պաշտպանողական դիրքի մէջ: Սակայն եթէ գերմանական բանուորութիւնը թոյլ տուաւ, որ ներկայ կռիւը կորցնէ իր դեֆենզիւ (նահանջողական) բնաւորութիւնը և վերածուի մի յարձակողական կռուի ընդդէմ Ֆրանսիական ժողովրդի, այն ժամանակ յաղթութիւն թէ պարտութիւն, միեւնոյն է. աւերիչ հետեանքներ պիտի ունենայ:

Սակայն ինտերնացիոնալի սկզբունքներն ու ձգտումները այնքան են ծաւալուած ու արմատացած ֆրանսիական թէ գերմանական պրոլետարիատի մէջ, որ նա երբեք չի դաւաճանի դրանց: Յուլիսի 12-ին Ինտերնացիոնալի անդամները Փարիզում հրատարակում են «Reveil»-ի մէջ մի սրտառու և խորը գիտակցական մանիֆեստ՝ «Բոլոր ազգերի բանուորներին» վերնագրով:

«Կրկին անգամ—ասում է մանիֆեստը—վտանգ է սպառնում քաղաքական փառամոլութիւնը համաշխարհային խաղաղութեան, պատրուակ ունենալով եւրոպական հաւասարակշռութիւնը և ազգային պատիւը: Ֆրանսիական, գերմանական և սպանիական բանուորներ! միացնենք մեր ձայնը և բուռն ու միահամուռ կոչով արտայայտենք մեր առեւութիւնը ընդդէմ պատերազմի... Գերմանական եղբայրներ! մեր պառակտումը կարող է միայն դեպքորում կատարեալ յաղթանակին նպաստել Հոնորի երկու կողմերում... Բոլոր երկրներին բանուորներ! մենք, միջազգային բանուորական խմբակցութեան անդամներս

ուղարկում ենք ձեզ, որպէս անքակտելի համերաշխութեան գրաւական. ֆրանսիական բանուորութեան լաւագոյն ցանկութիւններն ու ողջոյնները»։ Այդ կոչին մեծ օվաղեաներով պատասխանում է Գերմանիայի բանուորութիւնը, հսկայական միտինգներ կազմելով բոլոր ինդուստրիալաւոր քաղաքներում։... Չպէտք է մոռանանք—տոտւմ է Քեմնիցում 50,000 բանուորների ներկայացուցիչ ժողովը իր կոչի վերջում,—որ բոլոր երկրների բանուորները մեր բարեկամներն են, իսկ բոլոր երկրների բռնակալները՝ մեր թշնամիները»։⁶⁶⁾

Երբորդ կողմից՝ չեզօք երկրի—Անգլիայի—բանուորները իր հղբայրական ձեռքն է մեկնում ֆրանսիական և գերմանական բանուորութեան, արտայայտելով իր խորին համոզմունքը, որ ինչ վախճան էլ ունենայ այդ զարհուրելի, աւերիչ կռիւը, միևնոյն է բոլոր երկրների բանուորների միջազգային սրբազան գաշինքը պէտք է վերջապէս արմատախիլ անէ ազգերի թշնամութիւնը և գրա հետ միասին արեւնահեղ պատերազմները։

Եւ ինտերնացիոնալի ընդհանուր խորհուրդը՝ պրոլետարիատի այդ ըմբոստ տրամադրութեան, պիտակցական ակցիոնի և միջազգային-կղբայրական համաքաղաքական հանդէպ իրաւունք ունի ամենայն հպարտութեամբ յայտարարելու իր մանիֆեստի վերջում հետեւելը. «Մինչդեռ պաշտօնական ֆրանսիան և պաշտօնական Գերմանիան ընկղմուել են կղբայրասպան կռուի մէջ, բանուորները, ընդհակառակը, առաքում են իրար խաղաղութեան ու բարեկամութեան աւետ ու ողջոյն։ Այս միակ մեծ իրողութիւնը՝ առանց իր նմանն ունենալու անցեալում, բայց է անում մեր առաջ պայծառ ապագայի մեծ յոյսեր։ Այդ իրողութիւնը վկայում է, որ հակառակ էին հասարակութեան՝ իր տնտեսական թշուառութեամբ և քաղաքական անմտութեամբ, ծնւում ու ծաղկում է մի նոր հասարակութիւն, որի միջազգային սկզբունքը պէտք է լինի խաղաղութիւնը, որովհետեւ իւրաքանչիւր ազգի մէջ տիրում է նոյն սկզբունքը—աշխատանքը։ Այդ նոր հասարակութեան համար ճանապարհ հարթողը կազմում է միջազգային բանուորական խմբակցութիւնը»։⁶⁷⁾

Սեպտեմբերի 5-ին Բրաունշվայցի կոմիտէն հրատարակում է Մարքսի գրած մի մանիֆեստը ուղղած գերմանական բանուորութեան, որտեղ նա պահանջում է պատուաւոր խա-

⁶⁶⁾ Erste Adresse des Generalraths über den deutsch-französischen Krieg» (տես Der Bürgerkrieg in Frankreich» էր. 16 և 18.

⁶⁷⁾ Ibid, էր. 19.

զաղութիւն Ֆրանսիայի հետ, մեծ հեռատեսութեամբ զարգացնում է այն միտքը, թէ ինչպէս Գերմանիայի նուաճողական քաղաքականութիւնը մի համաւերոպական վտանգ է նշանակում ապագայում. ապա ամենայն ճշտութեամբ նախատեսում է, որ այդ կռուից յետոյ Գերմանիան պիտի արագ յառաջագնէ տնտեսական զարգացման մէջ և բանուորական շարժման կենտրոնը Ֆրանսիայից տիրափոխուելու է Գերմանիա: Այսօր առանց ժաղաչափ վրիպման կատարելապէս իրականացած ենք տեսնում Մարքսի այդ նախատեսումը: Մարքսի այդ մանիֆեստի առթիւ գերմանական տեղական կառավարութիւնը փակում է տպարանը, ձերբակալում բազմաթիւ սոցիալ-դեմոկրատներին և անխնայ ճնշում գործում համերաշխութեան գաղափարով տողորմած բանուորութեան դէմ: Բերլին ու Լիբլինխտը ևս ենթարկւում են երկու տարուայ բանտարկութեան:

Ինտերնացիոնալի ընդհանուր խորհրդի երկրորդ ազգերը (գարձեալ Մարքսի հեղինակութեամբ) հրատարակում է սեպտեմբերի 9-ին, երբ պատերազմը մերկացել էր իր ամբողջ էութեամբ: Մարքսը անխնայ ու հատուածողական ոճով է լուսարանում այն երևոյթը, որ փոխել էր իր սկզբնական բնոյթը: Պաշտպանողական կոխը գերմանացիների կողմից վերածուել էր յարձակողական ու նուաճողական կռուի: Մարքսը քննադատում է Վիլհելմ կայսեր քայքայող ռալիստազին ուղղած ճառը, ֆրանսիական ժողովրդին ուղղած մանիֆեստը, որ իբր Գերմանիան հարկադրուած է զէնքի դիմում և միայն Նապոլէոնի դէմ կռուելու դիտաւորութեամբ: Բայց յանկարծ նոյն կայսրի հրամանով հեղեղում է գերմ. զօրքը Ֆրանսիան, ուժաւորում Շտրասբուրգը և պաշարում Փարիզը: Ընդհանուր խորհուրդը ողջունում է Փարիզում յայտարարուած հանրապետութիւնը, բայց միևնոյն ժամանակ բացատրում Մարքսի բերանով, որ այդ հանրապետութիւնը ոչ թէ ամբողջովին խորտակել է դահը, այլ գրաւել է նրա զատարկ տեղը. և դա ոչ թէ մի մեծ սոցիալական նուաճում է, այլ ազգային ինքնապաշտպանութեան մի միջոց: Ժամանակաւոր հանրապետ. կառավարութեան պատասխանատու ֆունկցիաները գրաւել էին օրլէանիստները: Այդ մանիֆեստից մենք իմանում ենք, որ ոչ միայն Ինտերնացիոնալի կենտրոնը, այլև գերմանական սեկցիան բոլոր ենք արտայայտել էլզաս-Լոթարինգիայի գրաւման առթիւ, որպէս մի բռնակալական քայլ Գերմանիայի կողմից—պաշտօնական Գերմանիայի կողմից:

«Թող միջազգային բանուորական-խմբակցութեան բոլոր երկրների սեկցիաները—վերջանում է մանիֆեստը այս կոչով—բանուոր գասակարգին գործնական շարժման մէջ պահեն: Նոյեմբեր, 1906.

Եթէ բանուորները մոռանան իրենց պարտականութիւնը, մնան պատսիւ վիճակի մէջ, այն ժամանակ ներկայ աւերիչ ու զարհուրելի կոճիւր կը դառնայ սկիզբը միջազգային դեռ աւելի զարհուրելի կոխների, և պատճառ կը դառնայ բոլոր ներկրներում բանուորների նորանոր անկման ու պարտութեան՝ սրի ու թըրի, հողի ու կապիտալի տէրերի միջոցով: 68)

Այս է Ինտերնացիօնալի և նրա զանազան ճիւղերի դիրքը դէպի այն խոշոր քաղաքական երևոյթը, որսլիսին էր Ֆրանս-գերմանական պատերազմը: Այդ դէպքը միջազգային կազմակերպուած պրօլետարիատի պատմական կեանքում առաջին պրօբն էր, որով նա ամենայն պատուով ու տակտով իր միջազգայնութեան և եղբայրական համերաշխութեան փառաւոր գրաւականն արտայայտեց:

20

Փարիզի կոմունան:—Մարքսի աշխատութիւնը կոմունայի մասին:—Համաշխարհային պատմական երևոյթի պրօլետարական բնոյթը:—Բուրժուական Վերսայլը և յեղափոխական-պրօլետարական Փարիզը:—Կոմունայի raison d'être:—Ինչպէս է բնորոշում Մարքսը կոմունայի էութիւնը:—Կոմունայի կազմը:—Նրա արած փոփոխութիւններն ու մտցրած բեֆորմները:—Ինտերնացիօնալի մասնակցութիւնը կոմունայի մէջ:—Կոմունայի պարտութիւնը Վերսայլի կառավարութիւնից:—Կոմունայի անկման խոր պատճառները:—Կոմունայի նշանակութիւնը պրօլետարիատի դասակ. կոտի համար:—Ֆրանսիայի հալածանքը, համաեւրոպական բէակցեան ինտերնացիօնալի դէմ:

Ֆրանս-գերմանական կռուի հետ օրգանապէս շաղկապուած երկրորդ խոշոր երևոյթը կազմում էր 1871 թ. Փարիզի կոմունան: Եւ Ինտերնացիօնալը դրանով աւելի էր շահագրգռուած, քան առաջին երևոյթով, որովհետեւ կոմունան, որպէս մի պատմա-քաղաքական փաստ, անմիջապէս կրում էր այն տարրի դասակարգային բնոյթը, որի պատմական զոյու-թեան վրայ խարսխուած էր պրօլետարիատի միջազգային կազմակերպութիւնը:

1871 թ. մայիսի 28-ին Փարիզի կոմունան վերջնականապէս պարտուելուց երկու օր յետոյ, մայիսի 30-ին, Կարլ Մարքսը Լոնդոնում ընդհանուր խորհրդին ներկայացնում է իր աշխատութիւնը՝ «Der Bürgerkrieg in Frankreich» («Քաղաքային կռիւր Ֆրանսիայում») վերնագրով, որը ընդհանուր խորհուրդը հրատարակում է իրրեւ Ինտերնացիօնալի պաշտօնական աղբիւր կոմուն-

68) «Zweite Adresse des Generalraths über den deutsch-französischen Krieg (Ibid.), էր. 26). —

նայի վերաբերեալ: Ինչպէս տեսնում ենք այս փաստից ևս, Մարքսը համարում էր Ինտերնացիոնալի մտաւոր գլուխը, նրա բոլոր տեսական-սկզբունքային արտայայտութիւնների և տակտիկական որոշումների ղեկավարն ու տոն տուողը: Եւ եթէ մենք բաւական երկար ծանրացանք Ինտերնացիոնալի վրայ, այդ քաջառապէս այն պատճառով, որովհետեւ դրանով մենք աշխատում էինք լոյս սփռել Մարքսի սոցիալ-քաղաքական գործունէութեան վրայ, չէ որ վերջինս կազմում է մեր իսկական թեման յօդուածներին I սերիայի մէջ:

Մարքսի վերոյիշեալ գրքոյից մի նմանօրինակ փառահեղ դոկումենտ է նրա պատմական հետազօտութիւններից, ինչպէս նրա «Դասակարգային կռիւները Ֆրանսիայում», «Լուի Բոնապարտի 18 բրիւմերը», ապա «Յեղափոխութիւնը և հակայեղափոխութիւնը Գերմանիայում» գրքոյկներն են, որոնց մասին մենք խօսել ենք իրանց տեղին ու ժամանակին:

Իր «Քաղաքացիական կռիւը Ֆրանսիայում» վերնագրով աշխատութեան մէջ Մարքսը համառօտ, ուժեղ գծերով և սուր ռճով նկարագրում և լուսարանում է մեծ վարպետութեամբ այն փոթորկալից կարճատե շրջանը, որ կրում է իր վրայ Փարիզի կոմունա անունը՝ Ֆրանսիայի 70-ական թուականների պատմութեան մէջ: Փարիզի կոմունա—դա համաշխարհային—պատմական մի արտասովոր երևոյթ էր համաշխարհային հւշակ ստացած մայրաքաղաքում. դա քաղաքական կռուի ամենաբարձր աստիճանի, պոտենցիալ արտայայտութիւնն էր, որ երազական աղբիւրի կուլտուրական դարաւոր զարգացումն էր հասունացրել և արտաբերել:

Շնորհիւ Ֆրանսիայի անտեսական և քաղաքական զարգացման, սկսած 1789 թուականից, Փարիզը հասել էր այն աստիճանին, որ այնտեղ չէր կարող մի յեղափոխութիւն բռնկուել առանց շատ թէ քիչ պրօլետարական բնաւորութիւն ունենալու: Բուրժուական ամեն մի յեղափոխական յաջող ակտի ժամանակ՝ ձեռք բերուած պրոլետարիատի արեան գնով, միշտ Փարիզի բանուորութիւնը ձեակերպել է իր յատուկ դասակարգային պահանջները և իրականացման առաջադրել նւրանց: Նայած Փարիզի բանուորների զարգացման աստիճանին և քաղաքական հասունութեան, նրանց պահանջները ու շարժումը կրել են ամեն անգամ արմատական կամ չափաւոր, գիտակցական կամ տարերային բնաւորութիւն:

1871 թուականի Փարիզի կոմունան՝ իր հեղեղային արտացոլումներով, անմիջական արդիւնք էր Փարիզի բանուորու-

Թեան դասակարգային խոր զիտակցութեան, քաղաքական անվեհմբունքեան յեղափոխական-ազգայնական խիզախութեան:

1870 թ. սեպտեմբերի 4-ին յայտարարուում է հանրապետութիւն, աւանտիւրիստ Բոնապարտի կայսրութիւնը մի հաւելումով գերեզման է իջնում: Այդ օրից սկսած հիւսւում է դասակարգային յարաբերութիւնների վտանգաւոր հանգեցը՝ հանրապետական կառավարութեան գլուխն անցած խոշոր բուրժուական-կալուածատիրական ներկայացուցիչների և Փարիզի զինուած պրօլետարիատի միջև: Մինչև յաջորդ տարուայ յունուարի 28-ը, երբ պաշարուած ու քաղցած Փարիզը յամառ դիմադրութիւնից յետոյ անձնատուր է լինում գերմանական զօրքին, քաղաքացիական խոշոր ընդհարումներ տեղի չեն ունենում: Այդ օրուանից յետոյ յեղափոխական պրօլետարիատը տնդային եռանդով մօրիլիզացիայի մէջ է դնում իր բոլոր մարտական ոյժերը և կազմակերպում «Ազգային Պահակախումբ» («Nationalgarde») անունով յայտնի զօրագունը, բազկացած զրեթէ ամբողջապէս բանուորներից: Բուրժուական կառավարութիւնը՝ գլուխ ունենալով Թիյոնի նման դաւաճան, խաբեբայ և փառամոլ մի մարդ, վտանգուած էր գտնում իր տիրապետութիւնը, բանի շարունակէր յեղափոխական պրօլետարիատը իր զինուած և ինքնամփոփուած զիրքը: Մարտի 18-ին Թիյոնը հրամայում է բոնապարտիստական զօրաւնդին գրաւել Ազգային Պահակախմբի թնդանօթներն ու հրացանները: Փորձը անաջող է անցնում: Դա ընդհարման սիգնալն էր արդէն: Ազգային պահակախումբը, զինավարժ, ոգևորուած բանուորութիւնը տիրանում է ամբողջ Փարիզին: Բուրժուական կառավարութիւնը, տիրապետող դասակարգը, բոլոր լեզիտիմիստները, օրլէանիստներն ու բոնապարտիստները, ապա կղերը փախուստ են տալիս և սպաստան որոնում Վերսայլում: Ծայրահեղ բեռներ, թշնամական բանակներ են դառնում երբեմնի արքայական Վերսայնն ու յեղափոխական-պրօլետարական Փարիզը: Մարտի 26-ին ընտրւում է Փարիզի կոմունան և 28-ին պաշտօնապէս յայտարարուում նրա գոյութիւնը:

«Փարիզի պրօլետարները»—ասում է բանուորական ներկայացուցիչներից ընտրուած կենտրոնական կոմիտէն իր մարտի 18-ին արձակած մանիֆեստի մէջ—«տիրապետող դասակարգերի պարտութեան ու դաւաճանութեան ներկայ մօմենտին ըմբռնել են, որ հասել է արդէն ժամը ազատելու և տիրելու այն դրութեան, որով նրանք կարողանան իրենց ձեռքն առնել բոլոր հասարակական գործերի ղեկավարութիւնը... Ներսնք հասկացել են, որ նրանց ամենաբարձր պարտականու-

թիւնն ու բացարձակ իրաւունքն է՝ իրանց տէր դարձնել իրենց սեփական վիճակի, ճակատագրի և իրենց ձեռքը դրաւել կառավարութեան ոյժը, ղեկը»:⁶⁹⁾

Ահա Փարիզի կոմունայի *raison d'être*, իրենց՝ կոմունիստներին, խոստովանութեամբ:

Կարլ Մարքսը բնորոշում է կոմունայի էութիւնը այսպէս. «Կայսրութեան ուղղակի հակառակ ձեւը կաղմում է կոմունան: «Սօցիալական հանրապետութեան» հասցէին ուղղուած այն կոչը, որով Փարիզի պրոլետարիատը առաջ վարեց փետրուարեան յեղափոխութիւնը, այդ կոչով նա արտայայտում էր միայն մի անորոշ (նոտրգիրը մերն է) պահանջ դէպի մի այնպիսի հասարակապետութիւն, որ պիտի վերացնէր ոչ միայն դասակարգային տիրապետութեան միապետական ձեւը, այլև հէնց ինքը դասակարգային տիրապետութիւնը: Կոմունան կաղմում էր այդ հասարակապետութեան որոշ (նոտրգիրը մերն է) ձեւը»:⁷⁰⁾ «Շահերի այն բազմակողմանիութիւնը—ասում է Մարքսը մի այլ տեղ—որոնք արտայայտում էին կոմունայի մէջ, վկայում են, որ նա բոլորովին դիմացկուն քաղաքական ձև էր, մինչդեռ նախկին կառավարութեան բոլոր ձևերը էապէս ճշող բնաւորութիւն են ունեցել: Կոմունայի ճշմարիտ զաղտնիքը հետեւեալն էր նա էապէս բանուոր դասակարգի կառավարութիւնն էր, կռուի արդիւնքը՝ արդիւնաբերող դասակարգի, ընդդէմ իւրացնող դասակարգի, դա այն վերջին քաղաքական ձևն էր, որի միջոցով պիտի ի կատար ածուի աշխատանքի տնտեսական ազատագրութիւնը (նոտրգիրը մերն է): Առանց այս վերջին պայմանի կոմունալ կազմակերպութիւնը մի ինքնախաբէութիւն ու անկարելիութիւն է: Արդիւնաբերողների քաղաքական տիրապետութիւնը չի կարող իր գոյութիւնը պահանջել՝ իր հասարակական ստրկութեան յախանականացման հետ միասին: Այդ պատճառով պէտք է կոմունան ծառայէր իբրև մի լուծ խորտակելու համար այն տնտեսական հիմքերը, որոնց վրայ կրթնում էր դասակարգերի և դրանով հանդերձ դասակարգային տիրապետութեան գոյութիւնը: Եթէ մի անգամ ընդմիջտ ազատագրւում է աշխատանքը, այն ժամանակ իւրաքանչիւր մարդ դառնում է մի աշխատաւոր, և արտադրողական (*produktiv*) աշխատանքը դադարում է դասակարգային յատկութիւնը լինելուց»:⁷¹⁾

⁶⁹⁾ K. Marx, «Der Bürgerkrieg in Frankreich», էր. 43.

⁷⁰⁾ K. Marx, *Ibid*, էր. 45.

⁷¹⁾ *Ibid* էր. 49.

Այսպէս է բնորոշում Մարքսը Փարիզի կոմունայի էութիւնը, նրա գոյութեան իմաստը: Մարքսը վերագրում էր նրան հասարակական կեանքի արժատական յեղաշրջման այն դերը, ինչպիսին պէտք է ունենայ ազագայ սոցիալիստական հասարակական կազմը: Կոմունան իր երկու ամսուայ գոյութեան ընթացքում փաստապէս իրականացրել էր այն ծրագրային միջնիմուծի հիմնական մասը, որ այսօր պաշտպանում են պարլամենտական հողի վրայ բոլոր երկրների սոցիալիստական կուսակցութիւնները և որի իրականացումը ղեռ երկար տարիներէ յամառ աշխատանք, դասակարգային կռիւ է պահանջում:

Փարիզի կոմունայի կազմը կառուցուած էր բոլորովին ղեմակրատական հիմքերի վրայ: Սրա անդամները ընտրուած էին ընդհանուր ձայնտուութեամբ Փարիզի զանազան շրջաններէց, նրանք պատասխանատու էին և ամեն ժամանակ փոփոխելի. անդամների մեծագոյն մասը բանուորներ էին և բանուորական ներկայացուցիչներ, օտարները նոյնիսկ բնտրելու և ընտրուելու իրաւունք ունէին, որովհետեւ կոմունան կրում է մի «համաշխարհային հասարակապետութեան դրօշակ»: Կոմունան մի ընդհանուր, հաւաքական և բարձրագոյն մարմին էր, որ միաժամանակ օրէնսդիր և գործադիր փունկցիաներ էր պարունակում իր մէջ: Կոմունան քաղաքական ոյժը գրաւելուց յետոյ անխնայ վերջ է տալիս հին հասարակական ինստիտուցիաներին: Նա վերջացնում է ժշտական զօրքը և յայտարարում ժողովրդական միլիցիա, նա ոչնչացնում է հին բռնապարտիստական-բիւրօկրատական ոստիկանութիւնը, պետական պաշտօնավարութիւնը, դատարանական կազմը և բոլոր տեղերը նորից լրացնում ընդհանուր ընտրողական սկզբունքով. նա բաժանում է եկեղեցին պետութիւնից, զաւրցնելով բոլորովին վերացնում կրօնը և յայտարարում այն մասնաւոր խղճի գործ, ապա եկեղեցու հսկայական ունեցուածք վերածում ազգային սեփականութեան: Կոմունան հրապարակական հանդիսաւորութեամբ այրել է տալիս զիւլտինան—գլխահատութեան այն հրէշային գործիքը, որ հին կառավարութիւնը այնքան յաճախ գործ էր ածում: Նա խորտակել է տալիս այն վիթխարի յախթական սիւնը՝ որպէս շովինիզմի և ժողովրդների թշնամական ինստիւտները գլորգող մի սիմվոլ, որ կառուցել է Նապոլէօն I-ը 1809 թ՝ պատերազմի ժամանակ նուաճուած թուրանօթներէից: Նոյնպիսի փոփոխութիւններ և արմատական ըէֆօրմներ ժլացնում է կոմունան տնտեսական հողի վրայ՝ արդիւնաբերութեան զանազան ճիւղերում:

Ինտերնացիօնալի վերաբերմունքը դէպի Փարիզի կոմուն-

նան միանգամայն պարզ է: Նա ոչ միայն իր ուղղած ազդեցիկ մեջ ողջունում և իր խորին հիացմունքն էր արտայայտում Փարիզի բանուորությունն այդ հերոսական յաղթությունն համար, այլև ակտիւ աջակցում էր կոմունայի գործունէութեան: Հէնց իրա կոմունայի անդամների պատկանելի տոկոսը ինտերնացիօնալիստներ էին: Ֆրանսիական սեկցիայից հիմնուել էր Փարիզում մի կոմիտէ, որ իբրև օժանդակ մարմին աջակցում էր կոմունայի բոլոր ձեռնարկներին: Ինտերնացիօնալի մայիսի 20-ին կոյտցած արտաքոյ կարգի նիստը մշակել է հետևեալ ընդօրինչման կոմունայի մասին. «Ինտերնացիօնալի քաղաքացիները—որ միաժամանակ կոմունայի անդամներն են—տուած բացատրությունը ճանաչելով կատարեալ օրինականութեան այն հիմքերից բխած, որոնք որոշել են նրանց գործնէութեան եղանակը, խնդրում ենք կոմունայի անդամներին, միշտ պաշտպանելով բանուորությունն շահերը, գործքենն բոլոր հնարաւոր միջոցները, որպէս զի Վերսայլի կառավարութեան դէմ ուղղուած կռուի մէջ կարևոր միութիւն պահպանուի կոմունայի շարքերում...» (72):

Այս տողերից երևում է, թէ ինչ մասնակցութիւն է ունեցել Ինտերնացիօնալը կոմունայի գործունէութեան մէջ: Կենտրոնը իր խորհուրդներով, ինստրուկցիաներով, իսկ Ֆրանսիական սեկցիան իր կենդանի, ակտիւ մասնակցութեամբ զարկ էին տալիս կոմունայի ձեռնարկների յաջողութեան:

Սակայն կոմունայի գոյութեան օրերը հաշուած էին. նա ընդամենը երկու ամսուայ կեանք ունեցաւ, մայիսի 28-ին ընկան զինուած պրոլետարիատի վերջին անվեհեր հերոսները: Այլապէս չէր կարող լինել: Թէև Վերսայլի կառավարութիւնը՝ իր «Ազգային ժողովով», ոչ մի կողմնակցութիւն չունէր Փարիզի թէ միւս ֆրանսիական քաղաքների միջին դասակարգի մէջ, թէև նա կորցրել էր իր հեղինակութիւնը պիւղաջիւղեան մէջ և Թիլլոի ձեռնարկած խորամանկ միջոցները՝ կողմնակցութիւն վաստակելու համար, միշտ ապարդիւն էին անցնում, այնուամենայնիւ Վերսայլում ամբացած բուրժուազիան յաղթեց, որովհետև նրա կառավարութիւնը գերաքանակ սուբինաւորների գլխուղեր էր կուտակել իր տրամադրութեան տակ: Բիսմարկը Փարիզի ըմբոստ պրոլետարիատին յնկճելու համար զիջել էր Թիլլոի կառավարութեան թախանձանքներին և բռնապարտիան գիրի վերցրած զնդերին յետ ուղարկել Ֆրանսիա: Ի՞նչ կարող էր անել 96,000 կոռուզիներից բաղկացած կոմունայի Ազգային

72) Gustav Jaech, «Die Internationale» եր. 127:

Պահակախումբը Վերսալի 142000 զինավարժ, կազմ ու պատ-
րաստ զորքի հանդէպ: Կարլ Մարքսը հիասքանչ տողերով և
խորին վարպետութեամբ է ներկայացնում կոմունայի վերջին
օրհասական ռոպէները, մարտնչող պրոլետարիատի հերոսական
ճիգերը և սպա նկարագրում այն անուր լարարոտութիւն-
ները, որ Թիլլի կառավարութիւնն էր կատարել Փարիզում,
անխտիր սրի անցնելով նոյն իսկ կանանց ու մանուկներին:

Սակայն ընդհանրապէս կոմունայի անկման պատճառները
շատ աւելի խորն են: «Բուրժուազիան կորցրել էր ազգը տի-
րապետելու ընդունակութիւնը, իսկ բանուոր դասակարգը դեռ
չէր տիրացել այդ ընդունակութեան:»⁷³⁾ Մարքսի այս փոր-
ժիկ նախադասութիւնը բացատրում է մի ամբողջ պատմական
պրոցեսի ներքին գաղտնիքը: Թէև բուրժուական կառավարու-
թիւնը իր տանը տէրը չէր այլևս, մերկացրել էր իր ամբողջ
անանկութիւնը, կորցրել իր հմայքը ազդարնակութեան լայն
խաւերի մէջ, բայց և այնպէս պրոլետարիատը ևս դեռ չէր
իւրացրել ամբողջութեան տիրապետելու և իր դասակարգային
սկզբունքները իրականացնելու ընդունակութիւնը: Ֆրիդրիխ
էնգելսը աւելի խորն է ծանրանում՝ խնդրի այդ կողմի վրայ
կոմունայի քսանամեայ տարեդարձի (1891 թ.) առթիւ գրած
իր յառաջարանի մէջ, Մարքսի գրքոյի երրորդ հրատարա-
կութեան համար: Չէր կարող կոմունան պահպանել իր գոյու-
թիւնը՝ իր սոցիալիստական-կոմունիստական տենդենցիաներով,
որովհետեւ, տնտեսական ֆակտորների զարգացումը, հասարա-
կական բէալ յարաբերութիւնների հասունացումը դեռ չէին
բոլորել այն կատարելագործուած շրջանը, որպէսզի հնարաւոր
լինէր հասարակական ստորակտուրայի այդ աստիճան արմա-
տական յեղաշրջումը: Միւս կողմից կոմունայի բաղկացուցիչ
տարրերը, ինչպէս էնգելսն է ցոյց տալիս, հարազատ և խո-
րը գիտակից սոցիալիստներ չէին: Կոմունայի փոքրամասնու-
թիւնը պրոլետարիատներ էին՝ Խնտիւնացիօնալի անդամներ,
որոնց մանր-բուրժուական պրոլոնիզմը անհամակերպելի մի ուսմունք
էր գուտ պրոլետարական-դիտական սոցիալիզմի հետ: Մեծամասնու-
թիւնը բլանքսիստներ էին, որոնք սոցիալիստներ էին սոսկ
յեղափոխական-պրոլետարական ինստիտուտներից մղուած: Ու-
րեմն նոյն իսկ եթէ տնտեսական հասարակական պայմանները
ներէին, կոմունայի անդամները նրանք չէին, որ կոչուած լի-
նէին իրականացնելու հարազատ սոցիալիստական հասարա-
կական կարգերը:

⁷³⁾ K. Marx, «Der Bürgerkrieg in Frankreich» էր. 45.

Այդպիսի սոսկալի վախճան ունեցաւ երկամսեայ կոմունան, թողնելով մի համաշխարհային-պատմական խոշոր զիծ 19-րդ դարու քաղաքական հարուստ դէպքերի պատմագրութեան մէջ: Փարիզի կոմունան իր նշանակութեամբ կազմեց մի փայլուն ու պատկառելի հատուածը նորագոյն բանուորական շարժման պատմութեան մէջ: Եւ դեռ ապրիլի 17-ին 1871 թ. էր որ Կարլ Մարքսը իր ընկեր Քուզելմանին ուղղած մի նամակում ամենայն իրաւամբ շեշտում է ի միջի այլոց հետեւեալը. «բանուոր դասակարգի կռիւն՝ կապիտալիստ դասակարգի և նրա պետութեան դէմ, մտաւ մի նոր ֆազիսի մէջ Փարիզի պրոլետարիատի կռուի միջոցով: Ինչպիսի ընթացք էլ ունենան իրերը, միևնոյն է, մի նոր ելակէտ է ձեռք բերուել իր համաշխարհային պատմական նշանակութեամբ»: 74)

Մինչև Փարիզի կոմունան, Մարքսը համաեւրոպական յեղափոխական ծանրակշիռ կէտը, առանցքը որոնել է Լոնդոնում: Նոյն իսկ Մարքսը սպասել է, որ Լոնդոնում ցամաքում հուրհրատող յեղափոխութիւնը իր շանթահար արձագանքը պիտի հաղորդէ Անգլիային, առաջ բերէ սոյնտեղ այնպիսի փոփոխութիւններ, որոնց անդրադառնումները համաշխարհային ներգործութիւն պիտի ունենան բոլոր երկրներում: Սակայն Անգլիայի բանուոր դասակարգի և նրա պարագլուխների բռնած դիրքը կոմունայի հանդէպ, համոզում են Մարքսին, որ նա շատ աւելի էր դնահատել Անգլիայի անտեսական հասունութեան գաղափարական (իդէէլ) արտացոլումները, քան հարկաւոր էր:

Կոմունայի անկումից յետոյ ծանր կրիզիսի մի շրջան է բացուում Ինտերնացիոնալի համար: Փրանսիական կառավարութիւնը մասսայական կոտորածներով պսակած իր խայտառակ յեղափոխութիւնից յետոյ, զարկ է տալիս հալածանքի, բանտարկութեան և բացառիկ օրէնքների մի անգութ քաղաքականութեան ընդդէմ Ինտերնացիոնալի վերջին մնացորդների Ֆրանսիայում: Նա շրջաբերականներ է ուղարկում իր բոլոր ղեսպաններին՝ Եւրոպայում և Ամերիկայում, ուր ամենախայտառակ և ստալոգ նկարագրութեամբ աշխատում էր Ինտերնացիոնալին վարկարկել անել օտար պետութիւնների առաջ, հաղորդելով նրանց Ինտերնացիոնալի ծրագրի փոխարէն, անարխիստ-բակունիստների «Alliance»-ի («Դաշնակցութիւն»)

ծրագիրը, որ ոչ՝ մի աւրնչութիւն չունի Մարքսի մտքի արդիւնք ծրագրի հետ: Ինտերնացիոնալի ընդհանուր խորհուրդը

74) «Neue Zeit» XX տարի, 1 հատ, եր, 710

հարկադրուած է զգուծ անգլիական և արտասահմանեան մեծ թերթերում մերկացնելու Ֆրանսիական կառավարութեան այդ անամօթ ստախօսութիւնը:

Սարսափելի ընկերանաջիօնալի անդամների և սեկցիաների դէմ, համաեւրոպական բնաւորութիւն է ստանում: Բոլոր երկրներումն էլ, թեթեւ բացառութեամբ Անգլիայի և Շվեյցարիայի, անխնայ հալածանք է սկսւում ինտերնացիոնալի դէմ: Ֆրանսիական կառավարութիւնը այն աստիճան էր կատաղել, որ պահանջում էր օտար պետութիւններից իրան յանձնելու արտասահման ապաստանած Ֆրանսիայի ինտերնացիոնալիստներին: Բոլոր երկրների «յանցաւոր» պարագլուխները ամփոփուել էին երկու նշանաւոր կենտրոններ՝ Լոնդոն և Փրնս: Բանտւորական միջազգային խմբակցութիւնը դարձել էր միջազգային բուրժուազիայի համար մի միջազգային «ճիւղ» ու «հրէշ», որ սպառնում էր «մօտիկ ապագայում» վերայնել կապիտալի և աշխատանքի յաւիտենական անտադոնիզմի «երանելի» վիճակը: Այդպէս, կոմունայից յետոյ ինտերնացիոնալը ևս դիմաւորում էր իր պատմական վախճանին: Ո՛րն էր նրա գոյութեան վերջին ակտը և նրա հետաքրքրական վախճանը, — կը տեսնենք այդ հետեւեալ անգամ:

Բ. Իշխանեան

(Կը շարունակուի)

ՎԱՍՏԱԿԵԱԼՆԵՐԻՆ

Վառ արշալոյսի բոյրեր ու երանգ,
Ու նոր տենչերի չքնաղ հորիզոն...
Որ աւետում են լոյսեր վերահաս—
Լոյսեր յաղթական ու կեանք երազուն...

...Ու զմէք, խարխլած, մոլթ նկուղներում,
Բեկուած շունչերով ողբացող մայրեր.
Որ սառ դիակներ ձեր սառ գրկերում,
Արտասուում էիք ամբողջ այս գիշեր...

Ու զմէք, որ օրուայ մեծ հոգսերի տակ
Ընկճուած, անզօր երազում էիք
Խաղաղ գիշերին մոռնալ ցաւ ու հոգ,
Բայց որ խաւարում էլ աւել լացիք...

Եւ զմէք, խաւարի ուժերից պարտուած,
Ու հալածական հոգիներ չքնաղ,
Որ մոլթ բանդերում անզօր, շղթայուած,
Այս գիշերն ամբողջ տքնեցիք խաղաղ...

Եւ զմէք, ծովերում՝ գոռ, մրրկապատ,
Նաւարեկեալներ, որ մրրիկներին
Պարզած անվեհեր ձեր ըմբոստ ճակատ՝
Տարւում էիք դէս անյայտը խորին...

Եւ զմէք, որ ուժեղ, անխախտ հաւատով
Թախծոտ աչքերնիդ սկեռած դէս վեր,
Այսքան գիշերներ անհուն կարօտով
Երազում էիք վառ արշալոյսներ...

Համր ու ամայի դաշտերում ընկած.
Եւ զմէք, վիրաւոր հերոսներդ արի,

Որ հետևեմ էիք մենակ ու լքումս,
 Խաւարներէ մէջ արնոտ գիշերի...

Որ փնտռում էիք, ցաւոտ ու տրտում,
 Ձեր հառաչներով խոնկ, անարձագանք,
 Մի լոյս... գէթ մի անտղ մուսլ երկնքում,
 Բայց որին, աւանդ, երբեք չգտաք...

Ելէք դուք, բոլոր հոգիներդ մունջ,
 Ու բոլոր, բոլոր դուք արիւնաքամ
 Տառապածներդ միշտ համր, անմոռնչ,
 Ելէք, նոր կեանքով հպարտ այս անգամ...

Հպարտ... Թող կորչին ձեզնից խաւարի
 Ու անյուսութեան սարսափներն անհուն,
 Ելէք, նոր օրուայ աւետիք ձեզի,
 Արշալոյսներից ձեզ ողջոյն, ողջոյն...

Վառ արշալոյսի բոյլեր ու երազ,
 Ու նոր տենչերի չքնաղ հօրիզոն...
 Որ աւետում են լոյսեր վերահաս —
 Լոյսեր յաղթական ու կեանք երազուն...

Հր. Ծախան

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒ

Միջազգային լեզուի խնդիրը այնպիսիներէն է որոնցմով ամեն ժամանակի մտածողները զբաղիլ անարժան դատած չեն. մինչև այսօր սակայն խնդիրը գոհացուցիչ լուծումի մը տակաւին յանգած չէ:

Քննելէ առաջ թէ այս լուծումը ինչ կրնայ ըլլալ կարելիութեան սահմանին մէջ, ջանանք նախ լուսաբանել թէ միջազգային լեզուի հարցը ինչպէս պէտք է հասկնանք:

Ոմանց համար խնդիրը, ինչպէս անոր լուծումը, տարօրինակէս պարզ է: Մարդկային ընկերութեան զանազան դասակարգները, կըսեն, իրար հասկնալու ու իրարու հետ հաղորդակցելու անօրինակ դժուարութեանց մէջ կը գտնուին իրարու խօսած լեզուները չի հասկանալուն պատճառաւ: Ջնջենք ուրեմն խոշոր լեզուներ ու անոնց տեղը խօսել ու գրել տանք ընդհանուր մարդկութեան բոլոր դասակարգներուն ալ մի և ընդհանուր լեզու մը: Այդպէսով նոյն լեզուն պիտի գործածուի բոլոր ազգերու կողմէ ալ ու միջազգային լեզուի հարցը լուծուած պիտի ըլլայ:

Կարելի է ըսել թէ այս նկատողութիւնները տեսականին մէջ շատ ճիշտ ու զուտ տրամաբանական են, քանի որ լեզումը հաղորդակցութեան, գաղափարներու արտայայտութեան միջոց մը, գործիք մըն է, ու բնաւ անպատեհութիւն մը չիկայ որ բոլոր ազգերն ալ արտայայտութեան ու հաղորդակցութեան հասարակաց միջոց մը գործածեն:

Միայն թէ որպէսզի գործնական հողի վրայ դնենք միջազգային լեզուի այս լուծումը, հարկ կըլլայ նախապէս սահարցումներուն պատասխանել.

1) Կարելի՞ է լեզու մը շինել:

2) Կարելի՞ է մանաւանդ ժողովուրդներուն մէկդի նետել տալ իրենց գործածած լեզուները ու անոնց փոխարէն ընդունել տալ նոր լեզու մը:

Իւրաքանչիւր լեզու կնճռոտ ամբողջութիւն մըն է, որուն

ամբողջացուցիչ մասերուն ամէն մէկուն ժողովուրդ մը դարեւրու ընթացքին մէջ ծնունդ կու տայ, հետզհետէ որ պարագաներու ու միջավայրի ազդեցութեամբ նոր պահանջներ զինքը կը դրեն այդ պէտքին գոհացում տալու:

Լեզու մը ուրեմն որոշ ժամանակի մը գործ չէ, ոչալ կայուն բան մը. հապա միշտ նոր փոփոխութեանց ենթակայ է սուրբեայ պահանջներուն համեմատ զոր կարելի չէ առաջուընէ նախատեսել:

Այս պատճառաւ ահա բացարձակ անկարելիութիւն կայ նոր լեզու մը շինելու մէջ. վասնզի ոչ միայն այդ պարագային հարկ կըլլար որ այդ նոր լեզուին հեղինակները ներկային մէջ ժողովուրդի մը բոլոր պահանջները զոհացնող բառեր ու ձեւեր ստեղծէին, հապա պարտաւոր պէտք էր որ ըլլային ապագային մէջ, առաջ գալիք նոր պահանջներն ալ նախատեսելու ու անոնց համար ալ բառեր ու առութիւններ առաջուընէ պատրաստելու:

Կարելի չէ արդէն որ միակ լեզու մը բոլոր ժողովուրդներու կողմէ խօսուի միօրինապէս: Ենթադրենք սակայն պահ մը, խնդրին բովանդակ անկարելիութիւնը բացատրելու համար, որ այսօր յանկարծ երկրազնդիւս վրայ խօսուած բոլոր լեզուներուն տեղը միակ ընդհանուր լեզու մը հաւասարապէս բոլոր երկրներու մէջ խօսուէր. ենթադրենք նոյնպէս որ այդ միակ ընդհանուր լեզուն կատարելութեան բոլոր պայմանները լրացրնէր ու բաւարարութիւն տար բոլոր ժողովուրդներու բազմապիսի պահանջներուն ու ձգտումներուն:

Ի՞նչ պիտի պատահէր այս պարագային:

Անորոշ ժամանակի մը համար գուցէ ամեն երկիրներու ժողովուրդներն ալ միօրինապէս այս լեզուն խօսէին ու անով առանց դժուարութեան իրարու հետ հաղորդակցէին. բայց այս միօրինակութիւնը հարկաւորապէս վաղանցուկ շրջանի իրողութիւն մը պիտի ըլլայ, ու հետզհետէ, տարիներու ընթացքին մէջ. միջավայրի ու կլիմայի համեմատ, այս հասարակաց լեզուն խօսող ժողովուրդներուն իւրաքանչիւրը իրեն համար նոր պահանջներ պիտի զգայ, որոնց համարժէք արտայայտութիւնը պիտի չի գտնայ տիեզերական լեզուի բառացանկին մէջ. այն ատեն պիտի պարտաւորուի իր այդ պահանջներուն բաւարարութիւն առնող նոր բառեր ու առութիւններ զտնել կամ ստեղծել, որոնք իրեն միայն հասկանալի պիտի ըլլան. այնպէս որ, որոշ ժամանակէ մը յետոյ պիտի դայ օր մը ուր բոլոր այս նոր բառերն ու առութիւնները այնքան պիտի բազմանան, որ նախկին հասարակաց լեզուն անոնց մէջ անճանա-

Հելի պիտի ըլլայ, ու այս լեզուն ուրիշ ժողովուրդներու անհասկանալի ըլլալով, բոլորովին նոր լեզու մը պիտի նկատուի:

Կը տեսնուի ուրեմն որ, նոյնիսկ ենթադրելով որ օր մը երբէք կարելի ըլլար գոյութիւն ունեցող բոլոր լեզուները ջնջելով, անոնց տեղ հասարակաց լեզու մը ընդունել տալ, այս հասարակաց լեզուն ինքնին հետզհետէ, ժամանակի տեսողութեամբ, պիտի ձգտէր վերստին լեզուներու բազմաւորութեան ծնունդ տալ:

Այս պայմաններու մէջ իբր անկարելիութիւն մը ընդմիջտ մեկզի ձգելու է լեզուներու բազմաւորութիւնը ջնջելու ու առանց դեռ ընդհանուր լեզու մը մարդկութեան խօսել տալու հարցը:

Ի՞նչ կրնայ ուրեմն ըլլալ խնդրին լուծումը: Պէտք է իրերը իրենց արդի դրութեան մէջ թողուլ, ու կարելի պիտի ըլլայ բնաւ որ առանց թարգմանի մարդ հեռաւոր երկրի մը մարդոցը հետ հաղորդակցելու միջոց ունենայ:

Տեսանք որ գոյութիւն ունեցող լեզուները Հենք կրնար ջնջել, կամ եթէ ջնջելու ալ ըլլանք, որոշ ժամանակէ մը յետոյ վերստին պիտի երեսն գան:

Միայն թէ հարկ է նկատել որ մեր նպատակը անպատճառ լեզուները ջնջել չէ, հապա գտնալ միջոց մը, որուն շնորհիւ կարելի ըլլայ իրարմէ տարբեր լեզու խօսող էակներու որ զիրար հասկնան: Ինչո՞ւ ուրեմն, քանի որ լեզուները ջնջել կարելի չէ, բոլոր ժողովուրդներն ալ ընդունին իրենց սեփական լեզուներէն դատ աջնպիսի ուրիշ լեզու մըն ալ, որ բոլորին ալ հասկնալի ըլլայ, ու որուն միջոցաւ երկու հեռաւոր վայրերու անհատներ իրարու հետ կարողանան հաղորդակցիլ: Այս երկրորդ լեզուն յարգելով հանդերձ գոյութիւնն ունեցող լեզուները, անոնց միջև տեսակ մը թարգմանի դեր կատարած պիտի ըլլար:

Անգամ մը հարցը այսպէս ըմբռնենք զայն կարելիութեան սահմանին մէջ դնելով, կը տեսնենք որ անոր յաջող լուծումին համար երկու միջոցներ կան. կամ ընդհանուր լեզուն պէտք է շինել ամբողջութեամբ ու զայն հետզհետէ կատարելագործել. կամ զայն ընտրելու է գոյութիւն ունեցող լեզուներէ մեկուն մէջէն. վերջին պարագային հարկ կ'ըլլար նկատի առնել թէ հին թէ նոր լեզուներուն մէջէն որն աւելի յարմար է որ մեր ընտրութիւնը ընենք:

Ձանանք նախ այս կէտը ճշդել:

Կարելի է հին կամ մեծաւ լեզուներէն մեկը իբր միջադպային լեզու մը ընդունել:

Ինչ տիրական պայմաններ միջազգային լեզու մը ստիպողաբար լրացնելու է:

Կոչուած ըլլալով միանգամայն իրարմէ այլազան երկիրներու պահանջներուն բաւարարութիւն տալու, հարկ է որ այս լեզուն նախ կարելի եղածին չափ կատարեալ ըլլայ:

Երկրորդ, որպէսզի լեզու մը «միջազգայնանայ», նոյնպէս էական պայման մըն է անոր զիւրաւ ուսանելու ըլլալու պարագան:

Արդ, կատարելիութեան ու զիւրուսանելիութեան ալս երկու պայմաններուն—առանց որոնց լեզու մը չկրնար յաջողութեամբ միջազգայնանալ—հին լեզուներէն ոչ մէկը գոհացում կրնայ տալ, վասնզի, եթէ մէկ կողմէ գիտենք որ մազերներս պիտի ճերմկէին մինչև որ կարենայինք հին լեզուի մը կնճռոտութիւններուն ընտելանալ, միւս կողմէ ոչ նուազ ճշմարիտ է որ այն լեզուները անցեալ ժամանակներու, անհետացած ժողովուրդներու պահանջներուն գոհացում տալու համար շինուած ըլլալով, մեր արդի պահանջներուն բաւարարութիւն պիտի չիկրնային տալ. հետեապէս պէտք պիտի ըլլար որ անոնք ժամանակակից պահանջներու յարմարեցնելու համար նոր բառեր ստեղծէինք կամ եղածները փոփոխէինք, բան մը որ համարժէք պիտի ըլլար նոր լեզու մը շինելու գործին:

Հին լեզուներէն ոչ մէկը ուրեմն միջազգայնանալու ընդունակ է:

Տեսնենք այժմ թէ որչափ հնարաւոր է գոյութիւն ունեցող նոր կամ կենդանի լեզուներէ մէկուն ընտրութիւն տալ իրր միջազգային լեզու:

Իրաւ է որ ժամանակակից լեզու մը հին լեզուներուն վերայ սա գերազանց առաւելութիւնը կրնայ ներկայացնել որ մարդկութեան արդի պահանջները թարգմանելու համար շինուած լեզու մըն է. բայց նոր լեզու մը իր անպատեհութիւններն ալ ունի, որոնք կը ջնջեն անոր ընծայած այլ առաւելութիւնները:

Նկատի տունելու է նախ որ, դրուած ըլլալով մարդկային արդի ընկերութեան մէջ ազգայնական դասակարգներու բաժանումը, ամեն ժողովուրդ ազգայնամիտական զգացումներէ ոգևորուած ըլլալով, անոնցմէ ոչ մէկը պիտի ուզէր իրր միջազգային լեզու ընդունել իր խօսած լեզուէն տարրեր լեզու մը:

Նկատելի երկրորդ պարագան ինչպէս տեսնուեցաւ, միջազգային լեզուի մը համար զիւրուսանելիութիւնն ու կատա-

ընկութիւնն է, արդ, արդի լեզուներուն մէջն ոչ մէկը մեզի
կը ներկայանայ այս կրկնակի հանգամանքներով:

Այսպէս ուրեմն խնդրին լուծումը ոչ հին լեզուները, ոչ
ալ նորերը կրնան տալ. հասկա դայն կարելի պիտի ըլլայ դըտ-
նել արուեստական լեզուի մը մէջ: Թէեւ արդարեւ, փորձն ալ
այսօր ցոյց կու տայ թէ Esperanto արուեստական լեզուն հին
ու նոր խոշոր լեզուներու վրայ զիւրուսանելութեան անհու-
նապէս դերազանց պայմաններ ներկայացնելով հանդերձ, ա-
նոնց կատարելութեան հեաղհետէ հասնելու կը ձգտի:

Միայն թէ որքան ալ արուեստական այսպիսի լեզու մը
կատարեալ ըլլայ, պէտք չէ անոր կատարելիք գերին համեա-
տութեան վրայ պատրանքներ ունենալ:

Տեսնուեցաւ արդէն թէ անկարելի է որ լեզու մը բոլոր
ժողովրդներուն կողմէ խօսուի միօրինապէս. միւս կողմէ ակ-
ներեւ է որ լեզու մը որքան ալ զիւրաւ սորվուի, միշտ անոր
հմտանալու համար աշխատանք թափել պէտք պիտի ըլլայ,
մինչդեռ իւրաքանչիւր անհատ իր մայրենի լեզուին կըսկսի
հմտանալ օրօրօցէն իսկ, առանց աշխատանքի, անգիտակցա-
բար:

Կըմբռնուի ուրեմն թէ մայրենի լեզուի մը ուսումը ան-
դիտակից է, իսկ միջազգային լեզուի մը ուսումը, որքան ալ
դիւրին ըլլայ, պիտի պահանջէ որոշ չափով աշխատանք մը,
զոր ամեն անհատէ կարելի չէ պահանջել:

Այնպէս որ միջազգային լեզու մը երբ լուծուի ալ, սահ-
մանափակ օգտակարութիւն մը պիտի ունենայ, աւելի ծառայ-
ելով մարդկութեան իմացկան դասակարգները իրարու հետ
հաղորդակցութեան մէջ դնելու:

Տիգրան Էլմասեան

ՄՕՏԻԿ ԱՆՑԵԱԼԻՑ *)

Ի՞ր աշխարհագրական-պատմական գիրքի շնորհիւ հայ կեանքը երբէք չի կարողացել կանօնաւոր, անընդհատ, յաջորդական զարգացման պրոցեսով ընթանալ. այդ պատճառով էլ նրա մէջ որոշ խաւերում տիրող գաղափարները յաճախ արգասիք չեն եղել ժողովրդի տնտեսական զարգացման ստեղծած պայմաններին, այլ զրսից ներմուծուած, արուեստական գունաւորման ընոյթ են կրել: Դրաի աշխարհի հետ շփուող հայութեան մի չնչին շերտը կտրուած լուռ ժողովրդից հնթարկուել է զրսի ազդեցութիւններին և մի րան, որ օտար երկրում արդիւնք է եղել աշտեղի տնտեսական զարգացման ֆազին, փոխադրուել է «ինտելիգենտ» հայ գաղափարախօսների կողմից և արուեստական կերպով փաթաթուել մեր իրականութեան, սրի հողը բոլորովին նախապատրաստուած չի եղել այդ օտարեկրեայ իդէօլոգիական սերմերը աճեցնելու համար:

Սօսենք աւելի կոնկրետ կերպով: «Նացիօնալիզմը», օրինակ, եւրոպական բուրժուական կարգերի տնտեսական պայմանների արդիւնք է. իսկ մեր հայկական իրականութեան մէջ խոշոր բուրժուազիան իր զասակարգային տեսակէտնելով բնաւ շահադրդրուած չէր նացիօնալիզմի զարգացմամբ մեղանում. ի՞նչ կարող էր տալ մի ուտոպիստական չնչին «ազգային ինքնաւարութիւն» արդիւնաբերութեան և առևտուրի զարգացման համար: Ոչինչ: Բնզհակառակը այդ բուրժուազիայի շահերը պահանջում էին, եթէ անիրազօրծելի էր բուրժուական ազատութիւնը, գէթ՝ խաղաղ օրինակարգի յարատեւութիւնն ամեն տեղ:

Ռուսահայ բուրժուազիային ձեռնտու էր որ Ռուսաստանը

*) Տես «Մուրճ» № № 4-5, 6 և 7: Մեր աշխատակից պ. Անկախը ներողութիւն է խնդրում իր ընթերցողներից որ անկարող եղաւ «Մուրճի» № № 8 և 9 ում տալ իր յօդուածների շարունակութիւնը: Նա ստիպուած էր կատաղած Տօրկիմազաների դէմ այլ ձևով կռիւ մղել և կարողացաւ միայն «Մշակում» այդ առիթով մի ֆելիէտօն գետեղել («Մեր սղերսնց մասին», № 169):

տիրէ Թիւրքաց Հայաստանին: Իսկ Թիւրքահայ խոշոր բուժուա-
զիւն, կենտրոնացած լինելով Պոլսում, Զմիւռնիայում և առհա-
սարակ Թիւրքաց Հայաստանից դուրս, շահ չունէր ոուս պետու-
թեան այդ ձևի առաջխաղացութեան մէջ անգամ. նա կը ցան-
կանար որ օսմանեան բեժիմը շարունակի իր բարեացակամ
վերաբերմունքը դէպի իր հաւատարիմ հպատակ և կանոնաւոր
տուրը վճարող հոյ վաճառականութիւնը: Եւ պէտք է խոստո-
վանուել որ խոշոր բուժուազիւն միշտ հակառակ է եղել հայ
նացիօնալիստների «յեղափոխական» շարժումներին, ուստի մի-
այն ահարկեւումների միջոցով նրանք բաց են արել իրանց բա-
կը «սուրբ գործի» համար: Եթէ եւրոպական իրականութեան
մէջ «նացիօնալիզմը» խոշոր բուժուազիւնի իդէօլոգիա է, այդ
դեռ չի նշանակում որ նոյնն էլ հայկական իրականութեան մէջ
էր: Մեր «ինտելիգենցիան» կըթուելով եւրոպական բուժուա-
կան դպրոցներում բնականաբար վարակւում էր այնտեղի իդէ-
օլոգիաներով և աշխատում էր իր հայրենիքում ներմուծել
ստացովի գաղափարները այնպէս, ինչպէս անում էին մեր միջ-
նադարեան վարդապետները վերադառնալով Աթէնքից կամ Ա-
լէքսանդրիայից, տարածելով բրիտանէական սխոլաստիկան և
այլանպակ դոգմաները: Այդպիսով ասգային նացիօնալիզմը մեր
ինտելիգենցիայի՝ «ազգային գործերով» զբաղուող վարժապետ-
ների, վարդապետների, գրողների խաւելում աճած մի գաղա-
փար էր, որից ոչ բուն ժողովուրդը որևէ շահ ունէր, ոչ էլ
բուժուազիւն: Այդ «ինտելիգենտ» խաւի շահերն էին միայն
կապուած ազգասիրութեան հետ: Եւ ահա դրականութեան, ե-
կեղեցու, թատրոնի և գաղտնի միջոցով այդ «ինտելիգենտ» խա-
ւը սկսեց թունաւորել մեր կեանքը նացիօնալիզմով, զարդաց-
նել նոր սերնդի մէջ հայրենասիրական զգացմունքը ի հաշիւ
առողջ մտածողութեան և գրական գիտութեան:

Եթէ ուզենանք տնտեսական հիմքեր գտնել հայ «ինտե-
լիգենցիայի» ազգասիրական ձգտման մէջ այդ աւելի շուտ մեղ
կ'աջողուի, քան նոյնը անել բուժուազիւնի մէջ:

Quae volumus credimus libenter, ասում է լատինական ա-
ռածը, այսինքն՝ ինչ որ ուզում ենք որ լինի նրան ուրախու-
թեամբ հաւատում ենք: Հայ ինտելիգենցիային ցանկալի էր ու-
նենալ սղաւ, ինքնավար Հայաստան, որ գործադրէր սղաւօրէն
իր ազգասիրական եռանդը, ուր պաշտօններ ստանար և այլն:
Այդ «ինքնավարութիւնը» ձեռնտու կը լինէր միայն «ազգասէր»
ինտելիգենտներին և գուցէ նաև մանր-բուժուազիւնին, եթէ
միայն այս վերջինս հաւատար ինտելիգենտ ազգասէրների և
նրանց իդէօլոգիայից վարակուած «երիտասարդութեան» մի-

րաժներին: Բայց նա իր առողջ դատողութեամբ դժուար էր համոզուում այդ ծրագրների իրագործման, ուստի նրան էլ զօրով, սպառնալիքներով էին ստիպում «յարել շարժման»: Այդ իրական պայմանների շնորհիւ է որ երբէք հայ յեղափոխական «շարժումը» ժողովրդական ըմբոստացման բնոյթ չէր եղ, այլ միշտ արուեստական խմբակային բռնկումների, դրդուած, սարքած ցոյցերի բնաւորութիւն ստացաւ: Դա «Ինտելիգենտ» երիտասարդների նմանողական էքսպերիմենտներ էին: Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը միայն ոյժ տուաւ ինտելիգենտ խաւի նացիօնալիստական յոյսերին, և հաւատալով այդ յօդուածի խոստումներին հայ ազգի ինքնակոչ «ներկայացուցիչները» սկսեցին իրանց պահել այնպէս, որ կարծես արդէն մի առանձին քաղաքական մարմին լինէր հայ ազգը: Անաջող պատերազմից յետոյ Թիւրքիայի ցոյց տուած զինող և միզմ վերաբերմունքը «հայ ազգը» այնպէս մեկնեց թէ իրանից արդէն վախենում են, և իր յոխորտանքը հասցրեց անմտութեան: Ազգային բոմատիզմին աւելացաւ յեղափոխական բոմանտիզմը:

Թէ ազգային բոմանտիզմը ինչպէս էր օրէցօր յոխորտանում և վաւերում իր թոյնով նաեւ գաւառները—այդ երեւում է այն ճառերից, որ արտասանուում էին Ազգային ժողովում և այն յօդուածներից որ տպւում էին այն ժամանակ ցենզուրական ազատութիւն վայելող մամուլի մէջ: Թիւրք կառավարութիւնը առ ժամանակ carte blanche էր տուել հայ ազգասէրներին և նրանք ամեն մի քայլում ընդգծում էին իրանց ազգային ինքնավարութեան, հայկական նահանգների առանձնայատուկ իրաւունքների մասին, զրգուելով Թիւրք ժողովրդի ազգային պատուասիրութիւնը: Թէ ինչ թոյն էր ներկայացնում շօվինիզմը՝ զրան ապացոյց մի բնորոշ դէպք, որ առաջ ենք բերում ակահատեսի խօսքերով: Թող կարգաւ և խորհի ինքը ընթերցողը: Դէպքը տեղի է ունեցել Կարինում 1879 թուին: *)

«Թատերական ընկերութիւնը քաջալիրուած պատրիարքի թելադրութիւններէն՝ Խաչատուր շարունակեց իր զործը և հաւանօրէն պիտի յարատեւէր բաւական երկար տառն, եթէ ցաւալի միջադէպ մը պատճառ չըլլար բոլորովին խափանուելուն: Ըսինք արդէն թէ այդ ներկայացումները մեծ մասով նախնի հայկազանց քաջագործութիւնները երկան բերող տրամները էին... Ազգ. վերջին ներկայացումն էր «Գայլ Վահան»:

«Այս կարգի ներկայացումները մեծ զրգում առաջ բե-

*) Տես «Հայրենիք» № 27 (365) պ. Նշկեանի գրութիւնը:

րած էին պարսիկներուն մէջ. որոնք սկսած էին խեթիւ նայիլ հայերուն. այդ պատճառով աննշան վէճ մը պարսիկի մը հայ տղայի մը միջև առիթ տուաւ ծանր խռովութեան:

«Հայ տղայ մը պարսիկ հացագործէ մը հաց առած միջոցին՝ առարկութիւն կը ըլլայ տրուած դրամին նկատմամբ. տղան կը պնդէ որ դրամն ընդունի, պարսիկը կը մերժէ. վէճը կը մեծանայ, բանտիւիւր ծեծի կը փոխուի, ծեծը ժողովրդական ընդհարումի մը: Ամբողջ հայ երիտասարդութիւնը ոտքի կը ելլէ, զէնքերով ու բիրերով գինուած, կը դիմէ պարսիկներու կենդրոնավայրը, բայց կուսակալը արագ շարժելով՝ զօրք հասուցած ու շրջապատած էր նոյն հրապարակը, թոյլ չը տալով որ հայերը յարձակում գործեն: Ասով հանդերձ բաւական արիւնասնդ կուի մը տեղի կը ունենայ և երկու կողմէ շատ մը վիրաւորներ կ'իյնան. անձի կորուստ չըլլար թիւրք զինուորի մը սպանումէն զատ, որ դիպուածով կը զարնուի հայու մը գնդակէն: Կառարարութիւնը մէջտեղ չհասնեց այդ սպանութիւնը, նորանոր գրգռումներ առաջ չբերելու համար:

«Ազգային զգացումներու առաջին պոռթկումն էր աս, որ տեղի կ'ունենար և կարելի է ըսիլ որ արիւնի առաջին մը կըրտութիւնն էր որ կը ստանար Կարնոյ երիտասարդութիւնը: Այդ կուրին ժամբամասնութիւնները պարունակող նամակները կորուած են. միայն այդ առթիւ կատարուած բանակցութիւններու հանգամանքը ճշդով նամակի մը օրինակը կը դնեմ հոս, որմէ կարելի է ենթադրել թէ այն ատենները Կարնոյ Ազգ. Վարչութիւնը կարծես թէ իրբն ինքնուրոյն կառավարութիւն մը կը գործէր: Ահա նամակին օրինակը:

1879 յուլիս 14, Կարին

«Ս'րելի բարեկամ:

«Անցեալ շաբթու խրկեցի խիստ աճապարանքով գրուած քաղաքիս մ ջ տեղի ունեցած մի դէպք որ բոլորովին ճշմարտութիւն էր. մնացորդն յաջորդիւ ըսած էի. անա մի քանի ծանօթութիւն եւս:

«Նոյն օրը (յուլիս 7) երեկոյան ժամը 11 կը զարնէր. տաքսին ալ հետզհետէ ցրուելու վրայ էր. անդ. փետ. հիւպատոսը անձամբ եկաւ առաջնորդարան գործին ճշգրտութիւնը հասկնալու. հորին վսեմութիւնը առ հոյ ժողովուրդըն ցոյց տուած համակրութիւնը վերջին աստիճան զնահատութեան արժանի է:

«Յաջորդ առաւօտ պարսից Ք'րփ'իտագհանէէն (հիւպատոսարանէն)

մի լիռօթէսթօ (բողոք) եկաւ հայոց առաջնորդարանը, որմէ մէկ մէկ օրինակ թէ կառավարութեան եւ թէ եւրոպական հիւպատոսներու խորհուած ըլլալը կը ծանուցանէր: Քէրփէրտաղխանէն յիշեալ թէ հայերէն վախնալով նորէն այդպիսի բան մը պատահած ատեն հայոց զլիաւորները պատասխանատու բռնել կը ուզէր, որուն անմիջապէս պատասխանեցինք եւ օրինակն ալ կառավարութեան ու եւրոպական հիւպատոսներուն զրկեցինք:

«Հոյն օրը ոռոտական վսեմ. հիւպատոսն ալ Վանայ նորընտիր հիւպատոսն վսեմ. Կամարականի հետ միասին առաջնորդարան պալով իրանց ցաւակցութիւնն եւ համակրութիւնն յայտնել հաճեցան:

«Երկրորդ օրը քաղաքին եւրոպական բոլոր հիւպատոսներէն եւ 'Իռլէն մեր լիռօթէսթի պատասխանները եկան, որոնք ըստ արդարութեան իրանց անկեղծ համակրութիւնը կը յայտնէին մեզ նկատմամբ. իրաւամբ այս ամէնը շնորհակալութեան արժանի է:

«Բարձր կուսակալն եւս ամէն կարգի հսկողութիւն ձեռք առած լինելով այժմ ամէն կողմ հանգարտութիւն եւ լուծութիւն կը տիրէ:

«Բայց ցաւալի մի երեւոյթ հայ ժողովրդեան վրայ կը ծանրանայ, այնպէս որ բոլոր աշխոյժ սրտերն կը բեկտնէ. այն է տաճիկ ժողովրդին թշնամական եւ սպառնալից ականարկութիւններն ու վարմունքը հայերուս դէմ, որով հաւատալ կուտան ամեն ողջամիտ մտքերու թէ կրօնական մոլեգնութիւնը մինչեւ վերջ անհնար պիտի ընէ ունէ բարեկարգութիւն Հայաստանի մէջ...»

Կ'նամ եւն....»

Բացատրութիւնները աւելորդ են. շովինիզմը մի կողմից հային դարձնում էր յարձակուող, իսկ միւս կողմից կոյր և միակողմանի հասկանալու համար իր հարեան տաճիկ և պարսկի զգացմունքները. հայը կարող էր լինել շովինիստ և զարմանում էր որ իր տհաս, զրգուող քայլերը դարձեցնում էին դէպի ինքը հարեանի խռովութիւնը: Այդ չը հասկացան յետոյ ոչ Արմենականները, ոչ Հնչակեանները և ոչ Դաշնակցականները... Բայց առաջ չը վազենք:

1878—1880 թուականներին կազմուեցան բազմաթիւ ընկերութիւններ. Դպրոցասիրաց-Արեւիկեան, Կիլիկեան, Հայուհեաց Աղգանուէր, Արարատեան և այլն: Կովկասի ազգասէր ինտելիգենցիան իր ազգի բախտաւոր ապագան կապում էր «Ինքնավար Հայաստանի» հետ, որ 61-րդ յօդուածով իբր իրականալու էր Թիւրքիայում: Իր ամբողջ մտածողութիւնը, եռանդը այդ ազգասէր ինտելիգենցիան կենտրոնացրեց Թիւրքաց Հայաստանի վրայ: Դրամ էին ժողովում օգնելու համար Թիւրքիայի հայերի «Ինքնավարութեան» իրագործման ամեն տեսակ ջանքերին: Մ. Փորթուզալեան բաւական խոշոր գումարներ ստացաւ Դր.

Արժրունու շնորհիւ, Վանում վարժապետանոց բանալու համար: Եւ այդ բոլոր դպրոցներում, (ինչպէս և թատրօնական բեմից և թերթերից) զբոսող շովինիստական երգեր և ռադմական վարժութիւններ էին կատարուում: Հայը ամեն մի առիթով հասկացնել էր տալիս թէ ինքը մի առանձին քաղաքական մարմին է Թիւրքիայում և մտադիր է ղէնքի ոյժով իրակոնացնել իր սղգային ինքնավար գոյութեան իրաւունքը: Իր յոյսերը դրած Եւրոպայի վրայ մի բուն հոյ գօնկիւստներ կռիւ էին յայտարարում տաճնապատիկ թուով աւելի մի տարրի և անհաշիւ գերազանց ոյժ ներկայացնող մի ղինուորական պետութեան: Հետաքրքիր է թէ ինչպէս էր ժողովրդի ղինումը կատարուում այդ ժամանակներում և ինչպէս դարձ ղէպի հայրենիք քարոզուում: Նոյն Նշկեանը գրում է հետեւեալը *):

«Հայրիկը, իր ըսածին համաձայն կը յորդորէր պանդուխտ հայերը Հայաստան վերադառնալ. սկսած էր այդ շարժումը և ամեն շարժու տաճնեակներով կը մեկնէին ղէպի հայրենիք: Պատմութեանս ընթացքին մէջ, ինչպէս որ ըսինք, հայ պանդուխտը առանց ղէնքի չէր երթար այլ ևս, այժմ շատեր սկսած էին մէկէ աւելի ղէնքեր տանիլ իրր նուէր եղբայրներուն, սղգականներուն և բարեկամներուն: Կառավարութիւնը սկսաւ ուշադրութիւն դարձնել և արգելքներ յարուցանել: Բայց մտիկ ընող չկար, ղէնքերը փոխադրելու միջոցներ կը գտնային: Հաստատնի բարեկարգութեան հաւաստումները աւելի կը քաջալերէին պանդուխտներու վերադարձը, բնիկ պոլսեցիներ իսկ այդ փափաքը կը յայտնէին և ուղեորութեան պատրաստութիւններ տեսնելու պէս բաներ մը կընէին:

«Բայց Հայրիկը տակաւին Պոլիս էր. գարունն ևկաւ, ամառն անցաւ ու Հայրիկը տեղէն չէր շարժած: Խօսակցութեան մէջ օր մը հարցուցի թէ «Հայրիկ անչափ կ'աճապարէիք Հայաստան դառնալ և Վարազայ թան ապուրը վայելել, ինչ պատահեցաւ որ մինչև հիմայ մնացիք ու այս ձմեռն ալ կ'երևի թէ հոս պիտի անցընէք, չըլլայ թէ Հայաստանի բարեկարգութեան վրայ մեծ յոյս մը չունիք ու չէք փափաքիր երթալ»:

«Տղայ, այդպէս խօսքեր մ'ըսեր Հայրիկին՝ պատասխանեց. դու չի՞ս գիտեր որ ես բարեկարգութիւններէն յոյսս կըտրեցի այն ատեն, երբ Պէրլինէն վերադարձայ: Եւրոպա երթալով եթէ ուրիշ օգուտ մը չունեցանք, գէթ անղլիական սա առածին ամբողջ ճշմարտութիւնը խոր կերպով ըմբօնեցինք, դուք եղ օգնէ՛ որ Աստուած էլ օգնէ՛. և իրապէս բարեկարգութեան

*) Ibid.

վրայ յոյս չունենալու համար է որ կ'երթամ քարոզելու թէ հայեր դուք ձեզ օգնեցէք որ Աստուած ալ օգնէ: Ես հաստատ միտքս դրած էի զարնան սկիզբը ճամբայ ելլալ, բայց տեսայ թէ կարևոր է որ քիչ մը ուշ մնամ ու պանդուխտներէն որչափ կարելի է մեծ թուով ազատեմ Պոլսի մեղկացուցիչ մթնոլորտէն և աղտոտ խաներէն. բաւական յաջողուեցայ ու ես ալ կը մեկնիմ քիչ ատենէն»:

«Եւ իրօք 1879 սեպտ. 26-ին Հայրիկ կը մեկնէր Պոլսէն Վան, անձայն անշուշտ, բաւական մեծ թուով Վանեցի և Մուշեցի հայեր իր հետ տանելով: Մինչև շոգենաւ ողջերթ մաղթելու դացող սակաւաթիւ անձերու մէջ կը գտնուէի ես ալ: Որքան բաժակներ պարպեցինք Հայրիկի կենաց և բարօրութեան համար: Հայրիկը շատ յուզուած էր՝ ինչպէս նաև ամէնքըս ալ ու կարող չէր բան մը խօսիլ, միայն կը կրկնէր Հայաստանը բարեկարգելու գլխաւոր և սուղին քայլը ատ պէտք է ըլլայ»: Խոստացանք կատարել Հայրիկին պատուէրը ու բաժնուեցանք արտասուալի աչքերով...

«Հայրիկին մեկնելէն ետք քիչ մը ատեն ես շարունակեց տակաւին պանդուխտներու Հայաստան վերադարձի հոսանքը, և եթէ աւելի երկար ժամանակ տեւէր այն գեղեցիկ երազներն ու յոյսերը, որոնցմով տոգորուած էր հայութիւնը, Պոլսեցիներէն իսկ ահագին թուով գաղթականութիւն մը պիտի երթար Հայաստան: Անոնցմէ շատեր իրենց առետրական գործերը վերջացնել և Հայաստանի մէջ նորանոր գործեր հաստատելու միջոցներուն վրայ կը խորհէին: Հարուստ ազգայիններէն մաս մը Վանայ լճին վրայ շոգենաւներ դնելու ծրագրեր կը յօրինէր և կառավարութիւնէն արտօնութիւն ստանալու կը հետամտէր: Ներսէս պատրիարքն իսկ յաճախակի յորդորներ կը կարդար եկեղեցու բեմէն ու կը քաջալերէր այդ շարժումները: Բայց մեր ժողովուրդը որ այս կարգի պարագաներու մէջ մանաւանդ հազար կը խորհի ու ապա կը դործէ, համբերութեամբ կապասէր բարեկարգութեան նշան մը տեսնել, որպէսզի վստահ կերպով ճամբայ ելլար: Պոլսի հաճոյքի կեանքը թողուլ և երթալ դաւառացիներու անսովոր ու անհրապոյր կեանքին ենթարկուիլ՝ դիւրին դործ չէր: Այսպէս թէ այնպէս, ձմեռը հասած էր արդէն ու այդ բոլոր խորհուրդները լոկ խորհուրդ կը մնային, սպասելով զարնան օրերուն կամ բարեկարգութեան նշանին»:

Ուշագրաւ են մանաւանդ հետեւեալ խօսքերը.

«Բայց մեր ժողովուրդ որ այս կարգի պարագաներու մէջ մանաւանդ հազար կը խորհէ ու ապա կը դործէ, համբերութեամբ կը սպասէր

քարեկարգութեան նշան մը տեսնել, որպէս զի փստաւ կերպով նամբայ ելար»:

Բայց ժողովրդի և բուրժուազիայի այդ առողջամտութիւնը ձգտում էին խեղաթիւրել զանազան թերուս և խակմիտ «ազգասէր» ինտելիգենտներ և Բաֆֆիական վէպերով և յեղափոխական—ազգային բոմանտիզմով տխմարացած «հերոսներ»...

Անկախ

(Կը շարունակուի)

ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐԳԵՐ

- 1) Ա. Գալստեանցի, Կիրակնօրեայ՝ Դպրոցներ, Բագու, 1906 թ., գ. 50 կ.
- 2) Կ. Ելնիցկի, Սովորութիւնները նրանց նշանակութիւնը, և կրթութիւնը, թարգմ. Մ. Աղ. և Ստ. Լ., Թիփլիս, 1906 թ., գ. 15 կ. «Հասկերի» մանկ. գրադ.
- 3) Լ. Մանուէլեան Վերածնունդը, գրամա 3 գործող., Թիփլիս, 1906, գինն է 35 կ.
- 4) Զ. Մորիէր, Հաջի Բարայի արկածները Անգլիայում, Թիֆ. 1906, գ. 1 ր. 50 կ.
- 5) Դ. Կլիկաշվիլի, Ծխականների մէջ, թարգմ. Ղ. Կ., Թիֆլ., 1906, գ. 10 կ.
- 6) Տարախչեանց Մանկական երգարան, հայոց ծխ. դպրոցների ստորին բաժանմունքների համար. Ալէքսանդր., 1906, գ. 20 կ.
- 7) Ն. Ծիթոլցեանի «Վերածնութեան միլիոններ», թարգմ. և ինքն. բանաստեղծ է ժողովածու, Ալէքս., 1906 թ., գ. 30 կ.
- 8) Ա. Ջանեան, Անհատականութիւն, Բագու 1906 թ., գինն է 10 կոպ.
- 9) Երբէք և Բոման Է. Ա. Բաղդասարեանի Համերգ, քառաձայն խառը խմբի համար: «Нѣмая Пѣсня».
- 10) Լ. Բաբայեան, դասադիրք աշխարհագրութեան, քաղաքական մաս, Տիփլիս, 1907 թ, գ. 65 կ.
- 11) Յ. Եսայեան հայ կտրիճներ, պատկեր հայ թրքական կեանքից, Թիֆ. 1906, գ. 71.
- 12) Մ. Տէր Դանիէլեան, երկու պօղմա, Բագու, 1906, գ. 15 կ.

ՔՆՆԵՐԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Լ. Բուրայեան Պատագիբ բնդիւսնուր աւետարնագրութեան, Բաղա-
ճակուն մաս, հրատ. Գ. Գալստեանի: Տփլիս 1907, գ. 65 է.

Կազմողը իր յառաջաբանում յիշում է, որ օգտուել է ու-
սական և գերմանական դասագրքերից: Բայց այնքան էլ ու-
շագրութեամբ չի օգտուել:

Ես չեմ խօսի պ. Բուրայեանի արած բոլոր սխալների և
թերութիւնների մասին, որը անկարելի կը լինի մամուլի էջե-
րում արտայայտել, այլ՝ մի քանի խոշոր սխալների և թերու-
թիւնների: Քանի որ նա առաջին տեղում գետեղել է Աւստրա-
լիան ես կը սկսեմ Աւստրալիայից նրանց կից դնելով Ֆրան-
սիական աշխարհագրութիւնից պարզ ճշմարտութիւններ, այդ
պարոնի սխալները և թերութիւնները աւելի աչքի ընկնելու
համար:

Օրինակ, նա տուած է. «Աւստրալիան հինգ մայր ցամաք-
ներից ամենափոքրն է (առաջին երես) և նրա տարածութիւնը
արեւմտքից արեւելք 4000 վերստ է, իսկ հիւսիսից հարաւ
8000 վերստ, ամբողջ տարածութիւնը 9 միլիոն քառակուսի
կիլոմետր (վերստեր երկայնութեան և լայնութեան համար և
կիլոմետր բովանդակութեան): Եթէ Ասիան, աշխարհիս
ամենամեծ ցամաքը, ունի արեւմտքից դէպի արեւելք 10,000
կիլոմետր երկարութիւն, իսկ հիւսիսից հարաւ 9000 կիլո-
մետր լայնութիւն, 42 միլիոն քառակուսի կիլոմետր տա-
րածութիւն, ուրեմն ի՞նչ հսկայական չափեր պիտի ունե-
նայ Աւստրալիայի համեմատութեամբ: Յիշուի՝ աշակերտի
համար իսկոյն հասկանելի կը լինէր, եթէ պ. Բաբայեանը կա-
րողացած լինէր ներկայացնել Աւստրալիայի իսկական պատկե-
րը, որը մենք բերում ենք Ֆրանսիական աշխարհագրութիւնից.
արեւմտքից արեւելք 3870 կիլոմետր, հիւսիսից հարաւ 3170,
տարածութիւնը 7626275 ք. կիլոմետր, որովհետեւ նա տարած-
ւում է արեւմտքից արեւելք 110-ից 151 աստիճանների տակ լա-
րեւեան երկայնութեան 10-ից 39-ը հարաւային լայնութեան,

և այս չտփերի մէջ նա կը լինի ամենափոքրիկ ցամաքը: Բայց պ. Բաբայեանի ընդգծած սահմանների մէջ Աւստրալիան չէր կարող լինել ամենափոքրիկը հինգ աշխարհներից, այլ անհամեմատ մեծ քան Եւրոպան, որովհետեւ ունենալով հիւսիսից հարաւ 8000 վերստ լայնութիւն, նա վարունգի նման երկարացած մի երկիր չէ, ինչպէս նրա արեւելքում գտնուած Նոր-Վալիտոնիան, այլ կարելի է ասել, որ նա ունի մի բաւականին կանոնաւոր էլիպսի ձև, իսկ 8000 վերստ երկայնութիւն և 4000 վերստ լայնութիւն ունեցող մի էլիպսի տարածութիւնը անհամեմատ մեծ պիտի լինի Եւրոպայի մակերեսից թից, որը գտնուել համար զժրախտաբար ևս մաթեմատիկոս չնմ, ուստի և սուղարկում եմ մեր մաթեմատիկոսներին ինքնակատի ունենալով, որ Եւրոպայի տարածութիւնը հաւասար է 9,308,000 ք. կիլոմետրին:

Այժմ ես կը բերեմ մի այլ օրինակ Աւստրալիայի տնտեսական վիճակի վերաբերեալ, որը աշխարհագրութեան մէջ սուղնակարգ տեղերից մէկը պիտի բռնի, և որից ընթերցողը պարզ գաղափար պիտի կազմի, որ պ. Բաբայեանը ունի շատ տարրական հասկացողութիւն աշխարհագրութեան մասին, և այն չափը որ նա ի նկատի է ունեցել իբրև թէ մեր երկրորդ զսասարանների համար, կազմում է և իր մտաւոր չափը: Օրինակ, պ. Բաբայեանը յիշում է իր զրքի 12 երեսում. «Աւստրալիայի երկրագործութիւնը այնքան էլ զարգացած չէ, որովհետեւ նրա կլիման և ոռոգումն այնքան էլ չեն նպաստում այդ բանին»: Այդ շատ ճիշտ է, պ. Բաբայեան, եթէ բնութեան կամքին թողուած լինէր Աւստրալիան, բայց մարդկային հանճարը և ստեղծագործութիւնը դիմէ՞ր ինչ դեր է խաղում արդիւնաբերութեան մէջ: Մենք գիտեմք զնում ենք այստեղ ֆրանսերէնը, որպէսզի ընթերցողը մեզանից ստեղծած չհամարի. «Mais les ressources en sont immenses: qui possède à la fois de riches terres à blé le maïs, la canne à sucre y réussissent, l'agriculture, favorisée par le forage de puits artésiens, s'accroît sans cesse, l'élevage y est très développé, de riches gisements s'y trouvent». — «Բայց հարստութեան աղբիւրները նրանում անուսման են, որը գրաւում է միևնոյն ժամանակը և հարուստ ցորենի հողեր. եգիպտացորենը, շաքարեղեգը յաջողում են այնտեղ, երկրագործութիւնը հովանաւորուած արտեզեան աղբիւրների փորելով, անդադար աճում է, անասնապահութիւնը այնտեղ չափազանց զարգացած է. գտնւում են և հարուստ հանքեր (որից ստացուած է 1851 թուից մինչև 1886 թիւը 71/2 միլիարդ միմիայն ոսկի, այժմ գուցէ 15 միլիարդից աւել-

լի լինի)»։ Մի այլ օրինակ, «Հովանաւորուած այս աշխատութիւններով (մի շարք աշխատութիւններ, որոնք նպաստում են լուսաւորութեան տարածման), Աւստրալիայի տնտեսական վիճակը նշանաւոր է դարձել ներկայ դարում»։ Մշակութիւնը տարածուած է ինքնա մաքանների (scrub), հաշոււմ են Աւստրալիայում $3\frac{1}{2}$ միլիոն հեկտար մշակուած հող։ Մերինոս կոչուած ոչխարի պահպանութիւնը կազմում է մասնաւորապէս ցամաքի գլխաւոր հարստութեան աղբիւրը, նա 66 միլիոն ոչխարից սակաւ չէ կերակրում, այս ոչխարները նշանաւոր են իրանց բացառիկ նրբութեամբ։ Արտադրութիւնը (industrie) սկիզբն է առել, աւելի քան 11000 գործարաններ կամ արհեստանոցներ գոյութիւն ունեն Աւստրալիայում։ Վերջապէս վաճառականութիւնը սնուելով այս երկրագործութեամբ և արտադրութեամբ, ոտացաւ մի աներկակայելի աճումն այս երկրներում միայն երեկ ծնուած լուսաւորութեան մէջ... Իր վաճառակոնութիւնը 3 միլիարդ ֆրանկ, աւելի է քան Իտալիայի վաճառականութիւնից, որը ունի 33 միլիոն բնակիչ»։

Այժմ մենք մի քանի խօսք միայն կը յիշենք Աֆրիկայի մասին, առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու, որովհետեւ պարոնի աշխատութիւնը սրտազրեւու ցանկութիւն չունենք։ Պարոն Բարայեանը հետեւում է նոյն սխալ սխտեմին Աֆրիկայի տարածութեան և բովանդակութեան վերաբերեալ, ինչ որ Աւստրալիայի, այսինքն՝ հիւսիսից հարաւ 8000 վերս (երես 16), արեւմուտքից արեւելք 7500 վերստ, բովանդակութիւնը 540,000 քառակուսի մղոն։ Եթէ պարոնը ցանկացել է բովանդակութիւնների համար գործ ածել ամենամեծ չափեր, ինչպէս ֆրանսիականներն են, և որը գործ է ածել Աւստրալիայի համար կիլոմետրներով, նա պարտաւոր էր իբրեւ կազմող, աշխատել գտնել և Աֆրիկայի բովանդակութիւնը կիլոմետրով, որը հաւասար է 29,825,000 կիլոմետրի, և որ զօրուար չի լինի երեխայի համար, ցանկացած ժամանակը բաժանել մեծը փոքրի վրայ և իմանալ նրանց տարբերութիւնը։

Իսկ բնակիչների մասին խօսելիս յիշում է (երես 24). «Նրանք բոլորն էլ կանգնած են մտաւոր զարգացման ամենաստոր աստիճանի վրայ... Նրանց մէջ դեռ ևս գոյութիւն ունի ստրկութիւնը. հայրը շատ անգամ մի ամենահասարակ աղլուխի համար կարող է վաճառել իր կնոջը և երեխաներին»։

Երեխան, կամ մի այլ անձնաւորութիւն, կարգաւորվ այս տողերը, կը գայ այն համոզման, որ Աֆրիկան գտնուում է նոյն բարբարոս վիճակի մէջ, ինչ որ էր եւրոպացիների ոտք կոխելուց առաջ, և Աֆրիկայի բնակիչները կենդանիներէից չեն

տարրերում: Իայց, իրականութիւնը բոլորովին այլ է. Աֆրիկայի նեգրները շատ բնգունակ են, երբ նրանք շփում են եւրոպական լուսաւորութեան հետ, այդ սեղի ունի Աֆրիկայի շատ կէտերում. ես ինքս բաւական շփուել եմ ֆրանսիական Սէնէղալի երիտասարդ նեգրներին հետ. իրանց պղնձի սև գոյնով, հաստ շրթունքներով, փայլուն ատամներով, լայն քթով, օժտուած տարօրինակ ուժով, երաժիշտ, նկարիչ, ազնիւ յատկութիւններով ոչ սակաւ բարձր քան ֆրանսիական աշակերտները: Ուստի և շատ անգամ լսել եմ մեր պատմութեան և աշխարհագրութեան պրօֆէսորից, որ ներկայացնում էր ապագայի այն պատկերը, որը շուտ կամ ուշ կարող է իրականանալ. «Ի՞նչ պիտի լինի Եւրոպայի վիճակը, երբ մի երկիր, իր քթին կպած, բաժանուած նրանից միայն մի լճով, ունենալով 200 միլիոնի չափ բնակիչ, կեանքի և գոյքի ապահովութիւն կրողացուց հովանաւորութեան տակ, զինուելով երոպական զիտութեամբ և զէնքերով, իւրաքանչիւր 40 տարին բաւական կը լինի նրանց կրկնապատկուել, երոպացիներից ֆիզիքապէս աւելի ուժեղ, իսկ ընդունակութիւններով ոչ պակաս, ապագայում մեր տէրերը չլինելու»: Ահա ֆրանսիացու կարծիքը:

Վաճառումն յիրաւի գոյութիւն ունեցել է պաշտօնապէս, միմիայն Աֆրիկայի արեւելեան մասում, արաբական գերավաճառները Տարբրայից դուրս էին հանում շրջակայ նաւահանգստները, երեք դարուց աւելի, իւրաքանչիւր տարի 80-ից 90000 գերիներ, որոնք ուղարկւում էին Եգիպտոս, Արաբիա, ասիական և երոպական Տաճկաստան, Պարսկաստան, և Լիւիսիանգոնը՝ ապացուցանում է, որ 90000 ստրուկները, որոնք դուրս էին հանւում տարեկան, ներկայացնում էին միայն մի հինգերորդը, գուցէ և մի տասերորդ մասը ամի հանածների: Բայց, «L' Association Internationale Africaine» կազմակերպւած 1875 թուին, Արեւելեան Աֆրիկայի համար, «La négoce est devenu impossible, et les indigènes, civilisés par les missionnaires, devinrent, sur beaucoup de points, des travailleurs actifs et habiles». — «Վաճառականութիւնը անկարելի է դարձած և տեղացիները, լուսաւորուած քարոյրչներով, դարձել են շատ բաների վերաբերեալ, գործունեայ և ընդունակ աշխատաւորներ»: Եթէ արեւելեան Աֆրիկայի մասում տեղի ունի այդ բաները, շնորհիւ գերմանացիների և անգլիացիների, հիւսիսում 1830 թուից ֆրանսիացիք սկսեցին զրաւել և տիրապետել Ալժիրին, նոյնը անում են և բոլոր երոպական ազգերը, որոնք հաստատուած են Աֆրիկայի դանագան մասերում:

Այժմ մենք մի քանի օրինակ բերենք Ասիայի վերաբերեալ թերութիւններից և կաշխատենք մեր հայրենիքից վերցնել այդ օրինակները: Մեր գծրախտ հայրենիքի մասին խօսելիս պ. Բաբայեանը մի տարագրի աշխարհագրագէտի չափ էլ բարեխիղճ չէ գտնուել, մի մասը բոլորովին դուրս է ձգուած, սխալաստիքական ուղղութեամբ, իբրեւ թէ Ռուսաստանի աշխարհագրութեան նիւթ է կազմում. կարծես թէ Պարսկաստանի կամ Տաճկաստանի մի աշակերտի շատ անհրաժեշտ է Ռուսաստանի աշխարհագրութիւնը ուսումնասիրել XV-րդ դասարանում, և վերջապէս ամեն աշակերտ կարող է XV-րդ դասարան չհասնել կամ չցանկանալ մնալ. ուրիշն ապա պիտի զրկուի իր հայրենիքի մասին գաղափար ունենալուց: Ֆրանսիական աշխարհագրագէտը իր հայրենիքի ընդհանուր աշխարհագրութիւնը նույն չափով է կազմել, ինչ չափով Գերմանիայինը, թէպէտ Ֆրանսիայի աշխարհագրութեան համար ունի մի առանձին հատոր կազմած, և աւանդում է աւելի բարձր դասարաններում, որպէսզի աւելի զիտակցօրէն լինի, քան մերոնցի նման ամենափոքր: Իսկ տաճկական Հայաստանի վերաբերեալ (երես 59) ասում է երկու տող (իսկ Հարեշտանի մասին երկու երես է). «Հայերը պարագլուխ են հոյազորութեամբ, արհեստներով և վաճառականութեամբ»: Եւ ոչ մի խօսք աւելի. չգիտեմ թէ ռբան զարգացուցիչ կը լինի այդպիսի մի աշխարհագրութիւնից քաղած տեղեկութիւնները իր հայրենիքի վերաբերեալ: Մի տար ֆրանսիացի աւելի բաներ է շտայլում Տաճկաստանի հայերի ներկային, քան մի հայ ուսուցիչը. ահաւասիկ ֆրանսիացու խօսքերը:

«Բնակչութեան հիմքը կազմում են հայերը և քրդերը: Հայերը մի ջանասէր ժողովուրդ են և ունեն այնպիսի յատկութիւններ, որոնք կատարելապէս պակասում է տաճիկներին. նրանք արտադրիչ են, գործունեաւ և աշխատասէր. բայց սակաւ երջանիկ տաճկաց կառավարութեան մէջ քան սուսաց. նրանք չնայելով այն սահմանադրութեանը որ նրանց տուել է սուլթանը, հարստահարուած են իրանց կրօնի համար. նրանց ծանրաբեռնում են հարկերով, նրանց ենթարկում են ամեն տեսակ կամայականութեանց, թողնում են անպատիժ բոլոր ոճրագործութիւնները և աւազակային գործողութիւնները ուղղած համարեա ամենայն օր նրանց դէմ ֆանատիկոս մահմեդականներից»: Այսպիսի աշխարհագրութիւնը աւելի կրթիչ և զարգացուցիչ չէր լինի, քան դարգակ, չոր և անհամ բաւերը: Եւ վերջապէս, մեր գծրաղդ հայրենիքը հարուստ է բացի քաղցրահամ պտուղներից, որոնցից շատերի հայրենիքը եղել է, և

թանկագին մետաղներով, երկաթ, պղինձ, արծաթ, որոնց մասին և մի խօսք չի յիշած:

Այսքան վաստակից օրինակներից յետոյ երեք հին աշխարհների վերաբերեալ, եռ աւելնորդ ևմ համարում նորից օրինակներ բերել տեղի սղութեան պատճառով, ուստի և եզրակացնում են. առհասարակ պ. Բաբեանի դասագիրքը զուրկ է քննադատական առողջ ուսումնասիրութիւնից, և այն անձնաւորութիւնները, որոնք ընտելացած են աշխարհագրական կամ պատմական գիտնական և քննադատական գըրքերի, չեն կարող նրա խրաքանչիւր տողի վրայ կանգ չառնել, և այդպիսի շտապով, առանց լուրջ ուսումնասիրութեան և մշակութեան հրապարակ շարտուած դասագրքի նպատակը չէր մեր դպրոցական գործի յառաջագիմութիւնը... Նշանակուած գինը 65 կոպէկ, 140 Երեսի համար, թանգ է. այդ գնով կարելի կը լինէր պատկերազարդ հրատարակել կենդանական և բուսական թագաւորութեան վերաբերեալ անհրաժեշտ նկարներով և քարտէզներով, որովհետեւ կը պատահեն տարրական դըպրոցներ, որոնք չեն կարող բաւականութիւն տալ դասագրքի մէջ յիշուած կենդանիների մասին: Մեր միջնակարգ դպրոցների համար այդ դասագիրքը անզարգացուցիչ ձեռնարկ է, ցանկաւի է որ նա արգելք չհանդիսանար մի աւելի գիտական և մշակուած դասագրքի հրատարակութեան:

Յ. Այվազեանց

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Դիտելեցիս ի խառնութիւն:—Վեհ գաղափարներ կեղծումներ:

Լրացաւ վերածնունդ Ռուսաստանի առաջին տարին, բայց հոկտեմբերի 17-ի մանիֆեստով յայտարարուած սկզբունքների բէալ իրագործումը դեռ շատ հեռու է մեր ալեկոծուած կեանքից: Յեղափոխութիւնը սուաւ այն ինչ կարող էր տալ. սակայն ամենածայրայեղ ջանքների յեղափոխական բոմանտիզմը իր բուն ոգևորութեան մէջ չափից վեր գնահատեց իր ոյժերը և կարծեց թէ ուսական յեղափոխութիւնը պէտք է վոխի գիտական սոցիալիզմի պարզած կոլլեկտիւիստական ճանապարհը և մի թռիչքով, մի հարուածով քաղաքական յեղափոխութիւնը դարձնի և սոցիալիստական: Սկզբում շշկուած բիւրօկրատիան յետոյ շատ շուտով հաւաքեց իր ոյժերը և օգտուեց խիղախ, բայց անփորձ հակառակորդի դեռ թոյլ կազմակերպուած «գուս ելումներից» և մի քանի պրովոկատորական ծուղակներ սարքելով կարողացաւ հրապարակից հեռացնել ըմբոստ ոյժերը: Հին բէժիմի բանտից նոր լոյս աշխարհը եկած մաստան դեռ հեռու էր քաղաքացիական դատարակութիւնից և գիտակցական կազմակերպումների քառային զրութեան մէջ էր գտնոււմ. միւս կողմից երկարատե անարխիան քայքայել, յոգնեցրել էր աղաքնակութիւնը: Եւ ահա «խաղաղութիւնը և ընդհատուած տնտեսական կեանքը» վերականգնելու պատրուակով բիւրօկրատիան «ժամանակաւորապէս» դադարեցրեց յայտարարուած սկզբունքների կիրառումը և «քաղաքացիների» անձի, գումարումների և խօսքի ազատութիւնը յանձնեց ազմինիստրացիայի և սովիցիայի կամայական—գետկրեցիօն իշխանութեան: Ինչպէս բարուք կը գտնեմ—այնպէս էլ կանեմ, կամ հակիրճ լատինական ոճով. sic volo, sic jubeo! Այդ բնաբանը դառաւ նոր գործելակերպ «վերածնունդ» Ռուսաստանում:

Միշտ և ամեն տեղ բռնակալները գտել են որ և է կեղծիք—արդարացնելու համար իրանց կամայական գործողութիւնների շարժառիթները: Ներկայ գէպքում էլ պակաս հնա-

բաղէտ չգտնուեցաւ ոուս բիւրօկրատիան. «նախ խաղաղութեան վերականգնում—ապա ազատութիւնների իրագործում»— առում էին նոր կուրսի հեղինակները և նրանց պաշտպան օրաթաները: Իսկ քաղաքացիական դատարարակութիւնից զուրկ ժողովրդի մէջ ի հարկէ գտնւում էր անդիտակից մասսա—խաւժան, որ «ազգասիրութիւն» էր համարում դիսկրեցիօն իշխանութեան հաստատումը «ժամանակաւորապէս»: Ով դէմ էր այդ կամայական բեժիմին նա «մատնիչ էր», «դաւաճան», «ոչ իսկական ուսու» և «պատրիօտ»:

Դիսկրեցիօն կամ անձնական, կամայական իշխանութեան գոյութեամբ ի հարկէ կանգ է առնում նորմալ իրաւական, օրինական գործունէութիւնը:

A discetion! Բղաւում է ուս բիւրօկրատների հետ խուլի—գանացած խաւժանը: Անձնատուր լինենք բիւրօկրատիայի կամայական իշխանութեան, կոչում են «պատրիօտները» և «խաւական ուս մարդիկ».—դիսկրեցիօն իշխանութիւնը կը փրկի մեզ, մտածում են աջակողմեան կուսակցութիւնները:

Ապա, անկախ ժողովրդական ընտրութեամբ հրաւիրած իսկական ժողովրդական ներկայացչութիւն և բոլորի համար հաւասար և պարտադիր օրինակարգ. պատասխանում են ընդդիմադիր, դիտակից ազգաբնակչութիւնը և ձախակողմեան կուսակցութիւնները:

«Թէև եմք ամուսնուր» և այլն և այլն ըստ Խորենացու, Բայց և այնպէս... մենք էլ ունենք բիւրօկրատիա իր դիսկրեցիօն իշխանութիւնով: Սակայն ազգային բիւրօկրատիան «մի առաւելութիւն» ունի ուս բիւրօկրատիայի համեմատութեամբ. դիսկրեցիօն լիազօրութիւններ տալով զանազան շրջիկներին, լիազօրներին, հարկւրապետներին և այլն՝ մեր ազգային բիւրօկրատները իրանց գործ դրած անձնիշխան միջոցները կեղծում են աւելի «ձախակողմեան» ցուցանակներով. իրեւ թէ նրանք դիսկրեցիօն իշխանութիւնը գործադրում են «աշխատաւոր դասակարգի» շահերից դրդուած և յետագէմ, խաւար ոյժերի դէմ: Երբ հակառակ փաստեր են բերւում այն ժամանակ ազատ սկզբունքների մեր կեղծողները դիմում են ուս «պատրիօտների» բառարանից վերցրած «մատնիչ» «դաւաճան» և այլ ազդու հայհոյանք—սպառնալիքների:

Չափազանց ճարպիկ միջոց են մտածել մեր ազգային բիւրօկրատները. համ կամայական դիսկրեցիօն իշխանութիւն տահմանել, համ էլ ղրան տալ «յեղափոխական» տիտղոս և լուհեհեմեր, 1906.

ցնել ամեն բողոքի, քննադատութեան ձայն, իսկ անգիտակից տխմար խուժանին և խակմիտ «ըմբոստներին» հաւատացնել որ իրանց արածը տարբեր է ուրիշ բիւրօկրատներէ արածից...

Ռուս բիւրօկրատիան իր դիսկրեցիօն իրաւունքը այնու-ամենայնիւ որոշ ձեւական կանոններով աշխատում է «օրինականացնել», իսկ հայ բիւրօկրատները ոչ մի սահմանափակում չեն էլ ճանաչում: Կարդացէ՛ք գաւառներից տպուած քստմանիք բարբարոսութիւնները և կը տեսնէ՛ք որ հայ ազգը նուաճած դաշնակցականների դիսկրեցիօն իշխանութիւնը ուղղակի անձնական կամայականութեան անզուսպ արտայայտութիւն է: Ռուս բիւրօկրատների գործած ոճիրների մասին մասնուրէր իրաւունք ունի մերկացումներ անել, բողոքել, իսկ հայ բիւրօկրատների կատարած խժոժութիւնների դէմ բողոքելու առաջն ուզում են առնել, կեղծելով «յեղափոխական կոնսպիրացիան»: Յեղափոխական ամեն մի կազմակերպութիւն կարող է իր անդամներին կատարած ինչ իշխանութիւն ուզում է գործադրել. այդ կազմակերպութեան ներքին գործն է. բայց երբ նա դուրս է դաշիս իր յօժարակամ անդամների շրջանից և ուզում է նուաճել ամբողջ ժողովուրդը, ո՛չ անդամի վրայ տարածել իր դիսկրեցիօն իշխանութիւնը—այն ժամանակ մարդկային ազատութեան ամենատարրական հասկացողութիւնն է պահանջում բողոքել այդ ոտնձգութիւնների դէմ, սահման ցոյց տալ անպատասխանատու և անքննադատելի բռնակալութեան, եթէ չենք ուզում se rendre à discretion!... բռնի ոյժից ստրկացած, նուաճած պարիսներ դառնալ: Լռելեայն տանել այդպիսի դիսկրեցիօն իշխանութիւն նշանակում է բարոյապէս ընկնել, քաղաքացիօրէն մեռնել: Հասկանում էք:

Լ. Ս.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պարզկուսիւնը գնում է ձախ.—Արմատական դեմոկրատիայի մէջ ուղղութիւններ—
Ինքնակամներ.—Սոցիալիստական կոնգրէսներ.—Բեվիզիօնիստներ, ինքեգրալիստ-
ներ եւ սինդիկալիստներ:

Մարդկութիւնը նկատելի կերպով անընդհատ թեքում է
դէպի ձախ, դէպի կատարեալ դեմօկրատիզացիան. այդ միտքը
կարծիր թելով անցել է միշտ մեր տեսութիւնների մէջ: Ար-
մատական—սոցիալիստական հոսանքների խոր և լայն տարա-
ձումը մասսաների մէջ կրողական քաղաքակրթութեան են-
թարկուած երկրներում ակնհերե է: Իրա Եւրոպայի մէջ արմատա-
կան դեմօկրատիզմը և սոցիալիզմը այժմ տիրաբար զգալ են
առաջին իրանց յաղթական առաջխաղացումը:

Մի քանի ամիս առաջ էր, երբ մենք ցոյց տուինք թէ
խտալական սոցիալիստների պարադոքս էնրիկօ Ֆերրին ինչ
համակրական խօսքերով ողջունեց նոր արմատական մինիս-
տրութեան ընտրութիւնը: Այժմ Ֆրանսիայում միացեալ սո-
ցիալիստների լիդեր Ժոռեսն է բաղիկալ-սոցիալիստ Կլեման-
տօի մինիստրութիւնը դիմաւորում. «Բաղիկալ-սոցիալիս-
տական ծրագիրը, որ դաւանում է Կլեմանտօն, ասաց Ժոռե-
սը, ընդ առաջ է գնում պրօլետարիատի պահանջներին և մեր-
ձենում է սոցիալիստների ծրագրային մինիմումին (նուազա-
գոյն պահանջներին): Բաղիկալ-սոցիալիստական պրօգրամը
ժառեց 1880 թուականին Կլեմանտօի և սոցիալիստ Լինգէի
գործակցութեամբ: Ֆրանսիական սոցիալիստական կուսակցու-
թիւնը վստահանում է մինիստրութեան այն բանում, որ նա
արագօրէն և առանց զիջումների կը գործադրէ՝ և կեղեցին պե-
տութիւնից բաժանելու օրէնքը, որպէս զի անյապաղ ձեռնար-
կի սոցիալական ընթերցանների իրագործման: Եթէ Կլեմանտօի
բաղիկալ-սոցիալիստական պրօգրամը խորտակուի, այդ կը լինի
ոչ սոցիալիստների մեղքը:

Ֆրանսիական բաղիկալ-սոցիալիստներին մեր առաւելան
կուսակցութիւններից կադետների ծայրագոյն ձախակողմեան-

ների հետ կարելի է համեմատել: Այդ ամենաարժուտական դեմոկրատներին միայն անհամբերող կուսակցական ոգին կարող է «բուրժուական» յորժորջումը տալ: Որպէսզի կոնկրետ կերպով ընթերցողը գաղափար կազմի ռադիկալ-սոցիալիստների պրոգրամմի մասին, մենք առաջ կը բերենք այս ամուռն լիլլում տեղի ունեցած այդ կուսակցութեան տարեկան համաժողովում նրա պարագլուխներից մէկի՝ Կամիլ Պելտանի յայտարարութեան մի քանի կէտերի վրայ: Պահանջելով որ հիւզեցին պետութիւնից բաժանուելու օրէնքը գործադրուի «ուսանց զայրոյթի, սակայն նաև առանց թուլութեան», նա շեշտում էր որ անհրաժեշտ է կենտրոնացնել ուշադրութիւնը հասարակական—տնտեսական բեֆորմների վրայ: Արժատականները այժմ իրանց պարտականութիւնն են համարում նախ և առաջ մտցնել հասցեթաւոր և այն էլ պրոգրեսիւ տուրք, բանուորների ապահովագրութիւն, պետութեան հաշուով, նաւատորմի և զօրքի ծախքերի կրճատում, արդիւնագործութեան և առևտրի այն ճուղերի նացիօնալիզացիան, որոնք մենաշնորհների բնոյթ են ստացել, վարկի դեմոկրատիական կազմակերպում, աշխատանքի կանոնաւորում այնպէս որ ունեւորը չհարստահարի աղքատին: Ազատութիւնը նուաճելու իսկական պայմանները, ստում էր Կամիլ Պելտան, կայանում է բոլոր պրոգրեսիւ կուսակցութիւնների դաշնակցութեան մէջ, պրոգրեսիւ տարրերի բլօկի շնորհիւ է որ ֆրանսիական դեմոկրատիան վերցրեց Բաստիլեան և յաղթեց 1830, 1848 և 1877 թուականներին»:

Րադիկալ-սոցիալիստ կլեմանսօն մինիստրութեան գլուխ անցնելով աշխատանքի յատուկ մինիստրութիւն է հիմնում, որ յանձնում է սոցիալիստ Վիվիանիին: Այդպէս ահա ընկնում են անջրպետները իրար մօտ գտնուող ձախակողմեան կուսակցութիւնների մէջ, և աննկատելի է դառնում աշխարհայեացքների նիւանմանը շնորհիւ բազմաթիւն սոցոդական, միջանկեալ գունաւորումների: Վերցրէք ծիածանը և աշխատեցէք սահմանազծիր գտնել իրար կից գոյների անշմարելի փոխանցումները մէջ, այդ դժուար է, որովհետև տարբերել կարելի է միայն շփման զծերից փոքր ի շատ է հեռաւոր շերտերը: Արժատականից եթէ անցնէք սոցիալիստականը—այս վերջինի մէջ ևս դուք չէք գտնի միագոյնութիւն. բոլոր երկրների սոցիալիստական ուղղութիւնների նիւանմանը մէջ առնուազն երեք որոշ հոսանքներ կը գտնէք. աջակողմեան, միջին (կենտրոնալիստներ) և ձախակողմեան: Աջակողմեան կամ բեվիդիօնիստականը մօտ է ռադիկալ-սոցիալիստների պրոգրամմին, մինչդեռ ծայրայեղ

ձախակողմանը իր տակտիկայով մերձենում է անարխո-սոցիալիստներին: Այս տարի համարեա բոլոր երկրներում կայացան սոցիալիստական կուսակցութիւնների և բանուորական արհեստակցական միութիւնների կոնգրեսներ. Շվեյցարիայում, Անգլիայում, Դերմանիայում, Իտալիայում շատ որոշ էին յեղափոխական—սինդիկալիստների և էվալիցիօնիստ—բէվիզիօ-նիստների տարբերութիւնը: Միթէ նոյնը չէ ռուսական փոքրամասնականների և մեծամասնականների մէջ. նոյն իսկ հայերի սոցիալ-դեմօկրատիական երկու ֆրակցիաների մէջ: Դրանից միայն այն կարելի է հետեցնել որ պրոգրեսիւ մտքի նիւանսները այնքան նուրբ են և բազմաթիւ որ ընդհանուր խոշոր քաղաքական—հասարակական նպատակների հասնելու համար անհրաժեշտ է այդ բոլոր դեմօկրատական հոսանքների միացած զինակցութիւնը: Բոլորն էլ կարմիր գոյներ են միայն զանազան նիւանսներով:

Ուշի ուշով հետեւէք Ամիենում ֆրանսիական սինդիկալիստիների կոնգրեսի վէճերին, Մանհէյմում գերմանական սոցիալ-դեմօկրատիայի կոնգրեսի բանակիւններին, Հոմբուրգ իտալական սոցիալիստների տաք ճառերին, Կարգիֆում անգլիական երկաթուղային բանուորների համաժողովում Բելլի և անկախ բանուորական կուսակցութեան պարապլուխ Կայր—Հարդիի տարաձայնութեան կէտերը և դուր կը տեսնէք որ մարդկային հզօր միտքը շատ նուրբ և խոր վերալուծման է ենթարկում արդի հասարակական երեւոյթները, ամեն բան այնպիսի փոթիկոտութեամբ չընդունելով, ինչպէս տրամադիր են անել խաւ ուղեղները... Այդ վէճերից, տարաձայնութիւններից, մոտքերի բաղխումներից առաջ են գալիս փայլակներ, որոնք թուսլորում են մարդկութեան առաջ փռուած դեռ մութ ճանապարհը: Ուրեմն կէցցէ՛ միշտ թերահաւատող, միշտ քննադատող և գիտական հիմքեր, առողջամիտ առարկութիւններ որոնող մարդկային միտքը, միշտ առաջ, ղեկավար ունենալով նախ խելքը, իմացականութիւնը ապա և անկեղծ զգացմունքը: Դարվինից և Մարքսից յետոյ ամօթ է բոմանտիզմը ղեկավար ճանաչել:

25 Հոկ.

Լ. Ս.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Երկրի ձայնը»—Չնայած ազատ խօսքի ամեն տեսակ ահաբեկումներին հայ հասարակութեան մէջ զարթնած գիտակցութիւնը շարունակում է քննադատել զործելու այն եղանակը, որ կատարել էին ասանեակ տարիներին ընթացքում Հնչակեան—Դաշնակցական ազգային յեղափոխական կազմակերպութիւնները: «Մուրճը» վաղուց ի վեր որոշ դիրք է բռնել այդ կուսակցութիւնների տակտիկի վերաբերեալ: Անկախի և Արտաքին Տեսութեան մէջ յօդուածները շատ պարզ կերպով բնորոշում են մեր հայեացքները թիւրքահայկական դատի նկատմամբ: Առանձին ազմուկ հանեց «Մուրճի» յուլիսեան համարի (№ 7) արտաքին տեսութիւնը, որին յօդուածներ նուիրեցին տեղական մի քանի ռուս թերթեր, Արտասահմանում «*Courier Européen*» և Ամեդ Ռիզարէի «*Mecheveret*» օրդանը:

«Նոր ճանապարհ» լոգոնգին է հետեւել ուղում նաև թիֆլիսում նոր լոյս տեսնող «Երկրի ձայնը» շաբաթաթերթը պ. Տ. Զաւէնի ղեկավարութեամբ, որ նպատակ է դնում «միութեան կամուրջ նետել հայ և թուրք տառապող ու հարստահարուող մասսաների միջև, մղելու համար դիւցազնական» պայքարը ընդհանրութիւնների ամենաճիւղայինի դէմ»—ընդհանուր յեղափոխութեան դիմելով ընդ որից Երկրի և ժողովրդների միահամուռ դրոշմով:

Շաբաթաթերթի բոլոր յօդուածները պատում են թիւրքիայի շուրջ: Ցանկալի է որ նոր օրդանը միջոցներ ունենար ինչպէս հարկն է իրազեկ պահելու իր ընթերցողներին թիւրքական իրականութեան և նրա բոլոր ժողովրդների քաղաքական կեանքի շարժումների հետ: Չպէտք է բաւականանալ լոկ թուրքերի քա-

ղաքական երևոյթների արձագանքներով, այլ ձգտելու է կապեր հաստատել և միւս ցեղերի կեանքի հոսանքները արտայայտող օրդանների հետ: Եթէ լաւ տանուի այս նոր օրդանը կարող է նպաստել թիւրքիայի քաղաքական վերածնութեամբ հետաքրքրուող անձանց: Յանկանում ենք աջողութիւն:

«Նոր կիսմիջ»—գրական, հասարակական և քաղաքական շաբաթաթերթ: Նոր Նախիջևանում պ. Գր. Անտփեանի խմբագրութեամբ յուլիսի 2ից հրատարակում է մեր բազմաթիւ շաբաթաթերթերից և այդ մէկը:

«Լայնածաւալ Ռուսաստանում ցիր ու ցան ընկած են մանր և անջատ հայ զաղութներ, որոնք խաթարեցած են Մայր հայրենիքից և ազգային ինքնագիտութիւնից: Շաբաթաթերթիս նպատակն է արծարծել և լուսաբանել հասարակական և ազգային շատ խնդիրներ և ընթերցանութեան թարմ նիւթ մատակարարել զլուսաւորապէս Ռուսաստանի հայ զաղութներին և այդպիսով հետաքրքրութիւն շարժել նրանց մէջ դէպի հասարակական և ազգային կեանքը և մի ընդհանուր կոպ հաստատել այդ անջատ դաղութների միջև: «Նոր կեանքը» ունենալով աւելի տեղական բնաւորութիւն, ուշադրութեան առանձին առարկայ կը դարձնի Նախիջևանի և նրա շրջակայքի հասարակական կեանքը: Աշխատակիցների թիւում է և պ. Մինաս Բերբերեանը: Լոյս տեսած համարներից կարելի է եզրակացնել որ շաբաթաթերթը տա՛նում է բարեխղճօրէն ազգային լիբերալ ոգով, պակասում է նրա հրապարակախօսութեան մի քիչ աշխույժ, և կենդանի ջիղ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Մուրճի» այս համարը ուշ լոյս տեսաւ այն պատճառով որ նրա գրաշարները, ինչպէս պահանջոււմ է աշխատանքի նոր պայմաններով, օգտուել են երկու շաբաթ արձակուրդ ունենալու արտօնութիւնից։

Այս տարին ամսագրների հրատարակութեան համար չափազանց աննպաստ էր. մեր նիւթական վնասները կրկնապատկուեցան, բայց և այնպէս խոր համոզուած որ մեր ժողովրդի քաղաքական ու քաղաքացիական գաստիարակութեան և ինքնագիտակցութեան զարգացման համար անհրաժեշտ է «Մուրճի» նման օրգանի կոյութիւնը—մենք վճուել ենք տոկոսութեամբ շարունակել նրա հրատարակութիւնը, հրաւիրելով մեզ համակրողներին աջակցել մեզ տանելու այն ծանր խաչը որ վիճակուած էր մեզ։ Մենք ուզում ենք որ հայի հին նախապաշարմունքների և ազգային-յեղափոխական բոմանտիզմի աւերակների վրայ նոր կեանք, նոր գաստիարակութիւն փթթի, ու աճի գիտութեան և արդարութեան մթնոլորտում։

ԲԱՅՈՒՆԵԹ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 թ.

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

(Նոր շրջան VII տարի)

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը

Պատճառ

4

Պատճառ

տարեկան 10 ռ.

կէս տարին 6 »

ամսական 90 կ.

Պատճառ

տարեկան 12 ռ. (32 ֆ.)

կէս տարին 7 » (18 ֆ.)

ամսական 3 ֆ.

Բաժանորդագրիւնը կարելի է վճարել նա՛նձ մաս-
մաս(5—5 ռ.), երկրորդ վճարը լինում է մայիսին: Տարբ.
դպրոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանող-
ների, զինուորացիների եւ բանուորների համար բաժանոր-
դագրիւն է (Ռուսաստ.) 8 րուրի տարեկան, որ կարելի
է վճարել մաս-մաս(4-4) ռ.:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ Է

Թիֆլիսում — խմբագրատանը (ձախճափաձեան փողոց, ա. № 12)

Կայսերական ալի սեղերից պէտք է գիմել՝ Тифлисъ,

въ редакцію журнала «МУРЧЪ».

Առաստախմանից՝ Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

1907 թուականի այն բաժանորդները որոնք կը գրուեն մինչեւ այս տարւոյ
դեկտեմբերի 1-ը, վճարելով տարեկան ամբողջ բաժանորդագրիւնը միանուագ
կը ստանան ձրիաբար նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համարները:

ՅԱՅՈՒՆԱՐՈՒԹԻՒՆ, ընդունում է ամեն լեզուով: Յայտարար-
ութիւնների համար վճարում են.— 1 երես բնող յայտարարութեան հա-
մար 10 ռ., 1/2 եր. 5., 1/4 եր.— 2 ռ., տողատեղ (կորպ.)— 40 կ.:

Խմբագիր՝ ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

ԳԵՂՈՒՆԻ

Ի ՆՊԱՍՏ ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ԱՐԿԱ- ԾԵԱԼ ՆԵՐՈՒ

ԼՈՅՍ ՏԵՍԵՒ

ԲՈՎԱՆԳԵՎՈՒԹԻՒՆ

Գեղոնին իր ծանօթ ծրագրով, իրեն յատուկ գեղարուեստական և գրական բովանդակութեամբ հրատարակուած է: Կովկասահայ մեծ գանդուածը փութկոտորէն սփռփեց արկածեալ թրքահայը. հիմա ինքն է լացողը, ինքն է վիրաւորուածը, և ինքն է սովի ու կրակի մատնուածը. այդ մեր հայութեան ամենէն ազնիւ զաւակներուն հիմա ձեռք կու տայ ԲԱՐԵՔՈՐԾՈՒԹԻՒՆԸ, ձեռնպահ չի մնար և Գեղունին, որ Կովկասահայուն սրտին մէջ համակրանքի բազին 'մուխ': Ս. Ղաղար 1000 օրինակ այս նոր Գեղունիէն (1906) յղեց թիֆլիզի ի նշուատ կովկասահայ արկածեալներու յանձնաժողովին. ընդհանուր հայութեան այն ամեն անհատ որ տառապեալներու զանձա-նակին մէջ համեստ լուծայ մը—10 Ֆր. նետելու կարողութիւնն ունի, պանկալի է որ դիմէ այդ յանձնա-ժողովին, ուսկից փոխարէն իր բարեգործութեան, կը ստանայ նոր հրատարակուած Գեղունին, որուն կատարելութեան համար թերթին մի կնոյն վարչութիւնը ամեն ճիգ ու ջանք թափած է և աւելի եռանդով:

Գեղունիի բաժնեկիւնն է 10 Ֆր.:

Գեղոնին յօդուածներու ցուցահանդէս մը չի բանար, այլ ըստ եւրոպական բացառիկ պատկերազարդ թերթերու, հրատարակած է զղեցկազիտականին վերաբերեալ թատերազրուութիւն մը, ուր կը կարգանք ծառուսէն աւելի հրապուրիչ, Մէֆիստոֆէլէն աւելին գերազոյն իդէալի տէր Լորտ Պայրընի Մանֆրէտին ոգեբանութեան խոռվքը, այն լեզուով, ինչ որ մատչելի և սիրելի է Ռուսահայուն: Եւ ի միջի մէկ քանի յօդուածիկներու, նոր Գեղունին հրատարակած է Ռուսահայոց վրայ ժամանակակից դէպքերու առթիւ ամփոփ յօդուած մը—նկարազրու-թիւն ռուս-հայ-թաթար քաղաքագիտական տատանումին: Պատկերներէն մեծ մասը հայութեան անցեալ փառքի ցոլացումներն են. և այս ժամուս երբ մեր աչուրներուն վրայ դեռ կը թրթռայ վեհերոս արցունքը, կրնանք մխիթարուիլ որ ունինք անցեալ մը ոչ միայն խիղախօրէն նահատակուած, այլ աւելի զիւցալիւսական: Ընդամենը 115-էն աւելի շքեղատիպ միազոյն և երկնագոյն պատկերներ կը գեղազարդեն նոր Գեղունիի էջերն:

Մեր հասցէն L'Imprimerie
Aénienne
St. Lasare VENISE (Italie)

Քաջուած է բաժանորդագրութիւն

Ա. ԴԻԻՄԱՅԻ

„ԲԱՍԴԻԼԻ ԱՌՈՒՄԸ“

Հոգակաւոր պատմական գործն՝ փրանսիական սեփականութեան ժամանակից

Փարզմանութիւն

Մ. ԲԱՍԴԱՍԱՐԵԱՆԻ B. D.

Գիրքը 300 էջերից բաղկացած է 9 և $5\frac{1}{2}$ ծաւալով և ընտիր թղթի վրայ տպագրուած, մամուլի տակ է և լոյս կը տեսնի շուտով:

Պարսկաստանի համար՝ կազմածը 10 դրան, թղթակազմ 8 դր.

Ռուսաստանի թղթակազմ 1 ու. 56 կ.

Եւրոպա » 4 ֆրանկ.

Ամերիկայ » 1 դօլար.

Գրաւաճառներին 20% գեղջ կտրուի

Փոշաի ծախսը մեզ է պատկանում:

Պատուէրները ուղարկել կանխիկ դրամով

Հրատարակիչ Մ. ԲԱՍԴԱՍԱՐԵԱՆԻ,

ԹԱԻՐԻՉ

M. BAGHDASARIAN

Tauris (Perse)

Ջ. Մ Ո Ր Ի Ի Ր Ի

ՀԱՋԻ ԲԱԲԱՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

2 հատորի գինն է 3 ռ. 50 կոպ.

«Մուրճի» տարեկան բաժանորդների համար 2 ըուրլի ճանապարհածախսով:

Դիմել խմբագրութեանն հասցէով:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱԻԹԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

լոյս են տեսել

№ 5. Մօպսսան—«Մի կեանք»

Թարգմ. Ս. Տէր-Անանեան 1 «.

№ 6. А. Агаронянъ, Кусочекъ хлѣба, Пѣтухъ

Թարգմանեց Վ. Բարեան. 10. կ.

№ 7. Ա. Աննենսկայա, «Հանրապետութիւն»

Թարգմ. Ս. Տէր-Անանեան 5. »

№ 8. Ա. Բերել, «Քրիստոնէութիւն և Սօցիալիզմ»

Թարգմ. Ս. Տէր-Անանեան 10. »

«Շուտով լոյս պիտի տեսնեն.

№ 9. «Զւիգէրիա» և

№ 10. «Կորչին Սօցիալ Դեմօկրատները»:

2—2

«ԳՈՒՏՏԵՄԲԵՐԳ» գրախանութում

Վաճառուում են լիւիճն ՍԱՐԳՍԵԱՆԻ հետեւեալ գրքերը.

1) Ժողովրդի կրթութեան գործը մեզանում, 1892 թ.

գինն է 20 կ.:

2) Հին ցաւ (հրապարակախօսական խոհեր—մեր կղերի մասիւր), 1900 թ. » 30 կ.:

3) Մի քանի օր Արցախում եւ Սիւնիքում » 20 կ.:

4) Այց Թիւրքաց Հայաստանին, 1890 թ., » 60 կ.:

5) «Մայրենի խօսք» ընթերց. ձեռնարկ 3-րդ և 4-րդ տարիների համար: » 80 կ.:

ԱՌԱՅՁԱՐԻ

1) Վշտի ծիծաղը (պատմութեան ժողովածու) գ. 1 ր.:

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆԻ

Ազուլիցոց բարբստը, Լեզուար. հետագ. գինը 2 ր.

LA REVUE

(Ancienne «vue des Revues»)

A B O N N E M E N T

Etranger (Union postale) par an: 28 fr.

» » » par semestre 16 fr.

Directeur-Rédacteur en chef

JEAN FINOT

Administration et Rédaction:

12 Avenue de l'Opéra

Paris

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1906 թ.

ԱՇԽԱՏԱՆԻՔ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳԻՒՂԱՅԻԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻ

«ԱՇԽԱՏԱՆԻՔ»-ը նւիրւած է լինելու հայ գիւղա-
ցիութեան և նրա միջից դուրս եկած պրօլետարիատի
շահերին և կարիքներին:

Գաւառի և գիւղի հետ սերտ և կենդանի յա-
րաբերութիւններ հաստատելը «ԱՇԽԱՏԱՆԻՔ»-ի ձեռք-
տունն է:

Ուսուցիչները, գիւղական քահանաները և գիւ-
ղական ինտելիգենցիան «ԱՇԽԱՏԱՆԻՔ»-ի թղթակիցներն
ու կենդանի ոյժերն են լինելու:

«ԱՇԽԱՏԱՆԻՔ»-ին աշխատակցելու հրաւիրւած են
որոշ ուղղութեան մարդիկ:

«ԱՇԽԱՏԱՆԻՔ»-ը վարձատրելու է իր բոլոր մշտա-
կան աշխատակիցներին և զաւառական թղթակիցներին:

Բ Ա Շ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ

Տարեկան 4 ուր.
Կէս տարին 2 »
Ամիսը 40 կոպ.

Տարեկան 5 ուր.
Կէս տարին 2 ո. 50 կ.
Ամիսը 50 կ.

Բաժանորդագրինը կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ.
սկզբում 2 ուրլի, մայիսին՝ 1 ուր. և սեպտեմբերին
1 ուրլի:

Ապագիկ բաժանորդագրութիւն չէ ընդունուում:

ԱՇԽԱՏԱՆԻՔԻՆ ԿԱՐԵՒԻ Է ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐԻԵՒ

1. Ալեքսանդրապօլ՝ պ. Հ. Սմատունի և Ս. Թափտեան
2. Ախալցխա՝ պ. Մուրադեան Յակոբի,
3. Ամբողջ Խրիմի համար՝ Արմեանսկի Յ. Դաւիդով:
4. Բագու՝ պ. Դ. Յարութիւնեանի (Контора «Арамаздъ»),
5. Գանձակ՝ պ. Ս. Սարգսեանի (Бюро Газетъ),
6. Բաթում՝ պ. Մամաջանեանի և Արամ Մակարեանի,
7. Երևան՝ «Արարատ» գրական. և Ս. Տէր-Մարտիրոսեանի,
8. Էջմիածին՝ պ. Գ. Դադարեանի,
9. Զարա՝ պ. Ա. Շաթիրեանի և Սնդոմոնեանի,
10. Ն. Բայազէտ՝ պ. Դ. Սինանեանի,
11. Շուշի՝ ըմ. Լ. Աթաբեգեանի,
12. Վլադիկավկազ՝ Սառիկեան քահանայի մօտ:

Ամեն հայաշատ քաղաքներում «Աշխատանքը» ու-
նի գործակալներ: Հայցէ՛ն՝ Тифлисъ, въ редакцію
еженедѣльнаго журнала «Ашхатанк». Бебутовская
ул. д. № 56. Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la
revue «Aschchatank», Beboutovskaia 56.

Խմբագիր-հրատարակիչ՝ ԱՇՈՏ ԱՌԱՆԱՍԵԱՆ

18) ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ «Ներքի մայր»	
«Նոր կիսմբ»	154
19) ԽՐԱԿՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ	155
20) ՅԱՅՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	156

ԽՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ չրել զանազան անկարգութիւններ, յատկապէս՝ անհարկ և անհարկաւոր բաներ, և բնորոշ մտքով մի կրօնի վրա, ստանալով ուրիշ դատման կիսագրութեան, անարդարութեան և հար անարկութեան հետեւ զարգացող վնասը վարչ: Քարգանտութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաեւ բնագիրը:

2. Զրկուստեան մէջ յօդուածները պահուած են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնուած են: Զննողները յետ ստանալու համար պէտք է ուղարկել շանտաղարածատու: Փոքր յօդուածներն ու ստանաւորները չեն վերադարձնուում:

3. Գրուածքների վարձատրութեան համար սրտում է խմբագրութիւնը: Խմբագրութեան տանից պայմանների ուղարկուած ձեռագիրները համարում են անվարկի:

4. Խմբագրութիւնը իրան է վերադարձում ուղարկուած յօդուածները փոփոխելու համ կրճատելու լրատուներ:

5. Կրօնական համարը հասցեւորելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ոչ քան յաջորդ համարի լրջ տեղեկել:

6. Խմբագրութեանը գանազան հարցումներով զեւոյ տեղեկութիւն պէտք է պատասխանել համար ուղարկելն նամակագրուած կամ պոստալին ըրեալ:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկ: Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի խորանջիւր ամիս 10-ից ոչ ոչ, որպէսզի տալիկայ համարն ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ պէտք է յարմարել նաեւ հին հասցէն:

ԲԱՅՈՒՆԺ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԳԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Մ Ա. Գ Ր Ի

(Նոր շրջան VII տարի)

Բ Ա Ճ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը

ՏԻՆԱՄԱՍՏԱՆԻ	և	ՊԱՐԱՄԱՆԻԱՆԻ	տարեկան	10 ռ.	ՍՏԱՄԱՆԻԱՆԻ	տարեկան	12 ռ.	(32 ֆ.)
			կէս տարին	6 »		կէս տարին	7 »	(18 ֆ.)
			ամսական	90 կ.		ամսական		(3 ֆ.)

Բաժանորդագիրնը կարելի է վճարել նաև մաս-
մաս(5—5 ռ.), երկրորդ վճարը լինում է մայիսին: Տարբ.
դպրոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանող-
ների, գիւղացիների և բանուորների համար բաժանոր-
դագիրն է (Ռուսաստ.) 8 րուբլի տարեկան, որ կարելի
է վճարել մաս-մաս(4-4)ռ.:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ Է

ԹԻՖԼԻՍԱՎ — Խմբագրատանը (ճաղճախձեան փողոց, տ. № 12)

Կապուրեան ուլ սեղերից պէտք է գրմել՝ Тифлис,

въ редакцію журнала «МУРЧЪ».

ԱՏԱՄԱՆԻԱՆԻԿ՝ Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

1907 թուականի այն բաժանորդները որոնք կը գրուեն մինչև այս ցարույ
դիկեմբերի 1-ը, վճառելով ստեկան ամբողջ բաժանորդագիրնը միանույն
կը ստանան ձրիաբար նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համարները:

ԲԱՅՍԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ, ընդունում է ամեն լեզուով: Ֆայտաբա-
րութիւնների համար վճարում են.—1 երես բոնոյ յայտաբարութեան հա-
մար 10 ռ., 1/2 եր. 5., 1/4 եր.—2 ռ., տողատեղ (կորպ.)—40 կ.:

Պատրագիր՝ ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ